

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐԴԱՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՐՅԱՆՍԻ
ԲՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԷ

ԱՐՊԱՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ
ԲՈՒՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

«Դիզակ պլուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2014

ՀՏԴ 93/99 : 378
ԳՄԴ 63.3 + 74.58
Ա 774

*Տպագրվում է Արցախի գիտական
կենտրոնի խորհրդի որոշմամբ*

Ավանեսյան Արպատ
Ա 774 Արցախի բուհական համակարգը: Ա. Ավանեսյան.-
Ստեփանակերտ: Դիզակ պլուս, 2014. -336 էջ:

Մենագրությունը պարունակում է հարուստ փաստական նյութ, ուշագրավ հիմնավորումներ ու եզրահանգումներ Արցախի գիտակրթական ոլորտի անցած ուղու ու նրա զարգացման հեռանկարների մասին, որոնք կարող են հետաքրքրել ինչպես գիտական շրջանակներին, նույնպես և մանկավարժական ու այլ բուհերի դասախոսներին և ուսանողությանը, առհասարակ, բոլոր նրանց, ովքեր զբաղվում են Արցախի նորագույն պատմության ուսումնասիրությամբ:

ՀՏԴ 93/99 : 378
ԳՄԴ 63.3 + 74.58

ISBN 978-99941-2-833-4

© Ավանեսյան Արպատ, 2014

Հետազոտությունն իրականացվել է ԼԴՀ ԿԳՆ ֆինանսական աջակցության շնորհիվ №SCS 13.10-003 «Արցախի կրթական համակարգը» գիտական թեմայի շրջանակներում:

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը համաշխարհային մշակույթի էջերում բազմաթիվ արժեքներ է գրանցել: Այդ արժեհամակարգում առանձնահատուկ տեղ ու դեր են ունեցել, մասնավորապես, կրթօջախները:

Պատմության տարբեր շրջաններում, չնայած իրար հաջորդող ծանր ռազմաքաղաքական իրավիճակներին, օտար նվաճողների անընդհատ ասպատակություններին, հայ դպրոցի ձևավորմանը զուգահեռ Հայաստանում զարգացել է նաև բարձրագույն կրթական համակարգը: Գործընթացի զարգացման համաշխարհային միտումներին զուգահեռ՝ 13-14-րդ դարերում Հայաստանում նույնպես ստեղծվում են բարձրագույն դպրոցներ՝ համալսարաններ, որոնք ուսուցման բովանդակությամբ և գիտական մակարդակով չէին զիջում եվրոպական բուհական հաստատություններին: Հայոց բարձրագույն դպրոցները հանդես են եկել ազգաշահ առաքելությամբ: Անուրանալի է հատկապես հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների՝ Գլաձորի (1291-1339), Տաթևի (1340-1435) համալսարանների դերը, որոնց ձեւավորված ավանդույթները հիմք են դարձել հետագայում հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում՝ 19-րդ դարում, բարձրագույն կրթության նորովի կազմակերպման և զարգացման համար: Այդ կրթական հաստատություններից էին նաև Աստրախանի Աղաբաբյան դպրոցը (1810թ.), Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1814-15թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824թ.):

Ուսումնագիտական այդ հաստատություններն իրենց ընդհանուր մշակութային, կրթական-գիտական, ազգային և հասարակական-քաղաքական գործունեության տարիներին ժամանակին մեծ դեր են խաղացել ոչ միայն Հայ մշակույթը ոչնչացումից փրկելու, հայ ժողովրդի զավակներին կրթելու, նրանց մասնագիտություններ տալու, այլև օտար ազգերին ծուլվելու վտանգից փրկելու ազգապահպանման վեհ գործում: Այդ ուսումնական հաստատություններն իրենց եռանդուն գործունեությամբ խոր հետք են թողել հայ իրականության մեջ՝ առաջին հերթին ժողովրդին ծառայելու նպատակաուղղվածությամբ, գիտամանկավարժական վիթխարի և համարձակ գործունեությամբ:

Տարբեր ժամանակներում հայոց բարձրագույն ուսումնական

հաստատություններն ավարտած առավել ընդունակ սաները մեկնում էին արտասահմանյան գիտամշակութային կենտրոններ (Ալեքսանդրիա, Աթենք, Յոնոն, Եդեսիա, Փարիզ, Գերմանիա, Անգլիա և եվրոպական այլ երկրներ), հարստացնում իրենց գիտելիքները և, տիրապետելով տարբեր եվրոպական լեզուների, վերադառնում հայրենիք՝ ամբողջովին նվիրվելու լուսավորության գործին: Այսպիսով, հայ ժողովուրդը մասնակից էր դառնում համաշխարհային մշակույթին ու գիտությանը՝ միաժամանակ իր իսկ սեփական ավանդը ներդնելով գիտության ու մշակույթի համաշխարհային զանձարանում:

Հայերի համար առանձնապես մեծ էր ռուսական համալսարանների և տարաբնույթ գիտաուսումնական օջախների դերը: Ռուսական առաջավոր գիտական միտքը, գրականությունն ու արվեստը սկսում էին բարերար ազդեցություն թողնել հայ մշակույթի, գիտության զարգացման վրա: Մշակութային այդ ընդհանուր վերելքի պայմաններում զգացվում էր նաև հայկական ազգային համալսարան ունենալու անհրաժեշտությունը:

Հայկական համալսարանի հարցը մեր առաջադեմ գործիչների (Խաչատուր Աբովյան, Ստեփանոս Նազարյանց, Սմբատ Շահազիզ, Միքայել Նալբանդյան և այլք) համար լուրջ մտահոգության առարկա էր դարձել դեռևս 19-րդ դարի 40-50-ական թվականներին:

Հայկական համալսարան կամ ակադեմիա ստեղծելու ամենամեծ ջատագովներից էր մեծանուն բանաստեղծ Յովհաննես Թումանյանը, ով ամեն ինչ անում էր այդ խնդրի իրականացման համար: Հայտնի է, որ նրա ղեկավարությամբ գործող «Հայկազյան ընկերության» ժամանակավոր հանձնաժողովն իր նիստերը երբեմն հրավիրում էր հենց Թումանյանի տանը (1912թ.): Առաջին նիստին, որին նախագահում էր բանաստեղծը, ներկա էին Ն. Մառը, Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ: Արտահայտելով համալսարան ունենալու ժողովրդի նվիրական իղձը, Թումանյանն ասում էր. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների տաճար գիտության օջախ՝ «Հայկական ակադեմիա»: Եվ պետք է ստեղծել հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտություններն ավանդել և սովորել: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցել ու պահել մի գիտության տաճար, մեր

մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ՝ հայկական համալսարան»:

Սակայն ազգաշահ այդ գաղափարը կյանքի է կոչվել միայն ազգային պետականության վերականգնումից հետո՝ Հայաստանի առաջին հանրապետության օրոք: Հանրապետության Նախարարների խորհրդի 1919թ մայիսի 16-ի որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի համալսարանը Գյումրի քաղաքում: Նախատեսված էր այն բացել Երևանում՝ 1920 թվականին: Երևանի համասարանի գործունեության երկրորդ տարում՝ 1923 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ, այն վերանվանվեց պետական համալսարան:

Հայոց բարձրագույն դպրոցների (Գլաձորի, Տաթևի համալսարաններ, Աղաբաբյան դպրոց, Լազարյան ճեմարան, Ներսիսյան դպրոց), խորհրդային շրջանում Երևանի պետական համալսարանի օրոք ձևավորված լավագույն ավանդույթները հիմք են դարձել նաև Հայաստանի անբաժան հատվածի՝ Արցախ-Լեռնային Ղարաբաղի բարձրագույն կրթության կաճառի՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի (1992թ. հոկտեմբերի 13, այժմ՝ Արցախի պետական համալսարան) և հետագայում ոչ պետական բուհերի կազմակերպման ու զարգացման համար:

Հայկական բարձրագույն դպրոցների պատմության ուսումնասիրության ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել պատմաբանների, բանասերների, մանկավարժ գիտնականների, մշակույթի սկանավոր գործիչների կողմից: Նկատի ունենք հատկապես Ար. Մովսիսյանի «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության. 10-15-րդ դարեր» (Երևան, 1958), Լ. Խաչերյանի «Գլաձորի համալսարան» (Երևան, 1973), Ա. Մաթևոսյանի «Հայոց միջնադարյան համալսարանը» (Երևան, 1984, թ.1), Ա. Գոյանի «Տաթևի համալսարանը» (Երևան, 2003), Ա. Իգնարյանի «Լազարյան ճեմարան» (Երևան, 1969), Մ. Սանթրոսյանի «Ներսիսյան դպրոցի պատմություն» (Երևան, 1981), Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» (Երևան, 1965), Ռ. Մարտիրոսյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները» (Երևան, 2003) և այլ աշխատություններ:

Անշուշտ, վերոնշյալ և այլ աշխատություններ հետաքրքրություն և արժեք են ներկայացնում հայոց բարձրագույն դպրոցների պատ-

մությունն ամբողջացնելու առումով: Սակայն պետք է նշել, որ առ այսօր սպառիչ ուսումնասիրված չէ նաև հայ ժողովրդի այս հատվածի՝ Արցախի բարձրագույն դպրոցների գիտակրթական պատմությունը:

Հարկ է նշել, որ Արցախի գիտակրթական համակարգի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է տողերիս հեղինակը՝ հրատարակելով «Հայկական երկրորդ պետական համալսարան (ԼՂՀ-ԱրՊՀ)» (2008թ.), «Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը» (2008թ.), «Արցախի պետական համալսարան. ժամանակի պահանջով՝ ժամանակին համաքայլ» (2011թ.) մենագրությունները, տպագրելով բազմաթիվ հոդվածներ և, ընդհանրացնելով կատարված հետազոտությունները, պաշտպանել «Արցախի գիտակրթական համակարգի կայացման ընթացքն ու զարգացման միտումները» թեմայով դոկտորական ատենախոսությունը: Հուրախություն մեզ՝ ընթերցող հասարակայնությունը զնահատել և արժևորել է վերոնշյալ աշխատությունները: Սակայն, ընթերցողներից ստացված բազմաթիվ նամակներում, պարբերական մամուլում հրապարակված գրախոսականներում ներկայացված խորհուրդները, մեծավաստակ գիտնականների հետ ունեցած մեր զրույցները հնարավորություն են ընձեռել մեզ լրացուցիչ անդրադառնալ խնդրին՝ կատարել նոր ուսումնասիրություններ՝ հայտնաբերելով նոր փաստեր, արխիվային նյութեր, պարբերական մամուլում տարբեր ժամանակներում լույս տեսած հոդվածներ, հարցազրույցներ ունենալ Արցախի բուհական համակարգի շրջանավարտների հետ և այդ ամենը գիտամանկավարժորեն շարադրել «Արցախի բուհական համակարգը (1938-2010 թթ.)» խորագրով նոր աշխատության մեջ: Կարծում ենք, այդպիսով Արցախի բարձրագույն գիտակրթական համակարգը կունենա իր գիտական պատմությունը:

Խորին երախտագիտություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր, շահագրգռված լինելով ԼՂՀ գիտակրթական համակարգի առաջընթացի ու զարգացման հեռանկարներով, ոլորտի մասնագետի, գիտնականի և կամ պարզապես քաղաքացու իրենց պարտքն են համարել ներկայացնելու շահեկան նկատառումներ ու դիտողություններ մեր ուսումնասիրության վերաբերյալ: Հավաստիացնում ենք, որ մույնչափ երախտապարտ կլինենք նոր արձագանքների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արցախի կրթական համակարգի ձևավորման փուլերը

Հայ ժողովուրդը պատմական զարգացման ընթացքում անցել է մարդկային պատմության բոլոր փուլերը, ունեցել է մշակութային, քաղաքական վերելքներ ու վայրէջքներ, հաղթանակներ ու պարտություններ և, չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, հայ ժողովուրդը, նրա արևելյան հատվածը՝ պատմական Արցախը, իր գոյության ամենաօրհասական պահին անգամ չի կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը: Ամեն անգամ առասպելական փյունիկի պես նա հառնել է մոխրակույտերից, մաքառել հանուն իր գոյության ու մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահել հայեցի կրթություն տվող դպրոցի համար:

Պատմական աղբյուրները, հայկական և օտար մատենագրական տվյալները վկայում են, որ մեսրոպյան գրերից առաջ, դեռևս Տիգրան Մեծի ազգային քաղաքական, հոգևոր-գաղափարական գործունեության մեջ հատուկ դրսևորվում է կրթության, գիտության, փիլիսոփայության զարգացման հայեցակարգային միտումը: Պատմական Արցախը՝ որպես Հայոց աշխարհի անքակտելի պատմամշակութային, աշխարհագրական հատված և վարչատնտեսական միավոր, կրում է հոգևոր մշակութային և, մասնավորապես, դպրության զարգացման նույն միտումները, ուղղություններն ու դրսևորումները, օրինաչափությունները, ընդհանուր ազգային առանձնահատկությունները:

Արցախի ժողովրդի կրթական կյանքի պատմությունը գալիս է դարերի խորքից՝ իր հետ բերելով մեր ժողովրդի անօրինակ կրթասիրության փայլուն վկայությունները: Եվ եթե պետականություն ու քաղաքական անկախություն ունեցած ժողովուրդների

համար դպրոցը և կրթությունը եղել և մնում են սոսկ զարգացման ու առաջադիմության միջոց, ապա դարեր շարունակ իր պետականությունը կորցրած և օտարի բարբարոսական տիրապետության տակ տառապած մեր ժողովրդի համար դրանք ամենից առաջ ծառայել են որպես զենք՝ իր գոյատևման ու ազատության համար մղած պայքարում:

Դպրության բուռն զարգացումն Արցախում սկսվում է դեռևս 4-րդ դարից:¹ Թեև մեր ազգային գրերի ստեղծման փաստը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցին, սակայն անհերքելի մի շարք կռվաններ վկայում են, որ նախամաշտոցյան շրջանում էլ հայերն ունեցել են գիր ու զարգացած դպրություն: Այդպիսի կռվաններից գլխավորը գիտության, արվեստի զարգացման բարձր մակարդակն էր:

Հայոց ազգային կրթահամակարգի սկզբնավորումը պայմանավորված էր Հայաստան աշխարհում նախամաշտոցյան ու մաշտոցյան գրերի և, որպես երևույթի պատճառահետևանքային արդյունք, հայ գիր ու գրականության առկայությամբ: Քրիստոնեության ընդունումից հետո հատկապես և՛ Հայաստանում, և՛ Արցախում մեծ թափ է ստանում դպրությունը: Պատմիչները վկայում են, որ Արցախում ձևավորվում են մշակութային կենտրոններ, կառուցվում և նորոգվում են վանքեր ու եկեղեցիներ: Մ. Կաղանկատվացին վկայում է, որ դպրոցական գործն Արցախում սկզբնավորվել է դեռևս վաղ շրջանում: Նա խանդավառությամբ նկարագրում է. «Մաշտոցը ևս Արևելից կողմանք գալով դպրոցներ է հիմնում հենց Հաբանդ գավառի Ամարաս վանքում՝ 5-րդ դարում: Հաղորդած տեղեկությունների համաձայն Մաշտոցի և նրա աշակերտների գործունեությունը հիմնականում ծավալվել է Արցախի Մեծարանք, Մեծկվենք, Հաբանդ գավառներում՝ Ուտիքի Գարդմանում:²

Անվանի պատմաբան Բ. Ուլուբաթյանը հիշատակում է, որ այն ժամանակ Ամարաս վանքը համարվում էր ոչ միայն Արցախի

1. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 271:

2. Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, գլուխ 27, Թիֆլիս, 1913, էջ 26:

հոգևոր (եպիսկոպոսանիստ), այլև մշակութային ու տնտեսական կարևոր կենտրոն»:³

Մատենագիրը միաժամանակ վկայում է, որ հետագա ժամանակներում՝ 5-րդ դարի վերջերին, Արցախ-Ուտիք հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում, այդ դպրոցների թիվն ավելացավ: «Վաչագան թագավորի հոգածության առարկան էր դպրոցը: Նա բարձր էր գնահատում դպրոցը և դասաբանությունը, դրանք համարելով ազգային մեծագույն հարստություն»:⁴

Անդրադառնալով այդ շրջանի հայագիր դպրոցների ներքին կյանքին, Մ. Աբեղյանը գրում է. «Եկեղեցական-վանական դպրոցներում գիտությունն ավանդվում էր հայոց լեզվով և հայկական գրերով, բայց հունարեն լեզվի ավանդումը չէր վերանում հայկական դպրոցներում»:⁵ Պատմական իրադարձությունների իրարահաջորդ անբարենպաստ պայմաններին հանգույն՝ հայկական դպրոցներն Արցախում մերթ փակվում, մերթ վերաբացվում էին՝ պատմականորեն այդ կարճ ակնթարթներում, այնուամենայնիվ, հասցնելով կատարել աճող սերունդներին կրթելու, ուսուցանելու իրենց առաքելությունը: Պատմագրական աղբյուրներն անհերքելիորեն հաստատում են այն իրողությունը, որ Արցախը, լինելով Արևելյան Հայաստանի մի հատվածը, ունեցել է միասնական կրթական համակարգ, որը պատմության տարբեր շրջաններում պահպանել է իր կենսունակությունը:⁶

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արցախի դպրոցական կյանքում մեծ աշխուժություն էր նկատվում հատկապես 10-րդ դարում, որը հայտնի էր համեմատաբար խաղաղ ժամա-

3. Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Երևան, 1994, էջ 23-24:

4. Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 26-28, 38-41, տե՛ս նաև Հայկ Խաչատրյան, Վաչագան, Երևան, 1998, էջ 104-107:

5. Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի գրականության սկիզբը, «Սովետական գրականություն», Երևան, 1941, N 2, էջ 51:

6. Աբ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմություն (X-XV դարեր), Երևան, 1958, էջ 43, Մ. Բարխուդարյան, «Արցախ», Թիֆլիս, 1895, էջ 83, Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 23-24, Գ. Հարությունյան, Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2002, էջ 8-20:

նակաշրջանով: Եվ եթե 5-9-րդ դարերում Արցախում աշխարհիկ դպրոցը ետին պլաններ է մղվել կամ որոշ չափով դադարել է գործելուց, և զգալիորեն թուլացել էր ուսուցման ու կրթության աշխարհիկ ոգին, ապա 9-րդ դարավերջին՝ Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո, ինչպես Արևելյան Չայաստանում, այնպես էլ Արցախում, հիմնվել են զգալի թվով ուսումնակրթական օջախներ, մասնավոր դպրոցներ, մի խոսքով՝ ստեղծվել են բարենպաստ պայմաններ դպրոցական ցանցի ընդլայնման և աշխարհիկ կրթության տարածման համար:

Հիշատակված աղբյուրների հավաստի տվյալների հիման վրա ներկայացնենք 5-րդ դարից մինչև 18-րդ դարավերջ պատմական Արցախի գավառներում գործած դպրոցների ընդհանուր բնութագիրը.

1. եկեղեցական-ծխական
2. վանական
3. մասնավոր (արական)
4. մասնավոր (օրիորդաց)
5. հոգևոր ուսումնարան, վարդապետարան:

Այդ կրթօջախները հիմնականում գործում էին Ամարասի, Դադի, Գոչա, Սուրբ Հակոբի, Երից Մանկանց վանքերում, եկեղեցիներին կից և առանձին մասնավոր տներում:

19-րդ դարը հայ ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջան էր: Արևելյան Չայաստանի և Արցախի միացումը Ռուսաստանին նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի հոգևոր կյանքի, մշակույթի ու կրթության զարգացման համար: Սկսվեց հայ դպրոցի կազմավորման նոր շրջան: Դարասկզբին Արցախի հոգևոր-մշակութային կենտրոնը դարձավ Շուշի բերդաքաղաքը: Այստեղ է, որ 1827 թվականին սկիզբ առավ հայ տպագրական գործը⁷, հիմնվեցին նոր տիպի դպրոցներ:

Բնութագրելով Արևելահայ դպրոցի ընդհանուր վիճակը 19-րդ դարի առաջին կեսին, Ալ. Երիցյանը նշում է, որ 19-րդ դարի 20-ական թվականներին Արցախյան աշխարհում որոշակի առաջըն-

7. Հով. Ղուկասյանց, Բողոքականություն Կովկասի հայոց մեջ, Թիֆլիս, 1886, էջ 9:

թաց է կատարվում լուսավորական կյանքում, գնալով ընդլայնվում է դպրոցական ցանցը: Այդ ժամանակ Արցախի թեմի մեջ մտնող Նուխի գավառում գործում էին (1818-1820թթ.) 18 հայկական դպրոցներ, իսկ Նուխի քաղաքում՝ 4 հայկական դպրոցներ, որոնք բացվել էին Եփրեմ կաթողիկոսի հրամանով:⁸ Ականավոր մանկավարժ Մուշեղ Սանթրոսյանի աշխատության տվյալներով,⁹ 19-րդ դարի առաջին կեսին (1800-1850թթ.) Արցախի թեմում գործել են հետևյալ տիպի դպրոցներ.

1. եկեղեցական-ծխական դպրոցներ (Արցախի գավառներում)

2. մասնավոր դպրոցներ

3. Շուշի քաղաքում՝

ա) գավառական ռուսալեզու ուսումնարան (1830թ.)

բ) հայալեզու ուսումնարան (1827-1836թթ.)

գ) հոգեւոր ուսումնարան (1836-1837թթ.)

դ) թեմական դպրոց (1838թ.):

Հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված առաջին պաշտոնական կանոնադրության համաձայն (1836թ. հայտնի «Պոլոժենիե»),¹⁰ 1838թ. հունիսի 22-ին բացվում է Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն Արցախում: Բազմավաստակ պատմաբան, թեմական դպրոցի շրջանավարտ Լեոն իրավագիտորեն մատնանշում է, որ թեմական դպրոցի հիմնական խնդիրն է եղել հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը: Սակայն հայ հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց և նրա թելադրանքով թեմական դպրոցն աստիճանաբար հեռացել է իր հիմնական խնդրից և ավելի ու ավելի մոտեցել աշխարհիկ նպատակների իրականացմանը: Այդ դպրոցներից են դուրս եկել մեր ծխական տարրական դպրոցների ուսուցիչների մեծ մասը, հայ մշակույթի

8. Ալ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 271-274:

9. Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 46-50:

10. «Պոլոժենիե» 1836թ. Բարձրագույն կարգադրության յաղագս կառավարութեան գործոց լուսավորչական հայոց եկեղեցուցի Ռուսաստանի, Էջմիածին, 1836թ. էջ 1:

ու հասարակական մտքի գործիչներ:¹¹

Դարի երկրորդ կեսին Արցախի մշակութային, դպրոցական, լուսավորական գործն ամենասերտ կերպով կապված էր ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հասարակական և քաղաքական շարժումների հետ: Հասարակական-մշակութային կյանքի ընդհանուր աշխուժացման հենքի վրա էլ դպրոցական-լուսավորական գործն Արցախի թեմում 19-րդ դարի 50-60-ական թվականներին սկսում է որոշ զարթոնք ապրել: Արխիվային տվյալներից տեղեկանում ենք, որ 1850-1900-ական թվականներին Արցախի թեմում գործել են հետևյալ տիպի դպրոցներ.

1. եկեղեցական-ծխական դպրոցներ
2. միդասյա և երկդասյա դպրոցներ, 1-5-րդ դասարան
3. Շուշիի թեմական դպրոց (1838-1920թթ.)
4. օրիորդաց դպրոցը (1864-1920թթ.)¹²
5. Շուշիի ռեալական ուսումնարանը (1881-1920թթ.)¹³

Շուշիի ռեալական ուսումնարանը սերտ կապերով կապված էր Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցների, Էջմիածնի Քևորդյան ճեմարանի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի և այլ ուսումնական հաստատությունների հետ: Այդ մասին Լեոն գրում է. «Շուշիի ռեալական ուսումնարանը պահպանել է ազգային ուսումնական հաստատության կերպարանքը, չխորթացնել հեռավոր ծայրամասերից եկած հայ երեխաներին մեր իրականությունից, մայրենի լեզվից, միշտ վառ պահել ազգային ինքնաճանաչման ոգին»:¹⁴ Լեոն միաժամանակ նշում է, որ ռեալականի ուսուցիչները, սաները ձգտում էին ուսումնարանը դարձնել Արցախի ժողովրդի մշակութային կրթական, լուսավորական կենտրոն,

11. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 183:

12. ՀԱԱ, ք.56, գ.3, գ.78,թ.13, 20, 43:

13. Հայոց լեզու առարկայի ուսուցումը Շուշիի ռեալական ուսումնարանում պաշտոնապես թույլատրվել է վերսկսել 1909թ.՝ շաբաթական երկու դասաժամ պարբերականությամբ: Հրաչեայ Աճառեան, «Կյանքիս հուշերից», Հրատարակութիւն Թ.Հ.Թ. քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի, Թեհրան, 2007թ., էջ 328-330):

14. Տե՛ս Լեոի նշվ. աշխ., էջ 554-510, ինչպես նաև՝ Հ. Գրիգորյան. Գ. Հարությունյան, Շուշիի ռեալականը, Երևան, 2001, էջ 32:

ինչպես թեմական դպրոցը: Իր 40-ամյա գործունեության (1881-1920) ընթացքում ռեալական ուսումնարանը դարձել էր արցախահայերի ազգային ուսումնական հաստատություն, ինչպես նաև կրթամշակութային, հասարակական-քաղաքական շարժումների առաջավոր մտավորականների կենտրոն, որտեղ քննարկվում և առաջ էին քաշվում արցախահայության ազատագրական պայքարին, անկախությանն առնչվող բազմազան հարցեր:

Շուշիի ռեալական ուսումնարանն Արցախի թեմում երկրորդ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունն էր, որտեղ կրթությունն ավանդվում էր ռուսերեն լեզվով: Չնայած ռեալականի ստեղծողների դավադիր ծրագրերին՝ ուղղված Արցախ աշխարհում հայեցի ուսուցման վերացմանը, այնուամենայնիվ, ուսումնարանի շրջանավարտներն անգնահատելի դեր խաղացին մեր ժողովրդի գիտական մտքի ու մշակույթի զարգացման գործում:

Այսպիսով, կարելի է ասել, որ 19-րդ դարում Արցախի միջնակարգ մասնագիտական կրթության առաջնեկները Շուշիի թեմական դպրոցը եւ ռեալական ուսումնարանն էին: Այդ ուսումնական հաստատությունները պահպանվել են մինչեւ խորհրդային շրջանը՝ 1920 թվականը:

Այս առումով մի փոքր անդրադարձ՝ կապված 20-րդ դարասկզբին Շուշիի թեմական դպրոցի փակվելու իրողության հետ: Այն ժամանակ թեմականի ուսուցիչ, մեծանուն հայագետ Յրաչյա Աճառյանի վկայությամբ, Շուշիի այդ կրթօջախը փակվել էր ի պատասխան շուշեցիների զանգվածային բողոքի ցույցի՝ ուղղված 1903թ. ցարական հրովարտակով հայոց եկեղեցական կալվածքների բռնագրավման գործընթացի դեմ: Յր. Աճառյանը գրում է. «Դրսում տեղի ունեցավ ժողովրդական մեծ ցույց. ամբողջ ժողովուրդը մեծ բազմությամբ փողոցները լցվեց, գոռալով, գոչելով, թե «Չենք տայ մեր կալւածները»: Միջամտեց ոստիկանութիւնը և զօրքը: Յրացանները որոտացին: Մի քանի կազակ սպանւեց, ոմանք քարկոծւեցին եւ վերջապէս ցոյցը վերջացաւ: ...Շուշեցոց այս աստիճան զօրեղ դիմադրութիւնը շար-

ժեց ռուս կառավարութեան զայրոյթը: Նրանք փակեցին Շուշայ Թեմական դպրատունը, մինչդեռ Երեւանի եւ Տփղիսի Թեմական դպրանոցները բաց մնացին»: Եվս մեկ քաղվածք «Կյանքիս հուշերից» գրքից. «Ռուսաց դպրոցների բարձրագոյն դասարանների աշակերտները խմբակներ էին կազմել եւ սովորում էին հայերէն լեզու, հայ գրականութիւն եւ հայոց պատմութիւն՝ Թեմականի ուսուցիչների ղեկավարութեամբ:

Հայոց պատմութեան ուսուցիչը ես էի: Շաբաթական երկու անգամ երկու աշակերտ՝ իբրեւ պատուիրակ, գալիս էին ինձ մօտ եւ առաջնորդում ինչ որ մի տուն: Ամեն անգամ տեղը փոխւում էր: Գնում էի եւ դահլիճում կանոնաւոր աթոռների վրայ նստած՝ գտնում էի ունկնդիր աշակերտներին: Այնպէս էին կազմակերպւած, որ իբր թէ այդ օրը տնեցիք տօնախմբութիւն ունէին: Թառն ու դափը պատրաստ դուած էին. այս բոլորը արւած էր զգուշութեան համար, որպէսզի եթէ ոստիկանութիւնը ներս մտնէր, դասախօսութիւնը վերածէր նւագահանդէսի:

Ի զարմանս բոլորի եւ ի պատիւ շուշեցոց՝ ոչ մի օր այդպիսի բան չեղաւ: Ոստիկանութիւնը անտեղեակ էր եւ մնաց անտեղեակ, չգտնվեց ոչ մի դաւաճան, որ մեր գաղտնիքը մատնէր նրանց: Հանդիսութեամբ ես պատմում էի հին հայոց պատմութեան գլխավոր դէպքերը: Անցայ ամբողջ դասընթացը»:¹⁵

Այսպիսով, վերը համառոտակի շարադրանքից ակնհայտ է դառնում, որ արցախահայ դպրոցը սկզբնավորման շրջանից մինչև 20-րդ դարի սկիզբն ունեցել է հարուստ պատմություն և այդ մասին հրապարակի վրա առկա են հարուստ պատմագիտական աղբյուրներ, ժամանակի պարբերական մամուլում հրատարակված հոդվածներ, որոնք էլ հետազոտողին հնարավորություն են ընձեռում ամբողջական պատկերացում ունենալ պատմաշրջանի Արցախի կրթական համակարգի ձևավորման ու զարգացման ամբողջական պատմության մասին:

Անշուշտ, այդ աղբյուրները հիմք են ծառայում մեզ համար ամբողջական պատկերացում տալ նաև խորհրդային միասնա-

15. Հրաչեայ Աճառեան, «Կյանքիս հուշերից», Հրատարակութիւն Թ.Հ.Թ. քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի, Թեհրան, 2007թ., էջ 330-331:

կան կրթական համակարգի ձևավորման ու զարգացման պատմաշրջանների մասին, որը սերտորեն կապված է մեր հետազոտության հետ:

Մանկավարժական հայտնի ճշմարտություն է, որ նոր ժամանակի սկիզբը միաժամանակ ազգային նոր դպրոցի, մանկավարժական նոր որոնումների, կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների և դպրոցին ներկայացվող նոր պահանջների շրջան է: Այդ տեսանկյունով էլ Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ արմատականորեն վերափոխվեց ինքնավար մարզի կրթական համակարգը:

Այսպես, 1923 թվականի հունիսին ստեղծվեց ԼՂԽ լուսժողկոմատը: Առաջին լուսժողկոմ նշանակվեց Շուշիի ռեալական ուսումնարանի շրջանավարտ Արշավիր Քամալյանը: Լուսժողկոմատի որոշմամբ փոխվեց նախկին բազմաձև կրթական համակարգը: Ժողկրթության նոր կրթական համակարգի մեջ (1920-1930) սկսեց գործել երկաստիճան 9-ամյա աշխատանքային միասնական դպրոց.

«Ա» աստիճան՝ 1-4-րդ դասարաններ,

«Բ» աստիճան՝ 5-9-րդ դասարաններ:¹⁶

Այսպիսով, խորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղում առաջին դպրոցը 9-ամյա կրթական միջնակարգ դպրոցն էր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1922-23 ուստարում Լեռնային Ղարաբաղում գործում էին 79 առաջին և 3 երկրորդ աստիճանի աշխատանքային միասնական դպրոցներ: Այդ դպրոցներում սովորում էր 4375 աշակերտ, դասավանդում էր 150 ուսուցիչ: Գործում էին 10 առաջին աստիճանի և 1 երկրորդ աստիճանի այլազգի դպրոցներ Շուշիում, որոնց աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 761-ի, իսկ ուսուցիչների՝ 30-ի:¹⁷ Առաջին աստիճանի դպրոցներում դասավանդում էին հայոց լեզու, մաթեմատիկա, հայրենի բնություն, աշխարհագրություն, արվեստ, պատմություն, նկարչություն, երգ, ձեռքի

16. Այդ մասին տես, Գ. Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1985, էջ 110:

17. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 112:

աշխատանք, ֆիզկուլտուրա, իսկ երկրորդ աստիճանի դպրոցում՝ հայոց լեզու, աղբբեջաներեն լեզու (նաև հայկական դպրոցներում), մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, քիմիա, կենդանաբանություն, հասարակագիտություն, գեղագիտություն և այլ առարկաներ:¹⁸ Առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկվում էին 8-12 տարեկան երեխաներ, իսկ երկրորդ աստիճանի դպրոցներում՝ 8-17 տարեկաններ: Այն ժամանակ երեխաները դպրոց էին ընդունվում 8 տարեկանից:¹⁹ ԼՂ լուսժողկոմ Առաքել Առաքելյանի զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1924-1925 թվականներին մարզի գյուղական վայրերում ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ՝ գյուղերիս (գյուղական երիտասարդության համար) դպրոցներ, և անգրագիտության վերացման նպատակով բացվեցին մի շարք լիկկայաներ:²⁰

Լեռնային Ղարաբաղում նոր տիպի՝ երկրորդ աստիճանի դպրոցների լայն ցանցը, նրանց հետագա զարգացումը և տարբեր մասնագիտությունների գծով բարձրորակ կադրերի պատրաստումը հնարավորություններ ստեղծեցին կազմակերպելու նաև մի շարք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք լուրջ դեր խաղացին մշակույթի տարբեր բնագավառների դպրոցների համար միջին օղակի մասնագետներ պատրաստելու գործում: Անշուշտ, միջնակարգ մասնագիտական ուսումնական կրթօջախների կազմակերպումն ամենից առաջ պայմանավորված էր մարզի քայքայված տնտեսության վերականգնման, արդյունաբերության ու ժողովրդական կրթության, տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացման հրատապ խնդիրների կենսագործման հետ: Այս տեսանկյունով էլ մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով մարզում ընդլայնվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (տեխնիկումների, ուսումնարանների) ցանցը: Ի դեպ, նշենք, որ սկզբում, երկրորդ աստիճանի

18. Նույն տեղում:

19. Այդ մասին տես, Յ. Գրիգորյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 336-337:

20. ԼՂՀ արխիվ, ֆ. 10, ց. 1, գ. 140, 141, 151, 161:

դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ժողովրդական կրթության, տնտեսության այլ բնագավառների համար:

Մեր հետազոտության հետ կապված, նպատակահարմար գտանք համառոտակի բնութագրել նաև Լեռնային Ղարաբաղում (Արցախում) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների գիտակրթական գործունեությունը, առանց որի, հնարավոր չէ ամբողջական պատկերացում տալ Արցախի գիտակրթական համակարգի ամբողջական պատմության մասին:

Պաշտոնական տվյալների համաձայն, քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակութային կենտրոն Շուշիում՝ հայաշատ քաղաքում, թեմական դպրոցի, Ռեալական ուսումնարանի փակումից հետո միակ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը Շուշիի մանկավարժական տեխնիկումն էր, որը ոչ միայն ուսուցչական կադրեր էր պատրաստում Արցախի հայկական դպրոցների համար, այլև դարձել էր Արցախի կրթամշակութային, հասարակական-քաղաքական շարժումների, առաջավոր մտավորականների կենտրոն: Այստեղ պարբերաբար քննարկվում և առաջ էին քաշվում արցախահայության մշակութային կյանքին, լուսավորությանը, կրթությանն առնչվող բազմաբնույթ հարցեր: Հավաստի աղբյուրներից տեղեկանում ենք, որ 1920թ. Շուշիի ռեալական ուսումնարանի փակումից հետո, ռեալականի շենքում գործող երկրորդ աստիճանի հանրակրթական միջնակարգ դպրոցը 1922-23 ուսումնական տարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, այնուհետև՝ Շուշիի մանկավարժական տեխնիկումի՝ հանդիսանալով ռեալական ուսումնարանի իրավահաջորդը:²¹ ԼՂ լուսժողկոմ Ար. Քամալյանի (հետագայում՝ 1930-1932թթ. դասավանդել է մանկավարժական ուսումնարանում) հաշվետվությունից տեղեկանում եք, որ 1923-1924 ուսումնական տարում Շուշիի մանկա-

21. Տե՛ս, ՀՀ հանրագիտարան, հ.8, էջ 601: Տե՛ս նաև «Շուշիի ռեալականը», էջ 18:

վարժական տեխնիկումն ուներ երկու բաժին (հայկական և քրդական)՝ 144 ուսանող, 12 ուսուցիչ:²²

Մանկավարժական տեխնիկումի առաջին երկու տարիներին (1921-1923թթ.) ուսանողների թիվը տատանվել է 100-120-ի միջև: Տեխնիկումի սակավաթիվ առավելություններից մեկն էլ այն էր, որ այստեղ նախորդ ժամանակաշրջանի դպրոցների համեմատությամբ ուսումը ձրի էր: Բազմապիսի ֆոնդերի հաշվին սովորողների զգալի մասը ստանում էր նպաստ (հատկապես ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաները), թոշակ և այլ կարգի օգնություն:

Ուշագրավ է նաև նշել այն, որ տեխնիկումի վարչության (տնօրինության) կարգադրությամբ ջանասեր, առաջադեմ սովորողների մի մասն ստանում էր դրամական օժանդակություն և պարգևներ՝ գրքեր: Մանկավարժական ներգործության այս միջոցների կիրառումը հնարավորություն է ընձեռել ավելի շատ հայ երեխաների ստանալու միջնակարգ մասնագիտական կրթություն: 1922-1923 ուսումնական տարում մանկավարժական տեխնիկումը տվել է առաջին շրջանավարտները, որոնք անձնվեր աշխատանք են կատարել մարզի քայքայված տնտեսության վերականգնման, անգրագիտության վերացման դժվարին տարիներին: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մանկավարժական տեխնիկումի սովորողներին տրված մանկավարժական բնութագրերը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի տարբեր համարներից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ մանկավարժական բնութագրերում վավերագրվում են յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը, կարգապահությունը, թվանշաններն ու նկատողությունը: Օրինակ. «Գերազանց սովորող է և կարգապահ», «Բավականին ջանասեր է», «Չարգալից վերաբերմունք ունի իր ընկերների, ուսուցիչների նկատմամբ», «Գոհ ենք վարքից», «Դեպի լավը փոփոխության նշույլ անգամ չկա, օրավուր վատանում է» և այլն:²³

Մանկավարժական բնութագրերում նշվում են նաև սովորող-

22. Ար. Քամայանի զեկուցագրերը. «Доклады с 1923-1934гг.»

23. Տե՛ս ԼՂԳ արխիվ, ֆ. 10, ց. 1, գ. 140, 141, 151, 161:

ների տարիքը, ծննդավայրը, ծնողների զբաղմունքը, կենցաղային պայմանները և այլն:

Ինչպես տեսնում ենք, այստեղ լուրջ փորձ է կատարված՝ հետազոտելու տեխնիկումի սովորողների ուսումնական, նյութական հնարավորությունները, կենցաղային պայմանները, առանց որի հնարավոր չէ ճիշտ մանկավարժական մոտեցում ցուցաբերել ուսանողների նկատմամբ, պարզել այն պայմանները, որոնք դրականորեն կամ բացասաբար են անդրադառնում նրանց վարքի ու առաջադիմության վրա: Ի դեպ, նշենք, որ մանկավարժական ներգործության այս միջոցներն ու հնարները ժամանակին կիրառվել են նաև Շուշիի թեմական դպրոցում, Ռեալական ուսումնարանում և ուսանելի է նաև այսօր՝ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Գտնում ենք, որ ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր ուսանողի համար անհրաժեշտ է բովանդակալի կազմել մանկավարժական բնութագրեր, որտեղ մամրամասն արձանագրվի ուսանողի գործունեությունը և ավարտական կուրսում ընդհանրացվի ու տրվի համապատասխան որակավորում:

Մանկավարժական տեխնիկումի ղեկավարությունը լուսժողկոմի առաջատար մասնագետներից կազմում է մասնագիտական հանձնաժողով, ընդունում դասավանդող ուսուցիչներ, կազմակերպում դասալսույններ, ստուգում նրանց մասնագիտական պատրաստվածությունը, իսկ ուսումնական տարվա վերջին՝ ստուգում սովորողների առաջադիմությունը տվյալ առարկայից: Կուրսից-կուրս փոխադրելու համար տալիս էին համապատասխան վկայագիր, իսկ ուսման առաջադեմ սովորողները պարգևատրվում էին գրքերով:

Մանկավարժական տեխնիկումն իր հիմնադրման օրից գրավել է արցախահայ հասարակության սերն ու համակրանքը և կարող անձինք թե տեխնիկումի ղեկավարների հորդորանքով, և թե ինքնաբերաբար, բազմաթիվ նվերներ են տվել՝ անշարժ գույքերով, անհրաժեշտ գումարներով և այլ պարագաներով: Համարձակ կարող ենք ասել, որ այն ժամանակ և իր հետագա բեղմնավոր գործունեության շրջանում Շուշիի մանկավարժա-

կան տեխնիկունը (ուսումնարանը, այժմ՝ 20-րդ դարի լավագույն մանկավարժ Ար. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջ) եղել է արցախահայերի ամենից փայփայած, ամենից օգտակար ազգային ուսումնական հաստատությունը, որի ապահովության կամ բարգավաճման գործին ամեն մի բարերար (ինչպես այսօր Արցախի հանրապետության վերակառուցման շրջանում) աշխատել է նպաստել կամ կենդանության ժամանակ, կամ ավելի հաճախ, հետմահու կտակներով, ինչպես այդ կատարվել է Արցախի թեմի դպրոցների բացման ու հարատևման շրջանում, որի լավագույն ավանդույթները շարունակվում են նաև մեր ժամանակներում:²⁴

Պետք է նշել, որ հայ մտավորականությունն անձնվիրաբար կանգնած էր մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում, և անգնահատելի ծառայություն մատուցեց մեր ժողովրդին ոչ միայն գիտության զարգացման բնագավառում, այլև կրթեց ու դաստիարակեց մանկավարժական տեխնիկունի մի ամբողջ սերունդ, որը հետագայում իր ուսերի վրա տարավ արցախահայ մտավորականության նոր կադրեր պատրաստելու դժվարին, բայց պատվավոր գործը:

Չնայած Լեռնային Ղարաբաղում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը կազմակերպվել է 1921-1922 ուստարվանից, սակայն նրա միասնական համակարգը հիմնադրվում է 1927 թվականին՝ վերոհիշյալ կանոնադրությունը հաստատելուց ու գործողության մեջ դնելուց հետո:

1929-1930 ուստարում ընդունվում է միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ նոր կանոնադրություն, որի համաձայն տեխնիկունները և ուսումնարաններն այլևս չպետք է կոչվեն երկրորդ աստիճանի դպրոցներ, ինչպես այդ նշված էր 1926 թվականին ընդունված կանոնադրության մեջ, այլ՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ:²⁵

24. Այդ մասին տես, Ա. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան, Ստեփանակերտ, 2006, էջ 10-12:

25. Նույն տեղում:

Սկսած 1930թ., Շուշիի մանկավարժական տեխնիկումը վերափոխվեց ուսումնարանի, որը լուրջ դեր խաղաց մարզի հայկական, ադրբեջանական դպրոցները միջին օղակի մանկավարժներով ապահովելու գործում:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի բազայի վրա կազմակերպվեց նաև բանֆակ, որը 1928-1930 թվականներին գործում էր առանձին, իսկ 1930-1931 ուստարվանից՝ մանկավարժական ուսումնարանին կից:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Ար. Վարդանովը (1929-1934թթ.) իր հաշվետվության մեջ վկայում է այն փաստը, որ Շուշիի մանկավարժական ուսումնարանը, լինելով միակ մանկավարժական ուսումնական հաստատությունը, ԼՂԽՍ-ում բավականին լուրջ աշխատանք է տանում անգրագիտության վերացման ուղղությամբ:

Մեր ձեռքի տակ եղած արխիվային նյութերի և այլ աղբյուրների ընձեռած հնարավորությունների հիման վրա աղյուսակի ձևով ցույց տանք Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի մեջ մտնող ուսումնական հաստատությունների, լիկկայանների թիվը, սովորողների, դասավանդող ուսուցիչների կազմը՝ 1930-1934 թվականներին:²⁶

26. Տե՛ս Ս. Ավագյանի «Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից», Երևան, 1983թ., էջ 64, ԼՂՊԱ Լուսբաժին ֆ.10, գ.1, 17, 10, ինչպես նաև Գ. Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, Եր. 1985, էջ 115:

Աղյուսակ 1.

Ուսումնական հաստատությունների տիպերը	Քանակը	Սովորողների թիվը	Ուսուցիչների թիվը	Ծանոթություն
Սանկավարժ. ուսումնարան	1	367	42	
Նրան կից բանֆակ	1	64	6	
Ստեփ. գյուղ. տեխնիկում	1	230	26	
Երաժշտական ուսումնարան	1	82	12	
Բժշկական ուսումնարան	1	112	12	
Երաժշտ. ուսում. Շուշիում (աղբբեջանական)	1	94	15	
Կոմ. երիտ. դպրոց (Կ.Ե.Ղ.)	2	130	18	
Երեկոյան կուս. դպրոց	3	215	17	
9-ամյա դպրոց	5	1500	82	
7-ամյա դպրոց	3	390	38	
1-ին աստ. դպրոց	165	2478	282	
Ընդհ. միջ. դպրոց	2	75	8	
Ֆեզո	1	84	6	
Սանկատուն	2	150	11	
Սանկապարտեզ	6	340	15	
Լիկկայան	803	2500	21	
Ընդամենը	998	31054	613	

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ աղյուսակում բերված տվյալները վկայում են մոտավոր հաշվով, քանի որ արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում նշված թվերը իրար հակասում են: Մեզ համար դժվարությունն այն է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում 1930-1934թթ. ուսումնարանի մասին շատ չնչին նյութեր են պահպանվել:²⁷

27. Տե՛ս, Ա. Խաչատրյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 20:

Ուսումնագիտական այդ կրթօջախը հետագա ժամանակներում բեղուն գործունեություն ունեցավ և պահպանեց հայաշունչ ոգին: Այն փակվեց 1988 թվականին և Արցախյան ազգային-ազատագրական շարժման պատերազմական ծանր պայմաններում գոյատևեց մինչև ազատ, անկախ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ստեղծման շրջանը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների համակարգի մեջ են ներառվում նաև գյուղատնտեսական տեխնիկումը, երաժշտական, բժշկական ուսումնարանները, որոնք իրենց արգասավոր գործունեության տարիներին դարձան այդ ոլորտի համար երիտասարդ կադրերի պատրաստման դարբնոցներ:

ԼՂ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղեր որակյալ կադրերով ապահովելու նպատակով 1923թ. նոյեմբերի 1-ին Ստեփանակերտում հիմնադրվում է Ալ. Ծատրյանի անվան գյուղատնտեսական տեխնիկումը: Այն առաջին տարում ուներ 2 բաժանմունք (անասնաբուժական և մեխանիկական), 2 դասարան, 48 աշակերտ, 6 ուսուցիչ:²⁸ Ուսումնական այդ հաստատությունը մարզում գյուղատնտեսական կադրերի պատրաստման միակ կրթօջախն էր:

Այն ժամանակ Արցախին պետք էին կադրեր, որոնք կկարողանային նոր պայմաններում արտադրություն կազմակերպել և վճռել այն խնդիրները, որ առաջ էր քաշում կյանքը: Տեխնիկումի առաջին երախտավորները եկան հրավերով, կամավոր, երկրամասին անձնվեր ծառայելու պատրաստակամությամբ:

Աստիճանաբար ձևավորվեց ու համալրվեց տեխնիկումի մանկավարժական կոլեկտիվը: Տեխնիկումի առաջին տնօրեն նշանակվեց Սանկտ-Պետերբուրգի գյուղատնտեսական բարձրագույն դպրոցի շրջանավարտ, փորձառու մանկավարժ և ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմնալի կազմակերպիչ Արսո Սամսոնի Հովհաննիսյանը (ծնվ. 1884թ. Հադրութի

28.Տե՛ս ԼՂ լուսժողկոմ Արշավիր Քամայանի հաշվետվությունը. “Доклады с 1923-1934гг.” ст. 18-30, նաև Ա. Դանիելյան, Հարազատ օջախ (Գյուղտեխնիկումի 70-ամյակի առթիվ), Երևան, 1993, էջ 2-4:

շրջանի Վանք գյուղում): Նա 1918-1923թթ. բնագիտական առարկաներ է դասավանդել Շուշիի ռեալական ուսումնարանում, որտեղ և կազմակերպել է բնագիտության կաբինետ, փորձնական դասեր և այդ ուսանելի փորձը տարածել նորաստեղծ ուսումնական հաստատություններում:

Ստորև ներկայացնում ենք 1924-25 ուսումնական տարում սովորողների և ուսուցիչների կազմը՝ ըստ շրջանների.

Աղյուսակ 2

Դասարան	Սովորողների կազմը ըստ սեռի			Ըստ շրջանների				Ղարաբաղից դուրս
	ար.	իգ.	ընդամենը	Խաչենի շրջ.	Վարանդայի շրջ.	Դիզակի շրջ.	Ջրաբերդի շրջ.	
I	39	9	48	10	11	10	7	1
II	28	11	39	10	17	7	4	1
III	25	4	29	9	6	9	5	2
IV	20	7	27	7	10	4	1	-
Ընդամենը	112	31	143	36	44	30	17	4

Արդեն 1926-27 ուստարում տեխնիկունը տվեց իր անդրանիկ շրջանավարտները՝ թվով 21 հոգի: Տարեցտարի խտացան արտադրություն ուղարկված մասնագետների շարքերը: Շատերն ուսումը շարունակելու նպատակով ընդունվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ, մի մասը գերադասեց ուսուցչություն անել դպրոցներում, շատերն առաջ քաշվեցին ղեկավար պաշտոններում: Գյուղտեխնիկունն իր պատրաստած տեխնիկական, գյուղատնտեսական, ամասնաբուժական կադրերով կարևոր դեր խաղաց Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության զարգացման գործում:

Լեռնային Ղարաբաղում միջին օղակում կադրեր պատրաստելու մյուս կրթօջախը երաժշտական ուսումնարանն է:

Ուշագրավ է, որ մեծահռչակ երգահան ու երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը ծեռնամուխ է եղել Հայաստանում, նրա արևելյան հատվածում՝ Արցախում, երաժշտական կրթության օջախների հիմնադրման գործին:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Առաքել Առաքելյանը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Սարգի լուսժողկոմատի 1925-26 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին» հաշվետվությունում, ընդհանրացնելով հանրակրթական դպրոցների վիճակը, նշում է նաև, որ այդ ուսումնական տարում Ստեփանակերտում գործում էր 3 տեխնիկում՝ մանկավարժական, գյուղատնտեսական և երաժշտական: Վերջինս հիմնադրվել է 1924 թ. աշնանը՝ անվանի երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանի նախաձեռնությամբ: Սկզբնական շրջանում երաժշտական տեխնիկումում սովորում էր 84 ուսանող, որից 61-ը՝ աղջիկ, դասավանդում էր 3 ուսուցիչ: Հենց առաջին պարապմունքը կազմակերպում է մեծ երաժշտագետը՝ Ռոմանոս Մելիքյանը: 1925-26 ուսումնական տարում սովորողների թիվը հասնում է 174-ի, որից 104-ը՝ հայեր, իսկ մնացածը՝ այլազգի (ռուսներ, հույներ, ադրբեջանցիներ):²⁹

Երաժշտական տեխնիկումում մասնագիտական առարկաների հետ միասին դասավանդում էին նաև հանրակրթական առարկաներ (հայոց լեզու և գրականություն, պատմություն, ռուսաց լեզու, մաթեմատիկա, ֆվարանություն, հասարակագիտություն)՝ միջնակարգ դպրոցի ծրագրով:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղում երաժիշտ կադրերի առկայությունը հնարավորություն տվեց էլ ավելի աշխուժացնելու «Պատմական, ազգային, ավանդական համերգ-գրույցներ»-ի ելույթները, որոնք սիստեմատիկ բնույթ ունեին և, բացի Ստեփանակերտից, կազմակերպվում էին նաև շրջանների բնակավայրերի հասարակայնության համար:

Առանձնահատուկ կարևորություն տալով աճող սերնդի գեղագիտական դաստիարակության և երաժշտական կրթության

29. Տվյալների մասին տե՛ս ԼՂ լուսժողկոմի հաշվետվությունները. “Доклады с 1923-1934гг.”, с. 26, 18-19:

զարգացման խնդիրներին՝ երաժշտական տեխնիկումի դերի ու նպատակների վերաբերյալ իր տեսակետը հայտնելիս ԼՂ լուս-ժողկոմ Առաքել Առաքելյանը մատնանշել է, որ երաժշտական ուսումնարանի սովորողները գիտելիքներով զինվելու և իրենց ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով ակտիվորեն մասնակցում էին երաժշտական համերգներին, թատերական ներկայացումներին, դպրոցներում կազմակերպում ցուցահանդեսներ, երգի ու պարի խմբակներ, իսկ ամառային արձակուրդներին համերգներ՝ երաժշտական մշակույթը ժողովրդական լայն զանգվածներին բարձր որակով ու մակարդակով մատուցելու համար:³⁰

1930-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում մասնագետ կադրերի պահանջը բավարարելու նպատակով էլ ավելի ընդարձակվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը: Նույնիսկ երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ժողովրդական տնտեսության, կրթության, առողջապահության համար:

Արցախի առաջադեմ մտավորականությունը, տոգորված պարտքի, պատասխանատվության զգացումով, աճող սերնդին կրթելու, նրան տարբեր մասնագիտությունների գիտական գիտելիքներով զինելու պատրաստականությամբ, միշտ էլ հոգացել է, որպեսզի իր ժողովրդի համար ստեղծվի բարեկեցիկ կյանք: Այս տեսակետից առաջնահերթ նշանակություն ունեն մատաղ սերնդի և աշխատավորների բուժսպասարկման գործի բարելավումը: Այդ ուղղությամբ այն ժամանակ մարզում բավականին աշխատանքներ են կատարվել:

Եվ այսպես՝ 1920-ական թվականների վերջերին առաջնահերթ նշանակություն ունեն մարզի բնակչության բուժսպասարկման գործի բարելավումը, առաջին հերթին՝ այդ ուղղությամբ

30. «Ստեփանակերտի Նայթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի 40-ամյա պատմությանը»: Ստեփանակերտ, 2001, էջ 3-4:

բուժսպասարկման որակյալ կադրեր պատրաստելու խնդիրը: Այդ նպատակով 1932 թվականի սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտի քաղաքային առաջին բուժկետի (ծննդատան) բազայի վրա կազմակերպվեց Ստեփանակերտի բժշկական տեխնիկումը (այն 1958թ. վերանվանվեց ուսումնարան), որն առ այսօր ԼՂ Յանրապետության ամենախոշոր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններից մեկն է և մի շարք մասնագիտությունների գծով պատրաստում է միջին որակավորման բուժկադրեր (բուժքույր, բուժակ, բուժակ-լաբորանտ, սանիտար-բուժակ, մանկաբարձ, դեղագործ և այլն):³¹

Վերոհիշյալ փաստագրական տվյալների համառոտ բնութագրումից կարելի է եզրակացնել, որ Լեռնային Ղարաբաղում խորհրդային շրջանում և այսօր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները կադրեր էին պատրաստում ոչ միայն ժողովրդկան տնտեսության տարբեր ճյուղերի, կրթության, արվեստի, մշակույթի, առողջապահության բնագավառների, այլև բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որին էլ կանդրադառնանք հաջորդ գլուխներում:

31. Այս մասին տես, Իր. Ղուկասյան, Հայացք՝ 70-ամյա բարձունքից, Ստեփանակերտ, 2002, էջ 6-7:

Արցախի առաջին բարձրագույն մանկավարժական կրթօջախները

Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կադրերի պատրաստումը սկզբում կատարվում էր հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի դպրոցներում, հետագայում մանկավարժական ուսումնարանի (1920-ական թվականներին) և բարձրագույն դպրոցների կազմակերպման միջոցով: Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցները բարձրագույն կրթություն ունեցող որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու խնդրի իրականացումը դրվեց 1921-22 ուստարում Շուշիում (իսկ այնուհետև Հադրութում) հիմնադրված մանկավարժական ուսումնարանի վրա:

Միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցի վերաբերյալ առկա աղբյուրները³² վկայում են, որ Հայաստանում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական օջախների կազմակերպումը տեղի է ունեցել յուրօրինակ ձևով. նախ՝ ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատություն և նոր միայն միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն: Այդ ուշագրավ երևույթը բացատրվում է նաև նրանով, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատելու համար կային բարձրորակ դասախոսական կադրեր: Խոսքը վերաբերում է Խորհրդային Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնեկին՝ Երևանի պետական համալսարանին (1920թ.), որը հետագայում կադրեր է պատրաստել ոչ միայն Հայաստանի, այլև Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: 1920-30-ական թվական-

32. Փ. Խ. Հուրիխանյան, Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1969, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ (համահեղինակներ), 1922-1972, Երևան, 1972, Ա. Խաչատրյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ., 2006թ. և այլ աղբյուրներ:

ներին Հայաստանում ընդլայնվում էր ինչպես միջնակարգ մասնագիտական, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը:³³

Սակայն, ինչպես նշվել է, Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կրթության կադրերի պատրաստումը սկզբում կատարվում էր հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի դպրոցներում, հետագայում՝ մանկավարժական ուսումնարաններում: Ասենք նաև, որ մարզում 1922-1930թթ. կազմակերպվում էին միայն միջնակարգ մասնագիտական կրթական օջախներ, որոնք կադրեր էին պատրաստում ժողովրդական տնտեսության, կրթության և առողջապահության բնագավառների համար:

Սակայն, Շուշիի մանկավարժական ուսումնարանի փորձը ցույց տվեց, որ նա չէր կարող բավարարել ուսուցչական կադրերի պատրաստման պահանջը: Խորապես մտահոգված լինելով մարզում մասնագիտական կրթության հիմնադրման և բարձրորակ կադրերի պատրաստման հարցերով՝ հայրենասեր գործիչներն ակտիվ աշխատանք էին տանում երկրամասում հիմնադրելու բարձրագույն ուսումնական հաստատություն:

Եվ այսպես՝ մարզի հանրակրթական դպրոցները բարձրագույն կրթություն ունեցող որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու հարցը պարբերաբար քննարկվում է 1939թ. մարտապրիլ ամիսերին հրավիրված ԼՂ լուսժողկոմի կոլեգիայի նիստերում: Մարզլուսբաժնի կողմից ներկայացված նախագիծը՝ երկամյա մանկավարժական ինստիտուտի բյուջեն, կառուցվածքը, ուսումնական հաստատության ներքին կյանքին առնչվող այլ հարցեր, քննարկվում են նաև ԼՂ կուսմարզկոմի բյուրոյի նիստում և հավանության արժանանում, իսկ այնուհետև քննարկվում և հաստատվում են Ադրբեջանի լուսժողկոմի կոլեգիայում, որից հետո Ադրբեջանի կառավարությունը հունիսի 17-ին

33. Տե՛ս, Փ. Հուրիխանյանի նշված աշխատությունը, էջ 73:

որոշում ընդունեց Շուշիի մանկավարժական ուսումնարանի շենքում բացել մանկավարժական ինստիտուտ երկամյա դասընթացով: Եվ այսպես, 1938-39 ուստարում՝ սեպտեմբերի 1-ին, Շուշիում բացվում է երկամյա մանկավարժական ինստիտուտ (ուսուցչական ինստիտուտ), երեք՝ պատմալեզվաբանական, ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական ֆակուլտետներով:³⁴ Հաստատվեց նաև նորաստեղծ ինստիտուտի կանոնադրությունը, որի համաձայն ինստիտուտը պետք է ունենա հայկական, ադրբեջանական և ռուսական բաժիններ: Ադրբեջանի լուսժողկոմատի 1939թ. հունիսի 20-ի հրամանով հաստատվեց ինստիտուտի վարչատնտեսական ապարատի կազմը. հաստիքացուցակը բաղկացած էր 40 հոգուց՝ դիրեկտոր (տնօրեն), ուսումնական մասի վարիչ, դեկան, ամբիոնի վարիչ, դասախոսական կազմ (սկզբում՝ 25), ուսումնական օժանդակ անձնակազմ:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1939-1953թթ. տարբեր համարներում տպագրված հոդվածներից, տեղեկագրերից, ինչպես նաև երկամյակի առաջին կարգի շրջանավարտ, 20-րդ դարի լավագույն մանկավարժ Միքայել Բեգլարյանի արխիվային նյութերից տեղեկանում ենք, որ 1939-1953թթ. ընթացքում երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆակուլտետները, բաժինները, այնտեղ պատրաստվող կադրերի պրոֆիլը ենթարկվել են գանազան փոփոխությունների՝ նայած թե հանրակրթական դպրոցների, գիտության, մշակույթի զարգացումն ինչ պահանջներ է ներկայացրել բարձրագույն դպրոցին:

Ինստիտուտում կիրառվում էին առկա և հեռակա ուսուցման ձևերը՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժիններով:

34. Տե՛ս, Ար. Քամալյանի զեկուցագրերը. “Доклады с 1923-1934гг.”, ст. 166, նաև տես, երկամյակի շրջանավարտներ՝ Միք. Բեգլարյանի, Նոր. Ավետիսյանի, Մ. Հովհաննիսյանի, ինստիտուտի դասախոս, Շուշիի մանկավարժական ուսումնարանի տնօրեն Ար. Խաչատրյանի անձնական արխիվը, որի նյութերի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել մեզ համառոտակի ներկայացնել Արցախի առաջին գիտակրթական կրթօջախի համառոտ պատմությունը:

Երկամյա ինստիտուտի առաջին տնօրեն նշանակվեց Մոսկվայի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը զերագանցությամբ ավարտած, ծնունդով ճարտարցի Ջավադ Մայիլյանը: Նորաստեղծ մանկավարժական ինստիտուտում 1938-39 ուստարում դասախոսական աշխատանքի են հրավիրում մարզում ճանաչված վաստակաշատ մանկավարժների՝ Արամ Մարտիրոսյանին, Սարգիս Աբրահամյանին, Կարո Դավթյանին, Սուրեն Չայրապետյանին, Վարդան Ստեփանյանին, Սարգիս Արամյանին, Տատյանա Ալեքսանդրովային, Գրիգոր Գրիգորյանին, Սանջան Յովհաննիսյանին, Թիմուր Ամիրջանյանին և ուրիշների:³⁵

Ի պատիվ մեր անցյալի մտավորականության պետք է ասել, որ նրանք անձնվիրաբար կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անզնահատելի ծառայություն մատուցեցին նրան:

Սկզբնական շրջանում՝ 1939-40 ուստարում, ինստիտուտի հայկական, ադրբեջանական, ռուսական բաժնիներում գործում էին լեզվագրական, ֆիզմաթ և պատմության ֆակուլտետներ՝ 250-300 ուսանողներով: Ըստ ֆակուլտետների ստեղծվեցին դեկանատներ, համապատասխան ամբիոններ: Ամբիոնները մեծ դեր խաղացին դասընթացների որակի բարձրացման, մասնագետների համախմբման, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների մշակման գործում: Հայրենական պատերազմի նախօրյակին՝ 1940 թվականին, երկամյա ինստիտուտի ադրբեջանական բաժնի լեզվագրական ֆակուլտետին կից բացվեց հեռակա բաժին՝ 28 ուսանողով: Ինստիտուտի դասախոսների թիվը հասնում էր 35-40-ի, որից գիտությունների թեկնածու՝ 1, դոցենտ՝ 2, ավագ դասախոս՝ 22, իսկ մնացածը՝ դասախոսներ, ասիստենտներ:

Երկամյա մանկավարժական ինստիտուտի կառավարման

35. Տեն, Գ. Գրիգորյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 444-445:

համակարգում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ոլորտում զգալի փոփոխություններ է կատարվում Մեծ Հայրենականի տարիներին: «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կարգախոսը դարձավ նաև երկամյակի մանկավարժական, ուսանողական կոլեկտիվների նշանաբանը:

Ռազմական իրադրության պայմաններին համապատասխան՝ վերանայվեցին ուսումնական պլաններն ու ծրագրերը, որպեսզի ավելի արագ ապահովվի տարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստումը: Փոփոխության ենթարկվեց նաև ուսումնական հաստատության աշխատանքային ռեժիմը: Նոր ուսումնական պլանների վերանայման հետ միաժամանակ կրճատվեց ուսման ժամկետը: Ինստիտուտում ուսանողության շաբաթական ծանրաբեռնվածությունը հասավ 38-42 ժամի: Կրճատվեցին կիսամյակային քննությունների և ամառային արձակուրդների ժամկետները: Երիտասարդ դասախոսների, ուսանողների մեծ մասի ճակատ մեկնելու պատճառով պակասեց նրանց քանակը: Այսպես, օրինակ, 1941-42 ուստարում պետք է ավարտեին առաջին շրջանավարտները՝ 130-140 հոգի, բայց II կուրսեցիների մի մասը մեկնել էր ռազմաճակատ, մի մասն էլ թերավարտի վկայականով աշխատանքի անցավ մարզի հանրակրթական դպրոցներում՝ համալրելով ուսուցիչների շարքերը: Ինստիտուտի շրջանավարտներ Ռոզալյա Իվանովան, Վլադիմիր Գրիգորյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Սեդա Շահնազարյանը և ուրիշներ մեզ տրամադրած իրենց նյութերում պատմում են, որ ինստիտուտն ավարտած կամ սովորող շատ աղջիկներ միացան թիկունքում հերոսաբար աշխատող կանանց և անձնվիրաբար աշխատեցին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում՝ փոխարինելով իրենց հայրերին ու եղբայրներին: Այդ երիտասարդ հայրենասերներին իրավամբ անվանում էին «թիկունքի գվարդիականներ»:

1944-45 ուստարում, երբ Հայրենական մեծ պատերազմի ըն-

թացքի մեջ տեղի ունեցավ արմատական բեկում, ինստիտուտում ուսանողների և դասախոսների թիվն սկսեց աճել: Երկրորդ կուրսի ուսանողներին այլևս բանակ չէին զորակոչում: Միաժամանակ, ինստիտուտի առաջին կուրսերում սկսեցին երևալ ճակատայիններ, որոնք բանակից զորացրվել էին վիրավորվելու և այլ պատճառներով: Մեծ հաղթանակի նախօրյակին վերականգնվեց ինստիտուտում նրանց ուսման նախկին ընթացակարգը:

Պետք է ասել, որ չնայած Մեծ Հայրենականի դաժան օրերին երկամյա մանկավարժական ինստիտուտի աշխատանքների համար ստեղծվեցին դժվարին և բարդ պայմաններ, այնուամենայնիվ, մանկավարժների ու ուսանողների ջանքերով շարունակվում էր շնորհակալ աշխատանք կատարվել հայրենիքին բազմակողմանի օգնություն ցույց տալու գործում: Այդ տարիներին ինստիտուտի դասախոսական կազմը եռանդուն աշխատանքով պատրաստում էր երիտասարդ մանկավարժական կադրեր, մեծ ծառայություն մատուցում ժողովրդական կրթության, գիտության ու մշակույթի զարգացմանը: Խոշոր ծառայություններ մատուցեցին անվանի դասախոսներ Կարո Դավթյանը, Արամ Մարտիրոսյանը, Սարգիս Աբրահամյանը, Աղասի Սաֆարյանը (տնօրեն) և ուրիշներ: Նրանք մեծ աշխատանք են կատարել մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների, ուսանողության համար դասախոսություններ և այլ բնույթի միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ:

Աղբյուրները³⁶ վկայում են, որ հետպատերազմյան շրջանում՝ 1945-46 ուստարում, երկամյա մանկավարժական ինստիտուտի ներքին կյանքում կատարվում են զգալի փոփոխություններ: Այդ ուսումնական տարվանից սկսած՝ լեզվագրականը և պատմականը միացվեցին, և կոչվեց պատմալեզվագրական (պատմաբանասիրական) ֆակուլտետ:

36. Ս. Ավագյան, Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 68:

1946թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտը տեղափոխվեց Ստեփանակերտ և գործում էր որպես Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտ: Իր առկա և հեռակա ուսուցման ձևերով այն ուներ հետևյալ խմբերը.

1. պատմություն,
2. հայոց լեզու և գրականություն,
3. ռուսաց լեզու և գրականություն,
4. մաթեմատիկա,
5. ֆիզիկա,
6. քիմիա և կենսաբանություն,
7. աշխարհագրություն:

Նախորդ ուսումնական տարիներին երկամյակում գործող երեք ֆակուլտետին Ստեփանակերտում ավելացավ նոր հիմնադրված բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը: Որակական փոփոխություններ կատարվեցին նաև մասնագետների պատրաստման, որակի բարձրացման (մանավանդ, որ պատերազմական շրջանում դասավանդում էին բարձր կուրսի ուսանողները) ուղղությամբ: Փորձառու դասախոսների (Սարգիս Արամյան, Թեմուր Ամիրջանյան, Գրիգոր Յովհաննիսյան, Սարգիս Աբրահամյան, Արամ Մարտիրոսյան և ուրիշներ) նախաձեռնությամբ մշակվել և գործողության մեջ են դրվել բարձրագույն դպրոցի կառավարման, մասնագետների պատրաստման հիմնախնդիրները, ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման չափանիշները, սեմինար գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման մանկավարժական պայմանները, սկսնակ դասախոսի նախապատրաստումը ընդհանուր դասընթացին, դասախոսության նյութի յուրացումը ուսանողների կողմից և այլ հարցեր:³⁷

Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի

37. Անյա Ամիրջանյանը՝ երկամյակի աշխարհագրության դասախոս Թեմուր Ամիրջանյանի տիկինը, 1944-1952թթ. որպես քարտուղար աշխատել է ինստիտուտում և խնամքով պահպանում է վերոհիշյալ և այլ փաստագրական տվյալներ:

ներքին կյանքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր ամբիոններ, դեկանատ՝ հեռակա բաժնի համար, լաբորատորիաներ, կաբինետներ, ընդլայնվեցին ինստիտուտի հնարավորությունները, ամրապնդվեց ուսումնանյութական բազան, բարելավվեց ուսումնական աշխատանքի կազմակերպման գործը: Ինստիտուտի դասախոսական կազմը համալրվեց բարձրորակ մասնագետներով: Երկամյա ինստիտուտում դասախոսելու են հրավիրվում Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններում բազմամյա փորձ ունեցող գիտնականներ, որոնք ուրախությամբ են ընդունում Ղարաբաղի նորաստեղծ ինստիտուտի հրավերը: Նկատի ունենք փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Յրաչիկ Սիմոնյանին, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յրաչիկ Քարամյանին (դասավանդել է Բաքվի, Երևանի բուհերում), գիտությունների թեկնածու, դոցենտներ Կարո Ղավթյանին, Սարգիս Ոսկերչյանին, պրոֆեսոր Ա. Տեր-Գասպարյանին, ավագ գիտաշխատող Գեորգի Յովհաննիսյանին և ուրիշներին: Աստիճանաբար դասախոսական կազմը համալրվում է նաև մարզում ճանաչված մանկավարժներով, որոնք բարձրագույն որակավորում էին ստացել Երևանի պետական համալսարանում, Խաչատուր Աբովյանի անվան, Վ. Բոյունովի անվան մանկավարժական ինստիտուտներում, Մոսկվայի պետական համալսարանում և այլ բուհերում: Դրանցից են Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Սարգիս Արամյանը, Սուրեն Յայրապետյանը, Միքայել Ասրյանը, Միքայել Պետրոսյանը, Արմենակ Ղալայանը, Լևոն Բաղդասարյանը և ուրիշներ: Սակայն պետք է ասել, որ այդ տարիներին անամպ չէր այդ ուսումնական հաստատության երկինքը: Յայտնի մտավորականների մի մասը հալածվեց Բաքվի ազգայնամուլ իշխանությունների կողմից, իսկ մի մասն էլ (Բոգդան Ջանյան, Սարգիս Ոսկերչյան, Արտավազ Ավագյան և ուրիշներ) ստալինյան նոր ռեպրեսիաների շրջանում աքսորվեց Սիբիր:

Երկամյա մանկավարժական ինստիտուտում 1946-1953թթ.,

բարձրորակ մասնագետների եռանդուն գործունեության շնորհիվ միաժամանակ ծավալվել է արդյունավետ գիտական-ստեղծագործական աշխատանք, հրատարակվել են մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, արժեքավոր գիտական ուսումնասիրություններ ինչպես հասարակագիտական, հումանիտար, այնպես էլ բնագիտական գիտությունների կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Ինստիտուտի գիտնականների, դասախոսների աշխատությունները հրատարակվել են Երևանում, Բաքվում, Մոսկվայում և այլուր:

Այսպիսով, 13-ամյա գիտամանկավարժական գործունեություն ծավալած Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի՝ Արցախի առաջին թերի բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրումը բացառիկ երևույթ էր ինքնավար մարզի կյանքում: Այն ժողովրդի ու նրա լուսավորության նկատմամբ Արցախի մտավորականության ցուցաբերած մեծագույն հոգատարության վառ արտահայտություններից էր:

Չնայած Ադրբեջանի կառավարության հայատյաց քաղաքականությանը, որն ամեն կերպ ձգտում էր խեղդել երկրամասում ազգային ինքնագիտակցության զարթոնքը, սահմանափակել հայեցի կրթության շրջանակները և լայն հնարավորություններ տալ ադրբեջանական բաժնին, այնուամենայնիվ, երկամյա մանկավարժական ինստիտուտն իր գործունեության տարիներին դուրս է եկել իր համար գծված նեղ շրջանակներից և դրական դեր խաղացել մարզի մշակույթի, լուսավորության, գիտության, հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում:

Սակայն շատ կարճ տևեց Արցախի՝ մեծ աղմուկով բացված, բայց իրականում կարճատև գիտամանկավարժական գործունեություն ծավալած առաջին ոչ լրիվ բարձրագույն ուսումնական հաստատության գործունեությունը: Այն փակվեց 1953թ., և հայկական բաժինը տեղափոխվեց Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտ:

Երկանյա մանկավարժական ինստիտուտի փակումից հետո՝ 1953-1969թթ., մարզում գործում էին միայն հանրակրթական դպրոցներ և միջնակարգ մասնագիտական հաստատություններ:

Բնականաբար, նման իրավիճակը, չէր կարող չմտահոգել ինքնավար մարզի հայ ազգաբնակչությանը, այդ թվում, առանձնապես մտավորականությանը, կուսակցական պետական մարմիններում, կրթամշակութային օջախներում աշխատող մեր հայրենակիցներին, մանավանդ, նրանց հայրենասեր հատվածին:

Պատահական չէր, որ, սկսած 1960-ական թվականներից, հարաճուն սաստկացան մարզի հայ մտավորականության բողոք-պահանջները խորհրդային երկրի բարձրագույն ղեկավարությանը՝ կապված ԱդրԽՍՀ իշխանությունների հակահայ քաղաքականության դրսևորումների հետ, ինչը, պարզ է, անհետևանք մնալ չէր կարող: Բնականաբար, կենտրոնական իշխանություններն աշխատում էին Ադրբեջանի հանրապետական մարմինների հետ սերտ փոխգործակցության պայմաններում: Միևնույն ժամանակ, ազգային հողի վրա ակնհայտ լուրջ վտանգահարույց անախորժություններից խուսափելու համար Կրեմլի հրահանգներով ու հանձնարարականներով որոշ հարցեր, այնուամենայնիվ, այս կամ այն չափով դրական լուծում էին ստանում: Տեղական հանրությանը յուրովի մեկնաբանելով ու ներկայացնելով Մոսկվայից իջած հանձնարարականները, Բաքվի իշխանությունները հանձնարարվող այդ, թվում է, թե արդարացի լուծումներում չէին անտեսում, ավելին՝ դարձյալ առաջնաբեմ էին մղում, այսպես կոչված, «ադրբեջանական ազգային քաղաքականության» հեռագնա նպատակներն ու խնդիրները:

Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղի ունեցող այդ քաղաքական-գաղափարախոսական վայրիվերումներից անկախ, այնուամենայնիվ, հպարտությամբ կարող ենք նշել, որ ԼՂԻՄ-ի ստեղծման պահից մինչ 20-րդ դարավերջի Արցախյան շարժման պոռթկումը կրթության մարզային բաժինը տարբեր տարիների ղեկավարել են բանիմաց, արիես-

տավարժ և հայրենասեր մարդիկ, որոնք ադրբեջանական իշխանությունների հակահայ քաղաքականության ամենատարբեր դրսևորումների պայմաններում անգամ կարողացել են ստեղծել կրթության կուռ համակարգ՝ պահպանելով հայկական դպրոցները: Այս առումով անուրանալի է Արշավիր Քամալյանի, Յայկ Բալայանի, Յակոբ Օհանջանյանի, Սարգիս Աբրահամյանի, Վիզեն Յայրապետյանի և այլոց ծառայությունը մարզի կրթական համակարգի, հատկապես կենսագործունեության շատ այլ բնագավառներում ու ոլորտներում:

Տարիների հեռվից դիտարկելով խորհրդային իշխանությունների քաղաքականությունը կրթության բնագավառում՝ ականատես ես լինում այն խտրական մոտեցմանը, որով առաջնորդվում էին թե ԽՍՀՄ կենտրոնական և թե Ադրբեջանի հանրապետական ղեկավար մարմիններն ազգային քաղաքականության ասպարեզում և, մասնավորապես, միութենական հանրապետությունների, այսպես ասած՝ խորհրդային կայսրապետության կրտսեր մետրոպոլիաների ազգային փոքրամասնությունների բարձրագույն կրթության կազմակերպման, մայրենի լեզվով բարձրագույն ուսումնական հաստատություններով նրանց ապահովման հարցում:

Ադրբեջանի հայ բնակչության, այդ թվում՝ արցախահայության պարագայում, ինչպես ապացուցել են պետական իրավունքի հայ եւ այլազգի հետազոտողները, «ազգային փոքրամասնություն» իրավաբանական կատեգորիան ամենեւին էլ չի համապատասխանում պատմական իրողությանը: Բանն այն է, որ անցյալ դարի 20-ական թվականներից ի վեր խորհրդային բոլոր փաստաթղթերում հատուկ ընդգծված էր խորհրդային Ադրբեջանի՝ իբրեւ ինտերնացիոնալ հանրապետության, ոչ ազգային բնույթը: Լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանի սահմանների մեջ մտցնելու մասին Կովբյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի հայտնի որոշման հիմնական քաղաքական փաստարկը մուսուլմանների եւ հայերի միջեւ իբրեւ խաղաղության հաս-

տատման խնդիրն էր, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծմամբ Ադրբեջանի հայ ժողովուրդը ճանաչվել էր որպես Ադրբեջանական ԽՍՀ պետականակիր երկու ազգերից մեկը: Մարզային ինքնավարության կարգավիճակով հայտնվելով ադրբեջանական գերիշխանության ներքո՝ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, դատապարտված էր որպես հայ ժողովրդի պատմական կենսատարածք: Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում կոպտորեն ոտնահարվում էին իր պատմական հայրենիքում հայության՝ որպես պետականակիր ազգի, լիարժեք ապրելու, զարգանալու, այդ թվում, ի մասնավորի, ազգային լեզվով բարձրագույն կրթություն ստանալու բնականոն իրավունքներն ու ազատությունները:

ԼՂԻՄ-ի ձեւավորումից սկսած մինչ 60-ականների վերջը մարզում գործում էին միայն հանրակրթական դպրոցներ եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Ինքնավար մարզի կուսակցական եւ պետական մարմինների, հատկապես մտավորականների նպատակաուղղված ջանքերը՝ ուղղված սեփական բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու խնդրի լուծմանը, ադրբեջանական իշխանություններն օգտագործեցին յուրովի:

Ինչպես հայտնի է, տակավին 1932 թվականից Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կազմում գործում էր հայկական բաժին, որտեղ ուսուցումն իրականացվում էր առկա եւ հեռակա ձեւերով: Բաժնում պատրաստվում էին ուսուցիչներ մի շարք մասնագիտությունների, այդ թվում՝ պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու եւ գրականություն, ֆիզիկա եւ մաթեմատիկա, քիմիա, տարրական կրթության մեթոդիկա առարկաների գծով: Ընդ որում, այդ ֆակուլտետներն ինքնուրույն, այսինքն՝ զուտ հայկական կառույցներ չէին, այլ ներառնված էին ըստ առարկաների ադրբեջաներեն, ռուսերեն եւ հայերեն ուսուցում իրականացնող ընդհանրական ֆակուլտետների մեջ: Ամբիոններից միայն հայոց լեզվի եւ գրա-

կանության ամբիոնն էր առանձին, իսկ մյուս առարկաների գծով դրանք ընդհանրական էին: Տարբեր ժամանակահատվածներում փոփոխվում էր հայկական բաժնի մասնագիտական կողմնորոշումների ցանկը՝ մերթ միավորելով, մերթ առանձնացնելով ուսուցանվող մասնագիտական առարկաները եւ կամ պարզապես դադարեցվում էր այս կամ այն մասնագիտության ուսուցումը, ինչպես դա տեղի ունեցավ քիմիա, պատմություն, աշխարհագրություն մասնագիտությունների հետ: Այն պատճառաբանությամբ, որ Ստեփանակերտում բացվել ու գործում է մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ, Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում առկա ուսուցումն աստիճանաբար՝ ըստ մասնագիտությունների եւ տարիների, դադարեցվեց, իսկ հեռական՝ դեռեւս նախորդ տարիներին էր փակվել: Հայկական կրթությամբ շրջանավարտների վերջին թողարկումն ուսուցման առկա ձեւում տեղի է ունեցել 1974թ.՝ ֆիզմաթ ֆակուլտետում:

Խորհրդային ժամանակաշրջանում Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականության համարժեք դրսեւորումների կարելի է համդիպել կենսագործունեության շատ այլ բնագավառներում ու ոլորտներում: Ահավասիկ, տիպական մի օրինակ մշակութային քաղաքականության ասպարեզից: Դեռևս 40-ական թվականների վերջերին, պատճառաբանելով Հայրենական մեծ պատերազմից հետո ԽՍՀՄում առաջացած միջոցների սղությունը, մանավանդ, պատերազմի ժանր հետևանքների վերացման առաջնահերթ անհրաժեշտության համապատկերում, Ադրբեջանում դադարեցվել էր մի շարք ազգային՝ ռուսական, հրեական, հայկական, լեզգիական, թալիշական, նույնիսկ ադրբեջանական տարբեր մշակութային օջախների, այդ թվում՝ պետական թատրոնների գործունեությունը, ըստ երևույթին՝ «Գեղովի մահը հարսանիք է» սկզբունքով: Այդ ալիքի տակ փակվել էին նաեւ Բաքու եւ Կիրովաբադ հայաշատ քաղաքներում գործող հայկական պետական դրամատիկական թատրոնները:

Մեկ երկու տարի անց՝ 50-ականների սկզբներին, երբ իբր թե խորհրդային երկրի սոցիալտնտեսական իրավիճակը համեմատաբար բարելավվել էր և կարելի էր լիարժեք բավարարել բնակչության հոգևոր կարիքները ևս, կարծես թե կախարդական ծողիկի մեկ թեթևակի շարժումով Ադրբեջանում որոշ ազգային մշակութային կենտրոններ, այդ թվում՝ պետական թատրոններ, վերակենդանացան ու վերաբացվեցին, ինչը, հասկանալի պատճառներով, բացառապես վերաբերեց Ադրբեջանում «տիտղոսակիր» ադրբեջանական և ռուս ժողովուրդների ազգային մշակութային հիմնարկներին: Ինչ վերաբերում է հրեական, հայկական, լեզգիական ու թալիշական մշակութային օջախներին, ապա ազգային այդ կառույցների դռներն առհավետ մնացին, ինչպես ասում են, յոթ փակի տակ և կամ վերածվեցին ընդհանրական օգտագործման պետական հիմնարկների:

Այդ քաղաքականության ազդեցությամբ Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի հետ համաժամանակ հոգևարք էին ապրում նաև Բաքվի նախկինում մի քանի տասնյակի հասնող հայկական միջնակարգ հանրակրթական և ութամյա դպրոցների վերջին մոհիկանները՝ թիվ 152-ը և թիվ 177-ը:*

Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարում՝ հայակերտ և հայաշունչ Բաքվից օտարելու համար՝ հայոց լեզուն, իսկ Ղարաբաղում հիմքեր ստեղծելու ադրբեջաներենի մասսայականացման և ադրբեջանական մտավորականության խիտ բանակ ունենալու համար: Որ Ադրբեջանի

*Բաքվի համապատասխանաբար Հայկական (Արմենիքենդ) եւ Անդրկայարաններ (Ջավոկալմայա)՝ զերազանցապես հայաբնակ թաղամասերում գործող թիվ 152 եւ թիվ 177 հայկական միջնակարգ դպրոցները 1960-ական թվականներից վերածվել էին ռուս-հայկական խառը դպրոցների, որոնց հիմնականում ազգությամբ հայ աշակերտության ընդամենը մի քանի տոկոսն էր 80-ական թվականներին սովորում մայրենի լեզվով: Այդ դպրոցներում հայազգի աշակերտների ուսուցումը վերջնականապես դադարեց Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ քաղաքի հայ բնակչության բռնատեղահանման արդյունքում:

իշխանությունները նպատակասլաց քաղաքականություն էին վարում Արցախ-Ղարաբաղի նկատմամբ և ամեն կերպ փորձում ադրբեջանական տարրն ավելացնել այդտեղ, դա հստակ երևում է թեկուզ 1969թ. Ստեփանակերտում բացված մանկավարժական ինստիտուտի օրինակի վրա (տես՝ հավելված 1):

Ասվածի իրավացիության մեջ համոզվելու համար բավական է ծանոթանալ Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ստեղծման գործընթացին:

Ինքնավար մարզի կուսակցական և պետական մարմինների, հատկապես մտավորականության նպատակաուղղված ջանքերը՝ ուղղված սեփական բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու խնդրի լուծմանը, ադրբեջանական իշխանություններն օգտագործեցին յուրովի:

Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ

Ստեփանակերտում հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու վերաբերյալ ինքնավար մարզի իշխանությունների օրինական պահանջը Բաքվի իշխանություններն օգտագործեցին բավական հնարամիտ ձևով՝ 1969թ. մարզկենտրոնում բացելով Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը, ընդ որում՝ երեք բաժիններով՝ հայկական, ադրբեջանական եւ ռուսական:³⁸

Գործերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ ճանապարհով Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները լուծեցին իրենց համար կարևոր մի շարք ռազմավարական հարցեր.

1. դադարեցվեց հանրապետության մայրաքաղաքի թեկուզ և մասամբ, բայց, այնուամենայնիվ, հայեցի բարձրագույն կրթօջախի գոյությունը,

2. վերացվեց Բաքվում հայ մտավորականության վերարտադրության և հետագա առկայության հնարավորությունը,

3. արագացվեց Ադրբեջանի մայրաքաղաքի հայաթափման վաղուց արդեն հետևողականորեն իրականացվող գործընթացը,

4. սկսեց ձևավորվել զուտ ադրբեջանական ազգային մտավորականություն հայկական Արցախում,

5. կտրուկ ավելացավ ինքնավար մարզի ադրբեջանական բնակչության թվաքանակը հարակից շրջաններից վերաբնակների հաշվին,

6. սկսեց հետզհետե մեծանալ Բաքվի իշխանությունների կողմից «տեղական կադրեր» հորջորջված ադրբեջանցի պաշտոնյաների տեսակարար կշիռն ինքնավարության պետական և հանրային կառույցներում:

Այդ հեռագնա նպատակները, սքողված լինելով գաղտնիության շղարշով, այսպես ասած, ռազմավարական այսբերգի անտեսանելի հատակն էին կազմում: Լայն հանրության համար տե-

38. Տե՛ս, Ա. Ավանեսյան, Էջեր Լեռնային Ղարաբաղի կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 2-4:

սանելին այդ սառցազանգվածի շուրջն անընդհատ ճողփող այն քարոզչական փրփուրն էր, որ մատուցվում էր իբրև Ադրբեջանում «ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության» ևս մեկ էական արտահայտություն, «լենինյան իմաստուն ազգային քաղաքականության» հերթական խոշոր քայլ՝ ուղղված հանրապետության ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև պետականակիր հայ ազգաբնակչության գիտակրթական պահանջների համակողմանի բավարարմանը: Ընդ որում, հարկ է նշել, որ այդ ամենն արվում էր մարզի կուսակցական-պետական մարմինների պատասխանատուների հիմնականում հարմարվողական և, բնականաբար, լռելյայն համաձայնության պայմաններում, չհանդիպելով էական հակազդեցության:

Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի բացումը 1969թ. կարելի է դիտել որպես այդ ուղղությամբ Բաքվի առաջին, ընդ որում՝ դարձյալ քաղաքական հանգամանքների պարտադրանքով կատարված քայլ, կամ ավելի ճիշտ՝ կիսաքայլ:

Որ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները նպատակասլաց քաղաքականություն էին վարում Արցախ-Ղարաբաղի նկատմամբ և ամեն կերպ փորձում ադրբեջանական տարրն ավելացնել այնտեղ, հստակ երևում է թեկուզ նշյալ օրինակի վրա: Բաքվից իջեցված պլանի համաձայն 1970/71 ուստարում նախատեսված էր հայկական բաժնում ընդունել 200 ուսանող, իսկ ադրբեջանականում՝ 175, այն դեպքում, երբ Արցախ-Ղարաբաղի տարածքում ադրբեջաններեն լեզվով դպրոցների թիվը մոտ 10 անգամ պակաս էր հայկական դպրոցներից: Նաև ասենք, որ սկսած 1974 թվականից՝ ռուսական բաժնում ընդունվող ուսանողների թիվը մնում էր անփոփոխ: Մինչդեռ Արցախում ամեն տարի ավելանում էր ռուսալեզու սովորողների թիվը: Այդ քաղաքականությունը շարունակվեց մինչև 88-ի դարաբաղյան շարժումը:³⁹

Նորաստեղծ մասնաճյուղի տնօրեն նշանակվեց Շ. Աբրահամ-

39. Տե՛ս, Դ. Գրիգորյան, Գ. Դարությունյան, նշվ. աշխ., էջ 451-452, ինչպես նաև ԱրՊՀ-ի (մայր բուհի) 40-ամյա պատմությանը նվիրված ժողովածուն, որը կազմել է Վ. Բալայանը:

յանը: Նրա առաջին ձեռնարկումը եղավ հավաքագրել դասախոսական նոր կազմ և վերափոխել կառուցվածքը: Հետագայում՝ Յուրի Մարտիրոսյանի տնօրինության շրջանում (1971-72 ուստարի), կազմակերպվեց երկու ֆակուլտետ՝ պատմաբանասիրական և ֆիզիկամաթեմատիկական՝ մոտ 250-300 ուսանողներով: 1972-1973 ուստարում մասնաճյուղը տվեց իր առաջին 132 շրջանավարտը, որոնք աշխատանքի անցան լուսավորության բնագավառում:⁴⁰

Համոզվելով, թե այդ մարտավարական ձեռնարկումը որքան արդյունավետ ու հեռանկարային է իրենց որդեգրած նպատակների իրագործման ճանապարհին, Բաբվի իշխանությունները հետագայում ձեռնամուխ եղան Ադրբեջանի հայ ազգաբնակչության նկատմամբ յուրօրինակ «անշահախնդիր եղբայրական հոգատարության» քարոզարշավի հերթական փուլին՝ այս անգամ այն կապելով օրվա քաղաքական իրադարձության՝ Ադրբեջանի կազմում ԼԴԻՄ-ի կազմավորման 50-ամյա հոբելյանի հետ: 1973թ. դեկտեմբերին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի եւ Մինիստրների խորհրդի որոշումներով Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց մանկավարժական ինստիտուտի՝ կոչվելով Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան մանկավարժական ինստիտուտ:

Թե ինչու հատկապես Սովետական Ադրբեջանի անվան՝ դժվար չէ կռահել, մեկ անհեթեթ բացառությամբ միայն. ինչու՞ 60-ամյակի, եթե նշված տարում լրացել էր Ադրբեջանի խորհրդայնացման ընդամենը 53-ամյակը: Նման անվանակոչման դրդապատճառը, մեր համոզմամբ, Ադրբեջանի գերիշխանության եւ հայահալած քաղաքականության դեմ ինքնավար մարզի բնիկ հայ բնակչության տասնամյակներ ի վեր չլռած և 60-ական թվականներին նոր թափ առած ժողովրդական ընդվզման շարունակական բնույթն էր (հիշենք 1965 թվականի «13»-ի հայտնի նամակը, այդ պատմական փաստաթղթին նախորդած ու հաջոր-

40. Նույն տեղում:

դած մյուս իրադարձությունները), որն իրեն զգացնել էր տալիս նաեւ 70-ական թվականներին՝ երկրամասի հայ մտավորականության եւ բնակչության հազարավոր բողոք-նամակների տեսքով: Բաքվի իշխանություններին, ինչպես ասում են, օդ ու ջրի պես պետք էր գոնե ինչ որ կերպ մեղմել արցախցիների բողոքի վերստին բարձրացող ալիքը:⁴¹

Ինչպես վերը նշեցինք, Ստեփանակերտի մասնաճյուղի բացումը կարելի է դիտել որպես մարզում ծավալվող հուզումների մեղմացման այսպես կոչված մի քայլ կամ կիսաքայլ:

Բաքվում լավ էին գիտակցում, որ այն չի կարող գոհացում տալ մարզի բնակչությանը եւ, առաջին հերթին, մտավորականությանը: Ուստի ստիպված էր կատարել հաջորդ կիսաքայլը՝ գործող մասնաճյուղը վերակազմավորելով ինքնուրույն ինստիտուտի, իրադարձությունը, իհարկե, ոչ առանց քաղաքական ենթատեքստի հարմարեցնելով Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի ստեղծման 50-ամյա հոբելյանին: Այսինքն՝ արցախցի իր առկա եւ հավանական ընդդիմախոսների համար եւս Բաքուն մեկ անգամ շեշտեց, որ ինքնավար մարզը գտնվում է ոչ այլ միութենական հանրապետության, քան Ադրբեջանի կազմում եւ ինստիտուտը կոչելով հատկապես Սովետական ԱդրԽՍՀ 60-ամյակի անվամբ, դարձյալ հիշեցրեց, թե հիմնադրվող ուսումնական հաստատության եւ թե, մանավանդ, ինքնավար մարզի իրավա-ենթակայությունը բացառապես Ադրբեջանին՝ որպես անշրջելի ու անբեկանելի իրողություն: Ահա այդպես սահանքաշատ էր Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի վարած քաղաքականությունը, այդ թվում՝ կրթական քաղաքականությունը, և առնվազն միամիտ պետք է լինել հավատալու համար արջի այն ծառայությանը, որը մեր հայրենակիցներից ոմանց կողմից այսօր էլ կանա, թե ականա մատուցվում է Արցախի պետական համալսարանի հիմնադրման ադրբեջանական տարեթվի տեսքով:

Եվ այսպես, 1973թ. դեկտեմբերին Ադրբեջանի կոմկուսի

41. Փաստագրական տվյալները մեզ տրամադրել է Ղարաբաղյան շարժման ակտիվիստ Վ. Հայրապետյանը, և որոշ նյութեր պահպանվում են այդ նամակի հեղինակներից մեկի՝ գրող, իրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանի մոտ:

Կենտրոնի և Մինիստրների խորհրդի որոշումներով Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց մանկավարժական ինստիտուտի:

Քննարկման առարկա դարձավ ինստիտուտի անվանակոչումը՝ հայ դասախոսների կողմից առաջարկվել էր ինստիտուտը կոչել հայագիտության մեծ երախտավոր Լեոյի կամ հայ դասական գրող Մուրացանի անունով: Սակայն, երկար ձգձգվելուց հետո պաշտոնական Բաքուն, ինչպես նշեցինք, նորաստեղծ մանկավարժական ինստիտուտը կոչեց «Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան»:

Հիմնադիրների մտահղացմամբ ԼՂԻՄ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը կոչված էր դառնալու հայերեն, ռուսերեն եւ ադրբեջաներեն լեզուներով դասավանդող ուսուցիչների պատրաստման տարածաշրջանային կենտրոն, որը պետք է մանկավարժական կադրեր թողարկեր ԼՂԻՄ-ի և նրա հարակից ադրբեջանական շրջանների դպրոցների համար: Սկզբնական շրջանում ինստիտուտը միջնակարգ հանրակրթական դպրոցների համար ուսուցիչներ էր պատրաստում հետևյալ հինգ մասնագիտությունների գծով՝ մաթեմատիկա, ֆիզիկա, պատմություն, մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա, մայրենի լեզու և գրականություն:

Ինստիտուտի ստեղծման պահին (նորաստեղծ բուհի առաջին ռեկտոր նշանակվեց Սերգեյ Գերասիմի Սարկիսովը) հաստատությունը կառուցվածքային առումով բաղկացած էր հետևյալ ստորաբաժանումներից՝ ղեկավար մարմիններ (ռեկտոր և պրոռեկտոր), աշխատակազմ, 2 ֆակուլտետ, 9 ամբիոն, 8 ճյուղային լաբորատորիաներ և մեխանիկական արհեստանոց:⁴²

1973/74 ուսումնական տարում ինստիտուտում ձևավորվել է 9 ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության, ադրբեջաներեն լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, ԽՍՀՄ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և գիտական

42. ԱրՊՀ արխիվ, գ.24, 25, 26, 27:

կոմունիզմի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզիկայի և ընդհանուր մաթեմատիկայի, մաթեմատիկական անալիզի, մարմնակրթության և բուժական պատրաստության:

Ձևավորվել է նաև ինստիտուտի գիտական խորհուրդը, որում ընդգրկվեցին հաստատության առաջատար դասախոսները:

Նոր դասընթացներ կարդալու համար հրավիրվում են համապատասխան մասնագետ-դասախոսներ Չայաստանից և ադրբեջանական բաժնի համար՝ Բաքվից: Դասընթացների որակի բարձրացման, մասնագետների համախմբման, ծրագրի ու դասավանդման մեթոդների մշակման, ուսումնական լաբորատորիաների ստեղծման, մանկավարժական փորձուսուցման, ներբուհական բազմաբնույթ աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ հսկայական աշխատանք են կատարում նոր ձևավորված ամբիոնների վարիչներ, դոկտոր-պրոֆեսորներ Գուրգեն Անտոնյանը (հայոց լեզվի և գրականության), Սերգեյ Բաղդասարյանը (մաթեմատիկայի և ֆիզիկայի), դոցենտներ Արմո Ներսիսյանը (մանկավարժության և հոգեբանության), Սերգեյ Խալատրյանը (ռուսաց լեզվի և գրականության):

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում 1973-1974 ուսումնական տարում դասավանդել է 81 դասախոս (տես՝ աղ.1):

Նախապես նշենք նաև, որ ձևավորված լինելով Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի հիմքի վրա, նորաստեղծ ինստիտուտն իր մեջ ներառել է վերջինիս ուսանողությանը եւ դասախոսական կազմը: Փակագծերում նշենք, որ 1973/74 ուստարվա հաշվետվության մեջ առանձնապես հստակ ամրագրվել է հետեւյալը. «ժամանակին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմը բացահայտել է Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղում տեղ գտած լուրջ բացթողումներն ու սխալները: Մասնաճյուղի ղեկավարության կողմից կադրերի ընտրության եւ տեղաբաշխման լեռնայան սկզբունքների խախտման հետեւանքով դասախոսական աշխատանքի են հայտնվել որոշ պատահական մար-

դիկ, նախկինում հեռացված կուսակցությունից, շորթման համար: Ինստիտուտի ռեկտորատը եւ կուսակցական կազմակերպությունը մեծ ջանքերի շնորհիվ ազատվել է այդպիսի դասախոսներից»: Թե ինչու այդ մասին հիշեցին հենց այն ժամանակ, երբ մասնաճյուղը վերակազմավորվում էր առանձին ինստիտուտի և ինչ նպատակով կատարվեց այդ քայլը, կարծում ենք, դժվար է կռահել: Բանն այն է, որ Բաքվին խիստ պետք էր յուրաքանչյուրի (իմա՝ ադրբեջանցիների) համար պատասխանատու տեղ ազատել ինստիտուտի ղեկավար մարմնում, առնվազն՝ պրոռեկտորի մակարդակով:

Աղյուսակ 1

ՍՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը 1973/74 ուստարում⁴³

<i>Դասախոսներ</i>	<i>Պրոֆեսորներ, գիտության դոկտորներ</i>	<i>Դոցենտներ, գիտության թեկնածուներ</i>	<i>Ընդամենը</i>
Հաստիքային	3	15	59
Ժամավճարային	-	2	21
Համատեղմամբ			1

Իսկ ըստ հաստիքացուցակի՝ հաստատության պրոֆեսորադասախոսական կազմը հետևյալ պատկերն ուներ (տես՝ աղ.2)

Աղյուսակ 2

ՍՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը 1973/74 ուստարում՝

<i>Պաշտոնները</i>	<i>Հաստիքային միավորների թվաքանակը</i>
Ամբիոնի վարիչներ	9
Պրոֆեսոր	3
Դոցենտ	8
Ավագ դասախոս	20
Դասախոս	27
<i>Ընդամենը՝</i>	<i>67</i>

43. Աղյուսակում բերված տվյալները վերցված են ԱրՊՀ-ի արխիվից, գ.10,12:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայ ազգի պրոֆեսորադասախոսական կազմը Ադրբեջանի կողմից ստեղծված այդ դժնդակ տարիներին անգամ չի կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը: Նա միշտ միջոցներ ու հնարներ է գտել՝ պահպանելու հայ միտքը, հայ մշակույթը, մշակութային կյանքի ամենաբազմազան դրսևորումներում արտահայտել իր հույզերն ու ձգտումները, մաքառել ազգային արժեքների պահպանման համար, աչքի լույսի պես պահպանել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները՝ հանուն լուսավոր ապագայի, հանուն ազգային գոյատևման, որին խորապես ու սրբությամբ հավատացել է: Եվ ճիշտ է շեշտադրում Կ. Միրումյանը, որ յուրաքանչյուր ազգի պատմամշակութային կացության մեջ իրենց արտացոլում են գտնում համամարդկային արժեքները, որոնց համատեքստում զարգանում, հարստանում է ազգային, հոգևոր-բարոյական, գեղագիտական արժեհամակարգը: «Մշակութային գործընթացներն էապես պայմանավորված են պատմական, քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, սոցիալ-մշակութային գործոններով, ինչպես նաև ազգի հոգևոր ներուժով: Նշված գործոնների համակցությունն ու ներդաշնակությունը որոշում են ազգի դեմքը՝ ինքնատիպությունը քաղաքակրթության պատմության մեջ», - նշել է նա:⁴⁴ Անշուշտ, իրենց գործունեության տարիներին ինստիտուտի հայ դասախոսները ձգտել են ազերիների միջավայրում պահպանել պատմական Արցախի ազգային արժեքները:

Մանկավարժական ինստիտուտի նոր ձևավորված ամբիոնները (նկատի ունենք հայկական բաժնի), մեծ դեր խաղացին դասընթացների որակի բարձրացման, բարձրորակ մասնագետների համախմբման, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների մշակման գործում: Օրինակ, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի (մանկ. գիտ. թեկ. Ա. Ներսիսյան) անձնական արխիվում պահպանվող փաստաթղթերից տեղեկանում ենք, որ բազմամյա փորձ ունեցող մանկավարժն իր

44. Կ. Ա. Միրումյան, Դայ քաղաքական մտքի պատմություն, Երևան, 2002, էջ 117:

պրակտիկ գործունեության ընթացքում կիրառում էր մանկավարժական խելամիտ մեթոդներ, հնարներ, միջոցներ, որոնք տալիս են դրական արդյունք: Այսպես, ուսանողների իմացական գործունեության կառավարման գործում կիրառում է.

1. մանկավարժական պահանջի մեթոդը համակարգված կերպով թե՛ ուսուցման, թե՛ դաստիարակության և թե՛ արտալսարանային աշխատանքներում,

2. մանկավարժական համոզման ու խրախուսման մեթոդ, որն ուսանողների մեջ ամրապնդում և դաստիարակում է ինքնավստահություն իր ուժերի նկատմամբ,

3. անձնական օրինակի մեթոդ. դասախոսն իր և լավ սովորող ուսանողների անձնական օրինակով ներգործություն է ունենում այն ուսանողների վրա, որոնք առաջադեմ չեն և ակտիվություն չեն դրսևորում դաստիարակչական աշխատանքներում,

4. դասախոսի մանկավարժական միասնական ներգործության մեթոդ, որը նպաստում է ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը,

5. ուսանողների նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցումը, մշակույթի դրսևորման ձևը որոշակիորեն կապված են մաս այն բանի հետ, թե յուրաքանչյուր դասախոս որքանով է զնահատում ուսանողի արժանապատվությունը՝ պահանջներ ներկայացնելիս,

6. մանկավարժական ներգործության զրույցի մեթոդ, քանի որ ուսանողներն ունեն տարբեր մակարդակ, հոգեբանական առանձնահատկություններ, դասախոսը հնարավորություն է ստանում զրույցի ընթացքում ստեղծել ավելի գործնական մթնոլորտ,

7. ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում նկատվող արգելքների վերացման ու հաղթահարման և ակտիվության խթանման և այլ մեթոդներ:⁴⁵

45. Ա. Ներսիսյանի անձնական արխիվում պահպանվող փաստաթղթերը մեզ տրամադրել է նրա որդին՝ տնտեսագիտության թեկնածու, ԱրՊՀ դոցենտ Կ. Ներսիսյանը:

Մեր համոզմամբ, վերոհիշյալ և այլ մեթոդները նպատակա-
ուղղված են ոչ միայն թերությունների վերցմանը, այլև դաս-
տիարակում են ուսանողների մեջ պատասխանատվություն, աշ-
խատասիրություն, պահանջկոտություն իրենց նկատմամբ և գի-
տակցական կարգապահություն:

Մանկավարժության և հոգեբանության, հայոց լեզվի և գրա-
կանության, մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոններում լուրջ
ուշադրություն էին դարձնում հատկապես մանկավարժական
փորձուսուցմանը՝ որպես ուսուցման կազմակերպման մի ձևի և
բուհ-դպրոց կապի ամրապնդման կարևոր օղակի: Մանկավար-
ժական փորձուսուցումը պլանավորում և կազմակերպվում է
հետևյալ ուղղություններով.

- մանկավարժական փորձուսուցման նպատակը և խնդիր-
ները,

- ուսանող - պրակտիկանտի պարտականությունները,

- մանկավարժական փորձուսուցման փաստաթղթերի (օրա-
գիր, գնահատման դասերի արձանագրություն, փորձնական դա-
սերի պլան-կոնսպեկտ և այլն) ձևակերպման ձևերը,

- ուսանողի կողմից դասալսումների գրառումները,

- դասի վերլուծման օրինակելի պլան,

- մեկ դասի մանկավարժական բնութագիրը,

- մեկ ուսանողի հոգեբանական բնութագիրը,

- ուսանողի հաշվետվությունը⁴⁶ փորձուսուցման ընթացքում
և այլն:

Ուշագրավ է նշել այն իրողությունը, որ նորաստեղծ ինստի-
տուտի 1973/74 և 1974/75 ուսումնական տարիներին վերոնշյալ
ֆակուլտետներում ընդգրկված ամբիոնների դասախոսների
կողմից նմանատիպ արդյունավետ աշխատանք է կատարվել,
այն էլ՝ «ինտերնացիոնալ կոլեկտիվում»: Այս առումով, անկաս-
կած, ամենայն դրվատանքի են արժանի մանկավարժ գիտնա-
կանների (Գ. Անտոնյան, Ս. Բաղդասարյան, Ա. Ներսիսյան, Գ. Սո-

46. Այդ մասին տես, ԱրՊՀ-ի արխիվ, գործ 12, 16, 18, 20 նշվ. ամբիոնների հաշվետվու-
թյունները:

ղոմոնյան, Ս.Խաչատրյան և շատ ուրիշներ) արգասավոր գիտամանկավարժական գործունեությունն այդ դաժան փորձությունների տարիներին, նրանց դրսևորած ամուր կամքը, որ կյանքի դժվարին կեռնաններուն ու քառուղիներուն կարողացել են պահպանել Արցախում բարձորակ մանկավարժական կադրեր պատրաստող միակ դարբնոցի ազգային դիմագիծը:

Ուսուցման գործընթացից բացի, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում տարվել են նաև գիտահետազոտական աշխատանքներ՝ պետական բյուջեից կատարվող ֆինանսավորմամբ: Այդ աշխատանքներուն ընդգրկված էր տարբեր մասնագիտությունների 58 դասախոս:

Այժմ ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա համառոտակի ներկայացնենք երկու ամբիոններուն (որոնցուն դասախոսների մեծ մասը հայեր էին, բացի հայոց լեզվի և գրականության ամբիոնից՝ մյուս ամբիոններուն աշխատուն էին նաև ադրբեջանցիներ) կատարված գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր պատկերը: Այսպես, օրինակ, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա. Ներսիսյանը ուսումնասիրության առարկա դարձրեց «Չասունացող սերնդի դաստիարակության նկատմամբ համալիրային մոտեցման» հիմնահարցը, ասիստենտ, հայցորդ Գ. Չարությունյանը (այժմ մ. գ. դ., պրոֆեսոր) առաջին անգամ հետազոտության առարկա դարձրեց «Արցախի դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունը» հիմնահարցը, հայոց լեզվի գրականության ամբիոնում՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, գիտ. վաստակավոր գործիչ Գ. Անտոնյանը, Ս.Խանյանը ուսումնասիրման առարկա դարձրին «Չայ գրականության պատմության, հայ պոեզիայի զարգացման առանձնահատկությունները» հիմնահարցերը:

Յուրաքանչյուր ուսումնական տարուն ամբիոններուն մշակվուն էին դասախոսների ուսումնական տարվա գիտահետազոտական աշխատանքային պլանները՝ դրանք ներառելով անհատական աշխատանքային պլանուն, որպես ուսումնական ծանրաբեռնվածության մի բաղկացուցիչ մաս:

Այդ ամբիոններին վերաբերվող արխիվային փաստաթղթերը

վկայում են, որ փորձառու դասախոսներն իրենց հետազոտության հիմնահարցերի շուրջ դասախոսություններ են կարդում (Գ. Անտոնյան, Ա. Ներսիսյան, Ա. Սողոմոնյան՝ պատմության, Գ.Սողոմոնյան՝ փիլիսոփայության գծով) Ստեփանակերտի որակավորման ինստիտուտում (ինստիտուտը հիմնադրվել է 1961թ.) կազմակերպված ուսուցիչների վերաորակավորման դասընթացներում, ինչպես նաև մարզի հանրակրթական դպրոցներում:⁴⁷

Նորաստեղծ ուսումնական հաստատությունը 1974/75 ուստարում ձեռնամուխ եղավ հանրակրթական դպրոցների պահանջարկին համապատասխան մասնագիտական խմբերի, այդ խմբերում դասավանդման գործընթացն իրականացնող պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնական լաբորատորիաների, արհեստանոցների ու կաբինետների ձևավորմանը: Հայոց լեզվի և գրականության, պատմության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, մանկավարժության և տարրական կրթության մասնագիտությունների ուսումնական խմբերը ներառված էին երկու՝ ֆիզիկա-մաթեմատիկական և պատմա-բանասիրական ֆակուլտետներում: Բացի առկա ուսուցման ձևից, նույն մասնագիտություններով տարվում էր նաև հեռակա ուսուցում: Ուսման տեղությունն առկա բաժնում չորս տարի էր, իսկ հեռակա ուսուցման բաժնում՝ հինգ տարի:⁴⁸

Որպեսզի պատկերացում ունենանք, թե ինչպիսին էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի զարգացման դինամիկան, համադրության մեջ ներկայացնենք բուհի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակիցների քանակը՝ 1974թ. եւ 1979թ. հունվարի 1-ի դրությամբ (աղ.3):

47. Տե՛ս ԱրՊՀ Արխիվ, գ. 10,12,14,16, ինչպես նաև Ա. Ներսիսյանի, Գ.Սողոմոնյանի, Գ.Բաղդասարյանի, անձնական արխիվային նյութերը (մեզ տրամադրել են նրանց բարեկամները):

48. Նույն տեղում:

ՍՄԻ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակիցների քանակը՝ 1974թ. և 1979թ.

Աշխատակիցները	Քանակը	
	01.01.1974թ.	01.01.1979թ.
Աշխատակիցների ընդհանուր քանակը, որից՝		
ռեկտոր և պրոռեկտոր	150	198
պրոֆեսորադասախոսական կազմ	2	2
պրոֆեսոր., գիտ. դոկ.	59	90
դոցենտ, գիտ. թեկ-ու.	1	3
ավագ դասախոս	11	12
դասախոսներ և ասիստենտներ	20	34
ուսումնաօժանդակ անձնակազմ	27	41
	14	26

Մանկավարժական ինստիտուտն իր աշխատանքային գործունեության տասը տարիների (1969-1979թթ.) ընթացքում կրել է կառուցվածքային մի շարք փոփոխություններ՝ պայմանավորված աշխատանքներն առավել գործուն կազմակերպելու անհրաժեշտությամբ: Այսպես, 1978/79 ուստարում ինստիտուտում մասնագետների պատրաստումն իրականացվում էր երեք՝ ֆիզիկամաթեմատիկական, պատմության և բանասիրական ֆակուլտետներում, որոնցում ուսումնական գործընթացը կազմակերպվում էր ինը՝ մարքսիզմ-լենինիզմի, ընդհանուր պատմության, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, ադրբեջաներեն լեզվի և գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզպատրաստականության ամբիոնների միջոցով: Ինստիտուտն ապահովված էր ուսումնանյութական բազայով՝ զբաղեցնում էր

երկհարկանի շենք՝ 5618մ² ընդհանուր մակերեսով, լսարանների, կաբինետների և լաբորատորիաների համար 44 սենյակով: Բացի այդ, ունեւր նիստերի դահլիճ՝ 342 նստատեղով, գրադարան՝ 120 տեղանոց ընթերցասրահով, մարզասրահ եւ ուսանողական ճաշարան:

1979թ. ինստիտուտում գործում էր 15 լաբորատորիա՝ ռադիոէլեկտրատեխնիկայի, մեխանիկայի, մոլեկուլյար ֆիզիկայի և էլեկտրականության, օպտիկայի, դպրոցական փորձարարության, աստղագիտության, քիմիայի, կենսաբանության, կենդանաբանության, կինո-ֆոտոլաբորատորիա՝ ցուցասրահով, ութ ուսումնական կաբինետներ՝ հասարակական գիտությունների, լեզվի և գրականության, պատմության, մանկավարժության, քաղաքացիական պաշտպանության, ուսուցման տեխնիկական միջոցների, էսթետիկայի, լինգաֆոնային և այլն: Գործում էր հաստոցներով և մեխանիզմներով հագեցված ուսումնական արհեստանոց:

1980-81 ուստարում ինստիտուտի կառուցվածքում կատարվեցին որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված նոր մասնագիտությունների ընդգրկմամբ: Այդ ուսումնական տարում մասնագետների պատրաստումը տարվում էր ըստ հետևյալ մասնագիտությունների՝ մայրենի լեզու և գրականություն, պատմություն, մաթեմատիկա (1980 թվականից մտցվել է լրացուցիչ մասնագիտություն՝ ֆիզիկա), ֆիզիկա (ընդունելություն չկա), ընդհանուր տեխնիկական մասնագիտություններ և աշխատանք, մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա, քիմիա լրացուցիչ մասնագիտություն, կենսաբանություն:⁴⁹

Ինստիտուտում ստեղծվեց 4 ֆակուլտետ՝ պատմության, բանասիրական, ֆիզիկա-մաթեմատիկական, մանկավարժական և տարրական ուսուցման մեթոդիկա, որոնցում ուսուցման գործընթացն իրականացվում էր 11 ամբիոնում՝ մարքսիզմ-լենինիզմի, ընդհանուր պատմության, հայոց լեզվի և գրականության, ադրբե-

49. ԱրՊՀ-ի արխիվ, գ.10, 12, 18, 20:

ջաներեն լեզվի և գրականության, ռուսաց և օտար լեզուների, մաթեմատիկական անալիզի, հանրահաշվի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր տեխնիկական առարկաների և քաղաքացիական պաշտպանության:

Ստորև ներկայացնում ենք 1973/74 ուստարում ինստիտուտի ուսանողության կազմը (տես՝ աղ.4)

Աղյուսակ 4

ՄՄԻ-ի ուսանողության կազմը 1973/74 ուստարում՝ ըստ բաժինների, մասնագիտությունների, կուրսերի, խմբերի, ուսուցման առկա եւ հեռակա ձևերի ⁵⁰

Բաժինը	Մասնագիտությունը	Ուսանող կուրսերը		Խմբերը ընդ.	Ուսանողների քանակը		Ընդամենը
		առկա	հեռակա		առկա	հեռակա	
Հայկական	1. Լեզու եւ գրական.	I, II, III, IV	I, II, III, IV, V	9	101	134	235
	2. Մանկավարժ. եւ մեթոդիկա	-	I, II, III-2, IV-2, V-2	8	-	176	176
Ադրբեջանական	1. Լեզու եւ գրական.	I, II, III, IV	I, II, III, IV, V	9	98	133	231
	2. Պատմություն	I	I	2	26	25	51
	3. Մանկավարժ. եւ մեթոդիկա	-	I	1	-	24	24
Ռուսական	1. Մանկավարժ. եւ մեթոդիկա	-	I	1	-	25	25
	2. Պատմություն	I	-	1	25	-	25
Ընդամենը	Պատմա-բանասիր. ֆակուլտետում	10	21	31	250	527	767

50. Նույն տեղում:

Հայկական	1. Մաթեմատիկա	I, II, III, IV	I, II, III, IV, V	9	97	134	231
	2. Ֆիզիկա	I, II	-	2	45	-	45
Աղբբեջանական	1. Մաթեմատիկա	I, II, III, IV	I, II, III, IV, V	9	99	96	195
Ռուսական	1. Մաթեմատիկա	I	-	1	25	-	25
Ընդամենը	Ֆիզիկա-մաթեմատ. ֆակուլտետում	11	10	21	266	230	496
Ընդամենը	Ինստիտուտում	21	31	52	516	757	1263

1974թ. ինստիտուտն իրականացրեց մանկավարժների առաջին թողարկումը: Ընդ որում՝ պետական ավարտական քննություններին թույլատրվել է 132 ուսանող, որոնցից 108-ը հաջողությամբ հանձնեց քննությունները՝ ստանալով միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում, այդ թվում 39-ը՝ մաթեմատիկա, 44-ը՝ լեզու և գրականություն, 25-ը՝ մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա մասնագիտությունների գծով:

Իսկ այժմ դիտարկենք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ ընդունված ուսանողների թվաքանակի աճի դինամիկան հետագա ուսումնական տարիներին (տես՝ աղ.5):

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ ընդունված ուսանողների թվաքանակը 1974-1980թթ.՝ ըստ ուսումնական տարիների

Ուս. տարի	1974/75	1975/76	1976/77	1977/78	1978/79	1979/80	Ընդամենը
1. Ընդուն. պլան	200	250	275	275	275	275	1275
2. Դիմել են	1710	1620	1556	1614	1555	1306	9361
3. Ընդունվել են	201	250	275	275	275	273	1549
4. Հայկ.	123	146	172	172	172	173	958
5. Ադրբեջ.	77	102	101	102	102	99	583
6. Ռուս.	1	2	2	1	1	1	8

Այդ նույն տարիներին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը թողարկել է հետևյալ քանակությամբ մասնագետներ՝ ըստ բաժինների (տես՝ աղ.6):

ՄՄԻ-ի շրջանավարտների թվաքանակը 1974-80թթ. ընդգրկմամբ

Թողարկված տարին	Ընդ. թիվը դասակներ է	Պատմութ.				Մայրենի լեզու				Մաթեմ. եւ ֆիզիկա				Մանկ. եւ հոգեբան.			
		հայկ.	արբ.	ռուս	ընդ.	հայկ.	արբ.	ռուս	ընդ.	հայկ.	արբ.	ռուս	ընդ.	հայկ.	արբ.	ռուս	ընդ.
1976	245					55	48	-	103	77	39	-	86	56	56	-	112
1977	281					47	45	-	92	69	27	-	96	45	45	-	90
1978	428	-	26	24	50	80	80	-	160	93	57	22	172	46	46	22	114
1979	437	25	44	25	94	52	54	-	106	75	70	42	169	24	20	24	68
1980	451	24	24	23	71	25	24	-	49	21	23	21	88	-	25	-	25
հեռա-կա		-	20	-	20	25	26	-	51	32	32	-	64	24	25	21	70
նախորդ		-	3	-	3	3	3	-	6	-	31	-	31	-	-	-	

1979թ. հունվարի 1-ի տվյալներով ինստիտուտում կային 80 ուսումնական խմբեր, որոնցում, ընդհանուր առմամբ, ընդգրկված էր 2016 ուսանող: Գործող 80 խմբից 43-ում ընդգրկված էին առկա ուսուցման ուսանողները՝ 1075 հոգի, իսկ հեռակա բաժնում՝ 37 խումբ, որոնցում ընդգրկված էր 941 ուսանող (տես՝ աղ.7):

Աղյուսակ 7

ՄՄԻ ուսանողության բաշխվածությունն ըստ ուսումնական խմբերի՝ 1971թ. փետրվարի 1-ի դրությամբ

	ընդհ.	առկա	հեռակա	Ուսանողների թիվը		
				ընդ.	առկա	հեռակա
Ուսումնական խմբերը, այդ թվում՝	80	43	37	2016	1075	941
<i>Պատմության ֆակուլտետ</i>	17	12	5	421	298	123
ա) հայկական բաժ.	4	4	-	100	100	-
բ) արդրեց. բաժ.	9	4	5	221	98	123
գ) ռուս. բաժ.	4	4	-	100	100	-
Բանասիրական ֆակուլտետ	33	11	22	830	272	558
ա) հայկական բաժ.	13	4	9	330	97	233
բ) արդրեց. բաժ.	15	7	8	373	175	198
գ) ռուս. բաժ.	5	-	5	127	-	127
Ֆիզ-մաթեմատիկ. ֆակուլտետ	30	20	10	765	505	260
ա) հայկական բաժ.	16	11	5	425	283	142
բ) արդրեց. բաժ.	10	5	5	243	125	118
գ) ռուս. բաժ.	4	4	-	97	97	-

ԼՂԻՄ-ում առանձին պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրումը, ինչ խոսք, առաջին հայացքից ինքնին ուրախալի փաստ է: Ընդունելով հանդերձ երևույթի դրական կողմերը, այնուամենայնիվ, չմոռանանք նաև այն բացասական դե-

րը, որ խաղաց մանկավարժական ինստիտուտը՝ ապահովելով ադրբեջանցի մտավորականների շոնդալի ներհոսքն ինքնավար մարզ և նրանց քայքայիչ գործունեությունն Արցախյան շարժման ժամանակ, ինչը, կարծում եմ, ոչ ոք չի կարող հերքել:

Խորանալու համար Բաքվի իշխանությունների կրթական քաղաքականության դավազրգիռ էության մեջ, կարծում եմք, արժե հետադարձ հայացքով դիտարկել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության ազգային պատկանելության համապատկերը եւ նրա զարգացման դինամիկան՝ ըստ տարիների: Չանապատասխան տվյալները բերում ենք ԼՂՀ հանրապետական արխիվում պահվող տարաբնույթ նյութերից, որոնց մի զգալի մասը, ցավոք, հրդեհի ճարակ է դարձել ադրբեջանական զորքերի կողմից քաղաքը հրետակոծության ենթարկելու ընթացքում: Այնուամենայնիվ, փրկված փաստաթղթերը, չափազանց սակավ լինելով հանդերձ, որոշակի ուրվագծում են Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իշխանությունների իրականացրած հակահայ քաղաքականության իրական պատկերը: Արխիվային այդ նյութերի թվում է, մասնավորապես, ինստիտուտի տարեկան հաշվետվությունը, որտեղ առանձնակի բժախնդրությամբ ներկայացված է նաև ուսանողների ազգային պատկանելությունը, ինչը, կարելի է ենթադրել, հատուկ արվել է հետևելու համար բուհում ադրբեջանցի սովորողների թվական աճի դինամիկային: Չանաձայն հաշվետվության, ինստիտուտի ուսանողության ազգային կազմը 1979թ. հետևյալ պատկերն ուներ⁵¹ (տես՝ աղ.8):

51. ԱրՊՀ-ի արխիվ, գործ 22, 24, 25, 26:

ՍՄԻ-ի ուսանողության ազգային կազմն ըստ ազգային պատկանելության՝ 1979թ. դրությամբ

	Պատմութ.			Բանասիր.			Ֆիզիկա-մաթեմ.			Ընդամենը		
	Ֆակուլտետ			Ֆակուլտետ			Ֆակուլտետ					
	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.
Դայ	194	-	194	97	344	441	373	142	515	664	486	1150
Ադրբեջանցի	101	123	224	175	209	384	126	118	244	402	450	852
Ռուս.	3	-	3	-	5	5	6	-	6	9	5	14
Ընդամենը	298	123	421	272	558	830	505	260	765	1075	941	2016

Աղյուսակում բերված տվյալերը ցույց են տալիս, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների թիվը 1973/74 ուսումնական տարում ըստ բաժինների բաշխված էր հետևյալ կերպ՝ հայկական բաժնի ուսանողները կազմում էին ուսանողության ընդհանուր թվի շուրջ 58%-ը, ադրբեջանցիները՝ շուրջ 40%-ը, իսկ ռուսական բաժնի ուսանողները՝ շուրջ 2%-ը:

Նույն ուսումնական տարում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մոտավորապես 61%-ը կազմում էին հայազգի դասախոսները, 39%-ը՝ ադրբեջանցիները:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ ինչ-ինչ պատճառներով, սկսած 1979/80 ուսումնական տարվանից, զգալի թափով ավելանում էին ադրբեջանցի ուսանողների և աշխատակիցների թվաքանակները:

Այստեղ առանձնահատուկ շեշտում ենք «աշխատակիցներ» տերմինը, հաշվի առնելով, որ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմն իր սկզբնական ձևավորումից հետո լուրջ փոփոխություններ չի կրել, սակայն ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատակիցների ընդհանուր թվաքանակն աճել է ուսանողների թվին ու գործարկվող ուսումնական լաբորատորիաների, արհեստանոցների և այլ օղակների ստեղծմանը զուգահեռ: Եվ ահա հենց այդ նորաստեղծ ենթակառույցներում է, որ

ադրբեջանցի աշխատակիցների համար ներս սողոսկելու հնարավորություն էր բացվում, ինչն էլ ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով ամենակարող ադրբեջանցի պրոռեկտորը լավագույնս օգտագործում էր իր ազգակիցների համար:

Տիրող այդ գործելաոճին բուհի հայազգի աշխատակիցները մինչ Շարժումը լուրջ հակազդեցություն չէին դրսևորում, թեև ուղ քաջատեղյակ էին Ադրբեջանի հանրապետական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացվող քաղաքականությանը՝ ուղղված բոլոր հնարավոր եղանակներով ԼՂԻՄ-ից հայկական տարրի դուրսմղմանը: Եթե նույնիսկ որոշ հայրենասեր դասախոսների կողմից հակազդեցության երկչոտ քայլեր էին կատարվում, ապա կոլեկտիվում գտնվում էին մարդիկ, ովքեր ամեն գնով աշխատում էին դիմադրությունը մարել:

Բնականաբար, ինքնավար մարզում տիրող այդ իրավիճակը շատ երկար չտևեց: Օր-օրի ավելանում էր այն հայրենասերների թիվը, ովքեր ցանկանում էին թոթափել ադրբեջանական լուծը, և մոտենում էր այն օրը, երբ արցախահայությունը պետք է ոտքի ելներ հանուն իր ազգային ազատության: Ինստիտուտի հայ ազգի դասախոսական կազմը ուսանողության հետ միասին 1988-ին ոտքի ելավ ազգային ազատագրական պայքարի՝ հայոց արցախական աշխարհը՝ հայոց պատմական 10-րդ նահանգը, մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով:

Այդ օրերին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը երկփեղկվեց: Ինստիտուտում ադրբեջանցիների հետ միատեղ աշխատանքը դարձավ անհնարին՝ առանձնապես Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո: Մեկուկես տասնամյակ գործած մանկավարժական ինստիտուտը 1988թ. փակվեց:

Ստորև ներկայացնում ենք ԽՍՀՄ Մինիստրերի խորհրդի որոշումը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակման մասին.

Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի

ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

14 հոկտեմբերի, 1988թ. թիվ 1208

Մոսկվա, Կրեմլ

**Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան
մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես
փակելու մասին**

ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում է.

1. Համաձայնել Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես փակելու մասին Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի եւ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմի առաջարկության հետ՝ համաձայնեցված Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի եւ ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի առաջարկության հետ:

2. Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդին, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին եւ ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին՝ ցուցաբերել աջակցություն ինստիտուտի աշխատակիցներին աշխատանքի տեղավորման գործում, ինչպես նաեւ ապահովել այդ ինստիտուտի ուսանողների տեղաբաշխումը՝ ուսումը շարունակելու համար:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ

Ն. Ռիժկով

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի

գործերի կառավարիչ

Մ. Սմիրտյուկով

Համաձայն այդ որոշման, ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Շուշի, իսկ հայկական բաժինը՝ Վանաձորի Յովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ:

**Կիրովականի Յ. Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի
բաժանմունք**

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը փակվելուց հետո նրա հայ ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմին իր հյուրընկալ հարկի տակ ընդունեց Կիրովականի (Վանաձորի) Յ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը:

Վերահաս աղետը՝ Սպիտակի երկրաշարժը, ավերեց Յայաստանի հյուսիսային հատվածի շրջանները, այդ թվում՝ մասամբ Կիրովական քաղաքը: Փլատակների վերածվեցին նաեւ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ուսումնական շենքերի մի մասն ու հանրակացարանը:

Այլեւս անհնար էր Կիրովականի մանկավարժական ինստիտուտում շարունակել մայր բուհի եւ Ստեփանակերտից Կիրովական տեղափոխված ուսանողների համատեղ ուսուցման գործընթացը:

Ինչպես տեսանք, ԽՍՀՄ Մինիստրների սովետի 1988թ. հոկտեմբերի 14-ի որոշման երկրորդ կետով Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդին, Յայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին եւ ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին հանձնարարական էր տրված միջոցներ ձեռնարկել ժամանակավորապես փակված Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան մանկավարժական ինստիտուտի աշխատակիցներին աշխատանքի տեղավորման եւ ուսանողների տեղաբաշխման խնդիրների լուծման ուղղությամբ:

Անկասկած, ստեղծված իրավիճակում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական եւ ադրբեջանական խմբերի համար ուսումնական գործընթացը, ինչպես Ադրբեջանական ԽՍՀ, այնպես էլ Յայկական ԽՍՀ որեւէ բուհում համատեղ կազմակերպելն անհնար էր: Ելնելով այդ հանգամանքից, ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեն 1988թ. հոկտեմբերի 17-ին ընդունեց թիվ 382 որոշումը, որի 2.1 կետով

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողությունը եւ դասախոսական կազմը պետք է տեղաբաշխվեն Կիրովաբադում, Երեւանում, Լենինականում եւ Կիրովականում:⁵²

Հայկական բաժնի ուսանողության եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետագա գործունեությունն իրականացնելու առաջին եւ ընդունելի տարբերակը Հայկական ԽՍՀ որեւէ մանկավարժական բուհում նրանց համար այդ հնարավորության ստեղծումն էր:

Նշված որոշումից հետո, առանց հապաղելու, Հայաստանում գործող պետական մանկավարժական երեք բուհերի՝ Երեւանի Խ. Աբովյանի անվան, Կիրովականի Հ. Թումանյանի անվան, Լենինականի Մ. Նալբանդյանի անվան ինստիտուտների ղեկավարության կողմից պատրաստականություն հայտնվեց լուծարված ինստիտուտի ուսանողներին եւ դասախոսներին ընդունել իրենց մոտ:

Հնարավոր երեքից Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կուլեկտիվն ընտրեց Կիրովականի (Վանաձորի) Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի տարբերակը:

Կուլեկտիվի այդ որոշման մասին քսան տարի անց ահա թե ինչպես է վերհիշում այդ բարձրագույն ուսումնական հաստատության նախկին ռեկտոր, պրոֆեսոր Ռ. Եղոյանը. «Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի վստահությունը մեր կուլեկտիվի հանդեպ ավելի պարտավորեցրեց մեզ, եւ բարձր կազմակերպվածությամբ մինիստրության, տեղական կուսակցական եւ գործադիր մարմինների աջակցությամբ, աղ ու հացով, երգով ու պարով դիմավորեցինք մեր գործընկերներին, թեւ Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Շահումյան սովխոզի տարածքում, այդ ժամանակ կրակոցները չէին դադարում: Սկսեցինք ուսումնական գործընթացը: Դասախոսների հիմնական մասը վերադարձավ Ստեփանակերտ, որի կարիքը տեղում մեծ էր»:⁵³

52. Այդ մասին տես Ռ. Եղոյան. Բարձրագույն կրթության խնդիրները Արցախում, 1988-1992թթ. Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2010, ք.3, էջ 48-49:

53. Ռ. Եղոյանի նշվ. հոդվածը, էջ 149-150:

1988թ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը մարզի հանրակրթական, և Ադրբեջանի տարածքում գործող հայկական դպրոցների համար բարձրորակ մանկավարժական կադրեր էր պատրաստում 6 մասնագիտությամբ՝ հայոց լեզու եւ գրականություն, մաթեմատիկա եւ ֆիզիկա, պատմություն, տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա, ռուսաց լեզու եւ գրականություն, ընդհանուր տեխնիկական առարկաներ եւ աշխատանք: Արցախից Կիրովական տեղափոխված այդ խմբերի 400 ուսանողներին բաշխեցին ըստ համապատասխան խմբերի եւ ուսումնական պարապմունքները կազմակերպում էին կահավորված լսարաններում: Ստեփանակերտի ինստիտուտի դասախոսները (թվով 10) նույնպես ընդգրկված էին դասախոսական աշխատանքում:

Պրոֆեսոր Ռ. Եդոյանի վկայությամբ՝ Ստեփանակերտի նախկին մանկավարժական ինստիտուտի աշխատակիցները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներն այդ ընթացքում ստանում էին իրենց հաստիքային աշխատավարձերը, չնայած դասախոսները Կիրովականում ուսումնական ծանրաբեռնվածություն չունեին:

Ինստիտուտում ուսանողների ուսումնական պարապմունքները կազմակերպվում էին պատշաճ մակարդակով, քանի որ ուսուցման հաջողությունն անմիջապես առնչվում է ուսումնանյութական բազայի առկայության հետ: Սակայն աղետալի երկրաշարժի հետևանքով Կիրովականում ուսումնական գործընթացը շարունակելը դարձավ անհնարին: Ինստիտուտի ուսումնական մասնաշենքերը երկրաշարժի հետևանքով դարձել էին ոչ պիտանի, փլվել էր հանրակացարանի շենքը: Այսպիսով, հնարավոր չէր Կիրովական տեղափոխված արցախցի ուսանողների ուսումնական գործընթացի հետագա համատեղ շարունակումը:

Ստեղծված իրավիճակում կար երկու ելք՝ Ստեփանակերտի ուսանողությանը տեղափոխել Երեւանի մանկավարժական ինստիտուտ (Լենինականի մանկավարժական ինստիտուտը նույնպես երկրաշարժի հետևանքով արժանացել էր Կիրովականի մանկավարժականի ճակատագրին), կամ աշխատանքներ տա-

նել Ստեփանակերտում բարձրագույն մանկավարժական կրթությունը կազմակերպելու համար, թեկուզե՛լ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք ստեղծելու ճանապարհով:

Նրանց մոտ, ովքեր անտեղյակ են իրավիճակին, կարող է ականա հարց ծագել՝ ինչու՞ բաժանմունք, այլ ոչ առանձին ինստիտուտ կամ համալսարան, մանավանդ, որ այս վերջին տասնամյակում մեր փոքրիկ երկրում՝ ԼՂՀ-ում, բացվել է շուրջ մեկ տասնյակ համալսարան: Այս առումով ուշագրավ է, թե այն ժամանակ ինչպիսի արգելքներ ու խոչընդոտներ էր պետք հաղթահարել նույնիսկ ինստիտուտի բաժանմունք բացելու համար:

Հայտնի է, որ ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի կանոնադրության պահանջներին համապատասխան, ցանկացած բուհ կարող է Խորհրդային Միության ցանկացած վայրում ստեղծել իր բաժանմունքը, եթե տվյալ վայրում կան բուհի որոշակի թվով ուսանողներ եւ առկա են ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի ու տեղական (հանրապետական) իշխանությունների համաձայնությունն ու թույլտվությունը տվյալ բուհի բաժանմունք ստեղծելու վերաբերյալ:

Ասվածից հետեւում է, որ Ստեփանակերտում Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք ստեղծելու համար անհրաժեշտ էր ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի (այդ տարիներին այն գլխավորում էր Գեմադի Յագոդինը) եւ Ադրբեջանի իշխանությունների (որովհետեւ դեռեւս ինքնավար մարզը դե-յուրե գտնվում էր Ադր. ԽՍՀ կազմում) թույլտվությունը:

Նման լուրջ խոչընդոտի հաղթահարումը, պարզ է, առաջացած քաղաքական լարվածության պայմաններում անհնար էր:

Ստեղծված այս բարդ իրավիճակում նման բարդ հարց նույնիսկ ի վիճակի չէին լուծել նաեւ Հայաստանի կոմկուսի Կենտրոնն ու կառավարությունը: Իրավիճակից դուրս գալու միակ ելք փնտրելու խնդիրը ՀԽՍՀ իշխանությունները հանձնարարեցին Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ռ. Եդոյանին: Լավատեղյակ ընկերները Ռ. Եդոյանին խորհուրդ տվե-

ցին դիմել երկրաշարժի գոտու բոլոր խնդիրների լուծման պատասխանատու, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովին, որը, լինելով աղետի գոտու աշխատանքները կարգավորող միութենական պետական հանձնաժողովի նախագահը, հաճախակի էր այցելում Վանաձոր:

Օգտագործելով բոլոր հնարավորությունները, Ռ. Եդոյանին հաջողվում է հանդիպել Ն. Ռիժկովի հետ եւ ներկայացնել վերը նշված հույժ կարեւոր հարցն ու լուծում հայցել: Ն. Ռիժկովի թույլտվությամբ ու խորհրդով, ինստիտուտի ղեկավար Ռ. Եդոյանը բանակցեց ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավար Ա. Վոլսկու հետ:

Ռ. Եդոյանի հավաստմամբ՝ Ա. Վոլսկին լսել անգամ չէր ուզում Ստեփանակերտում որեւէ կարգավիճակով բուհ բացելու մասին, եւ երեք անգամ նրա հետ անցկացրած հանդիպումները ոչ մի դրական արդյունք չտվեցին, որովհետեւ ամեն անգամ էլ նա վկայակոչում էր բարձրագույն դպրոցի վերը նշված կանոնակարգային պահանջները:

Համոզվելով, որ Ստեփանակերտում Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի ստեղծմանն ուղղված բոլոր փորձերն ապարդյուն են անցնում, Ռ. Եդոյանը կատարում է մի հնարամիտ քայլ՝ առաջարկելով Ստեփանակերտում բացել խորհրդատվական կետ, որի պարագայում հնարավոր է շրջանցել Ադրբեջանի կառավարության համաձայնությունն ստանալու բարձրագույն դպրոցի կանոնակարգով ամրագրված պահանջը:

Ստեփանակերտում խորհրդատվական կետ բացելու ուղղությամբ հետագա բոլոր քայլերը Ռ. Եդոյանը կատարում է՝ ղեկավարվելով Ն. Ռիժկովի խորհուրդներով, եւ արդյունքում հաջողվում է խնդիրն իրականացնել:

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի խորհրդատվական կետը տեւական աշխատանքային գործունեություն չիրականացրեց:

Կարճ ժամանակ անց շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերով ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ Ստեփանակերտում Կիրովականի Հ. Թումանյանի անվան պետական մանկա-

վարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք ստեղծելու համար:

Սկիզբ առնելով 1988թ. դեկտեմբերից, այդ աշխատանքները տեւեցին մինչեւ 1989թ. մարտ: Արդյունքում՝ բոլոր կողմերի համագործակցության շնորհիվ կայացվեց Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթություն մինիստրության կոլեգիայի որոշումը Կիրովականի Հ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի ստեղծման մասին:⁵⁴ Քննարկվող հիմնահարցը ավելի որոշակի դարձնելու համար, նպատակահարմար գտանք ներկայացնել այն հիմնական որոշումները, առաջարկությունները, որոնք վերաբերվում են Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի ստեղծման հետ:

Ստորև ներկայացնում ենք որոշման և հրամանների տեքստը և առաջարկությունները:

54. Վերոնշյալ փաստագրական նյութերը ուսումնասիրել ենք Վանաձորի մանկավարժական ինստիտուտի արխիվային տվյալների հիման վրա, գործ 32, 34, 36:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈԼԵԳԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄ**

13 մարտի, 1989թ. թիվ 5

ք. Երեւան

**Կիրովականի մանկավարժական ինստիտուտի
Ստեփանակերտի բաժանմունք ստեղծելու մասին**

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 14.10.1988թ. թիվ 1208 որոշմամբ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես փակվել է:

Ի կատարումն ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի 1988թ. հոկտեմբերի 17-ի թիվ 382 որոշման 2.1 կետի՝ նրա հայազգի ուսանողների եւ դասախոսների կոնտինգենտը (989 մարդ, այդ թվում՝ 373 մարդ առկա եւ 616 մարդ հեռակա ուսուցմամբ) տեղափոխվել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի կազմ:

Սակայն երկրաշարժի հետեւանքով էականորեն տուժել են նրա ուսումնական մասնաշենքերն ու հանրակացարանը, եւ պարապմունքները դրանցում արգելված են: Ինստիտուտին ներկայումս ժամանակավորապես տրամադրված շինությունները դժվարությամբ են բավարարում տեղի ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տարածքները:

Այս կապակցությամբ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներն ստիպված վերադարձել են Լեռնային Ղարաբաղ ու խնդրում են իրենց ուսումը կազմակերպել ըստ բնակության եւ աշխատանքի վայրի:

Հաշվի առնելով առաջացած իրավիճակը եւ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների ուսուցումն ու դասախոսների աշխատանքը շարունակելու անհրաժեշտությունը՝ ղեկավար մարմինների հետ համաձայնեցմամբ՝

Կ Ո Լ Ե Գ Ի Ա Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. 1989թ. մարտի 15-ից Ստեփանակերտ քաղաքում ստեղծել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք (ԿՄԻ ՍԲ) եւ այնտեղ կազմակերպել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտ տեղափոխված առկա եւ հեռակա ուսուցմամբ ուսանողական կոնտինգենտի ուսուցման շարունակումն ու դասախոսական կազմի աշխատանքը:

2. Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ռեկտորին (ընկ. Ռ. Յ. Եդոյանին):

2.1. ԼԴԻՄ համապատասխան մարմինների հետ համատեղ որոշել ԿՄԻ ՍԲ-ի տեղավորման վայրը՝ հաշվի առնելով ուսումնական գործընթացի նորմալ կազմակերպման համար հարկ եղած տարածքներ տրամադրելու եւ բնակարանի կարիք ունեցող ուսանողներին հանրակացարանով բավարարելու անհրաժեշտությունը:

2.2. Եռօրյա ժամկետում մինիստրության քննարկմանը ներկայացնել առաջարկություններ՝ ԿՄԻ ՍԲ-ի կառուցվածքի, նրա աշխատակիցների կազմի հաստիքացուցակի, ֆակուլտետների, ամբիոնների եւ մյուս ստորաբաժանումների անվանացանկի մասին, ինչպես նաեւ 1989թ. պահանջվող ֆինանսավորման համար նախահաշվի նախագիծը (ըստ հողվածների):

2.3. Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ՝ մինչեւ ընտրությունների անցկացումը ԿՄԻ ՍԲ-ի վարիչի պաշտոնակատարի, առկա եւ հեռակա ուսուցման ու վարչատնտեսական աշխատանքի գծով նրա տեղակալների, ինչպես նաեւ ղեկավարների նշանակման մասին:

2.4. Ձեւավորել ԿՄԻ ՍԲ-ի գիտական խորհուրդ:

2.5. Մշակել ժամանակացույց ու մինչև 1988/89 ուստարվա վերջը կազմակերպել եւ անցկացնել ԿՄԻ ՍԲ-ի վարիչի ընտրությունները ու բաժանմունքի՝ բարձրագույն դպրոցի կանոնակարգով նախատեսված մյուս աշխատակիցների ընտրությունը:

2.6. Անհապաղ կազմակերպել անհրաժեշտ ուսումնա-լաբո-

րատոր սարքավորումների, կաբինետների, գույքի, գրականության եւ այլնի տեղափոխումը քաղաք Ստեփանակերտ:

Կարճ ժամկետում ԿՄԻ ՍԲ-ում սկսել ուսումնական գործընթացը՝ ըստ համապատասխան ուսումնական պլանների կատարումն ապահովող ծրագրի:

2.7. Ներկայացնել առաջարկություններ Ստեփանակերտի բաժանմունքի նյութատեխնիկական բազայի հազեցման համար ԿՄԻ լրացուցիչ կարիքների մասին:

2.8. Ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ի առկա եւ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների անվանացանկի եւ ժամկետների մասին:

3. Հանրապետության բուհերի ռեկտորներին.

- մինչեւ ս.թ. մարտի վերջը մինիստրություն ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ին ուսումնա-լաբորատոր սարքավորումներ, գործիքներ, սարքեր, հաշվիչ տեխնիկայի միջոցներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, կահույք, գույք, գրականություն եւ այլն անհատույց տրամադրելու հնարավորության մասին:

4. Ընդունել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի՝ ԼՂԻՄ ղեկավար մարմինների հետ համաձայնեցված առաջարկությունը ԿՄԻ ՍԲ-ում 1989թ. համար ընդունելության պլանի մասին՝ — մարդ թվով, այդ թվում՝ առկա ուսուցմամբ՝ — մարդ, հեռակա ուսուցմամբ՝ — մարդ (հավելված 1):

5. Էկոնոմիկայի եւ նյութական բազայի զարգացման վարչությանը.

5.1. Սահմանված կարգով Կիրովականի մանկավարժական ինստիտուտին փոխանցել ԿՄԻ ՍԲ-ի գործունեության համար հատկացված ֆինանսավորումը:

5.2. Կիրովականի մանկավարժական ինստիտուտին ցուցաբերել աջակցություն եւ օգնություն՝ ուսումնա-լաբորատոր սարքավորումների տեղափոխման, տեղադրման եւ գործարկման կազմակերպման, ԿՄԻ ՍԲ-ի նյութատեխնիկական բազայի անձնայն կերպ հազեցման գործում:

5.3. Պատրաստել եւ եռօրյա ժամկետում ներկայացնել հիմ-

նավորում Կիրովականի մանկավարժական ինստիտուտի՝ ըստ թվաքանակի եւ մասնագիտությունների 1989թ. ընդունելության ավելացման հարցը, համաձայն հավելված 1-ի, սահմանված կարգով լուծելու համար:

6. Բուհերի վարչությանը.

6.1. Կիրովականի մանկավարժական ինստիտուտին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ ԿՄԻ ՍԲ-ում ուսումնական գործընթացի եւ ընդունելության կազմակերպման գործում:

7. Երիտասարդ մասնագետների տեղաբաշխման բաժնին.

7.1. Ճշտել եւ ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ի 1989թ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ:

8. Կոլեգիայի սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել մինիստրի առաջին տեղակալ ընկ. Լ. Պ. Ղարիբջանյանին:

**ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՅ
ՄԻՆԻՍՏՐ**

Ս. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Այնուհետեւ կոլեգիայի որոշմանը հետեւեց ՀԽՍՀ Ժողովրդական կրթության մինիստրի հրամանը Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի ստեղծման մասին:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն**

15 մարտի, 1989թ. թիվ 94-Մ

ք. Երեւան

**Կիրովականի մանկավարժական ինստիտուտի
Ստեփանակերտի բաժանմունք ստեղծելու մասին**

ԽՍՀՄ Մինիստրների սովետի 14.10.1988թ. թիվ 1208 որոշմամբ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես փակվել է:

Ի կատարումն ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի 1988թ. հոկտեմբերի 17-ի թիվ 382 որոշման 2.1 կետի՝ նրա հայազգի ուսանողների եւ դասախոսների կոնտինգենտը (989 մարդ, այդ թվում՝ 373 մարդ առկա եւ 616 մարդ հեռակա ուսուցմամբ) տեղափոխվել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի կազմ:

Սակայն երկրաշարժի հետեւանքով էականորեն տուժել են նրա ուսումնական մասնաշենքերն ու հանրակացարանը, եւ պարապմունքները դրանցում արգելված են: Ինստիտուտին ներկայումս ժամանակավորապես տրամադրված շինությունները դժվարությամբ են բավարարում տեղի ուսանողների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ տարածքները:

Այդ կապակցությամբ Ստեփանակերտի ուսանողներն ստիպված վերադարձել են Լեռնային Ղարաբաղ ու խնդրում են իրենց ուսումը կազմակերպել ըստ բնակության եւ աշխատանքի վայրի:

Հաշվի առնելով առաջացած իրավիճակը եւ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների ուսուցումն ու դասախոսների աշխատանքը շարունակելու անհրաժեշտությունը՝ ղեկավար մարմինների հետ համաձայնեցմամբ եւ ի կատարումն մինիստրության կոլեգիայի 1989 թվականի մարտի 13-ի թիվ 5 որոշման.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. 1989թ. մարտի 15-ից Ստեփանակերտ քաղաքում ստեղծել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք (ԿՄԻ ՍԲ) եւ այնտեղ կազմակերպել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտ տեղափոխված առկա եւ հեռակա ուսուցմամբ ուսանողական կոնտինգենտի ուսուցման շարունակումն ու դասախոսական կազմի աշխատանքը:

2. Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ռեկտորին (ընկ. Ռ. Յ. Եդոյանին):

2.1. ԼԴԻՄ համապատասխան մարմինների հետ համատեղ որոշել ԿՄԻ ՍԲ-ի տեղավորման վայրը՝ հաշվի առնելով ուսումնական գործընթացի նորմալ կազմակերպման համար հարկ եղած տարածքներ տրամադրելու եւ բնակարանի կարիք ունեցող ուսանողներին հանրակացարանով բավարարելու անհրաժեշտությունը:

2.2. Եռօրյա ժամկետում մինիստրության քննարկմանը ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ի կառուցվածքի, նրա աշխատակիցների կազմի հաստիքացուցակի, ֆակուլտետների, ամբիոնների եւ մյուս ստորաբաժանումների ցանկի մասին, ինչպես նաեւ 1989թ. պահանջվող ֆինանսավորման համար նախահաշվի նախագիծը (ըստ հողվածների):

2.3. Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ՝ մինչեւ ընտրությունների անցկացումը ԿՄԻ ՍԲ-ի վարիչի պաշտոնակատարի, առկա եւ հեռակա ուսուցման եւ վարչատնտեսական աշխատանքի գծով նրա տեղակալների, ինչպես նաեւ ղեկավարների նշանակման մասին:

2.4. Ձեւավորել ԿՄԻ ՍԲ-ի գիտական խորհուրդ:

2.5. Մշակել ժամանակցույց ու մինչեւ 1988/89 ուստարվա վերջը կազմակերպել եւ անցկացնել ԿՄԻ ՍԲ-ի վարիչի ընտրությունները եւ բաժանմունքի՝ բարձրագույն դպրոցի կանոնակարգով նախատեսված մյուս աշխատակիցների ընտրությունը:

2.6. Անհապաղ կազմակերպել անհրաժեշտ ուսումնա-լաբո-

րատոր սարքավորումների, կաբինետների, գույքի, գրականության եւ այլնի տեղափոխումը քաղաք Ստեփանակերտ:

Կարճ ժամկետում ԿՄԻ ՍԲ-ում սկսել ուսումնական պրոցեսը՝ ըստ համապատասխան ուսումնական պլանների կատարումն ապահովող ծրագրի:

2.7. Ներկայացնել առաջարկություններ Ստեփանակերտի բաժանմունքի նյութատեխնիկական բազայի հազեցման համար ԿՄԻ լրացուցիչ կարիքների մասին:

2.8. Ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ի առկա եւ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների ցանկի եւ ժամկետների մասին:

3. Հանրապետության բուհերի ռեկտորներին.

- մինչեւ ս.թ. մարտի վերջը մինիստրություն ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ին ուսումնա-լաբորատոր սարքավորումներ, գործիքներ, սարքեր, հաշվիչ տեխնիկայի միջոցներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, կահույք, գույք, գրականություն եւ այլն անհատույց տրամադրելու հնարավորության մասին:

4. Ընդունել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի՝ ԼՂԻՄ ղեկավար մարմինների հետ համաձայնեցված առաջարկությունը ԿՄԻ ՍԲ-ում 1989թ. համար ընդունելության պլանի մասին՝ ----- մարդ թվով, այդ թվում՝ առկա ուսուցմամբ՝ ----- մարդ, հեռակա ուսուցմամբ՝ ----- մարդ (հավելված 1):

5. Էկոնոմիկայի եւ նյութական բազայի զարգացման վարչությանը.

5.1. Սահմանված կարգով Կիրովականի մանկավարժական ինստիտուտին փոխանցել ԿՄԻ ՍԲ-ի գործունեության համար հատկացված ֆինանսավորումը:

5.2. Կիրովականի մանկավարժական ինստիտուտին ցուցաբերել աջակցություն եւ օգնություն՝ ուսումնա-լաբորատոր սարքավորումների տեղափոխման, տեղադրման եւ գործարկման կազմակերպման, ԿՄԻ ՍԲ-ի նյութատեխնիկական բազայի ամենայն կերպ հազեցման գործում:

5.3. Պատրաստել եւ եռօրյա ժամկետում ներկայացնել հիմ-

նավորում Կիրովականի մանկավարժական ինստիտուտի՝ ըստ թվաքանակի եւ մասնագիտությունների 1989թ. ընդունելության ավելացման հարցը, համաձայն հավելված 1-ի, սահմանված կարգով լուծելու համար:

6. Բուհերի վարչությանը.

6.1. Կիրովականի մանկավարժական ինստիտուտին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ ԿՄԻ ՍԲ-ում ուսումնական գործընթացի եւ ընդունելության կազմակերպման գործում:

7. Երիտասարդ մասնագետների տեղաբաշխման բաժնին.

7.1. Ճշտել եւ ներկայացնել առաջարկություններ ԿՄԻ ՍԲ-ի 1989թ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին:

8. Կոլեգիայի սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել մինիստրի առաջին տեղակալ ընկ. Լ. Պ. Ղարիբջանյանին:

ՄԻՆԻՍՏՐ

Ս. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Ստեփանակերտում Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի ստեղծմամբ կատարվեց պատմաքաղաքական անչափ նշանակալի քայլ. առաջին անգամ Հայաստանի բարձրագույն կրթահամակարգի մի խոշոր ու կարեւոր բնագավառ ամրագրվեց Արցախում:

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի ստեղծմամբ նոր հիմքի վրա սկսվեց, մի կողմից՝ տարբեր մասնագիտությունների մանկավարժներ պատրաստելու ազգօգուտ աշխատանքը, մյուս կողմից՝ այն դարձավ կարեւոր կռվան բոլորիս համար ու մեր հայեցի հավաքական կամքի խտացման կենտրոն: Այդուհետ Արցախի կրթական համակարգը կլինի Հայաստանի ավանդույթներով հարուստ կրթահամակարգին համանման:

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի վարիչ նշանակվեց տնտեսագիտական գիտությունների թեկնածու Երվանդ Համբարձումի Բաղդասար-

յանը, որն ուներ կուսակցական աշխատանքի հարուստ փորձ եւ գնահատված էր իշխանությունների ու ժողովրդի կողմից: Ե. Բաղդասարյանն այդ պաշտոնում աշխատեց մինչեւ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի (ԼՂՊՀ) ստեղծումը, երբ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը լրիվությամբ մտավ նորաստեղծ բուհի համակարգի մեջ:

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ղեկավարությունը համակողմանի ուշադրություն ու աջակցություն էր ցուցաբերում Ստեփանակերտի բաժանմունքի նկատմամբ՝ նրա գոյության բոլոր տարիներին:

Դրա վկայություններից է, որ ինքնավար մարզի շրջափակման դաժան պայմաններում Մայր բուհի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք երեւելի ներկայացուցիչներ պարբերաբար ժամանում էին Ստեփանակերտ եւ իրենց մասնակցությունը բերում բաժանմունքում իրականացվող աշխատանքներին, հնարավորինս աջակցում բաժանմունքի լաբորատոր ու նյութատեխնիկական բազայի ստեղծմանն ու հարստացմանը:

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի գոյության կարճատեւ ժամանակահատվածում ուսանողության թիվը չորս հարյուրից հասավ հազար ութ հարյուրի, իսկ մասնագիտությունների քանակը վեցից՝ տասի:

Հարկ է նշել, որ վերոնշյալ մասնագիտություններով ու խմբաքանակներով էլ Կիրովականի Հ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը կատարեց 1992/93 ուսումնական տարվա ընդունելությունը, որ, իհարկե, բաժանմունքի գործունեության վերջին ընդունելությունն էր: Աղյուսակի ձևով ստորև ներկայացնենք ուսանողների ընդունելության կարգավիճակը (տես՝ աղ. 9):

**Ուսանողների ընդունելությունը Կիրովականի
Յ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքում՝
1992/93 ուստարում**

NN	Ըհ.Ֆր	Մասնագիտության անվանումը	1992/93 ուստարվա ընդունելություն	
			պետպատվեր	վճարովի
1.	0101	Մաթեմատիկա եւ ինֆորմատիկա	20	1
2.	0104	Ֆիզիկա եւ աստղաբաշխություն	20	2
3.	0109	Կենսաբանություն եւ քիմիա	20	11
4.	0219	Հայոց լեզու եւ գրականություն	20	16
5.	0220	Օտար լեզու (անգլ., գերմ.)	20	13
6.	0207	Պատմություն	20	17
7.	0119	Աշխարհագրություն	20	7
8.	0308	Մանկավարժության եւ տարրական ուսուցման մեթոդիկա	20	5
9.	0304	Նախնական զինվորական պատրաստություն եւ ֆիզկուլտուրա	20	5
10	0217	Ռուսաց լեզու եւ գրականություն	20	19
ԸՆԴԱՄԵՆԸ			200	86

Ուշադրություն դարձնենք այն փաստի վրա, որ 1992/93 ուսուննական տարում մանկավարժական մասնագիտություններով Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի առաջին կուրս ընդուվածների (286) միայն 30% (86) են կազմել ուսուցման վճարովի համակարգ ընդունված ուսանողները:

Այսպիսով, սկիզբ առավ Հայկական ԽՍՀ կրթահամակարգի մուտքն Արցախ, եւ, ինչպես ցույց տվեցին դեպքերի հետագա զարգացումներն ու դրանց արդյունքում առաջացած իրողությունները, հիմնավորապես եւ առմիշտ փակվեց աղբրեջանական կրթահամակարգի Լեռնային Ղարաբաղ հետդարձի ճանապարհը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՐՏԱՐԱՊԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Կիրովականի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի հիմնադրումը քաջալերիչ օրինակ հանդիսացավ Հայաստանի մյուս պետական բուհերի համար: Օրինաչափ էր, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղեկավարությունը, Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի ստեղծման աշխատանքներին զուգահեռ, աշխատանքներ էր տանում մարզում Հայաստանի նաեւ մյուս բուհերի ներկայությունը տարբեր կարգավիճակներով ապահովելու համար:

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունք

ՀԽՍՀ եւ ԼՂԻՄ կրթության բնագավառի ղեկավարների միջեւ ստեղծվել էր համագործակցության լավ մթնոլորտ, ինչն էլ տվեց իր սպասված դրական արդյունքը: Համագործակցության առաջին նախադեպին հետեւեց հաջորդը: Եվ արդեն 1988թ. սեպտեմբերի 14-ին հետևում է ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանի թիվ 63/11-610 մամակը՝ ՀԽՍՀ ժողովրդական կրթության մինիստր Սեմյոն Տիգրանի Հախումյանին. «Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմը հայտնում է, որ ԼՂԻՄ-ից եւ նրա հարակից շրջաններից Կ. Մարքսի անվան ԵրՊԻ-ի հեռակա բաժնում սովորում է ավելի քան 100 ուսանող: Կապված հեռավորության եւ ԵրՊԻ-ի մասնագետների հետ խորհրդատվությունների նպատակով հաճախակի շփման անհնարինության հետ, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների գործադիր կոմիտեն թախանձագին խնդրում է Ձեզ՝ քննարկել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բազայի վրա ԵրՊՀ-ի ուսումնախորհր-

դատվական կետ ստեղծելու մասին հարցը»:¹

80-ական թվականների վերջերին Խորհրդային կայսրության փլուզման նախանշաններն ակնհայտ էին բոլորի համար: Բացառված չէին իրադարձությունների այնպիսի զարգացումներ, երբ փլուզումը կունենա անկանխատեսելի հետեւանքներ: Չէին բացառվում նույնիսկ բախումներն ամբողջ Միության տարածքում՝ ազգային-կրոնական հիմքի վրա: Պատահական չէր, որ 1988թ. դեպքերից հետո Ադրբեջանական ԽՍՀ-ից, միջինասիական հանրապետություններից եւ Միության շատ այլ բուհերից սկսվեց հայազգի ուսանողների զանգվածային ներհոսքը Չայաստանի բուհեր: Վերոնշյալ փաստերը հիմնավորելու համար բերենք Ադրբեջանի բուհերից 1988թ. մայիսից մինչեւ 1989թ. հունվարն ընկած ժամանակահատվածում իրենց ուսումը շարունակելու նպատակով ԵրՊԻ դիմած եւ ընդունված ուսանողների թիվը: Ընդհանուր առմամբ, այդ ընթացքում ադրբեջանական բուհերից ԵրՊԻ-ում սովորելու համար դիմել է տարբեր կուրսերի 1010 ուսանող, որոնցից երեկոյան եւ հեռակա ուսուցմամբ՝ 350 ուսանող: Այդ ուսանողների մեծամասնությունն արցախցի էր: Այսինքն՝ ազգամիջյան հարաբերությունները ձեւավորել էին այնպիսի մի սուր իրավիճակ, որի պարագայում օրվա հրամայական էր դարձել Արցախում ԵրՊԻ-ի բաժանմունք կամ, զոնե, ուսումնախորհրդատվական կետ ունենալու խնդիրը:

Այդ էլ շարժառիթ էր, որ ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Սարգսյանը դիմեց Չայկական ԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը՝ Ստեփանակերտում ԵրՊԻ-ի ուսումնախորհրդատվական կետ բացելու հարցով: Թե ինչու ուսումնախորհրդատվական կետ, այլ ոչ բաժանմունք կամ մասնաճյուղ՝ արցախցի մեծաթիվ ուսանողների պարագայում, կապված է հետեւյալի հետ: Ինչպես գիտենք այն ժամանակ (մինչև կայսրության փլուզումը) խորհրդային կրթահամակարգի գործունեությունը կարգավորվում էր մեկ կանոնադրությամբ, համա-

1. Տե՛ս, Ա.Ավանեսյան, Ճարտարագիտական մասնագիտություններով ուսուցման կազմակերպումը Արցախում «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Լրատու 2, Ստեփանակերտ, 2007թ., էջ 81-85:

ծայն որի՝ տվյալ բուհն իր տարածքից դուրս գտնվող բնակավայրում կարող էր ունենալ ուսումնախորհրդատվական կետ, եթե նշված բնակավայրից այդ բուհում սովորում են 200-ից ավելի հեռակա բաժնի ուսանողներ:²

Արցախից ԵրՊԻ-ի հեռակա ուսուցման բաժնում սովորում էին նշված կանոնադրությամբ պահանջվող ուսանողների քանակը գերազանցող թվով ուսանողներ: Բացի այդ, Ադրբեջանի հետ վատթարացող հարաբերությունները, օրեցօր աճող լարվածությունը գործնականում անհնարին էր դարձրել այդ հանրապետության տարածքով հայերի տեղաշարժը, եւ հորիզոնում ուրվագծում էր ԼՂԻՄ-ի լրիվ շրջափակման հեռանկարը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանի բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Ս.Հախումյանը բազմիցս դիմել է ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի ղեկավարությանը՝ Ստեփանակերտում ԵրՊԻ-ի հեռակա բաժնի ուսումնախորհրդատվական կետ բացելու թույլտվություն տալու խնդրանքով: Այս կապակցությամբ տեղին է ներկայացնել ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ֆ. Պերեգուդովի պատասխանը՝ ուղղված Հայկական ԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրի տեղակալ Լ. Ղարիբջանյանին. «ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեն քննարկել է Ձեր առաջարկությունը Ստեփանակերտում Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսումնախորհրդատվական կետ ստեղծելու մասին: Ըստ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզգործկոմի ժողկրթության բաժնի տվյալների՝ ինժեներատեխնիկական մասնագետների տարեկան պահանջը տարածաշրջանում կազմում է 20-25 մարդ: 1989թ. մասնագետների նպատակային պատրաստման պլանի մեջ ԼՂԻՄ-ի համար Հայկական ԽՍՀ 11 բուհերում հատկացված է 71 տեղ ցերեկային բաժնում եւ 6 տեղ հեռակա բաժնում՝ 38 մասնագիտությունների գծով, արտամրցութային ընդունելու-

2. Նույն տեղում:

թյան կարգով, որը լրիվ կապահովի ԼՂԻՄ պահանջը բոլոր մասնագիտությունների գծով:³ Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Ստեփանակերտ քաղաքում Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ՈւԽԿ կազմակերպելու վերաբերյալ Ձեր առաջարկները, գտնում ենք, հնարավոր չէ պաշտպանել»:⁴

Միանգամայն պարզ է, որ բարձրացված հարցի նման պատասխանը համաձայնեցված էր Ադրբեջանական ԽՍՀ եւ Խորհրդային Միության իրավասու մարմինների հետ ու բնորոշ էր ժամանակի իշխանությունների գործելաճին՝ Լեռնային Ղարաբաղին առնչվող ոչ մի հարց չլուծել:⁵ Այլապես ինչո՞վ բացատրել վերադասի նման պատասխանը, երբ ԼՂԻՄ-ի համար մասնագետների պատրաստման՝ նրանց տրամադրության տակ գտնվող հեռանկարային պլանում բերված են այլ թվեր, քան արձանագրված էր ԼՂԻՄ մարզգործկոմի ժողկրթության բաժնի ներկայացրած բարձրագույն կրթության հեռանկարային պլանում:

Համաձայն այդ պլանի, 1991-1999թթ., այսինքն՝ 9 տարվա կտրվածքով, Լեռնային Ղարաբաղում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը հետեւյալ պատկերն ուներ. բժիշկներ՝ 60, իրավաբաններ՝ 80, ճարտարագետներ՝ 209, շինարար ճարտարագետներ եւ ճարտարապետներ՝ 145, տնտեսագետներ՝ 82, անասնաբույժներ՝ 26, առևտրի կազմակերպում՝ 22, ֆիզկուլտուրա՝ 50: Հանրակրթական դպրոցների համար մանկավարժական կադրերի պահանջը բավարարում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը:

Այժմ պարզաբանենք, թե ինչ հանգամանքներում է բացվել ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ուսումնախորհրդատվական կետը, իսկ հետո՝ բաժանմունքը:

1989թ.-ից ԼՂԻՄ-ում պետական իշխանությունն իրագործում

3. Սուլեյմանյան Ս., Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում, Երևան, 1998, էջ 12:

4. Քոթանջյան Հ., Ղարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները, քաղաքական հետազոտությունների ինստիտուտ (ԹՀԻ) Վերլուծական նյութեր, թողարկում 3, Երևան, 2009, էջ 8-10:

5. Манасян А., Карабахский конфликт. минимальная папка политико-правовых фактов и аргументов. Ереван. де-факто. 2009, ст. 1-2.

էր Հատուկ կառավարման կոմիտեն՝ Արկադի Վոլսկու ղեկավարությամբ: Լինելով ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների հանձնակատարը (իսկ վերելից իջեցված հանձնարարականները հիմնականում ոչ հայանպաստ էին), այնուամենայնիվ, այդ մեծ քաղաքագետը եւ մարդն անգնահատելի դեր խաղաց կարելորջատ հարցերը մեզ համար լավագույն ձեւով լուծելու խնդրում: Անկասկած, Ա. Վոլսկու իմացությամբ եւ նրա համաձայնությունը ստանալուց հետո է, որ ՀԽՍՀ ժողովրդական կրթության մինիստր Ս. Տ. Հախումյանին եւ ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Լ. Սարգսյանին 1989թ. մայիսի 20-ի թիվ 3/163 պատասխան նամակով նրա աշխատակից Վ. Սիդորովը հայտնում էր հետեւյալը. «ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեն պաշտպանում է Ստեփանակերտ քաղաքում ուսումնախորհրդատվական կետ բացելու վերաբերյալ Ձեր առաջարկությունը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի այն ուսանողների համար, ովքեր սովորում են Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա բաժնում: Գտնում ենք, որ Վ. Մարքսի անվան ԵրՊԻ-ի ՈւԽԿ-ն, որը կոչված է ստեղծելու ավելի բարենպաստ պայմաններ ԼՂԻՄ-ից Հայկական ԽՍՀ բուհերի հեռակա բաժնում սովորող ուսանողների համար, կարող է վերակազմավորվել որպես միջբուհական կենտրոն»:

Ստանալով ինքնավար մարզի ղեկավարության համաձայնությունը՝ ԵրՊԻ-ի գիտական խորհուրդը քննարկում եւ միաձայն որոշում է կայացնում՝ դիմել Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստր Մ. Ա. Դավթյանին Ստեփանակերտում ԵրՊԻ-ի ուսումնախորհրդատվական կետ բացելու առաջարկությամբ: ՀԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրությունը մինիստրի առաջին տեղակալ Լ. Պ. Ղարիբջանյանի ստորագրությամբ 1989թ. դեկտեմբերի 13-ին ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Սարգսյանին է ուղարկում հետեւյալ բովանդակությամբ նամակը՝ Ստեփանակերտում ՈւԽԿ բացելու առնչությամբ. «Մինիստրությունը չի առարկում, խնդրում են Արցախի ժողկրթության բաժնի հետ (Վ. Ս. Հայրապետյան) լուծեք տեղի եւ մնացած հարցերը»:

Դեռեւս խորհրդային օրենքներով առաջնորդվող ՀԽՍՀ-ի եւ ԼՂԻՄ կրթության ոլորտի ղեկավար աշխատողների համար նույ-

նիսկ ՈւԽԿ-ի ստեղծումը դարձել էր շուրջ մեկամյա գրագրությունների եւ առերես քննարկումների առարկա: Սակայն դեպքերի զարգացումները եւ կանխատեսումները հիմք հանդիսացան, որպեսզի Ստեփանակերտում եւ Երեւանում ինքնավար մարզի օրինական եւ ֆորմալ ղեկավարության հետ ընթացող բանակցությունների արդյունքում ձեռք բերվեր բանավոր համաձայնություն Արցախում ոչ թե ԵրՊԻ-ի ՈւԽԿ, այլ ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի բաժանմունք ստեղծելու վերաբերյալ: Եթե Երեւանում ԼՂԻՄ-ի ֆորմալ ղեկավարների հետ տեղի ունեցած բանակցություններն արագ հանգեցրին դրական արդյունքի, ապա Ստեփանակերտում պաշտոնական մարմինների հետ ընթացող բանակցությունները շատ լարված ու դանդաղ էին ընթանում:

Բանակցություններն ի վերջո դրական արդյունքի հանգեցրին: 1990թ. հունվարի 30-ին ընդունվեց մարզգործկոմի թիվ 3/7 որոշումը, որի 1-ին կետով արձանագրվեց համաձայնել Չայկական ԽՍՀ Ժողովրդական կրթության մինիստրության եւ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորատի առաջարկությանը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունք (ԵրՊԻ-ի ՉՖԸՏԲ) ստեղծելու վերաբերյալ:⁶

ԼՂԻՄ մարզգործկոմի որոշումից հետո կայացվեց Ստեփանակերտի քաղաքային գործադիր կոմիտեի որոշումը Ստեփանակերտում գործող ԴՕՍԱԱՖ-ի համալիրի մասնաշենքերից մեկը ԵրՊԻ-ի բաժանմունքին տրամադրելու մասին: ԼՂԻՄ եւ ԵրՊԻ-ի ղեկավարության փոխադարձ պայմանավորվածությամբ որոշվեց Ստեփանակերտի ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի ԸՏԲ-ում կատարել ուսանողների ընդունելություն 1990/91 ուստարվա համար՝ թեթեւ արդյունաբերության, ճարտարագիտության մասնագիտությունների գծով, ընդ որում՝ նախատեսվում էր առաջին երկու կուրսերում ուսուցումը կազմակերպել երեկոյան ուսուցման եղանակով Ստեփանակերտում, իսկ երրորդ կուրսից՝ մին-

6. Այդ տվյալները ուսումնասիրվել են ԵրՊԻ-ի արխիվային փաստաթղթերի հիման վրա, գ. 32, 33, 34, 35, 36:

չել ուսումն ավարտելն այն իրականացնել ԵրՊԻ-ի Գյումրիի մասնաճյուղում, որտեղ արդեն կար լավ ուսումնական բազա եւ պրոֆեսորադասախոսական փորձառու անձնակազմ:

Ձուգահեռաբար կյանքի կոչվեց բաժանմունքի աշխատակիցների եւ պրոֆեսորադասախոսական կազմի ձեւավորման խնդիրը:

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքի 1990/91 առաջին ուսումնական տարին սկսվեց բաժանմունքի կազմում ունենալով երիտասարդ, բանիմաց դասախոսներ՝ ֆ.մ.գ. թեկնածուներ Նիկոլայ Բաբայան, Գագիկ Բաղդունց, դասախոսներ Լաերտ Շեկյան, Արթուր Պողոսյան, Աշոտ Բաղդասարյան և այլն:⁷ Սկզբում ուսումնական պարապմունքները արդյունավետ կազմակերպելու համար որոշ դժվարություններ են ստեղծվել նյութատեխնիկական բազայի (նստարաններ, լսարաններ, լաբորատորիաներ և այլ դիտազնական պարագաներ) բացակայության պատճառով: Սակայն որոշվեց լսարանների կահավորումն իրականացնել Ստեփանակերտի հիմնարկ-ձեռնարկությունների աջակցությամբ, իսկ լաբորատորիաների ստեղծման ու տեխնիկական հագեցման աշխատանքներում ներգրավել մայր բուհի՝ ԵրՊԻ-ի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ինստիտուտներին, մեր հայրենակիցներին և ուրիշ շատ բարերարների: Ինչպես գիտենք, այն ժամանակ մայր բուհի հնարավորությունները սահմանափակ էին, սակայն բուհի ղեկավարությունը հնարավորինս չափ բաժանմունքին տրամադրում է ուսումնական լաբորատորիաներում ավանդաբար օգտագործվող փորձասարքերի առանձին նմուշներ: Միեւնույն ժամանակ, ԵրՊԻ դասախոսները մշակել էին նոր փորձասարքեր, որոնց օրինակները նույնպես տեղակայվեցին Ստեփանակերտի բաժանմունքի ուսումնական լաբորատորիաներում՝ ընդգրկվելով պարտադիր կատարվելիք լաբորատոր աշխատանքների ցուցակում: Այս առումով անգնահատելի էր ԵրՊԻ-ի «Տեսական էլեկտրատեխնիկա» ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ծագումով արցախցի

7. Նույն տեղում:

Արտաշես Ծատրյանի տրամադրած մեկ օրինակ ունիվերսալ փորձասարքը, որի օգնությամբ հնարավորություն ստեղծվեց ութ ուսումնական լաբորատոր աշխատանքների իրականացումը «Էլեկտրատեխնիկա» առարկայի գծով: ԵրՊԻ-ի ֆիզիկայի ամբիոնի պրոֆ. Արսեն Աբոյանի ղեկավարությամբ մշակված կրեմնիումի բյուրեղների անկատարությունների պատկերների կախվածությունը ռենտգենյան ճառագայթների անկման ուղղությունից փորձասարքի օրինակով ստեղծվեց կրեմնիումի և կերակրի աղի բյուրեղի անկատարությունների որոշման փորձասարք և այլն: Նոր լաբորատոր աշխատանքների փորձասարքեր բաժանմունքում ստեղծելու խնդրում ոչ պակաս արգասաբեր էր համագործակցությունը ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի (տնօրեն՝ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի բժշկական սագիտության ամբիոնի (ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Սիներիկ Չայրապետյան) հետ: Այդ փորձասարքերի հիմնական օղակը վերը նշված երկու կառույցների գիտական համագործակցության շնորհիվ ստեղծված հեղուկ նյութերի էլեկտրահաղորդականության չափման նոր սարքն էր (հեղինակներ՝ Ս.Ն.Չայրապետյան, Ռ.Գ.Սիմոնյան և Ա.Ս.Ավանեսյան):⁸

Այդ փորձասարքի միջոցով իրականացվել են գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հրապարակվել են հայրենական ու արտասահմանյան մի շարք հեղինակավոր գիտական հանդեսներում, զեկույցների տեսքով ներկայացվել միջազգային գիտաժողովներում: Դրանք օգտագործվել են ԵրՊԻ-ի Ստեփանակերտի բաժանմունքի ֆիզիկայի լաբորատորիաներում ուսումնական նոր փորձասարքեր ստեղծելու համար:

Չայտնի է, որ ինքնավար մարզում քաղաքական իրադարձությունների հետ կապված, համարյա անբարենպաստ պայմաններ են ստեղծվել նորաստեղծ բաժանմունքում պատշաճ մակարդակով կազմակերպել ուսուցման գործընթացը: Սակայն բաժանմունքի ղեկավարությունը, դասախոսական կազմը մեծ ջանք

8. X.Б. Григорян, С.Н. Айрапетян, Р.Г. Симонян, А. С. Аванесян, Устройство для измерения электропроводности. Авторское свидетельство N485865/10 Заявлено 09.08.1990г. Получено положительное решение 30.03.1992г.

քեր են գործադրում ուսանողների ուսումնական աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար, ստեղծել նպաստավոր պայմաններ: Որոշակի դժվարություններ են ստեղծվել նաև ընդունելության քննությունների կազմակերպման ուղղությամբ: Այսպես, կանխազգալով այդ վտանգը և լավ տեղյակ լինելով մայր բուհում ընդունելության քննությունների նկատմամբ ներկայացվող լուրջ պահանջներին, ԵրՊԻ-ի ղեկավարության թույլտվությամբ բաժանմունքին կից բացվեց նախապատրաստական բաժին՝ անվճար ուսուցման հիմունքներով: Նախապատրաստական բաժնում դասավանդունը վստահված էր փորձառու ու բանիմաց դասախոսների: Ուսուցման գործընթացը կազմակերպվեց հատուկ մշակված եղանակով, որը հնարավորություն տվեց բաժանմունքի գործունեության երկրորդ տարուց ունենալ բավական բարձր պատրաստվածության դիմորդներ, ովքեր համարյա լրիվ ընդունվեցին բաժանմունքի տարբեր մասնագիտությունների գծով և դարձան լիարժեք ուսանողներ:

ԵրՊԳ-ի հեռակա ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունքի պաշտոնական բացումը կայացավ 1990թ. հոկտեմբերին:⁹

ԼՂԻՄ-ի շրջափակման ուժեղացմանը զուգընթաց ավելանում էր Հայաստանի իշխանությունների եւ նրա առանձին օղակների ղեկավարության ու աշխատակիցների հոգածությունն արցախցի հայրենակիցների հանդեպ: Լավ տեղյակ լինելով, որ Հայաստանի բուհերում սովորող տղա ուսանողների եւ, ինչու չէ, նաև աղջիկների կարիքը շատ մեծ է ազերի հրոսակախմբերից մարզի բնակավայրերի պաշտպանության համար, Երեւանի բուհերի ռեկտորները դիմեցին ՀԽՍՀ ժողովրդական կրթության նախարար Մ. Դավթյանին՝ խնդրելով թույլատրել իրենց ղեկավարած կրթական հաստատությունների դարաբաղաբնակ ուսանողների ուսումնական գործընթացը ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ԸՏԲ-ում կազմակերպելու համար:

9. Ա. Ավանեսյան, «Հայկական երկրորդ պետական համալսարան. ԼՂԳ (ԱրՊԳ) 1990-1994թթ.», «Դիզակ պլուս», Ստեփանակերտ, 2008, էջ 46-47:

Նախարարի համաձայնությամբ՝ Երեւանի բուհերի ռեկտորները բաժանմունք ներկայացրին իրենց ուսանողների ցուցակները եւ համակողմանիորեն աջակցեցին Ստեփանակերտում ուսուցման հետագա գործընթացի կազմակերպմանը:

Ուսումնական գործընթացի կազմակերպման այս ձեւը մեծ դեր ունեցավ Երեւանի հինգ բուհերի ռեկտորների եւ Հայաստանի ԳԱ ղեկավարության կողմից Ստեփանակերտում ուսումնագիտաարտադրական համալիր ստեղծելու վերաբերյալ հուշագիր ստորագրելու խնդրում:

Հուշագիրը նոր թափ ու իմաստ հաղորդեց բաժանմունքի ուսումնական աշխատանքներին: Նման վստահությունն արդարացնելու համար բաժանմունքի կոլեկտիվը ջանք ու եռանդ չէր խնայում ուսումնական գործընթացը հնարավորինս պահանջվող մակարդակով կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Այսպիսով, հուշագրի ստեղծմամբ Երևանյան հինգ բուհերի ռեկտորները կամովին ներքաշվեցին մի պատասխանատու, պատվաբեր և, միաժամանակ, շատ բարդություններով հագեցած գործընթացի մեջ: Նրանք ամեն կերպ ձգտում էին, որ նորաստեղծ բաժանմունքում երեք տասնյակից ավելի մասնագիտություններով ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպվի, հատկապես՝ լուրջ ուշադրություն դարձվի ուսանողների մասնագիտական որակի բարձրացմանը:

Ուսանողների ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, պահանջվում էր, որ ստեղծված բարդ իրավիճակում, նույնիսկ տարաբնույթ ուսումնական պլաններով ու ծրագրերով ուսուցանվող փոքրաթիվ խմբերի ուսուցման գործընթացը համատեղ կազմակերպելու: Եր-ՊԻ-ի ղեկավարությունը մյուս բուհերի ղեկավարությունների հետ համաձայնեցնելով համապատասխան ամբիոնների և Եր-ՊԻ-ի բաժանմունքի հետ քննարկումների արդյունքում մշակվեց նոր մոտեցումներ այդ խմբերի ուսուցման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ: Այդ մոտեցումների հիմքում ընկած էր մի կարևոր հանգամանք՝ տարբեր բուհերի 1 և 2 կուրսերի ուսուցումը իրականացնել ընդհանուր տեխնիկական և հումանիտար

առարկաների ուղղությամբ, ընդհանրացված ուսումնական պլաններով, օգտվելով հանրապետությունում և խորհրդային տարածքում կուտակված մանկավարժական փորձից:

Բաժանմունքի ուսումնական մասի հաշվետվությունները հաստատում են այն իրողությունը, որ 1989/90 ուսումնական տարվա ավարտին ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ԸՏԲ-ի կուլեկտիվը պատվով է կատարել իր առջեւ դրված խնդիրները:¹⁰ Դրա վառ ապացույցն էր այն վստահությունը, որ ցուցաբերեցին Երեւանի բուհերի ղեկավարությունն ու Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեն՝ բաժանմունքին վստահելով 1991/92 ուստարվա ընդունելության քննությունները կազմակերպել անմիջապես Ստեփանակերտում:

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի ԸՏԲի 1991/92 ուսումնական տարում կազմակերպված նոր ընդունելության քննությունների արդյունքներով՝ ըստ տարբեր մասնագիտությունների, ցերեկային բաժնում ընդունվել է 170 ուսանող, այդ թվում՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի գծով՝ 59, իսկ Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտում սովորող՝ 27 ուսանող, Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի՝ 55, Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի՝ 8, Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի՝ 21 ուսանող: Այսպիսով, երկու տարվա ընդունելության արդյունքում բաժանմունքի ցերեկային բաժնում ունեցանք 247 ուսանող: Թող ավելորդ չհամարվի նշել, որ վերը բերված բոլոր ուսանողական տեղերը պետական պատվերով էին, եւ ուսանողները կրթաթոշակ էին ստանում: 1991/92 ուստարում ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ԸՏԲ-ում հեռակա ուսուցման կարգով ըստ տարբեր մասնագիտությունների ընդունվեց 97 ուսանող:¹¹

10. Տե՛ս, ԵրՊԻ-ի արխիվ, գ. 30, 31, 32:

11. Այդ մասին տես, ԵրՊԻ-ի արխիվ, գ.30, 31, 32, 33:

ԵրՊԻ-ի (ՀՊՃՀ-ի) Ստեփանակերտի մասնաճյուղ

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի ԸՏԲԻ գործունեությունը լիարժեք կազմակերպելու համար պահանջվում էր մայր բուհերի եւ բաժանմունքի համապատասխան օղակների փոխհամաձայնեցված աշխատանք: Եթե ուսումնամեթոդական օժանդակության հարցերը հաջողվում էր բավարար իրականացնել, ապա ֆինանսական ապահովման խնդիրները հանդիպում էին լուրջ դժվարությունների, ինչը պայմանավորված էր մի շարք առարկայական ու ենթակայական բնույթի գործոններով: Չպետք է մոռանալ, որ մայր բուհերի բոլոր աշխատակիցները չէ, որ ոգևորված էին կատարվածով, մանավանդ, որ Ղարաբաղյան շարժման սկզբից ի վեր Երեւանում եւ, առհասարակ, Հայաստանում կյանքի բնականոն ընթացքը խախտվել էր, շատերի աշխատանքային ու կենցաղային պայմանները վատթարացել էին, ինչը ոմանք կապում էին միայն Շարժման հետ՝ մոռանալով, որ այդ ամենի մեջ ամենամեծ գործոնը խորհրդային կայսրության քայքայման ու փլուզման գործընթացն էր: Երեւանաբնակներից շատերը, գտնվելով լարվածության հիմնական օջախներից բավական մեծ հեռավորության վրա, չէին պատկերացնում այդ օջախներում գտնվողների եւ հատկապես արցախցիների վիճակը: Լավ գիտակցելով այս ամենը՝ բաժանմունքի ղեկավարությունն ամեն կերպ ջանում էր գործընթացը շարունակել առանց մայր բուհերի հետ լուրջ հակասությունների: Համակողմանի վերլուծելով բաժանմունքում ստեղծված ծանր ֆինանսական վիճակը, ԵրՊԻ-ի ղեկավարությունը կայացրեց, ըստ երեւույթին, միակ ճիշտ որոշումը՝ դիմել ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեին՝ առաջարկելով ԵրՊԻ-ի Ստեփանակերտի բաժանմունքին տալ ԵրՊԻ-ի մասնաճյուղի կարգավիճակ:

Ընթրումով մոտենալով՝ ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի կողմից գիան ընդառաջեց առաջարկությանը եւ ընդունեց համապատասխան որոշում: Կոլեգիայի որոշումը բաժանմունքի կոլեկտիվին ներկայացրեց անձամբ ԵրՊԻ-ի ղեկավար Յու. Սարգսյանը՝ այդ նպատակով ներկայացուցչական պատվիրակությամբ ժամանելով Ստեփանակերտ: Պատվիրակության կազմում էին Եր-

ՊԻ-ի պրոռեկտոր Ս. Յ. Սուլեյմանյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ս. Գեւորգյանը ու ՀՀ ԳԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանը: Բաժանմունքի կոլեկտիվը գոհունակութամբ ընդունեց առաջարկվող փոփոխությունը:

Ստորև ներկայացնում ենք մասնաճյուղի հիմնադրման վերաբերյալ ընդունված որոշումը.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄ

1 նոյեմբերի, 1991թ. N 85

ք. Երեւան

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա ուսուցման ֆակուլտետի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքին Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի կարգավիճակ տալու մասին

Հաշվի առնելով Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքի ուսանողների թվական աճը, ցերեկային եւ հեռակա ուսուցման առկայությունը, դասախոսական կադրերով ապահովված լինելը՝ ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի կոլեկտիվի որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքին տալ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի կարգավիճակ:

2. ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի ֆինանսատնտեսական վարչությանը (պետ Ե. Մակարյան). Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆինանսավորման մեջ կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

3. Սույն որոշման պահանջների կատարման վերահսկողությունը դնել կոլեգիայի անդամ, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր պարոն Յու. Սարգսյանի վրա:

**Կոլեգիայի նախագահ,
պետական կոմիտեի նախագահ՝**

Վ. Հարությունյան»

ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի որոշմանը հետևեց ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Սարգսյանի համապատասխան հրամանը:

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունքը երկու տարվա եռուն աշխատանքային գործունեությունից հետո այս որոշմամբ ավարտեց իր առաքելությունը, եւ ԵրՊԻ-ն Արցախում ունեցավ իր առաջին մասնաճյուղը:

Մասնաճյուղի կարգավիճակը զուտ անվանափոխության խնդիր չէր: Թե տեղական եւ թե Հայաստանի իշխանությունների կողմից առաջադրվող խնդիրներն ու դրանց պահանջվող լուծումներն առավել քան բարդացան:

Հատկանշական է, որ ԵրՊԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի մեկ ուսումնական տարվա գործունեության ընթացքում առաջացան բազմաթիվ խնդիրներ, որոնց պատշաճ լուծումն այնքան էլ հեշտ չէր մայր Հայաստանի հետ կապի համարյա բացակայության եւ ռազմական առճակատման պայմաններում եւ միշտ չէր, որ ամեն ինչ ստացվում էր ցանկալի ձեւով: Մասնաճյուղի կոլեկտիվի անձնվեր աշխատանքի շնորհիվ կատարվում էր ամեն ինչ, ուսումնական աշխատանքի որակն անհրաժեշտ մակարդակի վրա դնելու ուղղությամբ:

Մանկավարժական կոլեկտիվի խնդիրն էր՝ ամեն գնով իրականացնել ուսումնական պլանները, ծրագրերը, ճիշտ կազմակերպել ուսուցման գործընթացը և մասնաճյուղում ուժեղացնել կարգապահությունը, ուսանողների մեջ կոփել դժվարությունները հաղթահարելու ոգին:

Չնայած պատերազմական դժվարություններին, բաժանմունքի ղեկավարության կողմից լուրջ միջոցառումներ ձեռնարկեցին բաժանմունքում ուսումնական աշխատանքները կատարելագործելու ուղղությամբ, Սակայն, աստիճանաբար բոլորի համար պարզ էր դառնում, որ Ստեփանակերտում Հայաստանի Հանրապետության բուհերի երկու առանձին օղակների անջատ գոյությունը եւ մեկ կենտրոնից կառավարումն իր տեղը պետք է զիջի մեկ այլ մոտեցման:

Այդ ընթացքում ձեւավորվում էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառույցները՝ տարբեր նախարարու-

թյուններ, պետական վարչություններ եւ այլն: Պետականաշինության առաջնահերթությունների շարքում դասվեց նաեւ ԼՂՀ պետական համալսարան ունենալու խնդիրը:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) վերակազմավորված ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական մասնաճյուղը գոյատևեց շուրջ մեկ տարի՝ հասցնելով կատարել 1992/93 ուսումնական տարվա ընդունելությունը հետևյալ մասնագիտություններով եւ խմբաքանակներով (տես՝ աղ.10):

Աղյուսակ 10

**Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի
Ստեփանակերտի մասնաճյուղի 1992/93 ուստարվա
ընդունելությունն ըստ մասնագիտությունների եւ
խմբաքանակների¹²**

NN	Ըի.Ֆր	Մասնագիտության անվանումը	1992/93 ուստարվա ընդունվածները	
			պետպատվեր	վճարովի
1.	2303	Ռադիոէլեկտրոնային միջոցների կոնստրուկտավորում եւ տեխնոլոգիա	33	
2.	2806	Տեքստիլ ճարտարագիտություն	17	
3.	2903	Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն	7	
4.	2904	Հիդրոտեխնիկական շինարարություն	3	
5.	2907	Ջերմամատակարարում եւ օդափոխություն, օդային ավազանի պահպանում	2	
6.	2908	Ջրամատակարարում, ջրահեռացում, ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում ու պահպանում	2	
7.	2910	Ավտոճանապարհների եւ օդանավակայանների շինարարություն	3	
8.	2911	Կամուրջներ եւ տրանսպորտային թունելներ	3	
9.	0603	Տնտեսական եւ սոցիալական պլանավորում	5	
10.	0604	Ֆինանսներ եւ վարկ	5	

12. Աղյուսակում բերված տվյալների մասին տես, ԵրՊԻ-ի (ՀՊՃՀ-ի) արխիվ, գ. 30, 31, 32:

11.	0608	Հաշվապահական հաշվառում, վերահսկողություն և տնտեսական գործունեության վերլուծություն	5	
12.	0709	Առևտրի և հասարակական սննդի էկոնոմիկա և կառավարում	5	
13.	3102	Ագրոնոմիա	10	
14.	2704	Խնդրանք արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	5	
15.	2707	Պահածոյացման տեխնոլոգիա	5	
16.	0608	Հաշվապահական հաշվառում, վերահսկողություն և տնտեսական գործունեության վերլուծություն	10	
17.	0706	Ագրոտեխնոլոգիայի կոնսուլտիվ ցուցիչի էկոնոմիկա և կառավարում	10	
18.	3113	Գյուղատնտեսության մեքենայացում	5	
19.	3114	Գյուղատնտեսության էլեկտրաֆիկացում և ավտոմատացում	5	
20.	2710	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա	5	
21.	3107	Անասնաբուծություն	5	
22.	3108	Անասնաբուծություն	10	

Մասնաճյուղում կազմակերպվող ուսումնական աշխատանքների հաջող ընթացքը և ԼՂՀ-ում պետականաշինության լիարժեք կազմակերպման գործընթացը հուշում էին այլ կերպ նայել հանրապետության բարձրագույն կրթության արդեն գործող երկու օջախներին՝ ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ԸՏՄ-ին և Կիրովականի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքին, մանավանդ, որ ԵրՊԻ-ի ԸՏՄ-ն իր կառուցվածքով և ուսուցանվող մասնագիտությունների բազմազանությամբ ընդունել էր համալսարանական բնույթ: Եկել էր Արցախում ինքնուրույն պետական համալսարան ունենալու երկար տարիներ սպասված ժամանակը:¹³

13. Տե՛ս, Ա. Հակոբյան, Ա. Սարգսյան, ԵրՊԻ 1933-2003թթ., Երևան, 2003, էջ 76:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրումը

Հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հարստացման և, մասնավորապես, մեր դպրության զարգացման համար վիթխարի նշանակություն են ունեցել հայոց բարձրագույն դպրոցները՝ Գլաձորի, Տաթևի համալսարանները: Ուսումնագիտական այդ հաստատություններն իրենց արգասավոր գործունեության տարիներին ժամանակին հանդես են եկել ազգաշահ առաքելությամբ, և մեծ դեր խաղացել ոչ միայն մշակույթը ոչնչացումից փրկելու և, հայ ժողովրդի զավակներին կրթելու, նրանց մասնագիտություններ տալու, այլև օտար ազգերին ծուլվելու վտանգից փրկելու և ազգապահպանման վեհ գործում: Հատկանշական է, որ հայոց բարձրագույն դպրոցների հիմնադրումից հետո էլ ուսումնական հաստատություններն ավարտած առավել ընդունակ ու ժողովրդի լուսավորության գործին նվիրված սաները հաղթահարելով բոլոր դժվարություններն ու զրկանքները, մեկնում էին արտասահման՝ Հռոմ, Հունաստան, Եգիպտոս և այլ երկրներ, տարբեր լեզուներ սովորում, կատարելագործվում՝ թարգմանական գրականության գործը հմտորեն ու պատշաճ մակարդակով իրականացնելու համար: Անուրանալի է ուսումնագիտական այդ հաստատությունների դերը հայ մշակույթի, լուսավորության, գիտության զարգացման գործում, ինչպես նաև հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում: Մշակութային, կրթական-գիտական հարուստ պատմություն ունեցող հայոց բարձրագույն դպրոցների ձևավորված ավանդույթները հետագա դարերում և մեր ժամանակներում հիմք են դարձել Հայաստանում բարձրագույն կրթության նորովի կազմակերպման և զարգացման համար:

Հայ ժողովրդի լավագույն զավակներին, առաջադեմ մտա-

ծողներին, հասարակական գործիչներին միշտ էլ մտահոգել է հայոց համալսարան ստեղծելու խնդիրը: Հայկական համալսարան կամ ակադեմիա ստեղծելու ամենամեծ ջատագովներից էր մեծանուն բանաստեղծ Յովհաննես Թումանյանը, որն ամեն ինչ անում էր այդ խնդրի իրականացման համար: Նրա ղեկավարությամբ Թիֆլիսում գործող «Հայկազյան ընկերության» ժամանակավոր հանձնաժողովի նիստում (1912), ներկա էին Ն. Մառը. Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը և ուրիշներ, քննարկվել է Հայկական համալսարան ստեղծելու խնդիրը: Թումանյանը ասում է. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ՝ Հայկական ակադեմիա: - Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ -Հայկական համալսարան»:¹

Դարավոր ընդմիջումից հետո, XX դարի երկրորդ տասնամյակում վերականգնվեց հայկական բարձրագույն դպրոցների ավանդույթները՝ 1919թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի համալսարանը: Նախատեսված էր այն բացել Երևանում, 1919/1920 ուսումնական տարում, ճեմարանական սրահում:

Հայկական բարձրագույն դպրոցների լավագույն ավանդույթները, հատկապես Մայր բուհի՝ ԵՊՀ-ի ավելի քան 80-ամյա հարուստ պատմության փորձը հիմք դարձավ նաև նորաստեղծ Արցախի Հանրապետությունում բարձրագույն կրթության նորովի կազմակերպման համար՝ հիմնադրել հայ ժողովրդի այս հատվածի երկրորդ համալսարանը: Իր գործունեության տարիներին (1992-2012թթ.) այն նվիրումով է ծառայել մեր ժողովրդին և հպարտորեն շարունակում է ազգաշահ իր առաքելությունը՝ որ-

1. Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 418, նաև տես, Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, Երևան, 1965, էջ 18:

պես բարձրակարգ մասնագետների պատրաստման դարբնոց, գիտակրթական և մշակութային կենտրոն: Մեծ է նաև նրա դերը Արցախի դպրոցի տարիներին՝ ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանում եռանդուն գործունեությամբ կարևոր դեր է խաղացել իր ժողովրդին ծառայելու նպատակադրվածությամբ, ու մանկավարժական մտքի զարգացման գործում: Սակայն, ավստոսանքով պետք է նշել, որ առայսօր դեռ լուսաբանված չէ այդ ուսումնական հաստատության գիտակրթական պատմությունը: Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի, հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների, պարբերական մամուլում լույս տեսած հոդվածների, ԿԳ նախարարության տեղեկագրերի և այլ նյութերի ուսումնասիրումը ինչ որ չափով հնարավորություն է ընձեռել մեզ առաջին անգամ գիտամանկավարժական վերլուծության ենթարկել ԼՂՊՀ-ի-Արցախի պետական համալսարանի գիտակրթական 20-ամյա պատմությունը՝ սույն ատենախոսության չորրորդ գլխում:

Լեռնային Ղարաբաղում պետական համալսարան ստեղծելու գաղափարը, անկասկած, եղել է յուրաքանչյուր հայրենասեր արցախցու երազանքը: Ադրբեջանական տիրապետության շրջանում ինքնավար մարզի կարգավիճակ ունեցող երկրամասում այդ մասին նույնիսկ երազելն ապարոյուն էր, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է հայկական պետական համալսարանին: Չայտնի է, որ XX դարի 90-ական թվականների սկզբներին, երբ Ղարաբաղյան շարժումը լիովին հունի մեջ էր, պատմական զարգացումները եզակի հնարավորություն ստեղծեցին իրականություն դարձնելու այդ վաղեմի երազանքը, եւ հապաղելն այլեւս աններելի էր: Բացի քաղաքական իրավիճակի ընձեռած պատեհ առիթից, առկա էին այլ նպաստավոր գործոններ եւս: Ինչպես նշել ենք Ստեփանակերտում արդեն գործում էին Չայաստանի Չանրապետության բարձրագույն կրթության համակարգի երկու առանձին կրթօջախներ՝ Կիրովականի 3. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքը (4 տարի) եւ ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական

բաժանմունքը, որը, ինչպես վերը նշվեց, հետագայում վերակազմավորվել էր մասնաճյուղի (3 տարի): Այդ ուսումնական հաստատությունները կադրեր էին պատրաստում ըստ չհիմնավորված ավանդական մասնագիտությունների, հարկավոր էր մտածել դրանց համակարգման և ժողովրդական տնտեսության պահանջների հետ համապատասխանեցման մասին: Երկրորդ, այնպիսի փոքր հանրապետությունում, ինչպիսին ԼՂՀ-ն է, նպատակահարմար չէր, պարզապես իմաստ չունեի նույն գերատեսչության ենթակայության ներքո երկու բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալ: Ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ նրանց առանձնացված գործունեությունը դարձել էր անպատակահարմար: Մյուս կողմից՝ նորանկախ հանրապետության պետական կառույցների աստիճանաբար կազմավորման գործընթացը պահանջում էր Արցախում ունենալ սեփական պետական համալսարան, թեկուզեի ՀՀ կրթական համակարգի ենթակայության ներքո: Այնպես որ, կյանքն ինքն է հանգեցրել այդ որոշմանը:

Ժամանակի առումով Արցախում պետական համալսարան ունենալու գաղափարի իրատեսական լինելը համընկավ Շուշիի ազատագրության առաջին տարելիցի հետ: Այդ կապակցությամբ տեղի ունեցան հարցի լրացուցիչ քննարկումներ ինչպես ԼՂՀ-ի, այնպես էլ ԵրՊԻ-ի ղեկավարության հետ: ԵրՊԻ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս. Սուլեյմանյանը գործընթացն այսպես է ներկայացնում. «Իմ՝ 1992թ. մայիսին Արցախ այցելության ժամանակ, երբ ժողովուրդը ցնծություն էր ապրում Շուշին ազատագրելուց եւ Լաչինի միջանցքը թուրքերից մաքրելուց հետո, Արպատ Ավանեսյանը հայտնեց այն միտքը, որ ԼՂՀ ղեկավարը ցանկանում է Ստեփանակերտի երկու բարձրագույն ուսումնական հաստատությունները միավորել եւ ստեղծել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան: Ես նրան անկեղծորեն հայտնեցի իմ կարծիքը, որ դա հասունացած հարց չէ, քանի որ չկան անհրաժեշտ պայմաններ՝ համալսարան ստեղծելու համար: Ես ելնում էի նրանից, որ Հայաստա-

նի Հանրապետության խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին, Վանաձորը, որտեղ բնակիչների թիվը 4-5 անգամ ավելի շատ է, քան Ստեփանակերտում, նման համալսարաններ ստեղծված չեն: Չնայած երեք տասնյակ տարի զուգահեռաբար այդ քաղաքներում գործում է պետական մանկավարժական ինստիտուտ եւ ԵրՊԻ մասնաճյուղը, որն ուներ լավագույն դասախոսների կազմ, շենքեր ու լաբորատոր բազաներ»:²

Համալսարանի ստեղծման գաղափարի ընդդիմախոսներից ոմանք էլ, որպես հակափաստարկ, պնդում էին, թե՝ պատերազմ է, Արցախի գլխավոր հոգսը համալսարանը չէ, որ չկա համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմ և այլն: Մինչդեռ կյանքը ցույց է տալիս, որ շատ համալսարաններ ստեղծվել են հենց պատմության հանգուցային պահերին, խառնակ ժամանակներում, երբ, ըստ երևույթին, պահանջվել է գիտական մտքի մոբիլիզացում: Վկայակոչենք հայ ժողովրդի պատմության ոչ հեռավոր պատմության հետևյալ օրինակը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիան հիմնադրվել է Հայրենական պատերազմի տարիներին:

Համալսարանի ստեղծման ընդդիմախոսների հակափաստարկներն անհամոզիչ էին նաև դասախոսական կազմի առումով: Իրականում, այն ժամանակ արդեն առկա էր կադրային ներուժ, որը, ընդհանուր առմամբ, բավարարում էր, հնարավոր է՝ թեկուզ նվազագույն պահանջարկը: Ընդ որում՝ եթե ԵրՊԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղը նոր էր ձևավորված և համարված էր հիմնականում բուհական մանկավարժական աշխատանքի նրբություններին սակավ ծանոթ մասնագետներով, ապա Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքում հիմնական դասախոսական կազմը բաղկացած էր Ստեփանակերտի նախկին մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվից եկած փորձառու և բոլոր առումներով

2. Ս. Սուլեյմանյան, «Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում», Երեւան, 1998թ.:

յուրահատուկ ավանդույթներով աշխատող մասնագետներից:

Բայց համալսարանի հիմնադրման կողմնակիցները, այդ թվում՝ առաջին հերթին, երկրի իշխանությունները մտադիր չէին սահմանափակվել միայն այդ ժամանակ գործող պրոֆեսորադասախոսական կադրերի ընդգրկմամբ: Նախատեսվում էր մշտական կամ ժամավճարային դասախոսական աշխատանքի հրավիրել նաև հանրապետության այն փորձառու մասնագետներին, ովքեր զբաղված էին կենսագործունեության տարբեր բնագավառներում ու ոլորտներում: Իսկ այդպիսիք, պետք է ասել, քիչ չէին: Մասնավորապես, օրինակ, «Ղարաբաղ» գիտարտադրական միավորումում, պետական տոհմաբուծական կայանում, ագրոարդում, ֆինանսական մարմիններում և այլուր: Ընտ որում, այդ շնորհիվ, ի շահ համալսարանի, օգտագործվում էր նաև այդ և այլ օբյեկտների նյութատեխնիկական բազան, որտեղ ուսանողները պրակտիկ պարապմունքներ էին անցնում: Բացի այդ, խնդիր դրվեց նաև Հայաստանից մասնագետներ հրավիրել Արցախ՝ դասախոսական աշխատանքի, ինչի շուրջ սկզբունքային պայմանավորվածություն ձեռք բերվեց ՀՀ իշխանությունների հետ: Այս առումով, լուրջ աջակցություն էր Հայաստանի կառավարության 1992 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը LՂՀ-ում աշխատելու համար հրավիրված քաղաքացիներին արտոնություններ տրամադրելու մասին: Արդյունքում՝ նորաստեղծ համալսարանի ուսումնական գործընթացում ներգրավվեցին Հայաստանից ժամանած շուրջ երեք տասնյակ դասախոսներ՝ գիտության տարբեր ոլորտների ինչպես փորձառու, նույնպես և երիտասարդ մասնագետներ, որոնց մեծ մասը, ի դեպ, արձատներով արցախցի էր: Հայաստանից կադրերի ներգրավումը թույլ տվեց լուծել երկմիասնական խնդիր. մի կողմից՝ սկսեց բարձրանալ ուսուցման որակը, հետևապես, կադրերի պատրաստման մակարդակը, մյուս կողմից՝ ամբիոններում կարող, հմուտ մասնագետների առկայությունը նպաստեց տեղական դասախոսների մասնագիտական աճին:

Ստեփանակերտի մասնաճյուղի ֆինանսավորման հարցը եր-

ՊԻ-ի ղեկավարությանն անհաղթահարելի դժվարությունների առաջ էր կանգնեցրել: Դրանք պայմանավորված էին նրանով, որ Հայաստանի Հանրապետության հինգ բուհերի ուսանողներ միաժամանակ սովորում էին մասնաճյուղում, եւ միշտ չէ, որ մայր բուհերի կողմից նախատեսված ֆինանսական միջոցները ժամանակին հասցվում էին մասնաճյուղ՝ լրացուցիչ լարվածություն ստեղծելով առանց այն էլ ահավոր պայմաններում աշխատող կուլեկտիվում: Այդ պատճառով ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Սարգսյանը 1992թ. հունիսի 3-ին գրությամբ դիմեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահին եւ ՀՀ ԲԿԳ նախարարին: Գրության մեջ արձանագրելով Ստեփանակերտի բաժանմունքի կայացման փաստը եւ նշելով, որ այն դարձել է բազմաճյուղ միջբուհական կենտրոն, նա առաջարկում է կատարել հետեւյալը.³

1. ՀՊՃՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի եւ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի բազայի վրա 1992/93 ուստարում ստեղծել բազմաճյուղ համալսարան:

2. Իրականացնել համալսարանի ստեղծմանը նախորդող հետեւյալ կազմակերպական աշխատանքները՝

ա) ԼՂՀ տարածքում կատարել մասնագետների պահանջարկի ուսումնասիրություն եւ մշակել համապատասխան երաշխավորություններ,

բ) ստեղծել համալսարանի գլխավոր պլանը, ներառյալ՝ նրա կառուցվածքը, կառավարման համակարգը, շնորհվող որակավորման աստիճանները, գիտաարտադրական գործունեության սկզբունքները, ֆինանսավորման աղբյուրները եւ այլն,

գ) նախապատրաստել համալսարանի կարգավիճակի սահմանման հարցը եւ այն ներկայացնել ԼՂՀ ԳԽ քննարկմանը,

դ) ստեղծել դասախոսական ու գիտական կադրերի բանկ եւ այդ հիմքի վրա մշակել նորաստեղծ համալսարանի գիտամանկավարժական կազմի համալրման պլան,

3. Аванесян А.С. Арцахский государственный университет, по требованию времени- в ногу со временем, Екатеринбург, 2011, ст. 3-4.

ե) մշակել միջբուհական կենտրոնի կառուցվածքի՝ համալսարանական կառուցվածքի փուլային անցման ծրագիրը:⁴

Յու. Սարգսյանը միաժամանակ մատնանշում է, որ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը հայտնում է իր պատրաստակամությունը՝ տրամադրել իր փորձը եւ գիտատեխնիկական կարողությունները՝ համալսարանի նախագծի, կառուցվածքի, կանոնադրական, ծրագրային, մեթոդական հիմնահարցերի մշակման գործում, իսկ հետագայում՝ պահպանել համակողմանի համագործակցություն՝ միջազգային չափանիշներին բավարարող կրթական գործընթացը կազմակերպելու նպատակով:

ՀՊՃՀ ռեկտորը հաջորդ գրությամբ տալիս է իր համաձայնությունը Ստեփանակերտում համալսարան ստեղծելու վերաբերյալ (1992թ. սեպտեմբերից) եւ միաժամանակ հայտնում. «Հարկ է նշել, որ ՀՊՃՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում սեպտեմբերի 1-ից սովորում է ՀՀ հինգ բուհերի 442 ուսանող, որից ՀՊՃՀ-ի մասնագիտություններով՝ ընդամենը 147 ուսանող (27%): Մասնաճյուղը ֆինանսավորվում եւ մեթոդապես ղեկավարվում է տարբեր բուհերի կողմից, որն առաջացնում է զգալի դժվարություններ նրա ֆինանսատնտեսական գործունեությունում: Մեր կարծիքով, համալսարանի ստեղծումն էապես կբարելավի ԼՂՀ համար կարեւորագույն այս կրթօջախի գործունեության կառավարումը»:⁵

Ծանոթանալով իրավիճակին եւ կարեւորելով մասնաճյուղի դերակատարությունը հանրապետությունում նրա գործունեության այս փոքր ժամանակահատվածում, ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը տվեց իր համաձայնությունը ԵրՊԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրինության առաջարկած տարբերակով ԼՂՀ պետական համալսարան ստեղծելու վերաբերյալ:

Այս գաղափարն իրագործելու համար 1992թ. օգոստոսի 28-

4. Նույն տեղում:

5. Ս. Սուլեյմանյան, Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում, Երևան, 1998, էջ 13-14:

ին ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը պաշտոնական նամակով դիմեց ՀՀ ԲԿԳ նախարար Վ. Գնունուն, ԵրՊԻ-ի ռեկտոր Յու. Սարգսյանին, Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ռ. Եղոյանին՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարարությանը, ՀՊՃՀ-ի եւ ԿՊՄԻ-ի ղեկավարությանը՝ մեր հանրապետության այս ծանր օրերին կրթության եւ գիտության նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար: Մենք ծանոթացել ենք Ձեր կողմից ԼՂՀ ղեկավարությանն ուղղված նամակին, որով առաջարկում եք Ստեփանակերտում գործող ՀՊՃՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի եւ ԿՊՄԻ-ի Ստեփանակերտի բաժանմունքի բազայի վրա 1992/93 ուստարում ստեղծել ինքնուրույն բազմաճյուղ համալսարան:⁶

ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն գտնում է, որ այս ծանր օրերին մեր ժողովրդի ոգին բարձրացնելու համար դա կլինի անգնահատելի մի երեւոյթ եւ պատրաստ է աջակցել՝ իրագործելու այն:

ԼՂՀ-ն ներկայումս գտնվում է ֆինանսական ծանր կացության մեջ, որի համար խնդրում ենք, որ ստեղծվելիք համալսարանն առայժմ լինի ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության համակարգի մեջ, այնտեղից գիտական, մեթոդական եւ ֆինանսական աջակցություն ստանալու առումով:

Մեր կարծիքով, նշված խնդիրը բարեհաջող իրագործելու համար, նպատակահարմար է նորաստեղծ համալսարանի ռեկտոր առաջադրել ներկայումս Ստեփանակերտում գործող ՀՊՃՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Ա. Ս. Ավանեսյանին, որը վերջին երեք տարիների ընթացքում կարողացել է ստեղծել կենսունակ մի կրթօջախ՝ իր շուրջը համախմբելով հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս ապրող մի շարք հնուտ մասնագետների»:

6. Այդ մասին տես, Ռ. Եղոյան, Բարձրագույն կրթության խնդիրները Արցախում, Ղարաբաղյան շարժման տարիներին, Լրաբ. հասարակ. գիտ., 2010թ., ք.3, էջ 12:

ՀՀ ԲԿԳ նախարարը համապատասխան առաջարկություններ կայացրեց ՀՀ կառավարության քննարկմանը: Բարձրացված հարցի դրական լուծմանն իր ուրույն նպաստը բերեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Խոսրով Հարությունյանը: Քննարկման արդյունքում ՀՀ կառավարությունը կայացրեց հետևյալ որոշումը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 հոկտեմբերի, 1992 թ., թիվ 509

ք. Երեւան

**Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան ստեղծելու
մասին**

Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բարձրորակ մասնագետների պատրաստման խնդրի խիստ կարեւորությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Ընդունել ԼՂՀ Գերագույն խորհրդի, ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության առաջարկությունը եւ Ստեփանակերտ քաղաքում ստեղծել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան:

2. Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանն ընդգրկել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության համակարգում՝ միավորելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը եւ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը եւ ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության 1992 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում եւ բյուջեում:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Խ. Հարությունյան

ՀՊՃՀ-ի ռեկտոր Յու. Սարգսյանը և պրոռեկտոր Ս. Սուլեյմանյանը Ստեփանակերտում գտնվող բուհական ստորաբաժանումների ղեկավարության հետ հանգամանալի քննարկեցին Արցախում պետական համալսարանի հիմնադրման խնդրին առնչվող կազմակերպական հարցերը, տալով յուրաքանչյուրի լուծման համար առավել ընդունելի առաջարկներ: Եթե մինչ այդ մոտավոր պատկերացում կար առաջնահերթ հարցերի լուծման ժամանակ սպասվող դժվարությունների մասին, ապա այդ քննարկումներից հետո պարզ դարձավ, թե ինչպիսի ծանր ու դժվարին քայլերի մի շարան է սպասվում սկսված գործընթացը բարեհաջող ավարտի հասցնելու համար:

Հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ կառավարության վերը նշված որոշման մասին իրազեկվեց ԼՂՀ ղեկավարությունը: Հետեւեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի 1992թ. հոկտեմբերի 14-ի թիվ 184 կարգադրությունը.

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

14 հոկտեմբերի, 1992թ.

թիվ 184

**Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան
ստեղծելու մասին**

Ի գիտություն ընդունելով Հայաստանի կառավարության որոշումը՝ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի միավորման եւ նրանց բազայի վրա Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման մասին՝ ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության համակարգում՝

1. Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար նշանակել Արպատ Սանջանի Ավանեսյանին:

2. Հանձնարարել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ռեկտոր Ա. Ս. Ավանեսյանին՝ երկամսյա ժամկետում հաստատման ներկայացնել համալսարանի կանոնադրությունը եւ կառուցվածքը:

**ԼՂՀ Պաշտպանության պետական
կոմիտեի նախագահ՝**

Ռ. Քոչարյան

Այնուհետև ընդունված կարգով տրվեց ԼՂՀ ժողովրդական կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 1992թ. հոկտեմբերի 16-ի հրամանը.

**ԼՂՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՐԱՄԱՆ

16 հոկտեմբերի, 1992թ., թիվ 5

ք. Ստեփանակերտ

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական
համալսարան ստեղծելու մասին**

Ի կատարումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի 1992թ. հոկտեմբերի 14-ի թիվ 164 կարգադրության եւ հիմք ընդունելով ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության համաձայնությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի բազաների վրա ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական համալսարան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար նշանակել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արպատ Սանջանի Ավանեսյանին:

3. Հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Արպատ Ավանեսյանին:

Երկամսյա ժամկետում նախապատրաստել եւ հաստատման ներկայացնել համալսարանի կանոնադրությունը եւ համապատասխան կառուցվածքները:

4. Սույն հրամանի կատարման իրականացումը դնել ԼՂՀ ժողովրդական կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ժողկրթվարչության պետ Բ. Ղ. Դավթյանի վրա:⁷

**ԼՂՀ ժողովրդական կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարար՝** **Ն. Զ. Ոսկանյան**

Այսպիսով, համապատասխան կազմակերպչական աշխատանքներ տանելուց հետո՝ 1992թ. հոկտեմբերի 13-ին, վարչապետ Խոսրով Չարությունյանը ստորագրում է հրաման (թիվ 509)՝ Արցախում հիմնել ուսումնագիտական համալսարան՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի և 1990 թվականից գործող Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի հիման վրա: Համալսարանի ստեղծման գործում արժանի ավանդ են ներդրել Երևանի բուհերը և ԼՂ Հանրապետության ղեկավարները:

Նորաստեղծ Արցախի Հանրապետությունում արդեն հայ երիտասարդության համար բացվեցին համալսարանական կրթություն ստանալու դռները: Համալսարանը դարձավ այն ձգող կենտրոնը, որը հայրենիքից հեռացածներից շատերին հետ կանչեց: Նախկին Խորհրդային Միության տարիներին այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շատ դարաբաղցի պատանիներ և աղջիկներ վերադարձան համալսարան:

Համալսարանի հիմնադրումը մեծ գոհունակությամբ ընդունեց հայ առաջավոր մտավորականությունը, որը խորապես գիտակցում և բարձր էր գնահատում հայ մշակույթի այդ կարևորագույն օջախի դերը: Ասեմք, որ համալսարանը հիմնադրվեց Արցախի համար չափազանց ծանր պայմաններում:

7. Այդ նախն տես, ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գործ 10, 11, 12, 13, ինչպես նաև տղերիս հեղինակի անձնական արխիվային փաստաթղթերը, որի պատճեն գտնվում է ԱրՊՀ-ի արխիվում, գործ, 3, 4, 5:

Արցախյան հերոսամարտի այդ ծանր ու դժվար ժամանակներում, երբ մեր ժողովուրդը պայքարի դրոշ էր բարձրացրել հանուն իր ազատության ու անկախության, համալսարանը դարձել էր ազգային գաղափարախոսության կենտրոն: Համալսարանի դասախոսները և ուսանողները եղան պայքարող ժողովրդի ավանգարդում:

Նորաստեղծ համալսարանի ստեղծման գործընթացը բնավ էլ երկու բուհերի հասարակ մեխանիկական միացում չի նշանակում: Այն առավելապես ենթադրում է կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Ահա ինչու ի սկզբանե մեծ ուշադրություն նվիրվեց համալսարանի կառուցվածքին, որի մշակման ժամանակ հաշվի առնվեց նաև արտասահմանյան փորձը: Ուսումնասիրելով կադրային պահանջարկը, համալսարանի նորանշանակ ղեկավարությունը հանգեց այն հետևության, որ առկա 32 մասնագիտության փոխարեն պետք է ընտրել հիմնավորված մասնագիտությունների քանակություն, ինչը կբացառի կամ կնվազեցնի ԼՂՀ սահմաններից դուրս կադրեր պատրաստելու անհրաժեշտությունը: Հասկանալի է, բացառությամբ այն կադրերի, որոնք դեռևս չէին կարող համապատասխան որակավորում ստանալ Արցախում: Նախատեսված էր ուսուցումը՝ 200 դասախոսի և 2 հազար ուսանողի ընդգրկմամբ, տանել 14 ամբիոն ընդգրկող 6 ֆակուլտետում: Բացի այդ, նախատեսվեց հետագայում համալսարանի կառուցվածքի մեջ մտցնել նաև որոշակի թեքումով հանրակրթական դպրոց և քոլեջ: Ընդ որում, մտադրություն կար վերջինի լավագույն շրջանավարտներին առանց քննությունների ընդունել համալսարան:⁸

Համալսարանի ստեղծումը հնարավորություն ընձեռեց բարձր որակավորման մասնագետների պատրաստման համակարգի առավել ճկուն կառավարման, հանրապետության գիտական ներուժի համախմբման և ավելի արդյունավետ օգտագործման համար: Դրան զուգահեռ դրվեց ուսումնալաբորատոր և ար-

8. Ավանեսյան Ա.Ս., Արցախի բարձրագույն կրթության հիմնադրումն արտակարգ իրավիճակում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 1-2, Երևան, ԵրԴՀ, 2011, էջ 171-176:

տաղրական բազայի ստեղծման, ասել է թե՛ տեսությունը գործնականի հետ ավելի սերտորեն կապելու, առավել որակյալ մասնագետներ պատրաստելու անհրաժեշտ պայմանների ապահովման հարցը: Վերջինի հաշվառմամբ որոշված էր կրճատել նաև խմբերի թվակազմը: Ժամանակին չափազանց մեծ թվով, ըստ էության, ժողովրդական տնտեսության պահանջներին անհամապատասխան, կադրեր էին թողարկվում: Նման գործելաոճը սոցիալական լուրջ հետևանքների էր հանգեցնում՝ գործազրկություն, արհեստավարժության լուրջ անկում (մասնավորապես մանկավարժական մասնագիտությունների), մասնագետների արտահոսք Արցախից և այլն: ԼՂՊՀ-ի ստեղծմամբ մասնագիտական խորացման, այլ կերպ ասած՝ լայն պրոֆիլի կադրերի պատրաստման միտում սկսեց նկատվել: Անհմաստ էր զնալ նախկին, այսպես ասած, նեղ մասնագիտացման ճանապարհով: Խնդիրն այն էր, որպեսզի ուսանողին տրվի համալսարանական կրթություն: Ի վերջո, բուհի կարգավիճակը բարձրացնելուց պետք է բարձրացվի նաև մասնագետի կարգավիճակը:

Կառուցվածքային առումով, ինչպես ընդունված է համաշխարհային պրակտիկայում, նախատեսվում էր, որ համալսարանը պետք է ղեկավարեն հոգաբարձուների խորհուրդը, գիտական խորհուրդը և նախագահը (ռեկտորը): Հոգաբարձուների խորհուրդը պետք է կազմվեր նշանավոր անհատներից, ձեռնարկությունների, ընկերությունների տնօրեններից, խոշոր գիտնականներից, որոնք ի գորու են օգնել ոչ միայն ֆինանսապես, այլև խորհուրդներով ու հանձնարարականներով: Ղեկավարության մեջ մտնում էին նաև երեք փոխնախագահները (պրոռեկտորները)՝ ուսումնական, գիտական և վարչատնտեսական գծով:

Ուսանողական խմբաքանակի կապակցությամբ. նկատի առնելով, որ ուսանողների մի զգալի մասը, ընդունված լինելով ԼՂՊՀ-ի հիմնադիր բուհերում, պետք է շարունակեր ուսումը և ավարտելուց ստանար համալսարանական մոլուշի դիպլոմներ, որոնց մեջ պետք է նշված լինեն, այսպես ասած, մայր բուհի համապատասխան մասնագիտությունները: Համալսարանի ղեկավարության մեջ այն համոզմունքն էր տիրում, որ, հիմք ընդունե-

լով արտասահմանյան առաջավոր փորձը, հարկ է աստիճանաբար՝ առաջիկա մոտավորապես չորս տարվա կտրվածքով, վերջնականապես հրաժարվել դեռևս գոյություն ունեցող, այսպես ասած, ուսուցման համահարթեցման համակարգից, երբ հինգ տարի սովորելուց հետո շրջանավարտները միատեսակ դիպլոմներ են ստանում, որոնք հավասարության նշան են դնում նրանց մասնագիտական պատրաստության միջև: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս արտասահմանյան փորձը, ուսուցումը պետք է տարվի տարբերակված ձևով՝ հաշվի առնելով ուսանողների առաջադիմության աստիճանը: Ուսուցման լրիվ դասընթացն անցնելով, ուսանողները բուհական կրթության ավարտին հասնում են գիտելիքների տարբեր պաշարներով և համապատասխանաբար՝ տարբեր դիպլոմներով (կրտսեր ինժեների, բակալավրի, մագիստրոսի), ուրեմն և՛ աշխատանքում տեղավորվելու համար տարբեր հնարավորություններով: Միևնույն ժամանակ, այն համոզմունքը կար, որ անհրաժեշտ է ԼԳՅ պայմաններում, առնվազն առաջիկա հինգ տարվա ընթացքում, հրաժարվել վճարովի ուսուցման ձևից՝ հաշվի առնելով հանրապետության բնակչության անվճարունակությունը: Ասինքն՝ ուսանողները պետք է սովորեն պետության հովանավորությամբ:⁹

Այս առումով էական էր նաև այն իրողությունը, որ ԼԳՅ Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ համալսարանի գինապարտ ուսանողները զորակոչվել էին կռվող բանակի շարքերը, կամ ազգային-ազատագրական պայքարի և Արցախին պարտադրված պատերազմի սկզբից ևեթ կամավորագրվել էին հայրենիքի պաշտպանությանը: Հրամանատարների արձագանքներով՝ ուսանողները պատվով էին կատարում իրենց քաղաքացիական պարտքը: Ավաղ, մարտական գործողությունների ողջ ընթացքում համալսարանը ևս մեծ կորուստներ ունեցավ. ընդհանուր առմամբ զոհվեց 72 ուսանող, հարյուրավոր ուսանողներ վիրավորվեցին, հաշմանդամ դարձան և կամ անհայտ կորան կռիվների թոհ ու բոհում: Համալսարանն ամեն կերպ աջակցում

9. Նույն տեղում:

էր, որպէսզի ազատամարտիկ ուսանողները զինվորական ծառայությունը զուգորդեն ուսման հետ: Մարտերի ընդմիջումներին, վերադառնալով դիրքերից, նրանք գալիս էին պարապմունքների, քննություններ հանձնում: Հատուկ կոնսուլտացիաներ էին անցկացվում ազատամարտիկ ուսանողների հետ՝ նրանց համար հարմար օրերին ու ժամերին: Մի խոսքով, ամեն ինչ արվում էր, որպէսզի նրանք ուսուցման գործընթացից դուրս չմնան: Եվս մեկ ուշագրավ փաստ. այդ տարիներին ԼՂ պետական համալսարանում կիսամյակային և պետական քննություններ էին հանձնում նաև Հայաստանի և ԱՊՀ երկրների համարյա 10 բուհերի ուսանող արցախցիներ, որոնք նույնպես կամավորագրված էին հայրենի եզերքի պաշտպանությանը:

Համալսարանը, համաձայն կառավարության որոշման, ֆինանսավորվում էր պետական բյուջեից, ինչը թույլ էր տալիս հիմնականում աշխատել պետական բյուջեի և հովանավորների նվիրատվությունների հաշվին: Իսկ հեռանկարի առումով մտադրություն կար համալսարանի կառուցվածքում ստեղծել գիտաարտադրական բազա, որը բուհին թույլ կտար որոշակի շահույթ ստանալ: Ընդ որում՝ համալսարանը կարող էր, ինչպես ասում են, շուկա հանել նաև զուտ մտավոր աշխատանք, հաշվի առնելով, որ բուհի մասնագետներն ընդունակ են գիտական մշակումներ կատարել՝ արտադրության մեջ արմատավորելու համար: Սակայն այդ խնդիրը հետաձգվեց հեռանկարի համար, քանի որ դասախոսական կազմի մի մասը գտնվում էր ԼՂՀ Պաշտպանության բանակի շարքերում:

Հարկ է նշել, որ նորաստեղծ ԼՂ պետական համալսարանն արդեն իսկ այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ էր իրականացնում՝ իր գիտական ներուժը նպատակաուղղելով, առանձնապես, Պաշտպանության բանակի՝ պատերազմական իրավիճակից բխող առանձնահատուկ կարիքների բավարարմանը:

Ելնելով այն հանգամանքից, որ համալսարանի ստեղծման հրամանը ծնվել է 1992/93 ուստարվա առաջին կիսամյակի կեսին, որոշվեց միավորման գործընթացն իրականացնել աստի-

ճանաբար և այն վերջնական վիճակի հասցնել մինչև ուսումնական տարվա ավարտը: Այս մասին հայտնվեց և երեւանյան, և դարաբաղյան վերադաս գործընկերներին, որոնք էլ տվեցին իրենց համաձայնությունը, միաժամանակ առաջարկելով Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի պաշտոնական բացման արարողությունը կատարել 1993թ. մայիսի 10-ին, հաշվի առնելով, որ մայիսի 9-ին լրանում է Շուշիի ազատագրման առաջին տարեդարձը, այն նշվելու է առանձնահատուկ շուքով, եւ այդ միջոցառմանը մասնակցելու համար հրավիրվելու են մեծ թվով հյուրեր Չայաստանի Հանրապետությունից, աշխարհի շատ այլ երկրներից:¹⁰

Երբ արդեն ակնհայտ էր, որ ՀՀ եւ ԼՂՀ իրավասու մարմինների միջև կա նախնական փոխհամաձայնություն Ստեփանակերտում պետական համալսարան հիմնադրելու վերաբերյալ, տարբեր մակարդակներում քննարկվում էր, թե այն ինչպես անվանել: Եղան տարբեր կարծիքներ, որոնց հեղինակները հիմնավորում էին, թե հատկապես ինչու այդպես պետք է անվանել: Քանի որ առավելապես առաջարկվում էր երկու տարբերակ՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան կամ Արցախի պետական համալսարան, ապա ընտրությունը պետք է կատարվեր այս երկու անվանումների միջև:

Նկատի ունենալով պահի խնդիրը, այն, որ նորաստեղծ հանրապետությունը ձեւավորում է իր պետական կառույցները, Արցախում նախապատվությունը տրվեց առաջին տարբերակին եւ բոլոր պաշտոնական գրություններում շեշտվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան անվանումը: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ նույնպես բուհն անվանվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան, դրանով շեշտելով նաև Ղարաբաղում ինքնիշխան պետականություն ունենալու փաստը: Սակայն, այդուհանդերձ, պարզ էր նաեւ, որ ստեղծվող համալսարանը պետք է կոչվեր Արցախի պետական համալսարան, քանի որ այն ծառայելու է ոչ միայն

10. Այդ մասին տես, ԼՂՀ պաշտպանության բանակի արխիվ, գ. 4, 5, 6:

ԼՂԻՄ նախկին տարածքի բնակչությանը, այլև Արցախի ողջ բնակչությանը, որի ազատագրության համար ոտքի էր կանգնել համայն հայությունը:

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրման պահանջվող իրավական բոլոր փաստաթղթերն արդեն ստեղծված էին եւ պետք էր այն կյանքի կոչել:

Ինչպես նշեցինք, համալսարանի ստեղծման որոշումը կայացվել է 1992/93 ուստարվա առաջին կիսամյակի կեսին: Ինքնին լուրջ խնդիր էր համալսարանի հիմք հանդիսացող երկու առանձին գործող կրթօջախները մեկ միասնականի մեջ միավորումը, ընդ որում՝ այնպես, որպեսզի լուրջ ցնցումների տեղիք չտրվի:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, որոշվեց ուսումնական գործընթացը շարունակել առանձին-առանձին եւ մինչեւ ուսումնական տարվա ավարտն աստիճանաբար կազմել ապագա համալսարանի գլխավոր պլանը, որում արտացոլված լինեին համալսարանական կառույցները, ուսուցման կազմակերպական ձեւերը եւ այլն:

Տրամադրված ժամանակը հնարավորինս արդյունավետ օգտագործվեց՝ ստեղծելով նաեւ ԼՂԴՀ-ի խորհրդանիշը, եւ նրա խոշորացված տարբերակը տեղակայվեց համալսարանի առաջին մասնաշենքի ներսի աստիճանների դիմաց՝ երկրորդ հարկի մակարդակին (հեղինակ՝ կերպարվեստի դասախոս, նկարիչ Լ. Ղալայան):

ԼՂՀ ղեկավարության համաձայնությամբ՝ նպատակահարմար գտնվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի պաշտոնական բացումը կատարել 1993թ. մայիսի 10-ին՝ Շուշիի ազատագրման առաջին տարեդարձի հաջորդ օրը, այդ իսկ կապակցությամբ յուրովի խորհրդանշական նվեր մատուցելով մեր ժողովրդին:

Համալսարանի պաշտոնական բացմանը՝ ի թիվս մյուս այլ հյուրերի, հրավիրվել էին նաեւ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարները, որոնք, սակայն, իրավիճակի թելադրանքով չկարողացան ժամանել եւ անձամբ մասնակցու-

թյուն ունենալ, բայց Ստեփանակերտ ուղարկեցին պաշտոնական պատվիրակություն ՅՅ պետնախարար Ա. Ղազարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին մի շարք պետական այրեր եւ կրթամշակութային բնագավառի հանրահայտ գործիչներ:¹¹ Համալսարանի բացման առթիվ Հայաստանից ժամանած պատվիրակության խմբի մեջ էին՝ ՅՅ պետնախարար Ա. Ղազարյան, ԿԳ նախարար Վ. Գնունի, առողջապահության նախարար Ա. Բաբլոյան, մշակույթի նախարար Յ. Սովսես, ԿԳՆ բաժնի վարիչներ Գ. Թորոսյան եւ Վ. Ավագյան, ԵրՊՀ ղեկավար, ակադեմիկոս Ն. Առաքելյան, ՅՊԵՀ ղեկավար, ակադեմիկոս Յու. Սարգսյան, ԵրԾԻ ղեկավար, պրոֆեսոր Ա. Բեգլարյան, ՅԳԳ ղեկավար, պրոֆեսոր Ս. Գյուլխասյան, ԵրԺՏՀ ղեկավար, պրոֆեսոր Թ. Նալչաջյան, ԵրԲԻ ղեկավար, ակադեմիկոս Վ. Հակոբյան, Հր. Աճառյան համալսարանի ղեկավար, պրոֆեսոր Ա. Խաչատրյան, ԵրՄԻ ղեկավար, պրոֆեսոր Ա. Փարեմուզյան, Երեւանի պետական կոնսերվատորիայի ղեկավար, պրոֆեսոր Ա. Սմբատյան, ՅՅ ԳԱԱ-ի ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյան, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ղեկավար, պրոֆեսոր Ռ. Եղոյան, Երեւանի քիմիական ռեակտիվների գործարանի տնօրեն Վ. Բադալյան, գրող-հրապարակախոս Զ. Բալայան, մեծանուն գործարար եւ բարերար Լ. Հայրապետյան եւ ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների կողմից միջոցառմանը մասնակցում էին հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռ. Քոչարյանը, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը, նախարարներ, պատգամավորներ, հանրապետության մայրաքաղաքից, շրջկենտրոններից եւ այլ բնակավայրերից տոնակատարությանն իրենց մասնակցությունը բերած հարյուրավոր մտավորականներ, զինվորականներ, ինչպես նաեւ բազմաթիվ դասախոսներ եւ ուսանողներ: Բոլորին թվարկել հնարավոր

11. Տես, Ա. Ավանեսյան, ԼՂՀ (ԱրՊՀ) Հայկական երկրորդ պետական համալսարան (1990-1994թթ.), Ստեփանակերտ, 2008, էջ 72-75:

չէ, բայց որ իսկապես ստացվել էր հայոց երկրորդ պետական համալսարանի ստեղծմանն արժանի հանդիսություն, դա փաստ է:¹²

ԼՂՊՀ-ի պաշտոնական բացման արարողությանը նախորդեց հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում նահատակված ուսանողների պատվին նախատեսված հուշարձանի վայրում տեղադրված հուշաքարի օծման հանդիսավոր արարողությունը, որը տեղի ունեցավ դեպի համալսարանի առաջին մասնաշենքի մուտքը տանող երկկողմ աստիճանների միջնակայքի կանաչապատ տարածքում: Օծման ծեսը կատարեց Յայ Առաքելական Եկեղեցու Արցախի Թեմի առաջնորդ Պարգեւ Եպիսկոպոս (Ներկայումս՝ արքեպիսկոպոս) Մարտիրոսյանը: Այնուհետեւ արարողության մասնակիցների բազմությունը շարժվեց դեպի զոհված ուսանող-ազատամարտիկների՝ համալսարանի մասնաշենքի առաջին հարկում տեղակայված հուշատախտակը և հարգանքի տուրք մատուցեցին նահատակների հիշատակին:

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի պաշտոնական բացմանը նվիրված նիստում, որը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 10-ին, ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարար Վ. Գնունին, ՀՊՃՀ ղեկավար Յու. Սարգսյանը, Կիրովականի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ղեկավար Ռ. Եդոյանը, ԵրՊՀ ղեկավար Ն. Առաքելյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը, ԵրԵՇ ղեկավար Ա. Բեգլարյանը, ՀԳՀ ղեկավար Մ. Գյուլխասյանը, ԵրԺՏԻ ղեկավար Թ. Նալչաջյանը, ԵրԲԻ ղեկավար Վ. Հակոբյանը, Երեւանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի ղեկավար Ի. Առաքելյանը, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Ս. Գրիգորյանը եւ այլոք: Ջերմորեն ողջունելով ԼՂՊՀ-ի ծնունդը՝ նրանք պատրաստակամություն հայտնեցին համակողմանի աջակցել համալսարանի ձեւավորման ու կայացման գործընթացին: Նորաստեղծ համալսարանի ուսումնա-

12. Տե՛ս, Ա. Ավանեսյանի նշվ. աշխ., էջ 74-75:

նյութական բազան հարստացնելու, ուսումնական կաբինետները կահավորելու, լաբորատոր սարքավորումներ տրամադրելու նպատակով Երևանից և այլ վայրերից Արցախ ժամանած պատվիրակությունը, այդ թվում՝ ռուսահայ բարերարները դրամական մեծ օգնություն ցույց տվին, խոստանալով նաև շարունակել նման հայրենասիրական նախաձեռնությունը:

Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) ստեղծումը պատմական կարևորագույն իրադարձություն էր: Թշնամական ագրեսիայի, շրջափակման, ցրտի, բազում անասելի դժվարությունների պայմաններում էլ հայը չի մոռանում իր հոգևոր կյանքի, աճող սերնդի կրթության ու դաստիարակության՝ նրա ապագայի մասին: Դրա վառ արտահայտությունը արցախյան համալսարանի ստեղծման փաստն է: Պատմությունը մեզ հիշեցնում է, որ շատ հայ կրթօջախներ, բարձրագույն դպրոցներ (Գլաձորի, Տաթևի, Երևանի պետական համալսարաններ) ծնունդ են առել հենց պատմության հանգուցային պահերին, խառնակ ժամանակներում:

Համալսարանի ստեղծմամբ Արցախի հայ մտավորականությունը լայն հնարավորություն է ստանում՝ աշխատելու երկրամասում և ծառայելու իր ժողովրդի գիտական ու մշակութային պահաջներին: Նորաստեղծ համալսարանի ղեկավարությունը, ամբիոնների, ֆակուլտետների ձևավորման, լաբորատորիաների, կաբինետների ստեղծման, ուսումնական շենքի, ուսանողական հանրակացարանի վերանորոգման գործում՝ նպատակ ունենալով ուսումնագիտական այդ հաստատությունը դարձնել ազգային կադրերի պատրաստման, գիտության և լուսավորության հոգևոր դարբնոց:

Արցախի նորաստեղծ համալսարանը հավաքագրեց դասախոսական նոր կազմ, նոր ուսանողություն՝ իր առաջ դնելով բուլորովին այլ նպատակներ և խնդիրներ: Համալսարանի բացման առաջին տարիներին այնտեղ սովորող շուրջ 2000 ուսանողներ մասնագիտանում էին 29 մասնագիտության գծով: Այժմ համալսարանում սովորում է շուրջ 4500 ուսանող:

Օրակարգի հարց էր դարձել նաև համալսարանի պարբերա-

կանի հրատարակումը: Այսպես՝ 1994թ. հունվարի 1-ին լույս տեսավ «ԼՂՊ Համալսարան» թերթի անդրամիկ համարը, որն ուրախալի երևույթ էր: Ռեկտորատի 1994 թվականի հունիսի 10-ի որոշմամբ գործող ֆակուլտետները լուծարվեցին և վերամիավորվեցին երեք ֆակուլտետներում՝ հումանիտար, բնագիտական և ճարտարագիտական: Լուծարվեցին նաև որոշ ամբիոններ: Որոշակի փոփոխություններ կատարվեց նաև համալսարանի ներկառավարման համակարգում:

Համալսարանի արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա համառոտակի բնութագրենք համալսարանի համագործակցության կապերը ԼՂՀ կառավարության գերատեսչությունների, ԿԳ նախարարության համապատասխան բաժինների, ինչպես նաև Հայաստանի կրթական համակարգի ղեկավարների հետ փոխադարձ կապերը, հանդիպումները, որոնք նպատակաուղղված էին նորաստեղծ համալսարանի կրթական համակարգի վերակառուցմանը: Այսպես, օրինակ, Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը ստեղծման պահից դարձավ լուրջ գործոն հանրապետության քաղաքական, գիտաուսումնական, մշակութային բնագավառներում: Դրա փայլուն վկայությունն է, որ նրա կամարների ներքո փոխնիփոխ տեղի էին ունենում հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի, Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի, ԳԽ հանձնաժողովների նախագահների, նախարարների, մշակույթի գործիչների, ինչպես նաև հանրակրթական դպրոցի տնօրենների, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատողների, և այլ բնագավառի մասնագետների հետ հանդիպումները համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողական կոլեկտիվի հետ, որոնցում քննարկվում էին հանրապետության անվտանգության, գիտակրթական եւ այլ ոլորտների առնչվող տարաբնույթ հարցեր ու ստանում դրանց սպառնիչ պատասխանները:

Հայաստանից և աշխարհի այլ երկրներից Արցախ են ժամանում մեր հայրենակիցները՝ դասախոսություններ կարդալու, իրենց հարուստ փորձը նորաստեղծ գիտակրթական օջախի դա-

սախտսներին փոխանցելու նպատակով: Նկատի ունենք՝ ակադեմիկոսներ Լեւոն Հախվերդյանին, Վլադիմիր Բարխուդարյանին, Ռադիկ Մարտիրոսյանին, Յուրի Սարգսյանին, Լենդրուշ Խուրշուդյանին, Մուրադ Հասրաթյանին, Գագիկ Սարգսյանին, Ռաֆայել Ղազարյանին, Էդուարդ Ղազարյանին, պրոֆեսորներ՝ ՀՀ նախագահի խորհրդական, գնդապետ Արամ Արշալույսի Սիմոնյանին, Հայագիտության միջազգային հիմնադրամի տնօրեն Հենրի Ծատուրի Աղայանին, Ծովակ Մինասի Ավագյանին, Սուրեն Սուլեյմանյանին, Հայր Անդրանիկ ծայրագույն վարդապետ Այվագյանին, Հակոբ Ազարյանին (Սյունիսեն), Լեւոն Ջեքեյանին (Վենետիկ), Գաբրիելա Ուլուհաջյանին, Միհրան Աղբաբյանին (ԱՄՆ), Մայքլ Քուչաքչյանին (ԱՄՆ), Արմեն Տեր Կյուրեղյանին, Ալեքսանդր Սարաֆյանին, Սոս Սիսակյանին, Դրաստամատ Խուղավերդյանին, Հենրիկ Էդոյանին, Խաչիկ Բատիկյանին, Կիմ Աղաբեկյանին, Սիներիկ Հայրապետյանին, գրող-հրապարակախոս Ջորի Բալայանին, գրականագետ-հրապարակախոս Աբգար Ափինյանին, Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսին և ուրիշներին:

Համալսարան այցելած հյուրերը տարբեր առիթներով այդ օրերի մասին գրել են եւ դեռ կգրեն իրենց գրքերում ու հոդվածներում: Ահա թե այդ մասին ինչ է գրել Հայաստանի Ամերիկյան համալսարանի պրեզիդենտ, պրոֆ. Միհրան Աղբաբյանն իր «Նոր սկիզբ նոր սերնդի համար» հուշերի գրքում 2002թ. (Օքլենդ, Կալիֆորնիա, ԱՄՆ).

«ԼՂՀ պետական համալսարանը բացեց իր դռները 1993թ.-ի մայիսի 10-ին, Ստեփանակերտում: ՀՀ կառավարությունը, իր 1992թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ, աջակցություն ցուցաբերեց համալսարանի ստեղծման գործում: Արպատ Ավանեսյանը նշանակվեց համալսարանի ռեկտոր: Նա հրավիրեց Վարդգես Բարսամին, Միքայել Քուչակչյանին եւ ինձ՝ այցելել համալսարան: Հայաստանի բարձրագույն կրթության եւ գիտության փոխնախարար Ծովակ Ավագյանը նույնպես միացավ մեզ: Դա պաշտոնական այց էր՝ ռազմական ուղղաթիռներով: Մենք աջակցում էինք Հայաստանի ռազմական օդուժին՝ տրամադրելով համա-

կարգիչներ եւ տպիչներ, որոնք ուղարկվել էին Երեւան Արմեն Տեր-Կյուրեղյանի աջակցությամբ, որպես նվիրատվություն Սան-Ֆրանցիսկոյի Յանահայկական տարածքային կոմիտեի կողմից:

ԼՂՀ կրթօջախները շատ հետաքրքիր պատմություն ունեն: ԼՂՀ ՊՅ-ն առաջին կրթօջախը չէ Ղարաբաղում: Դեռևս Մեսրոպ Մաշտոցն է այցելել Արցախ և Ամարասի վանքում դպրոց հիմնադրել: Դա եղել է 5-րդ դարում: 13-րդ դարում Մխիթար Գոշը հիմնադրեց հոգևոր դպրոց Խաչենում: 19-րդ դարի սկզբին դպրոց հիմնադրվեց Գանձասարում, իսկ Շուշիում դպրոցները հիմնադրվեցին տեղի ուսուցիչների և Շվեյցարիայի հոգևորականների կողմից 1820-ականներին: Ռուսական ցարի 1836թ. հրամանով Լեռնային Ղարաբաղի շատ գյուղերում հնարավոր եղավ դպրոցների բացումը: Մեկ տարվա ընթացքում 1860թ. Շուշիում ստեղծվեց դպրոց աղջիկների համար: Փաստորեն, այդ ժամանակ Շուշիում գործում էին արդեն երկու դպրոց աղջիկների համար: 19-րդ դարի վերջին ամբողջ Ղարաբաղի տարածքում կար ավելի քան 60 դպրոց:

Այս պատմական զեկույցը պատրաստել է համալսարանի մանկավարժական կրթության գծով նոր դեկան Գ. Յարությունյանը: Հետագայում նա նշում է, որ Ադրբեջանի կազմի մեջ ընդգրկվելուց հետո կրթական ծրագրերը Ղարաբաղում դեռ շարունակվում էին՝ չնայած անվերջ խոչընդոտներին: Ստեփանակերտում հիմնվեցին բժշկության, գյուղատնտեսության և մանկավարժության բնագավառների միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Ադրբեջանը կազմալուծեց մանկավարժական ինստիտուտը, բայց շուտով նրան փոխարինեց Կիրովականի (Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը: Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի մասնաճյուղը նույնպես բացվեց: Այս երկու մասնաճյուղերի միացումը, ինչպես նաև 5 նոր ֆակուլտետների բացումը, ի վերջո, ԼՂՀ պետական համալսարանի ստեղծման հիմք հաղիսացան:

Մեր այցի ընթացքում մենք պարզեցինք, որ համալսարանն ունի 2100 ուսանող՝ 5-ամյա բուհական ծրագրով: Տղաների մեծ մասը գտնվում էր մարտի դաշտում: Ծառայությունից հետո, տուն

վերադառնալով, նրանք հաճախում էին պարապմունքների: Համալսարանի յոթ ֆակուլտետներն են՝ բժշկական, ֆիզիկա-մաթեմատիկական, մանկավարժական, տնտեսագիտական, իրավաբանական, գյուղատնտեսական եւ ինժեներական: Կար նաեւ հատուկ ռազմական ամբիոն»: Միաժամանակ մատնանշում են, որ համալսարանում դասախոսական կազմը բաղկացած էր 136 անձից, բայց հարկավոր էր 220-ը՝ 7 ֆակուլտետների 38 ամբիոններում դասավանդելու համար: Յոթ դեկաններից վեցն իրենց կրթությունը ստացել էր Երեւանում: Յոթ դասախոս սովորել էր Մոսկվայում: Նրանք վերադարձել էին Ղարաբաղ՝ իրենց պաշտոնները ստանձնելու համար: Ռեկտորը նույնպես վերադարձել էր Երեւանից, որտեղ նա տարիներ շարունակ դասախոսել է: Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակաշրջանում այն անձանց համար, ովքեր կրթություն էին ստացել Հայաստանում, աշխատանք չկար: Դա էր Ադրբեջանի կառավարության քաղաքականությունը՝ գրավել Ղարաբաղը, ստիպելով հայ մտավորականությանը լքել իրենց երկիրը: Բայց նրանք վերադարձան: Նրանցից շատերը դասավանդում են գյուղական դպրոցներում:

Շատ տպավորիչ էր տեսնել նոր համալսարանը, որը հիմնվել էր այսպիսի անհնարին պայմաններում: Մեր այն հարցին, թե ինչի համար այս քաջարի արաքն արվեց պատերազմական շրջանում, պատասխանեցին, որ առանց կրթության Ղարաբաղը կպարտվի, անգամ եթե հաղթի ռազմադաշտում: Շատ տխուր պատկեր էր, երբ ուսանողների մեջ տեսնում էի միայն մի քանի երիտասարդ տղաների, «Տղաներն իրենց երկիրն են պաշտպանում», բացատրում էր կրթության նախարարը»:

Իրենց հուշերում համալսարանի հյուրերը մանրամասնորեն դրվագներ են նկարագրում համալսարանի զոհված ազատամարտիկների սխրագործությունների մասին: Ժամանակաշրջանի թելադրանքով համալսարանի դասախոսները եղան պայքարող ժողովրդի ավանգարդում: Հավաստի տվյալների համաձայն՝ շուրջ 400-ից¹³ ավելի ուսանողներ մասնակցեցին Արցա-

13. Տե՛ս, Անկախության մվիրյալները (կազմեցին՝ Վ. Բալայան, Ռ. Բալայան, Ս. Հարությունյան), Երևան, 2009, էջ 4-8:

խի ազատագրական պայքարին, եղան պատերազմի ամենավճռական ճակատամարտում, որոնցից 75-ն իրենց կյանքը նվիրեցին հայրենիքի պաշտպանությանը: Պատերազմից հետո էլ շատ ուսանողներ վերադարձան համալսարան և շարունակեցին իրենց ուսումը համապատասխան ֆակուլտետում:

Ավելի քան 50 ուսանող զոհվել էր ռազմադաշտում: Նրանց նկարները փակցված էին համալսարանի շենքի նախասրահում: Այդ հերոսներից մեկն է Հակոբ Ավանեսյանը՝ ռեկտորի 20-ամյա որդին: Ռեկտորը բացատրեց, որ իր որդին 7-ից մեկն էր ջոկատում, որտեղ 5-ը վիրավոր էին: Նա քարշ էր տվել իր վիրավոր ընկերներին ապահով տեղ, և երբ կանգ էր առել, որ շունչ քաշի, նրա վրա ետևից կրակել էին, և նա անմիջապես մահացել էր: Մենք այցելեցինք նրա շիրիմը: Այցելեցինք նաև մնացած բոլոր զոհված տղաների շիրիմները:

Ռեկտորն ուրիշ զավակներ էլ ունի բանակում: Նա կարող էր մնալ Երևանում իր ընտանիքի հետ, բայց որոշեց վերադառնալ Ղարաբաղ: Ռեկտորի համար միայն մի նպատակ կա և դա հենց իր բառերով՝ «Թող Աստված մեզ խաղաղություն տա, որ մենք կառուցենք մեր համալսարանը: Մեր համալսարանը մեր պետականության խորհրդանիշն է»:¹⁴

Հիրավի, անչափ ոգեւորիչ եւ հուսադրող երեւոյթ էր ԼՂ պետ-համալսարանի ստեղծումը կենաց ու մահվան կռիվ մղող արցա-խահայության համար՝ որպէս ոչ միայն բուն կրթական, այլ նա-եւ պատմաքաղաքական ու բարոյահոգեբանական նշանակու-թյան իրողություն:

Լեռնային Ղարաբաղի համալսարանի ստեղծման ակունքներում՝ հիմնահարցի լուսաբանմանը նվիրված իր գրքում Ս. Սու-լեյմանյանը իրավացիորեն մատնանշում է, որ Լեռնային Ղարա-բաղի Հանրապետության պետական համալսարանի ստեղծումը պատմական խոշոր և կարեւոր իրադարձություն էր: Եթե հիշենք, թե մեկ տարի առաջ, երբ ստեղծվեց համալսարանը, մեր հանրա-պետությունը քաղաքական, սոցիալական եւ տնտեսական ինչ

14. Այդ մասին տես, ԱրՊՀ-ի արխիվ, գ.8, 9, 10:

վիճակում էր գտնվում, պարզ կդառնա ազգային բուհի նշանակությունը: Ռազմական իրադրության պայմաններում նորաբաց համալսարանի զանգը ոչ մի օր չդադարեց դողանջելուց: Դեռ ավելին, համալսարանի ղեկավարությունը հավաքագրում, ի մի էր բերում այս ու այն կրթական օջախներում ցրված-տեղավորված իր սաներին: Երբ հեռահար հրետանու արկը պայթեց շենքի վրա եւ, բարեբախտաբար, զոհ չկար, այն օրերին մեզմից ոմանց անհեթեթություն էր թվում այդքան երիտասարդություն միասին հավաքելն ու դաս անելը: Այժմ, այս համեմատաբար խաղաղ օրերի հեռվից, հասկանալի ու խիստ գնահատելի է երևույթը, որ մեր մաքառման, պատմության, գոյապայքարի տրամաբանական շարունակությունն է»:¹⁵

Այսպիսով, վերոհիշյալ շարադրանքներից ակնհայտ է դառնում, որ նորաստեղծ համալսարանը դարձավ հայ ժողովրդի այս հատվածի՝ Արցախի գիտակրթական կենտրոն, որտեղ բարձրագույն որակավորում էին ստանում ոչ միայն դարաբաղցի հայ երիտասարդները, այլև հայրենիքից հեռացածներից շատերը, որոնք սովորում էին Հայաստանում, ԽՍՀՄ հանրապետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ղարաբաղցի շատ հայ պատանիներ ու աղջիկներ վերադարձան, ուսումը շարունակելու համալսարանում: Անշուշտ, նորաստեղծ Արցախի անկախ հանրապետությունում համալսարանի հիմնադրումը ուներ ազգային մեծ նշանակություն:

Ահա թե ինչու, համալսարանի հիմնադրումը մեծ գոհունակությամբ ընդունեց հայ մտավորականությունը: Ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի հայ մտավորականությունը: Նրանք խորապես գիտակցում և բարձր էին գնահատում բազմադարյա հայկական բարձրագույն դպրոցների, Երևանի պետական համալսարանի ավանդույթները շարունակող՝ հայ մշակույթի այդ կարևորագույն օջախի դերը:

Համալսարանի պաշտոնական բացման արարողությանը պրոֆ. Ս. Աղբաբյանի արտահայտած նկատառումն առ այն, թե

15. Ս. Սուլեյմանյան, նշվ. աշխ., էջ 14-16:

պետք է լայն հրապարակային հնչողություն տալ այդ նշանակալի իրադարձությանը, շատ չանցած՝ իր բազմաթիվ դրսևորումներն ունեցավ: ԼՂՀ-ում համալսարանական կրթության առաջնեկի մասին հրապարակումներ հայտնվեցին ոչ միայն տեղական, Հայաստանի ու հայկական սփյուռքի, այլև արտաշխարհի, այդ թվում՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, եվրոպական տարբեր երկրների, նույնիսկ՝ ադրբեջանական զանգվածային լրատվության մի շարք տպագիր եւ էլեկտրոնային միջոցներում: Ավելին՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ողջ գործընթացը, ստացված տեղեկությունների համաձայն, նույնիսկ Գերմանիայում հրատարակված գրքի թեմա է ծառայել: Իհարկե, դարձյալ բարեկամներն ուրախանում, չարակամներն էլ ավելի էին չարանում, ականատես լինելով, թե ազգային-ազատագրական պայքարի ելած և իր պետական անկախությունը հազիվ նոր հռչակած, առավել ևս՝ ավերիչ պատերազմի մեջ ներքաշված մի փոքրաթիվ ժողովուրդ՝ արցախահայությունը, ինչպիսի հավատավոր լավատեսությամբ է համակված իր վաղվա օրվա նկատմամբ՝ առաջնահերթ հոգածությամբ կյանքի կոչելով աճող սերնդի համալսարանական կրթության խնդիրը:

Արցախի նորաստեղծ հանրապետության չափազանց ծանր պայմաններում (1992-1994թթ.) հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի զարգացման գործում համալսարանը իր ակտիվ գործունեությամբ մեծ դեր խաղաց և թևակոխեց նոր փուլ, որը բնորոշվում է լայնածավալ բարեփոխումների անցկացմամբ:

Ուսումնական գործընթացի առաջին քայլերը ԼՂՊՅ-ում

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծմամբ Արցախում սկսվեց համալսարանական ուսուցման գործընթացը: ԼՂՅ իշխանությունների, ԼՂՊՅ-ի հիմնադիրների եւ ՀՀ իշխանությունների փոխհամաձայնությամբ մինչեւ 2010թ. ԼՂՅ-ում բարձրագույն կրթության գործընթացը պետք է իրականացվեր միայն պետական հովանավորությամբ՝ ըստ տարբեր մասնագիտությունների տարեկան չորս հարյուր պետական պատվերով տեղերի շրջանակներում:

Սակայն նշենք, որ այս պայմանավորվածությունը փաստաթղթային ձեւակերպում չստացավ եւ, տուրք տալով ՀՀ-ում սկսված գործընթացին, թույլատրվեց ոչ պետական բուհերի գործունեությունը նաեւ Արցախում: Եվ 1996թ. Ստեփանակերտում մեկը մյուսի ետեւից բացվեցին երեք ոչ պետական բուհեր, իսկ արդեն 2007/2008 ուսումնական տարում ԼՂՅ-ում գործում էին մեկ պետական եւ յոթ ոչ պետական բուհեր:¹⁶

Նորաստեղծ համալսարանի առաջին ուսումնական տարում ուսումնական գործընթացն իրականացվում էր հանրապետության սահմանի չորս բոլորն ընթացող պատերազմական թեժ և շարունակական գործընթացի պայմաններում:

Համալսարանի կրթադաստիարակչական գործընթացի հաջողությունն ամենից առաջ կախված էր ուսումնական աշխատանքների ճիշտ պլանավորումից: Այսինքն՝ մշակել ուսումնական հաստատության աշխատանքների կազմակերպման պլան, նշանակում է որոշել հաստատության նպատակները, խնդիրները, մտածել, թե ուսումնական տարվա առանձին փուլերում և վերջում ինչ կրթական և դաստիարակչական հարցեր են լուծվելու, ինչ արդյունքների է ձգտում հասնել համալսարանը, որոշել

16. Ավանեսյան Ա.Ս., «Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ», «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2011, էջ 18-20:

դրանց հասնելու պայմանները, և միաժամանակ հստակ պլանավորել, թե մանկավարժական կոլեկտիվի յուրաքանչյուր անդամերը և ինչ պետք է անի այդ խնդիրների լուծման համար: Յուրաքանչյուր ուսումնական հաստատության աշխատանքների հիմքը կրթադաստիարակչական նպատակներն են, այսինքն՝ սպասվող այնպիսի արդյունքները, որոնք համապատասխանում են կրթական հաստատության պահանջներին, նրա կոլեկտիվի անդամների մոտիվացիային և տվյալ ժամանակահատվածում դրանք իրականացնելու հնարավորություններին: Հենց այդ տեսանկյունով էլ նորաստեղծ համալսարանի գործունեության սկզբնական շրջանում ղեկավարությունը ձեռնարկել է կենսագործել այն բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին: Այդ նպատակով ստեղծվում է աշխատանքային խումբ, նրանում ընդգրկելով ռեկտորին, պրոռեկտորներին, ֆակուլտետի ղեկավարներին ու ամբիոնների վարիչներին, խնդիր դնելով.

- մշակել համալսարանի նոր կանոնադրությունը,
- պատշաճ մակարդակով կազմակերպել ուսումնական գործընթացը,
- ուսումնական պլանի չափանիշներով կազմակերպել կիսամյակային քննությունները, միաժամանակ՝ օբյեկտիվորեն գնահատել ուսումնական գործընթացի արդյունքները,
- ուսանողների ուսումնական առաջադիմության ընդհանրացում ֆակուլտետի խորհրդի նիստում,
- ավարտական պետական քննությունների կազմակերպում, 1992/93 ուստարվա շրջանավարտների տեղաբաշխում՝ ըստ պահանջարկի,
- սահմանված կարգով ընդունելության քննությունների կազմակերպում,
- դասավանդման որակը բարձրացնելու նպատակով դասատուների կազմակերպում, արդյունքների քննարկում ամբիոնի նիստում,
- դասախոսների մասնագիտական որակի բարձրացում, Հայաստանի և արտերկրի բուհերում վերաորակավորման դասըն-

թացներին մասնակցության ապահովում, արդյունքների ամփոփում ամբիոնի նիստում,

- դասախոսների գիտահետազոտական աշխատանքների պլանավորում՝ ուսումնական ծանրաբեռնվածության չափանիշներով,

- համալսարանի բացման առթիվ նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և այլն:

Համալսարանի հիմնադրման առաջին ձեռնարկումներից մեկը եղավ մշակել համալսարանի կանոնադրությունը, որտեղ պետք է հստակորեն նշված լինեն այն սկզբունքները, որոնց հիման վրա կազմակերպելու և գործելու է այն: Ինչպես գիտենք, համալսարանի արխիվում պահպանվում էր նախկին մանկավարժական ինստիտուտի կանոնադրությունը, որն իր բովանդակությամբ չէր համապատասխանում նոր ձևավորված գիտակրթական օջախի պահանջներին, սակայն այն օգտագործվել է նոր կանոնադրության մշակման համար:

Մենք այն կարծիքին էինք, որ նորովի մշակված կանոնադրության հիմնադրությունների (հիարկե, հաշվի առնելով նաև Հայաստանի բուհերի փորձը) համաձայն, ուսումնական հաստատությունը պետք է նպատակ ունենա հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների պահանջների համապատասխան ուսումնական գործընթացը հասցնել նոր մակարդակի, որպեսզի ուսանողները խորապես յուրացնեն մասնագիտական գիտելիքները, և, ավարտելով ուսումը արժանավայել աշխատեն ընտրած մասնագիտության ոլորտում: Այս տեսանկյունով էլ համալսարանում ուսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու, ուսանողների ուսումնական աշխատանքները ճիշտ պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու միտումով, առաջնահերթ խնդիր էր համարվում համալսարանի կոլեկտիվի ապահովումը նոր դասախոսական կազմով, որն իրականացվեց՝ հրավիրելով Հայաստանի տարբեր բուհերի լավագույն դասախոսների, նկատի ունենալով նրանց բարձր մասնագիտական կարողությունները և մանկավարժական փորձը նորաստեղծ հա-

մալսարանի սկսնակ դասախոսներին փոխանցելու կարողությունը:

Հայաստանի բուհերի աջակցությամբ փոփոխվել ու կատարելագործվել են համալսարանի կրթության բովանդակությունը՝ ուսումնական պլանները, ծրագրերը, առարկայական դասագրքերը, որոնց կարիքն այն ժամանակ շատ էր զգացվում: Հրավիրված փորձառու դասախոսների շնորհիվ փոխվել են նաև ուսուցման ձևերն ու մեթոդները՝ նպատակաուղղված համալսարանում ուսման որակի բարձրացմանը: Այսպիսով, համալսարանի նոր ուսումնական պլաններն ու ծրագրերը գործածության մեջ էին մտնում 1992/1993 ուստարում: Ի դեպ, նշենք, որ այն ժամանակ, համարյա նոր ձևավորված ֆակուլտետներում (պատմաբանասիրական, քիմիակենսաբանական, ֆիզիկամաթեմատիկական, մանկավարժության և այլն) համարյա բացակայում էին բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլաններն ու ծրագրերը, և այդ ուղղությամբ Հայաստանի բուհերը մեծ աջակցություն ցուցաբերեցին, միաժամանակ, համալսարան ուղարկելով համապատասխան մասնագետների, ովքեր համալսարանի փորձառու դասախոսների հետ կարճ ժամանակահատվածում վերանայեցին ու տեղի պահանջներին համապատասխան նորովի մշակեցին և գործողության մեջ դրեցին ուսուցանվող մասնագիտությունների գծով ուսումնական պլաններն ու ծրագրերը: Այդ գործընթացին առանձնակի հոգատարությամբ և պատասխանատվությամբ էին մասնակցում ԵրՊԻ-ի ուսումնական աշխատանքների պրոռեկտոր Ս.Հ. Սուլեյմանյանը, ԵրՊԻ-ի և ՀԳԻ ուսումնական մասի վարիչներ Ա.Ն. Սիմոնյանը, Պ.Մ. Գալստյանը և ուրիշներ:

Նոր առարկայական պլաններն ու ծրագրերը պահանջում էին, որ հատուկ ուշադրություն դարձվի բնական, հասարակական և հումանիտար գիտություններին: Ի դեպ նշենք, որ նախկին մանկավարժական ինստիտուտում հումանիտար առարկաներից հայոց պատմությունը, հայագիտությունը, աղբյուրագիտությունը համարյա հանված էին ուսումնական պլաններից: Ուսանող-

ների հայեցի կրթության ու դաստիարակության խնդիրը մտահոգում էր ինստիտուտի հայազգի դասախոսներին: Նրանք շատ լավ գիտակցում էին, որ խիստ կարևոր է ապահովել հայ ուսանողության հայեցի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով: Չնայած վերոնշյալ առարկաներն ուսումնական պլաններում ներառված չէին, այնուամենայնիվ, նրանք կատարում էին իրենց հայրենասիրական առաքելությունը:

Համալսարանի ուսումնական պլաններում իրենց արտացոլումն են գտնում պետական, ազգային և բուհի նպատակային բաղադրամասերը՝ ուսումնական հաստատության կրթական գործունեության ուղղվածությունը, կրթության բովանդակության այն մասը, որում ներկայացված են ընդհանուր պետական, ազգային նշանակություն ունեցող ուսումնական առարկաները. հայոց լեզուն սկսեց ուսուցանվել բոլոր ֆակուլտետներում, հայոց պատմություն՝ բոլոր խմբերում, բանասիրական ֆակուլտետում ուսուցանվում են այն առարկաները, որոնք ներառված են Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (ՀՊՄՀ) ուսումնական պլաններում, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսումնական պլաններում՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի բուհերի, ԵՊՀ-ի, ԵՊԻ-ի և այլ բուհերի ուսումնական պլաններում ընդգրկված առարկաները: Որոշ փոփոխություններ են կատարվել տեղական պահանջների համապատասխան: Նույնը կատարվել է նաև մյուս ֆակուլտետների ուսումնական պլաններում:

Այժմ դիտարկենք, թե ինչ սկզբունքով են մշակվել ուսումնական պլաններն ու ծրագրերը, ինչպես է պլանավորվել առանձին առարկաների դասավանդումը՝ նախատեսելով համապատասխան ժամաքանակ: Իհարկե, Հայաստանի, Ռուսաստանի բուհերից (հատկապես՝ ռուսաց լեզվի ծրագրերը) բերված ուսումնական պլանները և ծրագրերը նորովի մշակվել և հարմարացրվել են համալսարանի պահանջներին, նոր մասնագիտությունների առանձնահատկություններին: Ուսումնական առարկաները դա-

սավանդվել են շաբաթվա վեց օրում (իսկ այժմ` հինգ օրում): Ուսումնական պլաններում և նորովի մշակված ծրագրերում ներառվել են նաև հատուկ դասընթացները բոլոր առարկաներից, հատուկ սեմինարները, նախասիրական պարապմունքները` հատկացնելով համապատասխան ժամաքանակ:¹⁷

Նույնը կատարվել է նաև հեռակա բաժնի խմբերի ուսումնական պլաններում:

Համալսարանի առաջին ուսումնական տարում (1992/93) չնայած երկրում ստեղծված բարդ իրադրությանը, արդյունավետ են կազմակերպել ուսանողների ուսումնական աշխատանքները, ուսումնական գործընթացի արդյունքների ստուգումն ու գնահատումը:

Բարձրագույն դպրոցում ուսանողների ուսուցման, դաստիարակության պատասխանատու, բայց պատվաբեր խնդրի հաջող իրականացման գործում վճռական դերը պատկանում է դասախոսի անձնավորությանը:

Առարկայագետ դասախոսն ուսանողների ուսուցման ու դաստիարակության բազմանիստ գործընթացի հիմնական կենտրոնական կազմակերպիչն է: Տեղին է մատնանշել պրոֆեսոր Ա. Բալյանի ուղեցույց դրույթն այն մասին, որ բուհի դասախոսի մանկավարժական գործունեությունը աշխատանքի ամենադժվար բնագավառներից է: Այն հաջողությամբ կատարելու համար, իր առարկան իմանալուց բացի, անհրաժեշտ է կատարելապես տիրապետել երիտասարդ սերնդի դաստիարակության տեսությանն ու ուսուցման մեթոդներին, ուսանողների ուսումնական աշխատանքները ճիշտ պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու մանկավարժական մեթոդներին, հնարներին ու միջոցներին¹⁸:

17. Այդ մասին մանրամասն տես, ԱրՊՀ-ի արխիվ, ֆակուլտետների առանձին ֆոնդ, գ.1, 2, 3, 4, 5, 6, 9, 10 և այլն:

18. Ա.Բալյան, Առաջին կուրսեցու ուղեցույց, Երևան, 1973, էջ 6-7, նաև տես Մանկավարժական վարպետության հիմունքներ, Երևան, 1986, էջ 117-118:

Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ բուհում ուսումնական աշխատանքն այնքան բարդ է, որ սկսնակ դասախոսից, նույնիսկ ամենափորձված դասախոսից պահանջում է որոշակի ուժերի գործադրում՝ կազմակերպելու ուսումնական ողջ գործընթացը, հատկապես՝ ուսուցման դժվարությունները հաղթահարելու ուսանողների ակտիվությունն ու եռանդը: Հանրահայտ է, որ ուսումնական աշխատանքն արդյունավետ է անցկացվում այն դեպքում, երբ խելացի է կազմակերպված, իսկ դա պայմանավորված է դասախոսի ստեղծագործական աշխատանքով:

Այդ տեսանկյունով էլ փորձենք դիտարկել, թե համալսարանի հիմնադրման առաջին ուսումնական տարում համապատասխան ֆակուլտետներում ինչպես էին կազմակերպվում ուսանողների սեմինար-գործնական պարապմունքները, ինքնուրույն աշխատանքները՝ որպես ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերից մեկը:

Մանկավարժական հայտնի ճշմարտություն է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողների գիտելիքների ամրակայման, ստեղծագործական ընդունակությունների և ինքնուրույն զարգացման գործում հույժ կարևորություն ունեն սեմինար և գործնական պարապմունքները: Դրանք նպատակ ունեն օգնել ուսանողներին՝ խորությամբ ուսումնասիրել դասընթացի տեսական հարցերը, սկզբնաղբյուրներն ու հանձնարարված գրականությունը, ինչպես աշխատել դասախոսությունների նյութերի վրա: Սեմինար պարապմունքները միաժամանակ ծառայում են իբրև դասախոսների կողմից ուսանողների ինքնուրույն աշխատանքների վերահսկման, հաշվառման և զնահատման միջոց:

Համալսարանի պատմաբանասիրական և մանկավարժական ֆակուլտետների ամբիոնների հաշվետվությունները վկայում են, որ Երևանի բուհերից հրավիրվել են առաջատար մասնագետներ՝ պրոֆեսոր Ս.Աբրահամյանը, Ա.Աբրահամյանը, Մ.Մելքունյանը, Ա. Բալյանը և շատ ուրիշներ, ովքեր դասալսումներ են ունեցել սկսնակ դասախոսների մոտ, մասնագիտական խոր-

հուրդներ տվել, միաժամանակ՝ իրենք են կարդացել դասախոսություններ, անցկացրել սեմինար-գործնական պարապմունքներ, որին մասնակցել են նաև երիտասարդ դասախոսները: Կարդում ենք Մ.Մելքունյանի գրառումները. «Դասախոսությունն արթնացնում է ուսանողի միտքը, ստիպում է նրան խորհել տվյալ գիտության առարկայի վերաբերյալ, որոնել դասախոսության ժամանակ ծագած հարցերի պատասխանը, պետք է լավ նախապատրաստվել յուրաքանչյուր դասախոսության»¹⁹: Անշուշտ վերոնշյալ գիտնականների ուսանելի խորհուրդները շատ օգտակար եղան և ուսանողների, և դասախոսների համար, մանավանդ, որ ամեն ինչ սկսվում էր համալսարանի ստեղծման առաջին օրից: Մանկավարժագետներ Ա. Բալյանը, Մ.Մելքունյանը ամբիոների դասախոսներին խորհուրդ են տվել սեմինար պարապմունքները կազմակերպել երեք ձևով՝ նախասեմինար, սեմինար և հատուկ սեմինար պարապմունքներ:

Ֆակուլտետների խորհրդի և ամբիոների նիստի որոշմամբ պարտավորեցվում էր բոլոր դասախոսներին, այսուհետ՝

Նախասեմինարը կազմակերպել համալսարանի 1-2 կուրսերում, նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնել աղբյուրագիտությանը, գրականության վրա ինքնուրույնաբար աշխատելու առանձնահատկություններին ու մեթոդներին: Նախասեմինարի ընթացքում ուշադրությունն առավելապես կենտրոնացնել գիտության զարգացման առավել ընդհանուր հիմնահարցերին: Նախասեմինարի հիմնական աշխատանքը՝ ձևը, ռեֆերատների ընթերցումն է, ինֆորմացիայի (տեղեկատվության) յուրացումը և հաղորդումը, առանց տեսական լուրջ հիմնահարցերի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության: Նախասեմինարի ղեկավարությունը ստանձնում էին ամբիոնի փորձված դասախոսները:

Սեմինար պարապմունքները կազմակերպվում են բարձր

19. Այդ մասին տես, ԱրՊՀ արխիվում պահպանվող ամբիոնների հաշվետվությունները, գ. 9, 10, 11, 12 և այլն:

կուրսերում: Սեմինարի այս տեսակն ուսանողի ինքնուրույն աշխատանքի առավել բարձր դրսևորումն է: Նման սեմինար պարապմունքների ընթացքում ուսանողների ելույթները հիմնականում կրում են գնահատող, վերլուծող և ընդհանրացնող բնույթ, նախապատվությունը տրվում է լուրջ տեսակի հիմնահարցերի վերլուծությանն ու քննությանը:

Համալսարանի ամբիոններում քննարկելուց հետո որոշվում էր հատուկ սեմինարները կազմակերպել ծրագրային թեմաներից դուրս, որոնց նպատակն է ուսումնասիրությանը տալ հիմնականում գիտական ուղղվածություն, խորացնել գիտության այս կամ այն ճյուղերին, հիմնահարցին վերաբերվող ուսանողների գիտելիքները:

Մեր կարծիքով, այսօր համալսարանում հատուկ սեմինար պարապմունքները՝ օպտիմալ կազմակերպելու դեպքում, որոշակի դեր են խաղում ուսանողների գիտահետազոտական ստեղծագործական կարողությունների զարգացման գործում: Հատուկ սեմինարները ղեկավարելու իրավունք ունեն հատկապես գիտահետազոտական որոշակի վաստակ ունեցող դասախոսները:

Սեմինար պարապմունքների արդյունավետությունը պայմանավորվում է կազմակերպման ու անցկացման մեթոդիկայով: Այսպես, օրինակ՝ մանկավարժության ամբիոնի վարիչի (Գ.Հարությունյան) հաշվետվության մեջ մատնանշվում է, որ մանկավարժության դասընթացի սեմինար պարապմունքների ու գործնական աշխատանքների նպատակն է ուսանողներին հնարավորություն ընձեռնել խորությամբ ուսումնասիրել դասընթացի շատ կարևոր, հանգուցային հիմնահարցերը, ինքնուրույնաբար օգտվել սկզբնաղբյուրներից, հանձնարարված գրականությունից, վերլուծել ու ակտիվ վերաբերմունք դրսևորել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման պրակտիկայի նկատմամբ և, միաժամանակ, ձեռք բերել գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություններ ու հմտություններ: Փաստորեն, սեմինար պարապմունքն ուսանողին գիտահետազոտական աշխատանքի նախապատրաստելու որո-

շակի փուլ է:²⁰ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ս.Խանյանն այսպես է բնութագրել. «Սեմինարը չպետք է կրկնի դասախոսությունը, բայց պետք է պահպանի հիմնական դրույթները: Պետք է գերազանցապես ուշադրություն դարձնել այն հիմնահարցերին, որոնք խոր ու բազմակողմանիորեն չեն մեկնաբանված դասախոսությունների ընթացքում: Սեմինարի նպատակը ոչ այնքան ուսանողի հիշողությունը նոր փաստերով ծանրաբեռնելն է, այլ մտածողության զարգացումը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը»²¹:

Սեմինար պարապմունքներին ուսանողներին ճիշտ կողմնորոշելու համար կարևոր նշանակություն ունեն ամբիոնի կողմից ժամանակին սեմինարի թեմատիկայի մշակումը և հիմնական հարցերի առանձնացումը, համապատասխան մատենագիտական ցանկի կազմումը: Այդ առումով ուշագրավ են մաս ֆիզմաթ ֆակուլտետի ամբիոնում կատարված աշխատանքները: Սեմինար պարապմունքներին նախապատրաստվելիս ուսանողն աշխատում է մի քանի աղբյուրների վրա, առանձնացնում դասախոսի տված հարցերից յուրաքանչյուրին վերաբերող հիմնական դրույթները, ցույց տալիս աղբյուրները: Մի քանի աղբյուրների վրա աշխատելիս տարբեր հարցերին վերաբերող նյութերը գրառում է առանձին թերթիկների վրա և հետո խմբավորում, համակարգում ըստ պլանի:

Դասալսումների և քննարկման ժամանակ դոցենտ Ա.Թովմասյանն այսպես մատնանշեց, որ սեմինար պարապմունքը սկսվում է համառոտ ներածական խոսքով, որոշվում են սեմինարի հիմնական խնդիրները, բացահայտվում քննարկվող հիմնահարցի կարևորությունը մանկավարժության (պատմության, գրականության և մյուս առարկաների) դասընթացում, ուսանողների ուշադրությունը կենտրոնացվում է առավել կարևոր ու դժվար հարցերին:

20. Այդ մասին տես ԱրՊՀ արխիվ, գ.10,11,12,13,14:

21. Նույն տեղում:

Մեր համոզմամբ, սեմինար և գործնական պարապմունքների արդյունավետությունը նաև պայմանավորվում է դասախոսի ընդհանուր տեսական մեթոդա-մանկավարժական պատրաստվածությամբ: Կարևորն այն է, որ դասախոսը կարողանա սեմինար և գործնական պարապմունքին գիտական ու ստեղծագործական նպատակաուղղվածություն տա, խնամքով կազմի պլան, առաջադրի տրամաբանորեն իրար հետ փոխկապակցված հարցեր և նրան վերաբերող ենթահարցեր և դրանով իսկ ուսանողների միտքն ուղղի այդ հարցերի պատասխանների որոնմանը, իհարկե հանձնարարելով համապատասխան սկզբնաղբյուրները:

Սեմինար պարապմունքին ստեղծագործական նպատակաուղղվածություն տալու գործում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի դասախոսի կողմից ուսանողների ելույթների հմուտ ղեկավարումը: Կարևոր ենք համարում այն, որ սեմինար պարապմունքի ընթացքում դասախոսը չպիտի ընդհատի ուսանողին, եթե նա նույնիսկ անճշտություններ է թույլ տալիս: Եթե դասախոսն ավելի շատ ինքն է խոսում և շտապում է եզրակացություններ անել դրանով, ապա նա ճնշում է ուսանողների ակտիվությունը: Աշխույժ բանավեճ է ծավալվում այն ժամանակ, երբ բոլոր ուսանողները հետաքրքրվում են առաջադրված հարցերով: Սխալ դրույթները պիտի ուղղվեն ուսանողների ուժերով՝ մինչև դասախոսի եզրափակիչ խոսքը:

Այսպիսով, սեմինար և գործնական պարապմունքների ընթացքում ուսանողն իմաստավորում է դասախոսության միջոցով ձեռք բերած գիտելիքները, խորանում քննարկվող հիմնահարցերի էության մեջ, տալիս է գիտականորեն հիմնավորված մանկավարժական վերլուծություն: Յուրաքանչյուր սեմինար պարապմունքի լավ նախապատրաստվելը և այն արդյունավետ կազմակերպելը, անշուշտ, ստուգարքի և քննության հաջող հանձնման գրավականն է:

Վերոնշյալ հիմնահարցի հետ տրամաբանորեն փոխկապակցված վերլուծաբար դիտարկենք նաև ուսումնական գործընթացի

արդյունքների ստուգման ու գնահատման մանկավարժական պայմանները:

Համալսարանում սեմինար, գործնական պարապմունքների կիսամյակային քննությունների ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը կոչված են բացահայտելու նրանց պատրաստության, ինչպես և ուսումնական, արտասուսումնական աշխատանքի ձևերի ու մեթոդների մեջ առկա թույլ կողմերն ու թերությունները և նրանց ուշադրությունը սևեռելու, ուժերը կենտրոնացնելու դրանց վերացման վրա: Այսինքն՝ դրանք ուսանողներին պարտավորեցնում են համակարգված պատրաստվել դասախոսություններին, խելամտորեն պատրաստվել քննություններին: Ուսանողների ուսումնափնացական գործունեության արդյունքների գնահատման հիմնական նպատակն է ուսանողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման մակարդակի ստուգումը, արժեքային որակների բացահայտումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսուցման որակի վերահսկման ապահովումը: Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ դասախոսի կողմից ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը նպաստում է նրա ինքնահաստատմանը և ինքնակատարելագործմանը, բացահայտում է ուսուցման գործընթացում ձևավորված նոր որակները, կարողություններն ու հմտությունները:

Այս տեսանկյունով էլ համալսարանի հայոց լեզվի և գրականության, պատմության, մանկավարժության, մաթեմատիկայի և ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության, ինչպես նաև մյուս ամբիոնները նպատակասլաց աշխատանք են կատարել: Այսպես, օրինակ, ամբիոններում մշակվել է տվյալ առարկայի ընդհանուր հարցաշար և ժամանակին հանձնարարվել ուսանողներին, կիսամյակային քննությունները կազմակերպվել են առարկայազետ մասնագետների մասնակցությամբ: Փաստաթղթերի ստուգումից պարզվել է, որ 1992/93 ուստարվա առաջին կիսամյակում պատմաբանասիրական ֆակուլտետում ուսանողների առաջադիմությունը կազմել է 85 տոկոս, ֆիզմաթ. ֆակուլտե-

տում՝ 69 տոկոս, քիմիա-կենսաբանության ֆակուլտետում՝ 75 տոկոս²²: Իհարկե, ուսանողների առաջադիմությունը շատ բարձր էր հումանիտար առարկաներից: Ուսանողների ուսման առաջադիմությունն ըստ կիսամյակների ամփոփվել է ֆակուլտետների խորհրդի նիստերում և բացահայտվել թերությունները:

Ուսանողների ուսումնական գործունեության արդյունքները գնահատվել են Հայաստանի բուհերում գործող գնահատման ընդհանուր համակարգով (գերազանց, լավ, բավարար, անբավարար): Սակայն ամբիոններում մշակվել են նաև ուսանողների գիտելիքների գնահատման նոր սկզբունքներ, գործառույթներ, ինչպես նաև գնահատման նոր ձևեր:

Ուսանողների գիտելիքները գնահատվում են հետևյալ սկզբունքներով.

- գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը, արդարությունը,

- մատչելիությունը,

- հիմնավորվածությունը,

- հավաստիությունը,

- թափանցիկությունը և այլն:

Գնահատման գործառույթներն են՝

- յուրաքանչյուր ուսանողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և կրթության շարունակության խրախուսումը, ուսանողի կրթական մի աստիճանից մյուսին անցման իրավունքի ապահովումը,

- բուհի գործունեության արդյունավետության բացահայտում, դասախոս-ուսանող համագործակցային հարաբերությունների զարգացումը,

- ուսանողի հետ տարվող անհատական աշխատանքի անհրաժեշտության և ծավալի ճշգրտումը,

22. Տվյալները պահպանվում են համապատասխան ֆակուլտետների գործերում: Գ. 21, 22, 23, 24, և այլն:

- ուսանողի անձնային որակների ձևավորումը, անհատական վարքագծի բացահայտումը, ինքնագնահատման և հետադարձ կապի ապահովումը և այլն:

Հայաստանի բուհերի փորձի հիման վրա համալսարանի ամբիոններում մշակվել են նաև ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման նոր ձևեր`

- ձևավորող գնահատում, որի միջոցով ճշգրտվում են դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը և դասավանդման մեթոդները,

- պարտադիր ամփոփիչ գնահատում, կիսամյակում ուսումնական տարվա ավարտին ստուգվում են (ատեստավորում), ուսանողների ընթացիկ քննությունների (նկատի ունենք յուրաքանչյուր կիսամյակում) և շրջանավարտների ուսումնական գործունեության արդյունքները,

- հետազոտական գնահատում, ուսուցման արդյունքների հետազոտում, այդ թվում` ստուգման համապատասխանությունը բուհական չափանիշներին, ինչպես նաև Հայաստանի բուհերի, միջազգային չափանիշներին, որպեսզի համալսարանի շրջանավարտը կարողանա շարունակական կրթության մյուս օղակներում` մագիստրատուրայում, ասպիրանտուրայում հետազոտական աշխատանք կատարի:

Ամբիոնների հաշվետվությունից (որտեղ ընդհանրացվում են ուսանողների կիսամյակային քննությունների արդյունքները) տեղեկանում ենք, որ քննությունների ժամանակ ուսանողների գիտելիքները գնահատվում են նաև ներքին, փոխադարձ, անհատական և արտաքին գնահատման ձևերով.

- ինքնագնահատում. սովորողն ինքն է գնահատում իր գործունեության արդյունքը,

- փոխադարձ գնահատում. սովորողները գնահատում են միմյանց,

- անհատական գնահատում. ուսուցիչը գնահատում է սովորողին, նշելով նրա ձեռքբերումները և աճի դինամիկան,

- հանձնախմբային գնահատում. գնահատվում է դասախոս-

ների խումբը՝ ամբիոնի համապատասխան մասնագետների կողմից,

- արտաքին գնահատում. բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակն առանձին ամբիոնում, կամ հանրապետության տարածքում գործող ոչ պետական բուհերում: Այսպիսով, գնահատումն ունի հետազոտական-ճշգրտող նշանակություն:

Ընդհանրացնելով վերոնշյալ գնահատման ձևերը, մենք անհրաժեշտ ենք համարում, որ այսօր համալսարանում ուսանողի անձնային-անհատական որակները որոշելու համար պետք է ամբիոններում կիրառել հարցարաններ, որոնք հնարավորություն ընձեռնեն գնահատելու՝

- ա) չափորոշիչային գիտելիքների յուրացումը,
- բ) ուսումնական նյութի գործնական կիրառության կարողությունը,
- գ) ընդհանուր զարգացվածության մակարդակը,
- դ) ստեղծագործական ունակությունների դրսևորումը,
- ե) սոցիալական գրագիտությունը,
- զ) քաղաքական գրագիտությունը,
- է) մշակութային գրագիտությունը,
- ը) մտավոր գործունեության առանձնահատկությունները,

Այսպիսով, վերը շարադրածից հանգում ենք այն եզրակացության, որ ուսումնական գործընթացի արդյունքների ճիշտ գնահատումը ոչ միայն ուսանողի գիտելիքների գնահատման չափանիշն է, այլև նրան դաստիարակելու, ուսման մեջ առաջ մղելու, թևավորելու, խթանելու իրական պայման:

Նպատակահարմար գտնվեց առաջադրել մեթոդամանկավարժական խորհուրդներ, որոնք կարող են օգտակար լինել բուհի սկսնակ դասախոսների համար: Այսպիսով, ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման ժամանակ սկսնակ դասախոսը ցուցաբերում է ճիշտ մոտեցում, եթե առաջնորդվում է հետևյալ պահանջներով.

1. Նկատի է ունենում սովորողների գիտելիքների և կարողությունների յուրացման մակարդակը, խթանում ցածրից բարձրին անցումը:

2. Կարողանում է հաջորդաբար բացահայտել ուսանողի կողմից ուսումնական նյութը հասկանալու մակարդակները:

3. Ստուգման ու գնահատման համար օգտագործում է տարբեր մակարդակի գիտելիքներ (ստեղծագործական տիպի աղյուսակների կազմում, լաբորատոր փորձերի կատարում, վարժությունների, խնդիրների լուծում և այլն):

4. Ուսանողներին մղում է կատարելու գիտելիքների բարձր մակարդակ պահպանող առաջադրանքներ:

5. Ձևավորում է ուսանողների մեջ ճանաչողական, որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, ունակություններ, իսկ ուսանողների ճանաչողական գործունեության գնահատումը պետք է ունենա և՛ կրթական, և՛ դաստիարակչական նշանակություն: Ուսանողը, տեղյալ լինելով իր ուսումնական գործունեությունը գնահատելու աստիճանին (դրական, բացասական), վերափոխում է իր գործողությունների եղանակը, որոնում նոր ուղիներ ու միջոցներ՝ իր կողմից կատարվող ուսումնական աշխատանքները բարեփոխելու համար:

6. Գիտելիքների ճիշտ ստուգումն ու գնահատումը սովորողների մեջ դաստիարակում է պարտքի ու պատասխանատվության զգացում, իսկ սխալ գնահատումը խոչընդոտում է կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրների լուծմանը, խաթարում ուսանողների վարքագիծը, բացասաբար անդրադառնում նրանց և դասախոսների փոխհարաբերությունների վրա:

Հետևապես, ուսանողների ուսումնական աշխատանքների արդյունքների ստուգման ու գնահատման դաստիարակչական նշանակությունն այն ուժն է, որը նպաստում է համախմբելու ուսանողական և մանկավարժական (ֆակուլտետի ամբիոնների) կոլեկտիվները, լուծելու բուհի առջև ծառայած խնդիրները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1992-1994թթ.) նորաստեղծ համալսարանի ներքին կյանքում կատարվող որակա-

կան փոփոխությունների ազդեցությամբ լուրջ փոփոխություններ են կատարվում նաև կարդացվող դասախոսությունների որակի բարձրացման ուղղությամբ:

Հայտնի ճշմարտություն է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունում դասախոսությունը գիտելիքներ հաղորդելու հիմնական մեթոդն է: Բովանդակալից դասախոսությունը շատ հաճախ տալիս է այն, ինչ չկա դասագրքերում. նոր տվյալներ, ուսումնասիրվող հարցերի ուրույն մեկնաբանություններ, գիտության զարգացման հեռանկարների բնութագիր, կենդանի խոսքի անփոխարինելի ուժ և այլն: Անժխտելի փաստ է, որ դասախոսության գիտական բովանդակության մատուցման բնույթը մեծապես կախված է նրա մանրակրկիտ և խոր նախապատրաստումից: Այդ ամենն ուղղակի վերաբերում է նաև ստեղծագործաբար աշխատող դասախոսի գործունեությանը:

Փորձառու դասախոսը, նախապես լավ նախապատրաստվելով ամենօրյա դասախոսությանը, մշակելով բովանդակությունը, կոնսպեկտը, թեզիսները, հարցերն ու առաջադրանքները, հանձնարարվելիք գրականության ցանկը, դասախոսության ընթացքում ապահովում է ուսանողների ակտիվությունը, կիրառում մանկավարժական մեթոդներ, հնարներ, միջոցներ և դասախոսության նյութի շարադրումը դարձնում հետաքրքիր, արթնացնում ուսանողի միտքը՝ մղում դեպի գրքերի աշխարհ, պահանջում խորացված ու համակարգված աշխատանք: Այս տեսանկյունով էլ ուսումնասիրել ենք պատմաբանասիրական, ճարտարագիտական և մյուս ֆակուլտետների փորձառու դասախոսների (Գ. Բաղդասարյան, Ս. Խանյան, Գ. Անտոնյան, Գ. Հարությունյան, Ս. Բաղդասարյան, Ա. Շահինջանյան, Գ. Բաղունց, Ն. Բաբայան և շատ ուրիշներ) ուսանելի փորձը, որոնք պատշաճ մակարդակով դասախոսություններ են կարդում և իրենց մանկավարժական վարպետության, տեխնիկայի և որակական լավագույն հատկանիշները փոխանցում սկսնակ դասախոսներին: Ուսումնասիրել ենք նաև վերոնշյալ ֆակուլտետների ամբիոնի վարիչների հաշվետվությունները, որտեղ մանրամասնորեն նշված են

դասալսումների քննարկումներն ու առաջարկությունները:

Նպատակահարմար ենք համարում ստորև ներկայացնել միայն մանկավարժության ամբիոնի վարիչ Ա. Թովմասյանի՝ դասալսման ժամանակ արված դիտողությունների և քննարկման ժամանակ առաջարկությունների հիման վրա մշակած դասախոսության պլանի հետևյալ կառուցվածքները և բովանդակությունը՝ որպես օգնություն սկսնակ դասախոսներին:

- դասի թեմայի և նրա անցկացման օրվա հստակ ընտրություն,

- օրվա դասախոսության պատշաճ մակարդակով նախապատրաստում ու պլանավորում,

- դասախոսության նպատակի հիմնավորում՝ ինչ հասկացություններ պետք է յուրացնեն և ինչ մակարդակով, ինչպես պետք է բացահայտել նրա բովանդակությունը, ինչ է անհրաժեշտ ուսուցանել ուսանողներին տվյալ դասախոսության ժամանակ,

- դասախոսությանը վերաբերող դիտազննական պարագաների օգտագործում, անհրաժեշտ սկզբնաղբյուրների հանձնարարում,

- նոր նյութի գիտական հիմնավորում ու տրամաբանորեն փոխկապակցված շարադրում,

- միջառարկայական և ներառարկայական կապի ապահովում,

- դասախոսության եզրափակիչ փուլում հարցերի միջոցով նյութի յուրացման մակարդակի ստուգում,

- մանկավարժական ներգործության մեթոդների, հնարների ու միջոցների կիրառում և այլն:

Դասալսումների նմանատիպ քննարկումներ և առաջարկություններ կան նաև հայոց լեզվի և գրականության, պատմության, մաթեմատիկայի և ֆիզիկայի, ճարտարագիտության և մյուս ամբիոնների վարիչների հաշվետվություններում, որոնք պահպանվում են համալսարանի արխիվում²³:

23. Այդ մասին տես, ԱրՊՀ Արխիվ, գ. 12, 13, 14, 15, 16:

Համալսարանում դասալսույնների միջոցով բացահայտվում էր նաև առաջավոր փորձը. հատկապես նկատի ունենք Երևանի բուհերից հրավիրված դասախոսների (ակադեմիկոսներ Ռ. Մարտիրոսյան, Ս. Արզումանյան, Ս. Սարինյան, Ս. Աբրահամյան, պրոֆեսորներ Մ. Մելքունյան, Ա. Աբրահամյան, Բ. Վերոյան և շատ ուրիշներ) ուսանելի փորձը, որը ներդրվում էր սկսնակ դասախոսների պրակտիկայում:

Համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման ու ղեկավարման գործում մեծ դեր են խաղացել առարկայական հանձնաժողովները, որոնք կազմվում էին հարակից առարկաներ ավանդող դոցենտներից, պրոֆեսորներից ու լավագույն ավագ դասախոսներից, ինչպես և ուսանողների ներկայացուցիչներից (նկատի ունենք գերազանցիկներին, նրանք զբաղվում էին գլխավորապես ուսումնական և գիտական բնույթի հարցերով): Նրանք ամբիոնի վարիչների հետ միասին դասախոսների միջև բաշխում էին առարկաներն ու ժամերը, հսկում դասավանդման մեթոդներ, կատարում նաև դասախոսություններ և մեթոդական օգնություն ցույց տալիս սկսնակ դասախոսներին: Առարկայական հանձնաժողովներն էին քննարկում և եզրակացություն տալիս հոդվածի, տպագրվելիք ձեռնարկների կամ դասագրքերի մասին: 1992/93 ուստարում համալսարանում ըստ ֆակուլտետների գործում էին չորս առարկայական հանձնաժողովներ:

Համալսարանի գործունեության առաջին իսկ տարվանից, դասախոսների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով վերաորակավորման դասընթացներ է ուղարկվել 10 դասախոս, որից Հայաստանի բուհեր՝ 6 (հայոց լեզու, գրականություն, պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն մասնագիտությամբ), իսկ մանկավարժություն, ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ 4 դասախոս ուղարկվել է Մոսկվա՝ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ (ՄԳԳԻ):

Նորաստեղծ համալսարանի ռեկտորատի, գիտխորհրդի նիստերում քննարկված բազմաբնույթ հարցերը, վկայում են, որ ուսումնական հաստատության ղեկավարները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դասախոսի մասնագիտական որակի աճին, այն դիտելով որպես ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պայման:

Այսպես, օրինակ, գիտխորհրդի առաջին նիստում (1992-93 ուստարվա նոյեմբեր) քննակվող կարևորագույն հարցերից մեկը երիտասարդ դասախոսների մասնագիտական որակի բարձրացումն էր: Ռեկտորի զեկուցագրում մատնանշվում է. «Բուհում ուսանողների ուսումնական աշխատանքների պլանավորումն ու արդյունավետ կազմակերպումը պահանջում են երկու նախապայման՝ դասախոսի կարողություններն ու ձգտումը:

Համալսարանում դասախոսի, հատկապես՝ սկսնակ դասախոսի աշխատանքի բարդությունը պահանջում է հիմնավոր նախապատրաստություն, որից սկսվում և որի միջոցով իրականացվում են ուսանողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները: Այս առումով՝ դասախոսի գիտական մակարդակը, մեթոդաբանական և մեթոդական պատրաստականությունը բացառիկ նշանակություն ունեն համալսարանում ուսուցման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար»²⁴: Ուշագրավ է նաև նշել մանկավարժության ամբիոնի վարիչ Գ. Հարությունյանի ելույթը՝ դասախոսի ստեղծագործական աշխատանքի մասին. «Յուրաքանչյուր դասախոսից, հատկապես՝ սկսնակ դասախոսից պահանջվում է ունենալ հիմնավոր, խոր մասնագիտական պատրաստվածություն և ընդարձակ ու բազմակողմանի կրթվածություն, այս տեսանկյունով էլ դասախոսական աշխատանքը ստեղծագործական աշխատանք է, իսկ ստեղծագործաբար աշխատող դասախոսի հատկություններից մեկը ինքնակրթությունն է. գիտելիքների մեծ պաշարը նա ձեռք

24. Այդ մասին տես, ԱրՊՀ Արխիվ, գործ 4, 5, 6, 7:

է բերում ինքնակրթության միջոցով: Ինքնակրթության նշանակությունը մեծանում է այն դասախոսների մոտ, ովքեր կոչված են ղեկավարելու ուսանողների ուսումնադաստիարակչական գործընթացը, գրքի հետ կատարվող նրանց մտավոր աշխատանքը»:

Որպես մեթոդական խորհուրդներ՝ անհրաժեշտ ենք համարում, որպեսզի այսօրվա բուհում դասավանդող սկսնակ դասախոսներն իրենց պրակտիկ գործունեության ընթացքում առաջնորդվեն հետևյալ մանկավարժական պահանջներով.

1. Ճիշտ բաշխել ժամանակը, ստեղծել աշխատանքային նպաստավոր պայմաններ:

2. Ճիշտ ընտրել ուսումնասիրվող նյութը, ելնելով ուժերի և ժամանակի խնայողությունից՝ մշակել աշխատանքի ձևերը:

3. Ունենալ ինքնակրթության պլան, որի մեջ ընդգրկել քաղաքական, գիտական և մասնագիտական գրականության ընթերցում, ծանոթացում նորագույն նվաճումներին:

4. Առաջավոր դասախոսների փորձի ուսումնասիրում և պրակտիկ գործունեության մեջ լավագույն փորձի ներդրում:

5. Սովորել սովորեցնելու վարպետությունը, ուսման նկատմամբ ուսանողների դրական վերաբերմունքի ձևավորման կարողությունը:

6. Ուսումնական ծրագիրը, դասագիրքը, սկզբնաղբյուրը, ուսումնամեթոդական ձեռնարկը, ուղեցույցը և ամսագրերում, պարբերական մամուլում լույս տեսած՝ հոդվածների ուսումնասիրումը, կոնսպեկտավորումը դասախոսի համար գիտության աղբյուր են, որը նախապայմաններ է ստեղծում դասավանդման մեթոդները կատարելագործելու՝ ուսանողների կողմից հաղորդվող ուսումնական նյութի յուրացման համար:

Վերը շարադրածից կարող ենք եզրակացնել հետևյալը. ժամանակակից բուհի ուսանողն իր դասախոսի մեջ պետք է տեսնի խելացի, գիտուն, մտածող, գիտելիքներին սիրահարված մարդու: Այսինքն՝

- համալսարանում՝ դասախոսի աշխատանքը կրում է ստեղ-

ծագործական բնույթ, այս առումով էլ մանկավարժական աշխատանքն աներևակայելի է առանց ստեղծագործական մոտեցման, առանց նորի ու առաջադիմականի որոնման ու պրակտիկայում ներդրման:

- ստեղծագործաբար աշխատող դասախոսի տեսադաշտից չի վրիպում լսարանում ուսանողների ճնշվածությունը, նրանց ակտիվ կամ պասսիվ վիճակը դասախոսության ընթացքում: Նախքան ստեղծված իրավիճակում վճիռ կայացնելը (եթե լսարանում խախտվել է կարգապահությունը, որոշ ուսանողներ պասսիվ ակտիվություն են դրսևորում), դասախոսը բացահայտում է ուսանողների հոգեկանում տեղի ունեցած փոփոխությունների պատճառները և ըստ այդմ էլ մշակում իր գործողությունների վարքագծի տակտիկան:

- որքան դասախոսը խորն է տիրապետում իր մասնագիտական առարկայի գիտական համակարգին՝ այնքան բարձր են նրա գործունեության արդյունքները: Դասախոսի մեթոդամանկավարժական պատրաստվածությունը հնարավորություն է ընձեռնում ավելի արդյունավետ կազմակերպել ուսանողների ուսումնական, և արտաուսումնական գործունեությունը:

Համալսարանի հիմնադրման և նրա գործունեության առաջին տարիներից, ինչպես տեսանք, արդյունավետ աշխատանք է տարվել ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ: Նշենք նաև, որ ուսումնական, ուսումնա-մեթոդական աշխատանքի հետ միասին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցրել նաև գիտահետազոտական աշխատանքը՝ որպես ուսումնական ծանրաբեռնվածության բաղկացուցիչ մաս: Գիտահետազոտական աշխատանքի զուգակցումը մանկավարժական գործունեության հետ հանդիսանում է ինչպես Հայաստանի ամեն մի բարձրագույն ուսումնական հաստատության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի նորաստեղծ համալսարանի հիմնական խնդիրներից մեկը: Այն դարձել է լուրջ ազդակ պրոֆեսորադասախոսական կադրերի աճի, ուսուցման որակի

բարձրացման, գիտության ու մշակույթի առաջընթացի համար: Նոր գիտամանկավարժական կադրերի պատրաստման, առավել ընդունակ ուսանողներին գիտահետազոտական աշխատանքի մեջ ներգրավման գործում ևս մեծ նշանակություն է ունեցել համալսարանի դասախոսական կազմի կողմից կատարվող գիտական աշխատանքը: Համալսարանի խորհուրդը, դեկանատները, առարկայական հանձնաժողովներն ու ամբիոններն ուսումնական խնդիրների հետ միասին լրջորեն զբաղվում էին նաև պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության հարցերով: Յուրաքանչյուր ամբիոնում պլանավորվում էր դասախոսների հետազոտական աշխատանքը՝ ընդգրկելով ուսումնական ծանրաբեռնվածության մեջ, իսկ համալսարանի ամբիոնների գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր պլանը հաստատվում է գիտախորհրդի նիստում: Համաձայն այդ պլանի՝ 1992-1994 թվականներին հրատարակվել են 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 մեմագրություն, 3 ուղեցույց՝ սեմինար-գործնական պարապմունքերի կազմակերպման համար և 26 գիտական հոդվածներ Հայաստանի բուհերի տեղեկագրերում²⁵:

Առաջադիր հիմնահարցի բնույթի հետ կապված պարզաբանեցնք նաև ավարտական՝ պետական քննությունների, և՛ ընդունելության քննությունների (1992/93 ուստարում), և՛ շրջանավարտների տեղաբաշխման հետ կապված հարցերը:

Նորաստեղծ համալսարանի առաջին ուսումնական տարում պատշաճ մակարդակով կազմակերպվել են ավարտական պետական քննությունները պատմաբանասիրական, մանկավարժական, ֆիզիկամաթեմատիկական, քիմիա-կենսաբանական, ճարտարագիտական ֆակուլտետներում, որոնց մասնակցել են 200-ից ավելի ուսանողներ (նկատի ունենք նաև Հայաստանի, Ռուսաստանի և այլ բուհերից տեղափոխված արցախցի ուսանողներին): Վերոնշյալ ֆակուլտետներն առաջին անգամ տվե-

25. Տե՛ս ԱրՊՀ Արխիվ, ամբիոնների հաշվետվություններ, գ. 6, 7, 8, 9, 10:

ցին համալսարանն ավարտած իրենց անդրանիկ շրջանավարտները:²⁶

1. Հայոց լեզու և գրականություն	26
2. Պատմություն	22
3. Մանկավարժություն և տարր. կրթ. մեթոդ.	26
4. Մաթեմատիկա և ֆիզիկա	28
5. Քիմիա և կենսաբանություն	26
6. Ճարտարագիտական մասնագիտություններ	32
7. Աշխարհագրություն և այլ մասնագիտություններ	68

Բոլոր մասնագիտություններով հեռակա ուսուցման գործընթացն իրականացվում էր համապատասխան ֆակուլտետներում ընդգրկված ակադեմիական խմբերի ձևով: ԼՂՀ ԿԳ նախարարության և համալսարանի ղեկավարության համաձայնությամբ կատարվում էր շրջանավարտների տեղաբաշխումը՝ ըստ շրջանային կրթության բաժինների ներկայացրած պահանջարկների: Առաջնային էր համարվում հատկապես ԼՂՀ ծայրամասային գյուղերի, փախստականների նոր բնակավայրերի դպրոցների ապահովումը մանկավարժական կադրերով, քանի որ պատերազմական իրավիճակի հետ կապված շատ ուսուցիչներ բացակայում էին, իսկ մի մասը ծառայում էր ԼՂՀ Պաշտպանության բանակում: Համալսարանի արխիվում պահպանվել են այն շրջանավարտների բաշխման ցուցակները, որոնցից երևում է նրանց խիստ գիտակցական վերաբերմունքը, ժողովրդին ու հայրենիքին ծառայելու մեծ պատրաստականությունը: Բաշխումը կատարվում էր ծայր աստիճան ուշադիր, հաշվի էին առնվում ժողովրդական տնտեսության պահանջները, շրջանավարտների հակումներն ու ընդունակությունները, ճշտորեն որոշվում էր նրանց աշխատանքի բնույթն ու վայրը: Ուսանող լինելով հա-

26. Տե՛ս, ԱրՊՀ. Արխիվ, գործ 8,9, 10:

մալսարանի (նաև նախկին բաժանմունքի) շատ սուղ պայմաններում, նորավարտ մասնագետները պետք է կյանքի դպրոցում լրացնեն իրենց ստացած գիտելիքների պակասը: Տարեցտարի ավելանում էր համալսարանն ավարտող մասնագետների թիվը:²⁷

Ավարտական պետական քննությունները բարեհաջող ավարտելուց հետո համալսարանին սպասում էր ամենամեծ փորձությունը՝ 1993/94 ուսումնական տարվա ընդունելության քննությունները: Դրանք արժանահիշատակ են այն առումով, որ այդպիսով իսկ՝ Արցախում իրականացվում էր համալսարանական առաջին ընդունելությունը հետևյալ մասնագիտությունների գծով և խմբաքանակներով (տես՝ աղ. 11):

Աղյուսակ 11

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի 1993/94 ուստարվա ընդունելությունն ըստ մասնագիտությունների և խմբաքանակների

NN	Շի.Ֆր	Մասնագիտության անվանումը	1993/94 ուստարվա ընդունվածները	
			պետական	վճարովի
1.	0101	Սաբեմատիկա եւ ինֆորմատիկա	15	
2.	0104	Ֆիզիկա եւ աստղաբաշխություն	15	
3.	0109	Կենսաբանություն եւ քիմիա	20	
4.	0118	Աշխարհագրություն	15	
5.	0207	Պատմություն	15	
6.	0217	Ռուսաց լեզու եւ գրականություն	10	
7.	0219	Հայոց լեզու եւ գրականություն	15	
8.	0220	Օտար լեզու (անգլ, գերմ.)	10	
9.	0304	Նախնական զինվորական պատրաստականություն եւ ֆիզկուլտուրա	30	

27. Այդ մասին տես, ԱրՊՀ. Արխիվ, գ.8, 9, 10,11,12, ինչպես նաև ԱրՊՀ հաշվետվությունները 1992-1996թթ.:

10.	0308	Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկա	15	
11.	0401	Բուժական գործ	25	
12.	0604	Ֆինանսներ և վարկ	10	
13.	0608	Չաշվապահական հաշվառում, վերահսկողություն և տնտեսական գործունեության վերլուծություն	15	
14.	0706	Արդյունաբերական կոմպլեքս ճյուղերի էկոնոմիկա և կառավարում	10	
15.	0709	Առևտրի և հասարակական սննդի էկոնոմիկա և կառավարում	10	
16.	2303	Ռադիոէլեկտրոնային միջոցների կոնստրուկտավորում և տեխնոլոգիա	20	
17.	2704	Խմորման արտադրության տեխնոլոգիա և զինագործություն	5	
18.	2707	Պահածոյացման տեխնոլոգիա	5	
19.	2710	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա	5	
20.	2712	Պարենային մթերքների ասրանքագիտություն	10	
21.	2806	Թեթև արդյունաբերության ճարտարագիտություն	20	
22.	2903	Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	10	
23.	2908	Ջրամատակարարում, ջրահեռացում, ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում ու պահպանում	5	
24.	2910	Ավտոճանապարհների և օդանավակայանների շինարարություն	5	
25.	3102	Ագրոնոմիա	10	
26.	3107	Անասնաբուծություն	5	
27.	3108	Անասնաբուժություն	10	
28.	3113	Գյուղատնտեսության մեքենայացում	10	
ԸՆԴԱՄԵՆԸ			350	

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԾԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՅԵՐԸ

Արցախի պետական համալսարան

Ինչպես հիշատակվեց նախորդ գլխում՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի (ԱրՊՀ) ստեղծումը պատմական կարևորագույն իրադարձություն էր: Թշնամական ագրեսիայի, շրջափակման, բազում այլ անասելի դժվարությունների պայմաններում՝ համալսարանը հիմնադրվել է 1992թ. հոկտեմբերի 13-ին, ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության համակարգում: 1994թ-ին համալսարանն ընդգրկվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության համակարգում՝ որպես պետական հիմնարկ: ԼՂՀ կառավարության 1996թ. փետրվարի 6-ի թիվ 25 որոշմամբ ԼՂՀ պետական համալսարանը վերանվանվեց Արցախի պետական համալսարան (ԱրՊՀ):¹ ԼՂՀ կառավարության 2003 թվականի հունիսի 16-ի թիվ 184 որոշմամբ Արցախի պետական համալսարանը վերակազմավորվել է «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ)՝ հանդիսանալով կրթական, գիտամշակութային ինքնավար պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որի հիմնադիրը ԼՂՀ-ն է՝ ի դեմս ԼՂՀ կառավարության:

Այսպիսով, 1992-96 թվականներին համալսարանի գիտակրթական համակարգում տեղի ունեցած արմատական փոփոխությունները (ֆակուլտետների, ամբիոնների, գիտխորհրդի, ուսանողական խորհրդի ձևավորման, պրոֆեսորադասախոսական նոր կազմի հավաքագրման ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, ուսանողների ավարտական քննությունների և 29 մասնագիտությունների գծով ընդունելության

1. Տես, Ա. Ավանեսյան, Արցախի պետական համալսարան, Ժամանակի պահանջով ժամանակին համաքայլ (արխիվային նյութերի ժողովածու), Ճարտարագետ, Երևան, 2011, էջ 24-25:

քննությունների, դասախոսների ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների կազմակերպման ոլորտում) և ձեռք բերած նվաճումները ամուրի հիմք դարձան նրա հետագա գործունեության համար:

Ձարգացման երկրորդ փուլում (1996-2002թթ.) Արցախի պետական համալսարանի գիտակրթական համակարգում իրականացված բարեփոխումներն էապես տարբերվում են նախորդից: Այսպես, համալսարանի գիտական կադրերի աճեցման ու նրանց աշխատանքների հրատարակության գործը դարձավ ռեկտորատի օրակարգի հարց: 1997թ. հոկտեմբերին լույս է տեսնում «ԱրՊՀ գիտական տեղեկագրի» առաջին ժողովածուն, որն իր մեջ ամփոփում է շուրջ 30-ից ավելի դասախոսների և հայցորդների գիտական հոդվածներ, ինչը և հնարավորություն տվեց հայցորդներին, այլ բուհերի ասպիրանտներին (Երևանի բուհերում սովորող) կարճ ժամանակամիջոցում պաշտպանելու թեկնածուական ատենախոսություններ: Բացի այդ, պարբերաբար լույս էր տեսնում նաև «Համալսարան» ամսաթերթը: Հետագա տարիներին համալսարանում ընդլայնվում է հրատարակչական գործը: Ուշադրության է արժանի նշել, որ 1997-98 ուստարում Արցախի պետհամալսարանին կից հիմնադրվեց վարժարան՝ ֆիզմաթ, բնագիտական և հումանիտար հոսքերով, որտեղ դասավանդում էին համալսարանի փորձառու դասախոսներ:

Վերոնշյալ ուստարում բացվել է նաև նախապատրաստական բաժին բոլոր մասնագիտությունների գծով, որի շրջանավարտներն առանց ընդունելության քննությունների ընդունվում են համալսարանի համապատասխան բաժին:

Այդ ժամանակահատվածում վերակառուցվեցին ուսումնական երկու մասնաշենքերը, ուսանողական հանրակացարանը, բացվեցին նոր ֆակուլտետներ, կազմակերպվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետ, ամբիոններ, կաթինետներ, լաբորատորիաներ, հայագիտական կենտրոն, նոր ընթերցասրահ, համակարգչային կենտրոն և այլն:

Համալսարանի կոլեկտիվի ձեռք բերած կարևոր նվաճումներից ենք համարում սեփական հրատարակչության և տպարանի

ստեղծումը, որը հնարավորություն ստեղծեց տպագրել համալսարանի «Գիտական տեղեկագիր»-ը, ուսումնական ծրագրեր, պլաններ, հաշվետվություններ, դասախոսություններ, ուսումնաօժանդակ ձեռնարկներ, ինքնուրույն և թարգմանական դասագրքեր, ատենախոսություններ, սեղմագրեր և այլ բազմաբնույթ նյութեր:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1996-2002թթ.) ԱրՊՀ-ի կառավարման մարմիններն են՝ համալսարանի խորհուրդը, համալսարանի գիտական խորհուրդը, համալսարանի ռեկտորատը և համալսարանի ռեկտորը, իսկ կառուցվածքային ստորաբաժանումները՝ ֆակուլտետները, ամբիոնները, գիտարտադրական կենտրոնը, գրադարանը, «Համալսարան» հրատարակչությունը եւ տպարանը, մագիստրատուրան, ասպիրանտուրան, նախապատրաստական բաժանմունքը, մասնագետների վերապատրաստման կենտրոնը, համակարգչային կենտրոնը եւ վարժարանը:²

Համալսարանի գիտակրթական համակարգի զարգացման երրորդ փուլում (2003-2008թթ.) նույնպես կատարվել են ժամանակի պահանջներին համահունչ փոփոխություններ:

Այսպես, 2003 թվականից սկսած՝ նորովի վերակառուցումների են ենթարկվում համալսարանի ֆակուլտետները, ընդլայնվում են արտաքին և միջբուհական կապերը՝ Հայաստանի պետական, ինչպես նաև ՌԴ բուհերի հետ: Օրինակ, 2004թ. հունիսին ԱրՊՀ-ի և Վլադիմիր քաղաքի պետհամալսարանի միջև ստորագրվեց փորձի փոխանակման նպատակով համագործակցության պայմանագիր: Ի շնորհիվ համալսարանի և սփյուռքահայ մտավորականների ձեռնարկումների՝ Արցախի պետական համալսարանն այսօր գիտակրթական կապեր ունի ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իրանի, Ֆրանսիայի և եվրոպական այլ համալսարանների հետ, որը, անշուշտ, նպաստում է համալսարանի հետագա զարգացմանը: Բուհերի միջև սերտ կապերի ստեղծմանը

2. Այդ մասին տես, ԱրՊՀ արխիվ, գործ 12, 13, 14, ինչպես նաև 2001-2002 թվականների «ԱրՊՀ հաշվետվություն» գիրքը, 2002, էջ 2-4:

մեծապես նպաստում են միջբուհական ուսանողական գիտական կոնֆերանսները: Համալսարանի «Տեղեկագիր»-ում տպագրված հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 2006-2007 ուստարում համալսարանում գործում են ֆակուլտետային շուրջ 7 ՈւԳԸ բաժանմունքներ, որոնք ընդգրկում են ավելի քան 1200 ուսանողի, 7 ֆակուլտետ՝ բանասիրական (ղեկան՝ բան.գ.թ., դոցենտ Ա. Յու. Սարգսյան), հումանիտար (ղեկան՝ հոգ.գ.թ., պրոֆեսոր Ա. Ս. Մխիթարյան), քիմկենսաբանական (ղեկան՝ քիմ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Միրզոյան), ֆիզիկամաթեմատիկական (ղեկան՝ ֆիզմաթ.գ.թ., դոցենտ Գ. Հ. Սահակյան), ճարտարագիտական (ղեկան՝ ֆիզմաթ.գ.թ., դոցենտ Ա. Բ. Թովմասյան), տնտեսաիրավաբանական (ղեկան՝ տնտ.գ.թ., դոցենտ Ռ. Յ. Մանգասարյան), ագրարային (ղեկան՝ գյուղ.գ.թ., դոցենտ Ս. Ա. Շահնազարյան), իսկ ուսումնական գործընթացն իրականացնում են 21 ամբիոններ, որոնք ղեկավարում են գիտության դոկտորներ, պրոֆեսորներ, դոցենտներ: Ի դեպ, նշենք, որ համալսարանի ստեղծման առաջին իսկ տարիներից սկսած բոլոր մասնագիտություններով հեռակա ուսուցման գործընթացն իրականացվում է համապատասխան ֆակուլտետներում ընդգրկված ակադեմիական խմբերի ձևով:³

Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, նպատակահարմար գտանք նաև համառոտակի ներկայացնել Արցախի պետական համալսարանի նոր ձևավորված ֆակուլտետների և նրա համակարգում ներառված ամբիոնների նախապատմությունները, ինչը հնարավորություն կընձեռնի պատկերացում կազմել Արցախի պետական համալսարանի գիտաուսումնական համակարգի ձևավորման ամբողջական պատմության մասին:

Այդ առթիվ հատուկ շեշտենք, որ ԼՂԴՀ (ԱրՊՀ)-ը Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդը չէ (տես հավելված 2) և ԱրՊՀ-ի գիտակրթական համակարգի ստորև բերվող մոտեցումը պայմանավորված է միայն այն հանգամանքով, որ նորաստեղծ համալսարանն իր կազմում

3. Տես, ԱրՊՀ 2007-2008թթ. տեղեկագրերը, ուր գետեղված են դեկանների, ամբոնի վարիչների հաշվետվությունները:

ընդգրկել է լուծարված ՍՊՄ-ի այն պրոֆեսորադասախոսական կադրերին, ովքեր ԱդրեսՄՀ իշխանությունների խտրական վերաբերմունքի պայմաններում ազնվորեն ու անմնացորդ նվիրումով իրականացրել են իրենց մասնագիտական կարողությունները՝ ի շահ LՂ հայ ազգաբնակչության:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: Համալսարանի առաջատար ֆակուլտետներից մեկն է: Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի հիմնադրման պահից նրա կազմում ձևավորվել է մաթեմատիկայի ֆակուլտետ (1969-1970), որն իրականացրել է մաթեմատիկա և ֆիզիկա (այսօր կիրառական մաթեմատիկա, հաշվողական ինֆորմատիկա և այլն) մասնագիտությունների գծով որակյալ կադրերի պատրաստման իր պատվավոր գործը: Մաթեմատիկայի ֆակուլտետը հիմք հանդիսացավ ապագա ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի համար: Վերջինս բացվեց 1974թ. սեպտեմբերին: Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ստեղծման պահից մինչև ՍՊՄ-ի լուծարումը ֆակուլտետի ղեկաններ են նշանակվել դոցենտներ Ժ. Ֆարսյանը, Ա. Ներսիսյանը, Ա. Սարգսյանը (ավագ դասախոս), Յու. Անաստասյանը, Վ. Ավանեսյանը (պրոֆեսոր):

1992/1993 ուստարում համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի բազայի վրա ստեղծվեցին երկու ինքնուրույն՝ ֆիզմաթ և կենսաբանության ու քիմիայի ֆակուլտետներ: Ֆիզմաթ ֆակուլտետի ղեկան է նշանակվել ֆ.մ.գ.թ., դոցենտ Ն.Ս. Բաբայանը, իսկ կենսաբանության և քիմիայի ֆակուլտետի ղեկան՝ ան. գիտ.թ., դոցենտ Ա.Բ. Աղասյանը: Հետագայում վերոհիշյալ երկու ֆակուլտետները վերամիավորվում են և անվանվում բնագիտական ֆակուլտետ: 1997 թվականի սեպտեմբերին բնագիտական ֆակուլտետը կրկին բաժանվում է երկու՝ ֆիզմաթ և կենսաքիմիական ֆակուլտետների: Ֆիզմաթ ֆակուլտետի ղեկան է նշանակվում ֆ.մ.գ.թ., դոցենտ Հ. Խաչատրյանը, իսկ կենսաքիմիական ֆակուլտետի ղեկան՝ ք.գ.թ., դոցենտ Վ. Միրզոյանը:

Ինչ խոսք, արհեստական այդ փոփոխություններն իրենց բա-

ցասական ներգործությունն են ունեցել ֆակուլտետի աշխատանքների արդյունավետ կազմակերպման վրա: Սկզբնավորման օրից մինչև 2003/2004 ուստարին ֆիզմաթ ֆակուլտետը հանրակրթական դպրոցների համար պատրաստել է մաթեմատիկայի և ֆիզիկայի 900-ից ավելի մասնագետներ: Իսկ 2002/2003 ուստարում ավելացան ռադիոֆիզիկա, սոցիալ-մշակութային ծառայություն և տուրիզմ մասնագիտությունները:

2003/2004 ուստարվա տվյալներով՝ ֆիզմաթ ֆակուլտետում սովորում է շուրջ 290 ուսանող: Շրջանավարտների մի մասը (լավագույնները) սովորում են մագիստրատուրայում: Շատերը ստացել են մագիստրոսի աստիճան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություններ և այսօր աշխատում են համալսարանում, գիտահետազոտական հիմնարկներում ու ժողովրդական տնտեսության այլ բնագավառներում:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում այժմ կա չորս ամբիոն, որոնք հիմնադրվել են տարբեր ժամանակներում: Ֆակուլտետի առաջատար ամբիոններն են մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնները: Մաթեմատիկայի ամբիոնը ներկայումս ավանափոխվել է և կոչվում է բարձրագույն մաթեմատիկայի (անալիզի) ամբիոն:

Մաթեմատիկայի ամբիոնի բազայի հիման վրա ստեղծվել է նոր՝ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն: Նորաստեղծ ամբիոնի առջև դրված են լուրջ խնդիրներ՝ նշված մասնագիտությամբ ԱրՊՀ-ում ուսման մակարդակի բարձրացման և ԼՂՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ:

Համալսարանի հիմնադրման պահից ֆիզիկայի ամբիոնը ղեկավարել են տեխ.գ.թ., դոցենտ Գ.Ս. Հարությունյանը, ֆ.մ.գ.թ. Կ.Ս. Արամյանը, տեխ. գիտ.թ., դոցենտ Ա.Ս. Ավանեսյանը: Ներկայումս ամբիոնը ղեկավարում է ֆ.մ.գ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Ալեքսանյանը: Ամբիոնին կից գործում են մեխանիկայի, մոլեկուլյար ֆիզիկայի, էլեկտրականության, օպտիկայի, միջուկային ֆիզիկայի, ռադիոէլեկտրոնիկայի արդի սարքավորումներով հագեցված ուսումնական լաբորատորիաները:

Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնները հիմնադրվել են 2002/2003 ուստարում: Ամբիոնի վարիչ է ընտրվել Ֆ.մ.գ., դոցենտ Գ.Սահակյանը:

Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի նորաստեղծ ամբիոնը հիմնադրվել է 2003 թվականին: Ամբիոնի շնորհալի դասախոսները մանկավարժական աշխատանքը հաջողությամբ զուգակցում են գիտամեթոդական աշխատանքների հետ:

Բանասիրական ֆակուլտետ: Համալսարանի առաջատար ֆակուլտետներից մեկն է, որն իր գոյության տարիների ընթացքում անցել է արգասավոր ուղի: Տարբեր ժամանակներում նա հանդես է եկել տարբեր անվանումներով՝ բանասիրական, այնուհետև՝ պատմաբանասիրական ֆակուլտետ, 1994թ. հունիսի 1-ից՝ հունանիտար: 1999-2000 ուստարում հունանիտար ֆակուլտետի բաժանման հետևանքով կազմակերպվեց նոր բանասիրական ֆակուլտետը:

Բանասիրական ֆակուլտետը համալսարանի առաջատար և բազմալեզու ֆակուլտետն է, որը թողարկում է բանասերներ, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, օտար լեզուների (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) ուսուցիչներ, լրագրողներ և թարգմանիչներ: Ավարտելուց հետո նրանք աշխատում են հանրակրթական և միջնակարգ մասնագիտական հաստատություններում, մշակույթի և մամուլի բնագավառներում:

Բանասիրական ֆակուլտետի դեմքը որոշողը նրա ամբիոններն են, որոնց կազմում աշխատում են բարձրորակ պրոֆեսորադասախոսական կադրեր:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնը ֆակուլտետի առաջատար ամբիոններից է: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կազմում գործած նույնանուն ամբիոնի կազմակերպիչն ու հիմնադիրը գիտության վաստակավոր գործիչ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանն էր, որի հետ միասին սկզբնական շրջանում աշխատել են վաստակաշատ գիտնական-մանկավարժներ Կարո Դավթյանը, Մարուսյա

Բաղրամյանը, Սոկրատ Խանյանը և ուրիշներ:

2002/2003 ուստարում հայոց լեզվի և գրականության միացյալ ամբիոնից առանձնանում է հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Բանասիրական ֆակուլտետի կազմում էր նաև ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը:

Ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնը հիմնադրվել է 1995թ.: Հետագայում (2001թ. մայիսին) միացյալ ամբիոնից առանձնացվում և ստեղծվում է նոր` օտար լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն մասնագիտությամբ) ամբիոն: Նշված երկու ամբիոններում աշխատում են 25-ից ավելի դասախոսներ: Ամբիոնը սերտ կապեր ունի Երևանի լեզվաբանության պետական համալսարանի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, արտասահմանյան մի շարք բուհերի օտար լեզուների ամբիոնների հետ: Փորձառու դասախոսներից շատերն ակտիվորեն մասնակցում են հանրապետության տարբեր միջազգային հանձնաժողովների աշխատանքներին, ստանձնում թարգմանչի պարտականություններ:

2009/2010 ուստարում բանասիրական ֆակուլտետի բազայի վրա ստեղծվում է նոր` օտար լեզուների ֆակուլտետ, որի համակարգում ներառվում են` ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուների ամբիոնները:

Հունանիտար ֆակուլտետ: Տարբեր ժամանակներում հունանիտար ֆակուլտետն ունեցել է տարբեր անվանում և կառուցվածք: Ստեփանակերտի նախկին մանկավարժական ինստիտուտի կազմում այն սկզբում անվանվել է մանկավարժության և հոգեբանության (1976-1988թթ.), այնուհետև` նախադպրոցական մանկավարժության և կենսաբանության (1988-1992թթ.), մանկավարժության և մարմնակրթության (1992-1994թթ.), 1994 թվականի հունիսի 1-ին վերափոխվել և անվանվել է հունանիտար ֆակուլտետ:

Հունանիտար ֆակուլտետը բեղմնավոր գործունեություն է ունեցել` կատարելով դպրոցների համար մանկավարժական կադ-

րերի պատրաստման իր պատվավոր գործը:

Համալսարանի հումանիտար ֆակուլտետը բազմալեզու ֆակուլտետ է՝ մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա, հոգեբանություն, հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, ռուսաց լեզու և գրականություն, իրավագիտություն, պատմություն, մարմնակրթություն, նկարչություն, գծագրություն մասնագիտությունների 4-5 ամյա ուսուցմամբ, առկա և հեռակա բաժիններով:

1999/2000 ուստարում հումանիտար ֆակուլտետից առանձնանում է բանասիրական բաժինը՝ որպես ինքնուրույն ֆակուլտետ, իսկ 2002/2003 ուստարում առանձնանում է նաև իրավաբանական բաժինը, և ձևավորվում նոր տնտեսաիրավաբանական ֆակուլտետ: Այսօր հումանիտար ֆակուլտետի կազմում ընդգրկված են պատմություն, մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա, հոգեբանություն և մանկավարժություն, զորակոչային պատրաստություն, նկարչություն և գծագրություն մասնագիտությունները՝ առկա և հեռակա բաժիններով:

Հումանիտար ֆակուլտետում այժմ գործում են 3 մասնագիտական՝ մանկավարժական և հոգեբանության, պատմության, մարմնակրթության ամբիոններ:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը Ստեփանակերտի նախկին մանկավարժական ինստիտուտի առաջին ամբիոններից մեկն է, որը հիմնադրվել է 1974թ. սեպտեմբերի 1-ին: Առաջին վարիչն էր դոցենտ Ա.Ներսիսյանը: Ամբիոնի դասախոսների հիմնական գիտական ուղղություններն են՝ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմություն, մանկավարժության արդի հիմնահարցեր, հոգեբանության արդի հիմնահարցեր, արցախահայ դպրոցի մանկավարժական մտքի պատմություն, արցախահայության հոգեբանությունը էքստրեմալ պայմաններում և այլն:

Ամբիոնի դասախոսները հրատարակել են նաև գիտական աշխատություններ, պարբերաբար դասախոսություններ են կարդում ուսուցիչների, ծնողների համար, ակտիվ մասնակցում հանրապետության մանկավարժական կյանքին:

Ամբիոնին կից գործում է հայագիտական կենտրոն: Ամբիոնի փորձառու դասախոսներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ուսանողների հետ տարվող քաղաքական, կուլտուր-դաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև հանրապետության ներքաղաքական կյանքին:

Մանկավարժական-մեթոդական աշխատանքին զուգընթաց ամբիոնի անդամները հրատարակել են նաև մենագրություններ, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, հանդես եկել գիտական հաղորդումներով ու զեկուցումներով ինչպես ֆակուլտետի, այնպես էլ համալսարանի գիտական կոնֆերանսներում, միջբուհական գիտաժողովներում:

Մարմնակրթության ամբիոնը կազմակերպվել է 1992/1993 ուստարում: Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել ավագ դասախոս Ս.Ա.Հարությունյանը: Ամբիոնի դասախոսներն իրենց ամենօրյա աշխատանքներին զուգընթաց ուսանողների հետ միասին ակտիվորեն մասնակցում են միջբուհական սպարտակիադաներին, ԼՂՀ-ում և ՀՀ-ում անցկացվող մարզական տարբեր տեսակների մրցումներին:

2009/2010 ուստարում հումանիտար ֆակուլտետի բազայի վրա ձևավորվել է նոր՝ պատմական ֆակուլտետ, որի համակարգում ներառված են՝ պատմության, փիլիսոփայության, քաղաքագիտության ամբիոնները:

Քիմիայի և կենսաբանության ֆակուլտետ: Այն ստեղծվել է 1992/1993 ուսումնական տարում, սակայն 1994 թվականի հունիսի 1-ին այն վերամիավորվել է ֆիզմաթ ֆակուլտետին և կոչվել բնագիտական ֆակուլտետ: 1996/1997 ուստարվա սկզբին այդ վերակազմավորումներից հետո ֆակուլտետը վերստին առանձնացվում է և անվանվում քիմիայի ու կենսաբանության:

Ներկայումս քիմիայի և կենսաբանության ֆակուլտետն իրականացնում է ուսուցում՝ քիմիա, կենսաբանություն, ատամնաբուժություն և դեղագիտություն մասնագիտությունների գծով: Ֆակուլտետն ապահովված է գիտամանկավարժական բարձրորակ մասնագետներով:

Ֆակուլտետի կազմի մեջ մտնում են քիմիայի, կենսաբանու-

թյան, բժշկության, իսկ հետագայում՝ ատամնաբուժության ամբիոնները: Գործում է քիմիայի և կենսաբանության 10 լաբորատորիա, որտեղ ուսումնասիրություններ են կատարում դասախոսները, մագիստրանտները, ասպիրանտները, ուսանողները:

Քիմիայի ամբիոնը՝ որպես առանձին միավոր, գոյություն ունի 1993 թվականից: Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել ք.գ.թ. Օ.Ա. Քամայանը: Կատարվող գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ դեղաբույսերից եթերայուղերի ստացումը, ոչ սպիտակուցային L և ճ-ջ ամիաթթուների ասիմետրիկ սինթեզը, LՂՀ-ի տարածքում հանքային ջրերի քիմիական հետազոտությունը և այլն:

Կենսաբանության ամբիոնը ձևավորվել է 1993/1994 ուստարում:

Այդ երկու ամբիոնները գիտական սերտ կապ են պահպանում Երևանի պետական համալսարանի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և այլ բուհերի կենսաբանության ամբիոնների հետ, պարբերաբար կազմակերպում ներհամալսարանական և միջբուհական գիտաժողովներ, որոնց մասնակցում էին ինչպես բուհի դասախոսներն ու ասպիրանտները, այնպես էլ հանրակրթական դպրոցի կենսաբանության և քիմիայի ուսուցիչները:

Բժշկության ամբիոնն իր աշխատանքային գործունեությունն իրականացրել է 1994 թվականից մինչև 1999 թվականը: Այդ տարիներին ամբիոնը ղեկավարում էր ք.գ.թ. Է. Ի. Ղուկասյանը: Ամբիոնի հիմնական դասախոսները հանրապետության տարբեր բուժօգնականների բժիշկներն էին: Բացի ամբիոնի հաստիքային դասախոսներից, ամբիոնում ժամավճարային հիմունքներով ընդգրկված էին նաև Հայաստանի Ս. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առաջատար պրոֆեսորներ և դոցենտներ:

Ստոմատոլոգիայի (ատամնաբուժության) ամբիոնը հիմնվել է 2001 թվականին: Նորաստեղծ ամբիոնում ընդգրկված են բարձր որակավորում ունեցող երիտասարդ դասախոսներ, ատամնատեխնիկներ, դեղագործներ: Ամբիոնի դասախոսներն իրենց գի-

տահետազոտական աշխատանքները կատարում են հանրապետության հիվանդանոցներում, համալսարանի լաբորատորիաներում:

Տնտեսաիրավաբանական ֆակուլտետ: Տարբեր ժամանակներում ֆակուլտետը հանդես է եկել տարբեր անվանումներով և ունեցել է տարբեր կառուցվածք: 1992/1993 ուստարում այն կոչվել է Ժողովատեսության ֆակուլտետ: Այնուհետև ֆակուլտետն անվանվել է ճարտարագիտատնտեսագիտական: 2002/2003 ուստարում ֆակուլտետից առանձնանում է ճարտարագիտականը՝ որպես ինքնուրույն ֆակուլտետ, իսկ հիւնամհիտար ֆակուլտետից առանձնացվում է իրավաբանական բաժինը և կազմավորվում նոր՝ տնտեսաիրավաբանական ֆակուլտետ, ղեկանի պարտականությունները ստանձնում է տնտ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյանը, իսկ ճարտարագիտական ֆակուլտետինը՝ ֆ.գ.թ., դոցենտ Ա. Բ. Թովմասյանը:

Ֆակուլտետն ուսուցում իրականացնում է տնտեսագիտություն, ֆինանսներ և վարկ, ագրարային սեկտորի տնտեսագիտություն և կառավարում, հաշվապահական հաշվառում և աուդիտ ու իրավաբանություն մասնագիտությունների գծով:

Տնտեսագիտության ամբիոնը հիմնադրվել է 1992/1993 ուստարում: Մեկ տասնամյակից ավելի գոյության ընթացքում ամբիոնը զգալիորեն աճել է. նախկին՝ 5 հոգուց բաղկացած, փոքր ամբիոնից այժմ վերածվել է 15 տարբեր որակավորման աշխատող ունեցող ուսումնական միավորի: Ամբիոնը հաջողությամբ կազմակերպում է տնտեսագիտության ուսուցման գործը համալսարանի մի շարք մասնագիտացումներով համարյա բոլոր ֆակուլտետներում:

Փիլիսոփայության ամբիոնը գործում է մայր բուհի հիմնադրման օրվանից: Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել փ.գ.թ., դոցենտ Շ.Աբրահամյանը: Նշենք, որ 1984-1988թթ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի բազայի վրա ստեղծվել է նաև քաղաքատնտեսության ամբիոն, որի վարիչն էր տնտ.գ.թ., դոցենտ Ե. Բաղդասարյանը, այնուհետև այդ երկու ամբիոնները կրկին միացվել են, և ստեղծվել է համա-

համալսարանական փիլիսոփայության ամբիոն, որն այժմ վերանվանվել է փիլիսոփայության և իրավունքի ամբիոն:

Ճարտարագիտական ֆակուլտետը հիմնադրվել է 2002/2003 ուստարում: Ֆակուլտետի առաջին ղեկան է նշանակվել ֆ.գ.թ., դոցենտ Ա. Բ. Թովմասյանը: Ֆակուլտետի առանձնացումը բխում էր բարձրորակ ճարտարագետ մասնագետների պատրաստման, ինչպես նաև ուսումնամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից: Ֆակուլտետի շրջանավարտները մասնագիտանում են ավտոմոբիլային ճանապարհների շինարարություն, արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն, ավտոմոբիլային տրանսպորտի շահագործման և կառավարման, հիդրոէլեկտրատեղակայի ուղղություններով: Ֆակուլտետի կազմում ընդգրկված են ճարտարագիտության և քաղաքաշինության ամբիոնները:

Ճարտարագիտության ամբիոնը ստեղծվել է 1992-1993 ուստարում: Ամբիոնի վարիչ է նշանակվել տեխ. գ.թ., դոցենտ Ս.Յ. Բաբայանը: 1976-1988 թվականներին այդ ամբիոնը կոչվում էր ընդհանուր տեխնիկական առարկաների (ԸՏԱ) ամբիոն: Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներում, բացի դասախոսներից, ընդգրկված են նաև հանրապետության կառավարման մարմիններում աշխատող բարձր որակավորման մասնագետներ:

Ամբիոնի դասախոսների ուժերով ստեղծվել են երեք մասնագիտական՝ մեխանիկայի, ավտոմոբիլային և ընդհանուր տեխնիկական առարկաների, գծագրային, գծագրական երկրաչափության, չափագիտության և էլեկտրատեխնիկայի կաբինետներ:

Գիտամանկավարժական եռանդուն աշխատանքի շնորհիվ ամբիոնի պրոֆեսորներ Վ.Ավանեսյանը, Կ Աղամյանը, դոցենտ Ա.Ամիրջանյանը հրատարակել են «Նյութերի դիմադրություն», «Հիդրավլիկա», առարկաների հայերեն և ռուսերեն լեզուներով դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, ցուցումներ կուրսային և լաբորատոր աշխատանքների կատարման համար:

Քաղաքաշինության ամբիոնը կազմակերպվել է 1998/1999 ու-

սուվնական տարում՝ անջատվելով ճարտարագիտության ամբի-
ոնից: Ամբիոնի կողմից կատարվում են գիտահետազոտական
թեմատիկ աշխատանքներ, որոնց ներգրավված են ինչպես ամ-
բիոնի աշխատակիցները, այնպես էլ բարձրակարգ մասնագետ-
ներ ԼՂՀ համապատասխան հիմնարկներից:

Ագրարային ֆակուլտետը ստեղծվել է 2001/2002 ուստարում՝
առանձնանալով ճարտարագիտական ֆակուլտետից, որպես
ինքնուրույն ֆակուլտետ: Ագրարային ֆակուլտետի առաջին
ղեկան է աշանակվել գ.գ. թ., դոցենտ Ս.Ա. Շահնազարյանը:
ԱրՊՀ-ի ֆակուլտետների համակարգում ագրարայինն ամենա-
փոքրն է դասախոսական և ուսուցման կազմով:

Ֆակուլտետը կադրեր է պատրաստում ագրոնոմիայի, անաս-
նաբուժության, խմորման տեխնոլոգիայի և զինեզործության,
անտառային ճարտարագիտության ու հողաշինության մասնա-
գիտությունների ուղղությամբ: Ուսուցման առարկաներից հետո շրջա-
նավարտներն աշխատում են գյուղատնտեսության տարբեր
բնագավառներում, ինչպես նաև հանրապետության կառավար-
ման համակարգում:

Ֆակուլտետի կազմի մեջ մտնում է միայն **գյուղատնտեսու-
թյան ամբիոնը**: Ամբիոնի վարիչ է ընտրվել գ.գ. դոկտոր, պրոֆե-
սոր Գ.Ա. Չակոբյանը: Ամբիոնին կից ստեղծված է անասնաբու-
ժական կաբինետ և ագրոքիմիական լաբորատորիա: Փորձառու
դասախոսների կողմից հայերեն և ռուսերեն լեզուներով հրա-
տարակված են մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ՝ հողա-
գործության, անասնապահության, անասնաբուժության, բան-
ջարաբուժության և այլ թեմաների ուղղությամբ:

Ամբիոնը սերտ կապեր է հաստատել Հայաստանի գյուղատն-
տեսական ակադեմիայի (ներկայումս՝ Հայաստանի ագրարային
համալսարան) հետ:

Ամբիոնի ուսուցման գիտական աշխատանքների արդյունա-
վետ կազմակերպման համար անգնահատելի նշանակություն
ունի համալսարանի՝ 2003 թվականից առանձնացված ուսուց-
ման փորձնական հողամասը, որը զբաղեցնում է շուրջ 15 հեկտար
մակերես: Ուսուցման փորձնական հողամասում արտադրական

պրակտիկա են անցնում ֆակուլտետի բոլոր ուսանողները:

Այսօր ԱրՊՀ-ի բոլոր ֆակուլտետներին կից ստեղծված են գիտական և գիտաարտադրական կենտրոններ իրենց համապատասխան մասնագիտակցված ամբիոնների ընդգրկումով, որտեղ, տարեկան անհատական պլանների համաձայն, պրոֆեսորադասախոսական կազմն իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտություններ՝ գիտության և մանկավարժության ոլորտներում:

Հարկ է նշել, որ համաձայն գիտահետազոտական աշխատանքների պլանի՝ միայն 2001/2002 ուստարում համալսարանի դասախոսները հրատարակել են 130 գիտական հոդված, (3 մենագրություն, 12 դասագիրք և 9 ուսումնական ձեռնարկ), ստեղծել հարուստ նյութատեխնիկական բազա, 65500 միավոր գրքային ֆոնդով գաղարան (հիմնադրվել է 1969թ.), ընթերցասրահ, մարզադահլիճ և երկու մարզահրապարակ, գիտաարտադրական և համակարգչային կենտրոններ, երկու լինգոֆոնային սրահներ, ձևավորված են մասնագիտական շուրջ 11 լաբորատորիա և 13 կաբինետ, գործում են արցախագիտության կենտրոնը, համալսարանի տպարանը: Համալսարան մուտք են գործել նոր տեխնոլոգիաներ, ի դեմս՝ համակարգչային կենտրոնի, որը բաղկացած է երեք սրահներից՝ շուրջ 25 համակարգչով⁴: Կենտրոնը միացված է միջազգային ինտերնետ կապին, գործում է ներքին լոկալ ցանց: Նշված կենտրոնում իրենց մասնագիտական ունակություններն են կատարելագործում ինչպես կիրառական մաթեմատիկայի, մաթեմատիկա և ինֆորմատիկայի, տնտեսագիտության և այլ ֆակուլտետների ուսանողներ, այնպես էլ մագիստրանտներ և դասախոսներ:

Արցախի պետական համալսարանի զարգացման նոր փուլում (2008-2011թթ.) լուրջ փոփոխություններ են կատարվել գի-

4. Վերոնշյալ փաստագրական տվյալների մասին տես. ԱրՊՀ արխիվ գ. 4, 5, 6, 7, 8, 9, ինչպես նաև 1999-2003թթ. հրապարակված տեղեկագրերում՝ ներառված դեկանների ամբիոնի վարիչների հաշվետվությունները, Զ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, նշվ.աշխ.էջ 452, 456, Ա. Ավանեսյանի, Արցախի գիտակրթական համակարգի կայացման ընթացքը և զարգացման առանձնահատկությունները, Ստեփանակերտ, 2011 և այլն:

տակրթական համակարգում: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի (2001թ.) համաձայն՝ այսօր համալսարանում գործում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) համակարգ:

Առաջին աստիճանի բակալավրիատի ուսումնական ծրագրերը, 4-ամյա ուսումնառությամբ, կազմակերպված են ըստ մասնագիտությունների և իրականացվում են 32 բնագիտական և հումանիտար ուղղություններով: Երկրորդ աստիճանի՝ մագիստրոսական ուսումնառության երկամյա ծրագրերը կազմված են ըստ 15 տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների: Երրորդ աստիճանը (ասպիրանտուրա) նպատակաուղղված է հումանիտար և բնագիտական տարբեր մասնագիտությունների զօժով որակյալ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը:

Բոլոր աստիճանների համար նախատեսված կրթական ծրագրերը ներառում են հանրակրթական (պարտադիր և ընտրովի), ընդհանուր և հատուկ մասնագիտական, տեսական ու գործնական բնույթի դասընթացներ:

Բակալավրիատի ծրագրում ընդգրկված են հումանիտար, սոցիալ-տնտեսական, բնագիտական, հատուկ և ընդհանուր մասնագիտական առարկաներ: Ավարտելով այս աստիճանը՝ ուսանողները ստանում են այս կամ այն գիտական առարկայի բակալավրի դիպլոմ: Այսինքն՝ բակալավրիատի մակարդակում շնորհվում է մասնագիտական որակավորում: Ուսուցման երկրորդ մակարդակում մեկ տարվա ընթացքում սովորում են մագիստրատուրայի ծրագրով և ստանում, մագիստրոսի դիպլոմ՝ որևէ մասնագիտական ուղղությամբ⁵:

Համալսարանում ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը բազմաբնույթ են՝ դասախոսություն, գործնական լաբորատոր պարապմունքներ, սեմինարներ, կուրսային (դասըն-

5. Տե՛ս, Ա.Ղուկասյան, Լ.Ասատրյան, Ա.Կարապետյան, Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Երևան, 2005, էջ 31: զարգացման առանձնահատկությունները, Ստեփանակերտ, 2011 և այլն:

թացային), ուսանողների ինքնուրույն (անհատական), ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզերի պաշտպանություն, մանկավարժական փորձուսուցման կազմակերպում և այլն:

Արցախի պետական համալսարանն այսօր ունի 7 ֆակուլտետ, 20-ից ավելի ամբիոն, 280 հոգուց բաղկացած պրոֆեսորադասախոսական կազմ, գիտության 6 դոկտոր և պրոֆեսոր, գիտության 67 թեկնածու, դոցենտ, 205 ասիստենտ և դասախոս: Համալսարանում սովորում է մոտ 4 հազար ուսանող, որոնցից 962-ը՝ հեռակա, մագիստրատուրայում 135, ասպիրանտուրայում՝ 34:

Արցախի պետական համալսարանի գործունեության ամբողջ ժամանակաընթացքում ընդունվել է 9372 եւ ավարտել 5498 ուսանող (տես՝ աղ-ներ.12 և 13):

Աղյուսակ 12

Արցախի պետական համալսարան ընդունված ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

Գ/Դ	Մասնագիտությունը	Տարեթիվը													Ընդամենը		
		1983	1984	1985	1986	1987	1988	1989	2000	2001	2002	2003	2004	2005		2006	
1.	Անգլ. լեզու եւ գերմ. լեզու														18	28	46
2.	Անգլ. լեզու եւ ֆրանս. լեզու														37	30	67
3.	Ռուսաց լեզու եւ գրական.	10	12	14	10	14	12	30	59	68	35	65	49	69	65	512	
4.	Հայոց լեզու եւ գրականություն	16	19	9	16	24	18	35	74	83	61	71	70	69	63	624	
5.	Լրագրություն						9	18	25	48	36	13	23	22	17	211	
6.	Օտար լեզու	20	25													45	
7.	Անգլերեն լեզու եւ գրականություն			40	20	62	28	51	76	71	41	45	42			476	
8.	Գերմաներեն լեզու			5	8	6	5			9	14	9	5			61	
9.	Ֆրանսերեն լեզու									13	9	10				32	
10.	Պատմություն		15	11	12	18	19	37	64	67	54	55	67	66	63	548	
11.	Տարր կոր. մանկավարժ. եւ մեթոդիկա	17	9			18	22	53	20	75	53	63	51	66	58	505	

12.	Աերապղծատ և գծագրություն		10		10	5	1	11	11	16	11	9	11	8	10	113
13.	Քաղաքագիտություն													10	27	37
14.	Լճեր	78	26			15	20	64	95	34	46	82	45	102	86	603
15.	Նախադր. մանկավարժ. և հրգեղանություն		10		6	8	9	17	22	26	15		8	12	16	149
16.	Իրավագիտություն		15	15	23	20	10	16	113	104	50	29	29	35	31	400
17.	Ագրարային արտադր. տնտես. և կառավարում		10							11	12	19	20	29	29	130
18.	Ֆինանսներ և վարկ	11	10							35	27	34	33	44	43	237
19.	Հաշվապ. հաշվառ. և առևտու	16	10							22	36	34	65	74	70	327
20.	Սոց. մշակ. և գրաստություն									11	11	11	19	9	14	75
21.	Տնտեսագիտություն			30	36	26	25	49	59	37						262
22.	Աշխարհագրություն	15	15	8	7	5	8	10	33	45	34	34	45	42	21	322
23.	Ոստիոնիչիկա և էկոլոգիկա							7	12	16	1				11	47
24.	Ֆիզիկա և աստղագիտություն	10	10		6		10	5	14	9	21	24	23	8	20	160
25.	Կիրառ. մաթեմ. և ինժեներություն	15	6				11	20	28	39	30	48	33	58	44	332
26.	Մաթեմատիկա		12	8	7	7	10	4	29	19	24	38	57	28	19	262
27.	Ոստիոնիչիկա և կապ	16	12		10											38
28.	Պեղագրական քիմիա							32	37	27	21	23	28	33	29	230
29.	Ատոմատոլոգիա					9	12	25	35	25	21	25	22	32	35	241
30.	Զինամեխանություն	15		18						25	9	35	29	29	36	196
31.	Զինա		9		11	5	10	10	23	12	19	31	20	24	12	186
32.	Կենսաբանություն		10		5	9	13	19	35	26	26	33	33	34	30	273
33.	Պեղագիտություն					5										5
34.	Բուժական գրք	22		25	36	3										86
35.	Մանկագրություն					8										8
36.	Խմորան արտ. տեխ. և զինեղ.								15	24	11	20	8	27	14	119
37.	Սնտես. տեխ. և բն. կանաչ.									16	5				6	32
38.	Անասնաբուծություն	10	10			4	2	11	11	13	8	21	33	30	12	165
39.	Ագրոնոմիա	10	10					6	8	5	12	14	30	40	36	204
40.	Արդյունաբ. և քաղաք. շինար.		10	7	21	10	21	43	36	33	35	28	20	18	24	306
41.	Փոփոխոր. կազմ. և կառավ.					18	9	37	37	39	39	64	40	53	48	384
42.	Ներքն արդյունաբ. տեխնոլոգ.		11													11
43.	Ավտոմոմոնաբար. և օդան. շին.	5	6													11
44.	Գյուղատնտ. մեքենայացում	10	12					6	6							34
45.	Տարագրագիտություն									5						5
46.	Ֆիզիկա և քիմիա									12	11					23
47.	Անասնաբուծություն	4														4
48.	Սոցիալագիտություն	10														10
49.	Ջրամ. և քր. տնտ. սոց. օգտ.	5														5
50.	Կաթի և կաթնամ. արտ. տեխ.	5														5
51.	Առևտու և հառ. սնն. էլ. և կառ.	10														10
52.	Փինագրության տեխնոլոգիա	7														7
53.	Գյուղ. ճյուղ. տնտ. և կառավ.	11														11
Ը Ն Դ Ա Ս Ե Ն Ը		348	305	190	244	299	290	618	974	1128	840	1003	968	1122	1044	9372

Արցախի պետական համալսարանն ավարտած ուսանողների քվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

№	Մասնագիտությունը	Տարեթիվը														ԸՄԿԻՑԳ	
		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007		
1.	Անգլ. լեզու եւ գերմ. լեզու.												32				32
2.	Ռուսաց լեզու եւ գրական.	23			29	10	8	26	17	13	11	37	25	30	34	263	
3.	Հայոց լեզու եւ գրականություն	39	58	40	44	11	25	16	26	21	20	57	19	35	55	466	
4.	Լրագրություն									13	16	19		25	33	106	
5.	Անգլերեն լեզու եւ գրականություն				14	18	62	34	44		40	67	8	45	39	371	
6.	Գերմաներեն լեզու.				5	2	7	6	6					3	11	40	
7.	Ֆրանսերեն լեզու.													10	9	19	
8.	Պատմություն	22	18	35	23	17	23	15	15	17	17	41	11	23	49	326	
9.	Տարր կրթ. մանկավարժ. եւ մեթոդիկա	3	5	30	16	7	1	1	14	24	35	52	53	49	56	346	
10.	Կերպարվեստ եւ գծագրություն						8		6	3	5	11	16	6	9	64	
11.	ԼՃԳ			37	37	24	15		7	2	10	46	58	47	52	334	
12.	Նախադպր. մանկավարժ. եւ հոգեբանություն	64	53	30			9	5	9	11	9	15	7	13	12	237	
13.	Իրավագիտություն							36	37	38			37	17	56	222	
14.	Ազգային արտադր. տնտես. եւ կառավարում			8	8	9	13							2	11	51	
15.	Ֆինանսներ եւ վարկ			5	11	10	12							24	34	96	
16.	Հաշվապ. հաշվառ. եւ ատոլիտ				17	16	9							15	14	71	
17.	Սոց. մշակ. եւ զբոսաշրջություն													9	9	18	
18.	Տնտեսագիտություն		16	20	1	8	33	43	33	37	45	40	18			294	
19.	Աշխարհագրություն	2	5	25	19	14	25	9	5	7	6	14	11	12	42	196	
20.	Ռադիոֆիզիկա եւ էլեկտրոնիկա							8			1	5		3	8	25	
21.	Ֆիզիկա եւ աստղագիտություն		20		13	7		7		8	7	5	8	5	7	87	
22.	Կիրառ. մաթեմ. եւ ինֆորմատ.		30		13	6	5			6	22	15	2	12	37	148	
23.	Մաթեմատիկա	19	16	26	8	16	11	23	10	7	18	13	10	17	17	211	
24.	Ռադիոէլեկտրոնիկա եւ կապ			21	10	8										39	
25.	Գյուղատնտեսական քիմիա										6	10	33	28	20	97	

26. Ատոմատություն										29	18	25	16	13	101
27. Քիմիա/կենսաբանություն		34	20	39	17		16	1			18	1		27	175
28. Քիմիա						7	9	7	7	9		4	7	17	67
29. Կենսաբանություն						12	10	10	9	16	25	19	20	24	145
30. Բուժական գործ	26														26
31. Խնդրանք արտ. տեխ. և զինվ.		5	7	5	10							7	5	18	57
32. Անաստ. տնտ. և բն. կանաչ.													8		8
33. Անասնաբուծություն			8	3	8				3		10	10		9	51
34. Ագրոնոմիա		8	6		12		9		5		4	5	6	1	56
35. Այլուր. Գաղ. և քաղաք. շինար.			16	13					30	9	12	26	7	9	161
36. Փոխադր. կազմ. և կառավ.								5		7	23	10	8	30	83
37. Ինյուժ. և կոնստր. ճարտ.														6	6
38. Ավտ. ճանաչ. և օդան. շինար.			3	4	5										12
39. Գյուղատնտես. մեքենայացում			11	4	5	9					1	1	2		33
40. Գարնաբուծություն								5	13						18
41. Անասնաբուծություն			3												3
42. Ազգ. դպր. տես. լեզու և գրակ.		22	44		6										72
43. Առևտր. և հաս. սն. էլ. և կառ.	10	10	9	8	9	13									59
44. Մոլվալ-տնտ. սղանախորում	10	3	20												33
45. Կաշվե իրերի ցախ. և տեխ.			10	3	1										14
46. Կարի արտ. տեխնոլոգ.			45	12	15										72
47. Կարի և կարնամբ. արտ. տեխ.			8	5											13
48. Չինվարտ. տեխնոլոգիա			11												11
49. ԸՏԱ	18	5	21												44
50. Գյուղ. ճյուղ. տնտ. և կառավար.				20											20
ԸՆԳՈՍՆԵՆԸ	228	308	539	364	271	307	275	287	285	341	572	405	510	793	5483

2007/2008 ուսումնական տարին Արցախի պետական համալսարանն ուսումնական գործընթացն սկսել է՝ իր կազմում ունենալով 366 դասախոս, որոնցից՝ պրոֆեսոր – 17, դոցենտ – 73, ավագ դասախոս – 62, դասախոս – 80, ասիստենտ – 126 (տես՝ աղ. 14):

Ստորել ներկայացնում ենք 2007-2008 թվականների ԱրՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ ամբիոնների (տես՝ աղ.14)⁶:

Աղյուսակ 14

2007/2008 ուստարում ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ ամբիոնների

Հ/Կ	Ամբիոններ	Աշխատող ընդ. քանակը	որից				գիտ. առտ.		տարակարգ				
			Հիմնական	Հասնառելի	Պայմանագր.	ժամկետ	գ/ի	գ/թ	Պրոֆեսոր	Ուղեցնու	Հնչյունաբանական	Ուսասխոս	Ամբիոններ
1.	Հ. լ. եւ նրա դաս. մեթոդ.	18	17	-	-	1	-	11	2	7	3	5	1
2.	Չրալան. եւ ժուռն	20	15	-	-	5	1	8	1	4	4	4	7
3.	Ուու. լ. եւ Չրալ.	20	19	1	-	-	-	4	-	6	4	8	2
4.	Անգլ. լեզու	23	21	1	-	1	-	1	-	2	8	10	3
5.	Օտար լեզու	12	9	-	-	3	-	-	-	1	3	3	5
6.	Մանկ. եւ հոգեբ.	20	12	2	-	6	1	6	2	6	1	5	6
7.	Պատմություն	20	11	4	-	5	1	7	2	4	6	3	4
8.	ՆԶՊ	16	12	-	-	4	-	-	-	4	4	2	6
9.	Մաթեմատիկա	14	9	-	-	5	-	4	1	2	3	3	1
10.	Կիրառ. մաթեմ.	13	7	3	2	1	1	2	1	3	1	4	4
11.	Մաթ. եւ բնագ. առ. դ.մ.	12	7	1	-	4	-	4	1	2	2	3	4
12.	Ֆիզիկա	9	6	-	1	2	-	6	-	6	3	-	-
13.	Աշխարհագրություն	11	6	-	-	5	-	2	-	1	1	2	7
14.	Քիմիա	13	10	1	-	2	-	5	1	4	3	3	2
15.	Կենսաբանություն	16	12	-	-	4	1	9	1	5	4	1	5
16.	Ստոնատոլոգիա	28	5	-	-	23	-	2	-	2	1	1	24
17.	Տնտեսագիտություն	37	17	-	-	20	-	4	-	3	3	8	20
18.	Փիլիսոփ. եւ իրավ.	24	9	-	-	15	1	4	2	1	1	10	10

6. Վերոնշյալ աղյուսակները կազմվել են հիմնականում ԱրՊՀ արխիվային տվյալների՝ գ.10,12,13,14,15,16 և ԼՂՀ ԿԳ նախարարության տեղեկատվում, ընդգրկված նյութերի և այլ աղբյուրների հիման վրա:

19.	Քաղաքաշինություն	12	5	-	-	7	-	1	-	1	1	2	8
20.	Ճարտարագիտություն	14	14	-	-	-	2	5	2	5	5	1	1
21.	Գյուղատնտեսություն	14	9	1	-	4	1	5	1	4	1	2	6
Ընդամենը		36	29	1	3	11	9	9	1	7	6	3	15

Արցախի պետական համալսարանի կառավարման բարձրագույն մարմինը համալսարանի խորհուրդն է, որի անդամների թիվը չի գերազանցում 100-ը, իսկ այժմ` 27-ը և ընտրվում է 5 տարին մեկ:

Համալսարանում գործում է գիտական խորհուրդ` ռեկտորի գլխավորությամբ, բաղկացած երեսունինը անդամից, որը համալսարանի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող մարմին է: Համալսարանի գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ռեկտորը (նախագահ), կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչը, պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը, ուսումնական վարչության պետը, ֆակուլտետների ղեկավարները, ուսանողական միության վարչության նախագահը, ինչպես նաև, ռեկտորի առաջարկությամբ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, համալսարանի դասախոսներ, գիտաշխատողներ և այլն:

Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից գործող խորհրդակցական մարմին է: Համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր ընձեռած լիազորությունների սահմաններում քննարկում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը և կայացնում որոշումներ, որոնք հաստատվում են ռեկտորի հրամանով: Համալսարանի ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը, ֆակուլտետների ղեկավարները, ուսանողական միության վարչության նախագահը:

Համալսարանի գործունեությունը ղեկավարում է ռեկտորն իր իրավասության սահմաններում` համալսարանի կանոնադրությանը համապատասխան: Ռեկտորը գործում է միանձնյա և լրիվ

պատասխանատվություն է կրում համալսարանի աշխատանքների համար:

ԱրՊՀ-ում, բացի ռեկտորից, գործում են բնագիտական և հումանիտար մասնագիտությունների գծով պրոռեկտորները, վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորը և գիտքարտուղարը:

Վերոհիշյալ շատ համառոտակի ակնարկից էլ դժվար չէ եզրակացնել, որ արգասավոր գիտամանկավարժական և գիտահետազոտական աշխատանքի փորձ կուտակած Արցախի պետական համալսարանը՝ նրա ղեկավարությունը, ղեկանատները, ամբիոնները, պրոֆեսորադասախոսական կազմը շնորհալի գործ կատարեցին համալսարանի հիմնադրման ձևավորման և հետագա զարգացման ասպարեզում և այսօր էլ իրենց հնարավորությունների առավելագույնն են ներդնում հայոց արցախական աշխարհում գիտակրթական այդ օջախի ամրապնդման ու զարգացման գործում:

Արցախի ոչ պետական բուհերը

Արցախի գիտակրթական համակարգի ամբողջական պատմության մասին պատկերացում ունենալու միտումով էլ նպատակահարմար գտանք համառոտակի լուսաբանել նաև հանրապետությունում գործող ոչ պետական բուհերի գիտամանկավարժական գործունեության համառոտ պատմությունը:

Արցախի Հանրապետությունում գործող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները ստեղծվել են «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան և լիցենզավորված են: Առանձին բաժիններում համառոտակի կներկայացվի ոչ պետական բուհերի ստեղծման նախադրյալներն ու իրավական հիմքերը, նրանցում իրականացվող ուսումնական գործընթացը, կառուցվածքը, ուսուցանվող մասնագիտությունները պրոֆեսորադասախոսական կազմը, բուհերի գործունեության ողջ ժամանակահատվածում տարբեր մասնագիտություններով թողարկած բարձր որակավորման մասնագետների քանակը:

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը հիմնադրվել է 1996թ. սեպտեմբերի 27-ին ԼՂՀ կրթության նախարարության թիվ 13 լիցենզիայի համաձայն: 2006 թվի օգոստոսի 31-ի թիվ 12 հրամանով պետական հավատարմագրում է ստացել:

2011/2012 ուստարվանից 22.06.2011. թիվ 119/Մ հրամանով իրականացնում է մագիստրոսական կրթական ծրագիր:

Ինստիտուտի հիմնադիրն է ՀՀ նկարիչների միության անդամ կերպարվեստի դոցենտ Յու. Հովհաննիսյանը: Ուսուցումը կազմակերպված է մոդելավորում, միջավայրի դիզայն եւ կերամիկա մասնագիտությունների գծով: 2001/2002 ուստարվանից ինստիտուտը հիմնականում անցել է միջավայրի և հագուստի ձևավորման ուսուցման: Ուսումնական գործընթացն ինստիտուտում սկսվել է 1996/97 ուսումնական տարում: Գործունեության տարիներին ինստիտուտ է ընդունվել 261 և ավարտել 168 ուսանող:

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ ըստ տարիների ու մասնագիտությունների ընդունվել եւ ավարտել են հետևյալ թվով ուսանողներ (տես՝ աղ-ներ. 15 եւ 16):

Աղյուսակ 15

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ ընդունված ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>1996-1997</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>2007-2008</i>
<i>Մասնագիտություններ</i>												
Հագուստի մոդելավորում	22	7	8	5	5	7	9	8	16	2		7
Միջավայրի դիզայն	11		7	2	5	1	4	9	11	4	8	11
Խեցեգործություն		10										
ԸՆԴԱՄԵՆԸ	33	17	15	7	10	8	13	17	27	6	8	18

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտն ավարտած ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>2008-2009</i>	<i>2009-2010</i>	<i>2010-2011</i>	<i>2011-2012</i>	<i>2011-2012 (մագ)</i>	<i>2012-2013</i>	<i>2012-2013 (մագ)</i>	<i>Ընդամուր</i>
<i>Մասնագիտություններ</i>								
Հագուստի մոդելավորում	2	6	1		1	3	2	
Միջավայրի դիզայն	8	6	10	3	6	12	1	
Խեցեգործություն								
ԸՆԴԱՄԵՆԸ	10	12	11	3	7	15	3	240

2006/2007 ուստարվանից տարբեր ժամանակներում համալսարանում աշխատել են հետեւյալ դասախոսները՝ Ջաքարյան Լենորդ Արշավիրի – ԼՂՅ Նկարիչների միության նախագահ, ուս. մասի վարիչ, գծանկարի, գունանկարի դասախոս, Սարգսյան Գեորգ Նիկոլայի - ՀՀ դիզայներների միության անդամ, դիզայնի դասախոս, Գասպարյան Լուսինե Սուրենի – ՀՀ դիզայներների միության անդամ, արվեստի պատմության դասախոս, Մելիքսեթյան Առնոլդ Լեւոնի – «ԳԱՄ-ԱՐՏ» Արցախի նկարիչների միության անդամ, գծանկարի, գունանկարի դասախոս, Հարությունյան Վալերի Սերգեյի – հեռանկարչության դասախոս, Մարգարյան Սուսաննա Սենորի – հագուստի դիզայնի կոնստրուկտավորման դասախոս:⁷

Ինստիտուտը իրականացնում էր 5 տարվա ակադեմիական կրթություն: Ավարտողներին շնորհվում էր դիպլոմավորված մասնագետի համապատասխան կոչում:

Նախատեսվում է մոտ ապագայում ինստիտուտում բացել գորգի եւ խեցեգործության բաժիններ: Ինստիտուտի շրջանա-

7. Այդ մասին տե՛ս «Գյուրջյան» կիրառական ինստիտուտի արխիվ, գ. 1, 2, 3, 4:

վարտների համար նախատեսվում է բացել նորածնության եւ դիզայներների տուն, որը մայրաքաղաքի համար կդառնա մշակութային նոր օջախ: Դասավանդումը «Գյուլջյան» կիրառական արվեստի ինստիտուտում իրականացվում է հիմնականում տեղացի մասնագետների միջոցով:

2005/2006 ուստարվանից ինստիտուտը անցել է երկաստիճան՝ բակալավրիական և մագիստրոսական կրթության:

Ինստիտուտում կրեդիտային համակարգը ներդրվել է 2010/2011 ուստարում: Ամբողջական կիրարկմանը կանցնի 2013/2014 ուստարվանից:

Մինչ սեփական մասնագետներ ունենալը, ինստիտուտը պարբերաբար Երևանից հրավիրում էր համապատասխան մասնագետներ: 2001, այնուհետև 2002 թվականներին առաջին և երկրորդ թողարկման շրջանավարտների հետ, ինստիտուտն ունեցավ հագուստի ձևավորման բաժնի առաջին երկու դասախոսները, ինչպիսիք են «Բագե» համահայկական մրցույթում հաղթած և լավագույնը ճանաչված Արինա Ավետիսյանը ու Լուսինե Միրզաջանյանը, այնուհետև դիզայն բաժնից՝ Ալբերտ Բաղդասարյանը և Ռուբեն Աղաջանյանը:

Այժմ ինստիտուտում աշխատում են հետևյալ դասախոսները՝
Յուրի Յովհաննիսյան՝ կերպարվեստի դոցենտ,
Սամվել Գաբրիելյան՝ կերպարվեստի դոցենտ,
Էլլադա Բաղդասարյան՝ մանկ. գիտ.թ., դոցենտ,
Ջիվան Յարությունյան՝ հանրային կառավարման մագիստրոս,

Սուսաննա Պողոսյան՝ ԱրՊՀ ամբիոնի վարիչ, դիպլոմավորված մասնագետ,

Ռուբեն Աղաջանյան՝ Երևանի գեղարվեստի ակադեմիայի մագիստրոս,

Համլետ Մարտիրոսյան՝ դիպլոմավորված մասնագետ,
Եկատերինա Դուբինինա՝ դիպլոմավորված մասնագետ,
Գայանե Աղաջանյան՝ դիպլոմավորված մասնագետ,
Մարիա Վարդանյան՝ դիպլոմավորված մասնագետ,
Լիլիա Նասիբյան՝ դիպլոմավորված մասնագետ,

Դավիթ Ղարաբեկյան՝ ԱրՊՀ դասախոս, դիպլոմավորված մասնագետ,

Զարինե Բաղմանյան՝ ԱրՊՀ դասախոս, դիպլոմավորված մասնագետ,

Նարինե Գալստյան՝ մագիստրոս,

տեխնիկական կազմը՝ 4 հոգի:

Ինստիտուտի շատ դասախոսներ պարբերաբար իրենց ստեղծագործություններով մասնակցում են ԼՂՀ-ում, ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող մրցույթների եւ ցուցահանդեսների:

Ինստիտուտի ուսանողների ուժերով հաճախակի են կազմակերպվում ցուցահանդեսներ և շուկա-ցուցադրություններ, որոնք արժանանում են հասարակության լայն խավերի դրվատանքին: Դրանք պարբերաբար լուսաբանվում են մամուլում և հեռուստատեսությամբ:

2012 թվականին ինստիտուտում բացվեց ուսանողության և ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների ցուցահանդես, որն այցելեցին նաև ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն. Աղաբալյանը: Բարձր գնահատելով ինստիտուտի կատարած աշխատանքը, հանրապետության նախագահն առաջարկեց ինստիտուտը տեղափոխել Շուշի և անհատույց օգտագործման իրավունքով տեղակայվել Շուշիի նախկին «Օրիորդաց» դպրոցի վերանորոգված շենքում: Այժմ ինստիտուտը գտնվում է Շուշիում: Իսկ ուսանողության և դասախոսական կազմի ամենօրյա օգտագործման համար կառավարության կողմից անվարձահատույց ավտոբուս է հատկացվել ինստիտուտին:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2001թ. մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» թիվ 52 որոշման՝ ԼՂՀ ԿԳ նախարարությունը 2001թ. ապրիլի 10-ին սահմանել է ոչ պետական բուհերի

հավատարմագրման և լիցենզավորման կարգ: Այդ հիման վրա նախարարությունում ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի փորձագիտական եզրակացությունները հիմք են հանդիսացել հանրապետությունում գործող ոչ պետական բուհերի կրթական գործունեության լիցենզիաների վերանայման մասին ԿԳ նախարարության հրամանի համար, որով 2001 թվականի հունիսի 1-ից 9 ոչ պետական բուհերի գործունեությունը դադարեցվել է:⁸ Այդ բուհերում չէին պահպանվում հիմնական աշխատողների 50%-ի հաստիքացուցակը, դասախոսական կազմի գիտական աստիճանը, գրադարանը, ընթերցասրահը և բուհին անհրաժեշտ այլ հարմարանքներ:

Ուսումնասիրությունների ընթացքում հանձնաժողովի կողմից պարզվել է, որ բուհի ներքին կյանքին առնչվող իրավական անհրաժեշտ փաստաթղթերը, դասապրոցեսի կազմակերպումը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսումնական շենքային պայմանները, ուսանողների հաճախումը, ուսումնանյութական բազան համեմատաբար բարվոք վիճակում են «Մեսրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» համալսարանում և «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտում: Այդ հիման վրա տվյալ երեք ոչ պետական բուհական հաստատությունները պետհավատարմագրման իրավունք են ստացել:

8. Այդ մասին տե՛ս, ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գործ 6, 7, 8, ինչպես նաև Գ, Գրիգորյանի, Գ.Յարությունյանի նշվ. աշխ., էջ 466-467:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

Հայ առաջին ուսուցչի ու գրագյուտարարի անունը կրող ուսումնագիտական հաստատությունը՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանը, հիմնադրվել է 1996թ. հոկտեմբերի 25-ին «Քուճերանգ» ՍՊԸ-ի (հիմնադիր կազմ՝ Գ.Հ. Սահակյան, Դ.Ս. Գաբրիելյան, Մ. Ա. Արզումանյան, Ժ. Գ. Ջիվանշիրյան), ներկայումս՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարան (հիմնադիր կազմ՝ Դ.Ս. Գաբրիելյան, Մ. Ա. Արզումանյան) կողմից: Համալսարանում ուսումնական գործընթացը սկսվել է 1997թ. սեպտեմբերից: Սկսած 1996 թվականից մինչև այժմ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանին թույլատրվել է պատրաստել բարձրագույն կրթությամբ մասնագետներ հետևյալ մասնագիտությունների գծով (տես՝ աղ. 17)՝

Աղյուսակ 17

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանի արտոնագրված մասնագիտություններն ըստ ուսումնական տարիների

Հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն	1997-1998թթ. ուս. տ.
Ռուսաց լեզու եւ գրականություն, հոգեբանություն	1997-1998թթ. ուս. տ.
Պատմություն եւ միջազգային հարաբերություններ	1997-1998թթ. ուս. տ.
Տեսական տնտեսագիտություն եւ ինֆորմատիկա	1997-1998թթ. ուս. տ.
Լրագրություն	1997-1998թթ. ուս. տ.
Իրավագիտություն	1997-1998թթ. ուս. տ.
Անգլերեն լեզու	1997-1998թթ. ուս. տ.
Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա	1998-1999թթ. ուս. տ.
Իրավագիտություն (հեռակա)	1998-1999թթ. ուս. տ.
Ֆիզկուլտուրա եւ սպորտ (հեռակա)	1998-1999թթ. ուս. տ.
Պատմություն	2001-2002թթ. ուս. տ.
Կառավարում, գործարար վարչարարություն	2002-2003թթ. ուս. տ.
Տեղեկատվական համակարգեր ֆինտեխ. բնագավ.	2002-2003թթ. ուս. տ.
Հաշվողական տեխնիկայի եւ ավտ. ծրագր. սպահ.	2002-2003թթ. ուս. տ.
Թարգմանչական գործ	2004-2005թթ. ուս. տ.

Հայոց լեզու եւ գրականություն	2006-2007թթ. ուս. տ.
Հայոց լեզու եւ գրականություն (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.
Ռուսաց լեզու եւ գրականություն	2006-2007թթ. ուս. տ.
Ռուսաց լեզու եւ գրականություն (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.
Պատմություն (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.
Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.
Անգլերեն լեզու (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.
Թարգմանչական գործ (հեռակա)	2006-2007թթ. ուս. տ.

1997/98 ուսումնական տարում «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում արտոնագրվել է 7 մասնագիտություն՝ «Հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն», «Ռուսաց լեզու եւ գրականություն, հոգեբանություն», «Պատմություն եւ միջազգային հարաբերություններ», «Տեսական տնտեսագիտություն եւ ինֆորմատիկա», «Լրագրություն», «Իրավագիտություն» եւ «Անգլերեն լեզու»: Այնուհետեւ տարբեր տարիների նույն համալսարանում արտոնագրվել են «Ֆիզկուլտուրա եւ սպորտ», «Պատմություն», «Կառավարում, գործարար վարչարարություն», «Տեղեկատվական համակարգեր ֆինանսատնտեսական բնագավառում», «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատ ծրագրավորման ապահովում», «Թարգմանչական գործ»:

2006/2007 ուստարում նշված մասնագիտություններից շուրջ տասը մասնագիտության գծով սկսվել է իրականացվել նաեւ հեռակա ուսուցում: Գործունեության ամբողջ ժամանակաշրջանում համալսարան ընդունվել է 1089 եւ ավարտել 593 ուսանող (տես՝ աղ-ներ 18 եւ 19):⁹

9. Այդ մասին տես «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի արխիվ, գ. 2, 3, 4, 5, ինչպես նաև համալսարանի «Տեղեկագրում» լույս տեսած արխիվային նյութերը և հոդվածները, 2002-2008թթ., թիվ 1, 2, 3, 4 և այլ համարներ:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան ընդունված ուսանողների
 քվաքանակն ըստ մասնագիտությունների և տարեթվերի

<i>Տարեթիվ</i>	1997-1998	1998-1999	1999-2000	2000-2001	2001-2002	2002-2003	2003-2004	2004-2005	2005-2006	2006-2007	2007-2008	2008-2009	Ընդամենը
<i>Մասնագիտություններ</i>													
Կառավարում (գործ. վարչ)						9	14	20	8	12	9	21	93
Տեղեկատվական համակարգեր						7	17	15	17	10	8	18	92
Հաշվողական տեխնիկա և ծրագրավորում						8	7	6	10	2	9	11	53
Հայոց լեզու և գրականություն, հոգեբանություն	7	11	12	5	21	14	23	12	22		12	5	144
Տարրական ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա		9	10	7	8	14	20	6	9	6	5	8	102
Պատմություն	4	4	5	3	7	12	24	9	20	5	9	27	129
Տնտեսագիտություն և ինֆորմատիկա	11	9	23	9	12						5	15	84
Լրագրություն	9	4	9	6	4		10		1	4	-	12	59
Իրավագիտություն	31	8	26	12	12	7	3	22	32	20	12	7	192
Ռուսաց լեզու և գրականություն, հոգեբանություն	4		11	5	6	11	21	10	17		-	10	95
Օտար լեզու	10	6	5	7	6	10	3						47
Թարգմանչական գործ								6	9	5			20
Հայոց լեզու և գրականություն										8			8
Ռուսաց լեզու և գրականություն										8			8
Հայոց լեզու և գրականություն (հեռակա)										7			7
Ռուսաց լեզու և գրականություն (հեռակա)										10			10
Տեղեկատվական համակարգեր (հեռակա)										4			4
Տարրական ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա (հեռակա)										12			12
Պատմություն (հեռակա)										11			11
Իրավագիտություն (հեռակա)		2	20	16	12					12			62
Ֆիզիկուլտուրա և սպորտ (հեռակա)		11	17	12	20								60
ԸՆԴԱՄԵՆԸ	76	64	138	82	108	92	142	106	145	136	69	134	1292

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանն ավարտած ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների և տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>											
Կառավարում (գործ. վարչ)						18	23		7	10	58
Տեղեկատվական համակարգեր									4	9	13
Դաշվորդական տեխնիկա և ծրագրավորում									3	1	4
Դայոց լեզու և գրականություն, հոգեբանություն					1	11	10	4	13	11	50
Տարրական ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա					5	21	17	10	24		77
Պատմություն					2			5	6	5	18
Տնտեսագիտություն և ինֆորմատիկա					9	9	10	10	24	10	72
Լրագրություն					2	10	9	3			24
Իրավագիտություն					3	12	27	16		29	87
Ռուսաց լեզու և գրականություն, հոգեբանություն					5	2	7	6	5	7	32
Օտար լեզու						4	6	5		6	21
Իրավագիտություն (հեռակա)						33	13	13	14		73
Ֆիզկուլտուրա և սպորտ (հեռակա)						7	8	16	33		64
Թարգմանչական գործ											
ԸՆԴԱՄԵՆԸ					27	127	130	88	133	88	593

Ներկայումս «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում գործում է 3 ֆակուլտետ՝ կառավարման և տեղեկատվական տեխնոլո-

գիաների (դեկան՝ ՄՄՅ դոցենտ Ա.Զ.Սարգսյան), հումանիտար (դեկան՝ Բ.Ա.Ներսիսյան), բանասիրական (դեկան՝ ՄՄՅ դոցենտ Լ. Յու. Բախշյան): Համալսարանն ունի նաև հեռակա ուսուցման բաժանմունք (դեկան՝ ՄՄՅ դոցենտ Ի.Գ. Մարտիրոսյան):

Կառավարման եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետում ընդգրկված է 186, հումանիտարում՝ 156, բանասիրականում՝ 210 ուսանող: 2011/2012 ուստարում համալսարանում բացվել է մագիստրատուրայի բաժին, որտեղ սովորում է 110 ուսանող: «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում ուսանում է ընդհանուր առմամբ 542 ուսանող:

Ներկայումս համալսարանի գիտաուսումնական աշխատանքներն իրականացնում է 7 ամբիոն՝ պատմության (ամբիոնի վարիչ՝ պատմ.գ.թ., դոցենտ Ն.Բաղդասարյան), իրավագիտության (ՄՄՅ դոցենտ Մ. Ռ. Ղահրամանյան), մաթեմատիկայի (ամբիոնի վարիչ՝ Ա.Տ.Թադևոսյան), տեղեկատվական տեխնոլոգիաների (ամբիոնի վարիչ՝ Ժ.Բ.Մելքունյան), տնտեսագիտության (ամբիոնի վարիչ՝ դոցենտ Վ.Յու. Առստամյան), մանկավարժության եւ հոգեբանության (ամբիոնի վարիչ՝ դոցենտ Կ. Ա. Մարտիրոսյան), հայոց լեզվի, գրականության եւ լրագրության (ամբիոնի վարիչ՝ բան.գ.թ., դոցենտ Լ.Գ. Մարգարյան), ռուսաց լեզվի եւ գրականության (ամբիոնի վարիչ՝ Ա.Գ.Շահրամանյան), օտար լեզուների (ամբիոնի վարիչ՝ Ա. Վ. Խաչատրյան):

Համալսարանում գործում է գիտական խորհուրդ, որտեղ ի պաշտոնե ընդգրկված են ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները եւ մի շարք դասախոսներ՝ թվով 22 անդամ:

Համալսարանը՝ սկսած 1999 թվականից, լույս է ընծայում «Մեսրոպ Մաշտոց համալսարան» ամսաթերթը, որի էջերում՝ դասախոսների եւ ուսանողների հրապարակումների միջոցով լուսաբանվում է ուսումնական հաստատության գիտակրթական գործունեությունը, իսկ 2006 թվականից հրատարակում է «Գիտական տեղեկագիր» (2007 թվականից՝ «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու») հանդեսը (գիտական հոդվածների ժողովածու), որտեղ իրենց գիտական եւ մեթոդական աշխատանքներն են հրապարակում ինչպես «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի, այնպես էլ ՀՀ եւ ԼՂՀ այլ բուհերի հետազոտող դասախոսներ:

«Գրիգոր Նարեկացի» համալսարան

Հիմնադրվել է 1996թ. դեկտեմբերի 16-ին: Բարձրագույն կրթություն կազմակերպելու համար 1997թ. սեպտեմբերի 5-ին արտոնագրվել են բանասիրություն (հայոց լեզու եւ գրականություն, ժուռնալիստիկա), իրավագիտություն, տեսական տնտեսագիտություն, ստոմատոլոգիա, տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա մասնագիտությունները, միջնակարգ մասնագիտական կրթության ծրագրով՝ ատամնատեխնիկա մասնագիտությունները:

ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2004թ. փետրվարի 18-ի թիվ 18/Մ հրամանով մասնագիտությունների ցանկում ընդգրկվել են տեսական տնտեսագիտություն (0601) եւ պատմություն (0207) մասնագիտությունները, իսկ 2002թ. հունիսի 11-ի թիվ 48/Մ հրամանով հավատարմագրվել են «0404-Ստոմատոլոգիա» (բարձրագույն) եւ «0416-Ատամնատեխնիկական գործ» (միջին մասնագիտական կրթություն իրականացնող) մասնագիտությունները:

ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2003թ. հունիսի 18-ի թիվ 91/Մ-2 հրամանով հավատարմագրվել են «Հայոց լեզու եւ գրականություն», «Լրագրություն (ժուռնալիստիկա)», «Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա» մասնագիտությունները, նույն այդ հրամանով համալսարանը համարվել է հավատարմագրված, հաշվի առնելով, որ գործող բոլոր մասնագիտությունները հավատարմագրված են (հավատարմագիր՝ տրված 2003թ. հունիսի 18-ին, գրանցման համարը՝ 01): 2005թ. հավատարմագրվել է «0601-Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությունը (հավատարմագիր՝ թիվ 02, տրված 2005թ. հունիսի 27-ին):¹⁰

2007թ. արտոնագրվել է «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն», 2012թ.՝ «Ռուսաց լեզու և գրականություն»,

10. Տե՛ս, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի արխիվ, գ.4, 5, 6:

«Օտար լեզու (անգլերեն)» մասնագիտությունները:

Սկսած 1996թ. մինչ այսօր «Գրիգոր Նարեկացի» համալսարանում իրականացվում է բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում հետեւյալ մասնագիտությունների գծով (տես՝ աղ. 20):

Աղյուսակ 20

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի հավատարմագրված մասնագիտությունների անվանացանկն ըստ ուսումնական տարիների

Իրավագիտություն (առկա)	1996-1997 ուս. տարի
Ստոմատոլոգիա (առկա)	1996-1997 ուս. տարի
Հայոց լեզու եւ գրականություն (առկա)	1997-1998 ուս. տարի
Ժուռնալիստիկա (առկա)	1997-1998 ուս. տարի
Տեսական տնտեսագիտություն (առկա)	1997-1998 ուս. տարի
Տարրական կրթ. մանկ. եւ մեթոդիկա (առկա)	1997-1998 ուս. տարի
Ատամնատեխնիկա (առկա)	1997-1998 ուս. տարի
Պատմություն (առկա)	2004-2005 ուս. տարի
Նախագորակոչային եւ ֆիզիկական պատրաստություն (առկա)	2007-2008 ուս. տարի
Իրավագիտություն (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Հայոց լեզու եւ գրականություն (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Ժուռնալիստիկա (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Տեսական տնտեսագիտություն (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Տարրական կրթ. մանկ. եւ մեթոդիկա (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Պատմություն (հեռակա)	2006-2007 ուս. տարի
Նախագորակոչային եւ ֆիզիկական պատրաստություն (հեռակա)	2007-2008 ուս. տարի
Ռուսաց լեզու և գրականություն (առկա)	2012-2013 ուս. տարի

Սկսած 2006-2007 ուսումնական տարուց 7 մասնագիտության գծով իրականացվում է նաեւ հեռակա կարգով ուսուցում: Իր գործունեության ամբողջ ժամանակաընթացքում «Գրիգոր Նարեկացի» համալսարանն ավարտել է 1505 ուսանող, այդ թվում՝ 68 մագիստրոս: (Տես հավելված 1)

2013թ. հունիսի 1-ի դրությամբ համալսարանում սովորում է 644 ուսանող, այդ թվում՝ բակալավրի կրթական ծրագրով 418, մագիստրոսական՝ 33, միջին մասնագիտական ծրագրերով՝ 193 հոգի: Կան բավարար հիմքեր ուսուցման կազմակերպումը երկաստիճան կրթական համակարգով իրականացնելու համար: Աշխատանքներ են տարվում բնագիտական կրթաբլոկը ժամանակակից համակարգիչներով հագեցված կաբինետներով ու լաբորատորիաներով ապահովելու ուղղությամբ: Բուհն ապահովված է համացանցով, ունի գրադարան, որի գրքային ֆոնդը հետզհետե համալրվում է մասնագիտական գրականությամբ:

Համալսարանին կից գործում է ուսումնագիտական կենտրոն-կլինիկա՝ լիցենզավորված ԼՂՀ առողջապահության նախարարության կողմից (2002թ.), որտեղ ստոմատոլոգիա բաժնի ուսանողներն անց են կացնում ուսումնաարտադրական պրակտիկա եւ ստանում հետբուհական ինտերնատուրային կրթություն:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանում գործում է երկու ֆակուլտետ՝ հումանիտար և բնագիտական: 2011/2012 ուստարվանից համալսարանին կից գործում է քոլեջ միջին մասնագիտական կրթական ծրագրերով: Քոլեջը կադրեր է պատրաստում 12 մասնագիտությունների գծով, այդ թվում թարգմանություն և գործավարություն, հայոց լեզվի դասավանդում, ռուսաց լեզվի դասավանդում, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, դասավանդում տարրական դասարաններում, նախադպրոցական կրթություն, էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ, մենեջմենթ, ֆինանսներ, հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, զբոսաշրջություն և ատամնատեխնիկական գործ:

Ներկայումս համալսարանի գիտաուսումնական աշխա-

տանքներն իրականացնում է 9 ամբիոն՝ հայոց լեզվի, գրականության եւ ժուռնալիստիկայի (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Տ. Սողոմոնյան), տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա (ամբիոնի վարիչ՝ մ.գ.դ, պրոֆեսոր Գ. Յարությունյան), իրավագիտության (ամբիոնի վարիչ՝ մագիստրոս Ա. Մկրտիչյան), ստոմատոլոգիայի և ատամնատեխնիկայի (ամբիոնի վարիչ՝ Ս. Մազմանյան), պատմության (ամբիոնի վարիչ՝ մագիստրոս Ա. Գրիգորյան), տնտեսագիտության (ամբիոնի վարիչ՝ ասպիրանտ Վ. Գրիգորյան), ֆիզկուլտուրայի և սպորտի (ամբիոնի վարիչ՝ Շ. Ղուկասյան), քիմիայի և կենսաբանության (ամբիոնի վարիչ՝ ասպիրանտ Յա. Ավագյան), ֆիզիկայի և մաթեմատիկայի (ամբիոնի վարիչ՝ մագիստրոս Ն. Ավանեսյան):

Համալսարանում գործում է գիտական խորհուրդ, որտեղ ի պաշտոնե ընդգրկված են ռեկտորը, պրոռեկտորները, դեկանը, ամբիոնի վարիչները եւ մի շարք դասախոսներ՝ թվով 23 անդամ: Համալսարանում գործում է նաեւ ռեկտորատ՝ ռեկտոր բան.գ.դ., պրոֆեսոր Վ. Ս. Հակոբյանի գլխավորությամբ: Կոլեկտիվի աշխատանքը համակարգելու խնդրում ռեկտորին օգնում են ուսումնական եւ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորները:

Համալսարանում աշխատում է 59 դասախոս, որից 25-ը՝ հիմնական, 13-ը՝ համատեղության եւ 21-ը՝ ժամավճարային կարգով:¹¹ Դասախոսներից մեկը ակադեմիկոս է, երեքը՝ պրոֆեսոր, տասը՝ դոցենտ, երկուսը՝ գիտությունների դոկտոր, ինը՝ գիտությունների թեկնածու, հինգը հայցվոր են, տասնյոթը մագիստրոս և այլն:

Սկսած 1998թ-ից լույս է տեսնում համալսարանի «Հարություն» պաշտոնաթերթը:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանում 2002թ. հրատարակվում է «Նարեկ» հանդեսը: «Նարեկը» (գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Սարինյան) հետեւողականորեն լուսաբա-

11. Այդ մասին տես, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի արխիվ, գ.6, 7, 8, 9, ինչպես նաև համալսարանի «Նարեկ» հանդեսում տպագրված նյութերը:

նում է համալսարանի կայացման, տարբեր բուհերի հետ կապերի ընդլայնման գործընթացը, համալսարանի գիտական, մանկավարժական, մշակութային կյանքին առնչվող հարցեր, տպագրում դասախոսների եւ ուսանողների գիտական աշխատանքները, նրանց առաջարկությունները եւ կարծիքները գանազան խնդիրների վերաբերյալ:

Հավելված 1
Ստեփանավերտի «Գրիգոր Լաբեյանի» պետական համալսարանը ավարտած
ուսանողների թվաքանակը ըստ մասնագիտությունների և ուսումնական տարիների

Հ/Ի	Մասնագիտություն նրդը	2002-2003 ուս. տ.										Ընդամենը	Ստանդորտ բուհերից ավարտված բնակիչներն են									
		2002-2003 ուս. տ.		2003-2004 ուս. տ.		2004-2005 ուս. տ.		2005-2006 ուս. տ.		2006-2007 ուս. տ.			2007-2008 ուս. տ.		2008-2009 ուս. տ.		2009-2010 ուս. տ.		2010-2011 ուս. տ.		Ընդամենը նստ սեպ- տեմբեր	
		2002	2003	2003	2004	2004	2005	2005	2006	2006	2007		2007	2008	2008	2009	2009	2010	2010	2011		2012
1	Տարրական կրթության մասնագիտություն և մեթոդիկա	19	-	18	16	16	23	46	19	14/1	34	302	41/4	260/7	1	1	1	3				
2	Հայրց ներքև և զրականություն	-	-	18	16	16	46	58	16	10/1	22	192	18/4	193/7	2	2	2	6				
3	Իրավագիտություն	12	-	40	23	34	69	69	40	18/1	29/1	38/3	69/14	372/19	8	18	5	31				
4	Տնտեսագիտության տեսություն	-	-	18	-	-	-	35	35	11/8	14/7	22/4	37/10	202/29	6	6	2	14				
5	Պատմություն	-	-	-	-	-	-	-	28	5/1	23	15	202	9/13	-	-	-	-				
6	Նախազրամբային և ֆիզի- կական սպորտաառություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	22	42	64	-	-	-	-				
7	Իրազրություն	-	-	1	5	7	20	6/1	12/1	7	12/1	7	7/3	7	-	-	-	-				
8	Ստոմատոլոգիա	12	15	16	9	5	17	13	2	4	9	15	117	1	-	-	1					
9	Առանձնախմբիկա	8	9	6	6	5	5	8	5	4	4	4	2	61	-	-	-	-				
		51	24	117	75	90	253	162/1	76/13	167/8	171/12	251/34	1437/68	18	27	10	55					

Ծանոթություն.

1. Կոտրակների տակ նշված թվերը ցույց են տալիս մագիստրատուրայի շրջանավարտների քանակը,
2. 197-ԿԳ նախարարության ներկայացմամբ տարբեր մասնավոր բուհերից համալսարանում պետական բնութթյուններ են հանձնել 55 շրջանավարտներ և ստացել պետական նույնի դիպլոմներ (ըստ մասնագիտությունների):

**Երեւանի մենեջմենթի համալսարանի
Ստեփանակերտի մասնաճյուղ**

Հիմնադրվել է 1997թ. Երեւանի մենեջմենթի համալսարանի ռեկտոր Ռ. Առուշանյանի կողմից: Նույն թվականին էլ Ստեփանակերտի մասնաճյուղում սկսվել է ուսումնական գործընթացը: Մասնաճյուղի կառավարումն իրականացնում են նրա տնօրենն ու փոխտնօրենը: Ներկայումս մասնաճյուղում ուսումնական պարապմունքները վարում են հաստիքային կամ ժամավճարային կարգով աշխատող դասախոսները: Համալսարանական ամբիոններ չունենալու պատճառով մասնաճյուղի դասախոսներն ընդգրկված են Երեւանի մայր բուհի համապատասխան ամբիոններում: Մասնաճյուղի գործունեության տարիներին կազմակերպվել է ուսուցում մենեջմենթ, իրավագիտություն, ժուռնալիստիկա եւ ստոմատոլոգիա մասնագիտությունների գծով: Կրթօջախ ընդունվել է 570 եւ ավարտել է 196 ուսանող (տես՝ աղյուցներ 21 եւ 22):

Աղյուսակ 21

**Երեւանի մենեջմենթի համալսարանի Ստեփանակերտի
մասնաճյուղ ընդունված ուսանողների թվաքանակն ըստ
մասնագիտությունների եւ տարեթվերի**

<i>Տարեթիվը</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>											
Իրավագիտություն	18	18	24	15	-	11	19	28	30	26	189
Մենեջմենթ	6	16	16	21	-	31	29	74	48	47	280
Ժուռնալիստիկա	-	6	10	13	-	-	6	14	5	14	68
Ստոմատոլոգիա	-	16	3	6	-	-	-	-	-	-	25
ԸՆԴԱՄԵՆԸ	24	56	53	55	-	42	54	116	83	87	570

Երեւանի Մենեջմենթի համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղն ավարտած ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>											
Իրավագիտություն				-	17	18	14	11	11	-	71
Մենեջմենթ				6	10	8	24	14	32	-	94
Ժուռնալիստիկա				-	8	5	7	-	-	-	20
Ստոմատոլոգիա				-	-	8	-	3	-	-	11
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	6	35	39	45	28	43	-	196

Մասնաճյուղում 2006/2007 ուստարում ուսուցման գործընթացը վարել եւ կամ շարունակում են վարել հետեւյալ դասախոսները՝ Շուշանիկ Մանուչարյան, Շուշանիկ Ասրյան, Էլլադա Բաղդասարյան - մանկ. գ.թ., դոցենտ, Էրիկ Աղավեյան- ասպիրանտ, ծրագրավորող, Գայանե Սարգսյան, Անահիտ Սարգսյան, Սվետլանա Մկրտչյան, Կարինե Սարգսյան, Ալեքսանդր Սարաֆյան- բժշկ. գ.դ., պրոֆեսոր, Արմեն Ասրյան, Անուշ Չեչանովա, Նորիկ Չեչանով, Սիլետա Խալափյան - տնտ. գ.թ., դոցենտ, Արթուր Ղահրամանյան- տնտ. գ.թ., Խորեն Մխիթարյան, Մխիթար Գեւորգյան, Մեդինա Յովհաննիսյան - մագիստրոս, Սիլվա Յարությունյան, Ալբերտ Ալեքսանյան- ֆիզմաթ. գ.դ., Արմիդա Յարապետյան, Սիլվա Խաչատրյան - բանաս. գ.թ., դոցենտ, Բենիամին Սարգսյան, Մարինե Բաբայան, Իրա Բաբայան, Ջառա Բախտամյան, Անահիտ Պողոսյան, Արմեն Դանիելյան, Ռիտա Մնացականյան, Մարինե Ավանեսյան - մագիստրոս, Ռիտա Առուստամյան - իրավաբ. գ.թ., դոցենտ, Անատոլի Թադեւոսյան- ասպիրանտ, Էթերի Յովսեփյան, Ռիտա Բաղալյան, Մարսել Պետրոսյան, Ջուլիետա Կասյան, Սուսաննա Ավետիսյան, Քրիստինե Տիգրանյան, Գարիկ Գրիգորյան:¹²

12. Տե՛ս, վերոնշյալ ուսումնական հաստատության արխիվային նյութերը գ.1, 2, 3, 4:

Երևանի «Երևան» համալսարանի ԼՂՅ մասնաճյուղ

Հիմնադրվել է 1997թ.՝ մինչև 2007թ. ժամկետով, սակայն 2001-2002թթ. վերածվել է խորհրդատվական կետի, իսկ 30.10.2002թ. նորից լիցենզավորվել է որպես Երևանի «Երևան» համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ՝ անժամկետ: Մասնաճյուղում կառավարումն իրականացնում են տնօրենը, ուսումնական մասի վարիչը եւ իրավաբանական ծառայության գծով մեթոդիստը, իսկ ուսումնական պարապմունքները վարում են 3 հաստիքային եւ 27 ժամավճարային կարգով աշխատող դասախոսները: Ուսումնական գործընթացը կազմակերպված է ըստ իրավագիտություն, տնտեսագիտություն, ագրարային արտադրության տնտեսագիտություն եւ կառավարում եւ ագրոնոմիա մասնագիտությունների: Մասնաճյուղի հետագա զարգացման նպատակով նախատեսվում է ուսուցանել նոր մասնագիտություններ եւս՝ երկրագիտություն, ծրագրավորում, հոգեբանություն (ռազմական, դատական), մանկավարժություն (տնտեսական, իրավաբանական):

Մասնաճյուղում 2006/2007 ուստարում ուսումնական գործընթացը վարում են հետեւյալ դասախոսները՝ Աիդա Զաքարյան - մասնագետ, Ռոմա Բալայան - պ.գ.թ., Սարիբեկ Գալստյան - գ.գ.թ., Կարինե Մարության - դասախոս, Նունե Սարումյան - պ.գ.թ., Լիլիկ Բեգլարյան - ասպիրանտ, Անատոլի Թադեւոսյան - ասպիրանտ, Վոլոդյա Մանասյան - ավագ դասախոս, Մարինե Արզումանյան - դասախոս, Վոլոդյա Ստեփանյան - ԼՂՅ 1-ին ատյանի դատարանի դատավոր, Արթուր Աբրահամյան - ԼՂՅ 1-ին ատյանի դատարանի դատավոր, Անուշ Ահարոնյան - իրավաբան, մագիստրոս, Սերգեյ Բաղրամյան - իրավաբան, Վահրամ Ավագյան - դատախազ, Կարեն Հովսեփյան - մագիստրոս, Նելլի Աթայան, Ժուլիետա Աղաջանյան - տ.գ.թ., Մարինե Արզումանյան, Լուսինե Դադայան - մագիստրոս, Գայանե Միրզոյան, Շողիկ Վարդանյան - իրավաբան, Լեւիկ Աղաջանյան - տ.գ.թ., դոցենտ, Սերժ Օհանջանյան - տ.գ.թ., դոցենտ, Նաիրա Դադայան, Նազիկ Բեգլարյան:

Գործունեության ողջ շրջանում մասնաճյուղ ընդունվել է 877 եւ ավարտել 286 ուսանող (տես՝ աղ-ներ 23 եւ 24):

Աղյուսակ 23

Երևանի «Երևան» համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ ընդունված ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>											
Իրավագիտություն	52	48	48	38	43	18	26	20	16	22	331
Տնտեսագիտություն	43	36	29	26	32	48	24	26	19	18	301
Ագրարային արտադրության տնտեսագիտություն եւ կառավարում	23	28	25	19	23	24	18	18	13	9	200
Ագրոնոմիա	13	8	11						6	7	45
ԸՆԴԱՄԵՆԸ	131	120	113	83	98	90	68	64	54	56	877

Աղյուսակ 24

Երևանի «Երևան» համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղն ավարտած ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>1997-1998</i>	<i>1998-1999</i>	<i>1999-2000</i>	<i>2000-2001</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>											
Իրավագիտություն	-	-	43	28	16	23	19	13	21	13	176
Տնտեսագիտություն			28	18	24	16	22	13	18	16	155
Ագրար. արտադր. տնտեսագ. եւ կառավարում			13	9	14	13	9	16	12	9	95
Ագրոնոմիա				9		6					15
ԸՆԴԱՄԵՆԸ			84	64		58		42		38	286

Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Ստեփանակերտի մասնաճյուղ

Հիմնադրվել է 1997թ-ին: Ուսումնական գործընթացը սկզբում կազմակերպվել է Մոսկվայի ժամանակակից հումանիտար համալսարանի (ներկայումս՝ «Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիա» կրթական հիմնադրամ, ք. Մոսկվա) Երեւանի մասնաճյուղի Ստեփանակերտի ներկայացուցչության կողմից որպես հեռատարածական (դիստանցիոն) ուսուցման կետ: Տարբեր մասնագիտությունների գծով ուսումնական գործընթացն սկսվել է 2000/2001թթ. ուստարում [3,4,10]: Ուսումնական գործընթացի կառավարումն իրականացնում է մասնաճյուղի տնօրենը, իսկ ուսումնական պարապմունքները վարում է ժամավճարային կարգով աշխատող 23 դասախոս՝ Նինա Գեորգիի Առաքելյան - տ.գ.թ., պրոֆեսոր, Վալերի Միքայելի Ավանեսյան - պ.գ.դ, պրոֆեսոր, Կարեն Արմոյի Ներսիսյան - տ.գ.թ., Իրինա Յովիկի Իշխանյան - տ.գ.թ., Դավիթ Կլիմի Բաբայան - պ.գ.թ., Ալբերտ Գարեգինի Ալեքսանյան - տ.գ.դ., Ստեփան Վաղարշակի Դադայան - պ.գ.թ., դոցենտ, Ասյա Խոսրովի Դադայան - կ.գ.թ., Յուրի Գրիգորի Մսրյան - պ.գ.թ., Էդուարդ Գուրգենի Չարությունյան - դոցենտ:

Մասնաճյուղում ուսումնական գործընթացն իրականացվում է հետեւյալ մասնագիտությունների գծով՝ իրավագիտություն, տնտեսագիտություն, մենեջմենթ եւ ինֆորմատիկա: Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Ստեփանակերտի մասնաճյուղը ընդունվել է 302 եւ ավարտել 194 ուսանող (տես՝ աղ-ներ 25 եւ 26):

Աղյուսակ 25

Ռուս-հայկական ժամանակակից հումանտիտար ակադեմիայի
Ստեփանակերտի մասնաճյուղ ընդունված ուսանողների
թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

Տարեթիվը	2000-2001	2001-2002	2002-2003	2003-2004	2004-2005	2005-2006	2006-2007	Չորսամյակը
<i>Մասնագիտություններ</i>								
Իրավագիտություն	16	13	16	15	23	16	18	117
Տնտեսագիտություն	8	4	7	9	19	25	17	89
Մենեջմենթ	14	6	9	16	14	20	10	89
Ինֆորմատիկա						7		7
ԸՆԴԱՄԵՆԸ	38	23	32	40	56	68	45	302

Աղյուսակ 26

Ռուս-հայկական ժամանակակից հումանտիտար ակադեմիայի
Ստեփանակերտի մասնաճյուղն ավարտած ուսանողների
թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

Տարեթիվը	2000-2001	2001-2002	2002-2003	2003-2004	2004-2005	2005-2006	2006-2007	Չորսամյակը
<i>Մասնագիտություններ</i>								
Իրավագիտություն	12	14	13	11	31	16	14	111
Տնտեսագիտություն	2	-	6	6	6	6	4	30
Մենեջմենթ	2	11	6	4	14	8	8	53
Ինֆորմատիկա						-		
ԸՆԴԱՄԵՆԸ	16	25	25	21	51	30	26	194

«Գրիգոր Լուսավորիչ» համալսարան

Հիմնադրվել է 2002թ. հունվարի 8-ին Գ. Յ. Սահակյանի եւ Է.Ս. Սահակյանի կողմից: Համալսարանի կառավարումն իրականացնում է Գ. Յ. Սահակյանը [3,4,10]: Համալսարանում ուսումնական պարապմունքները վարում են ժամավճարային կարգով աշխատող դասախոսները՝ Գեորգի Հրանտի Սահակյան - ֆ.մ.գ.թ., Անուշ Սերգեյի Աբրահամյան - դասախոս, Լիանա Ռուդոֆի Աբրահամյան - դասախոս, Լաուրա Եղիշեի Ավագյան - դասախոս, Նունե Նոբելի Ավագյան - դասախոս, Ջինաիդա Վանիի Բալայան - ք.գ.թ., Էլլադա Ջավենի Բաղդասարյան - մ.գ.թ., Լիլիկ Մխիթարի Բեգլարյան - դասախոս, Ալեքս Ավագի Գասպարյան - դասախոս, Գագիկ Բորիսի Գրիգորյան - դասախոս, Կարինե Վլադիմիրի Գրիգորյան - դասախոս, Սիլվա Համայակի Գրիգորյան - դասախոս, Հասմիկ Համոյի Գրիգորյան - դասախոս, Սեւակ Վրույրի Խաչատրյան - դասախոս, Պավիթ Պավելի Կարաբեկյան - դասախոս, Սեյրան Սերգեյի Կարապետյան - դասախոս, Ջիվան Վլադիմիրի Նարիմանյան - դասախոս, Անահիտ Էռնեստի Հայրապետյան - դասախոս, Ջոյա Սերժիկի Հովհաննիսյան - դասախոս, Սեդա Էդուարդի Հովսեփյան - դասախոս, Արթուր Սերգեյի Ղահրամանյան - դասախոս, Վոլոդյա Շնավոնի Մանասյան - դասախոս, Ռուզաննա Յակովի Մանգասարյան - տ.գ.թ., Քրիստինե Էդուարդի Մանուկյան - դասախոս, Կարինե Լորիկի Մարության - դասախոս, Լիանա Սեյրանի Մինասյան - դասախոս, Արթուր Վալերիի Ջավադյան - դասախոս, Սվետլանա Արմենի Ջհանգիրյան - դասախոս, Նելլի Ռաֆիկի Սահակյան - դասախոս, Սուսաննա Սարգսի Սարգսյան - դասախոս, Աիդա Չալյան- դասախոս:

Համալսարանում ուսուցումը տարվում է հետեւյալ մասնագիտությունների գծով՝ ֆինանսներ եւ վարկ, ինֆորմատիկա, իրավագիտություն, լրագրություն, հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն, օտար լեզու, տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա: Գործունեության ողջ ընթացքում «Գրիգոր Լուսավորիչ» համալսարան ընդունված եւ այն ավար-

տած ուսանողների թվաքանակը հետեւյալ պատկերն ունի (տես՝ աղ. 27 եւ 28):

Աղյուսակ 27

«Գրիգոր Լուսավորիչ» համալսարան ընդունված ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>							
Ֆինանսներ եւ վարկ, ինֆորմատիկա	6	8	12	18	11	7	52
Իրավագիտություն	5		9	13	6		33
Լրագրություն	2		4	4	2	3	15
Հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն	1	2					3
Օտար լեզու		2					2
Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա	2	3					5
ԸՆԴԱՄԵՆԸ	16	15	25	35	19	10	110

«Գրիգոր Լուսավորիչ» համալսարանն ավարտած ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների եւ տարեթվերի

<i>Տարեթիվը</i>	<i>2001-2002</i>	<i>2002-2003</i>	<i>2003-2004</i>	<i>2004-2005</i>	<i>2005-2006</i>	<i>2006-2007</i>	<i>Ընդամենը</i>
<i>Մասնագիտություններ</i>							
Ֆինանսներ եւ վարկ, ինֆորմատիկա							
Իրավագիտություն							
Լրագրություն							
Հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն							
Օտար լեզու							
Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա				2	4		
ԸՆԴԱՄԵՆԸ				2	4		

Հետագայում համալսարանը նպատակ ունի զարգանալու տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող մասնագիտությունների ուղղությամբ, այդ պատճառով արդեն 3 տարի է՝ ընդունելություն չի կատարում հայոց լեզու եւ գրականություն, հոգեբանություն, օտար լեզու, տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա մասնագիտությունների գծով: Նախատեսվում է կատարել ընդունելություն նոր՝ կիրառական մաթեմատիկա եւ ինֆորմատիկա մասնագիտությունների գծով:

ԳԼՈՒԽ ԶԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

ԼՂԳ-ում աշխատող գիտակրթական կադրերը

Փաստագրական նյութերի ուսումնասիրության հիման վրա համառոտակի ներկայացնենք Լեռնային Ղարաբաղի Յանրապետության գիտակրթական ներուժը՝ հանձնա տարբեր բուհերում ու գերատեսչություններում աշխատող բարձր գիտական որակավորում ունեցող մասնագետների և նրանց վերաբերյալ՝ ընդհուպ մինչև 2011թ. առաջին ամիսներն ընդգրկող տվյալները:

Հայտնի է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության մեջ՝ ուսումնամեթոդական աշխատանքին զուգընթաց, կարևոր տեղ է գրավել գիտահետազոտական աշխատանքը: Անշուշտ, գիտահետազոտական աշխատանքի զուգակցումը մանկավարժական գործունեության հետ հանդիսացել է ինչպես Հայաստանի բուհերի, այնպես էլ Արցախի Յանրապետության պետական և ոչ պետական գիտակրթական օջախների հիմնական խնդիրներից մեկը: Այն դարձել է լուրջ ազդակ երկրամասի գիտական կադրերի աճի, ուսուցման որակի բարձրացման, գիտության ու մշակույթի առաջընթացի համար:

Արցախի պետական համալսարանի և ոչ պետական բուհերի հիմնադրման և նրանց գործունեության առաջին տարիներից աշխատանքի անցան մեծ թվով այնպիսի մասնագետներ, որոնք գիտական աշխատանքի հարուստ փորձ ունեին: Մանկավարժական պրակտիկ գործունեությանը զուգընթաց, նրանք սկսեցին լուրջ գիտական գործունեություն ծավալել, ստեղծել գիտական դասընթացներ ու ծեռնարկներ և առանձին ուսումնասիրություններով ու հոդվածներով ամփոփել իրենց տարիների հետազոտական աշխատանքի արդյունքները:

Արցախում գործող պետական և ոչ պետական բուհերի դա-

սախտասական կազմի հիմնական խնդիրներից մեկը սկզբում եղել է ուսումնական պլանների, ծրագրերի, ուսումնական ձեռնարկների հրատարակումը, այնուհետև շատ-շատերն իրենց հետազոտության օբյեկտ են դարձրել և պաշտպանել ատենախոսություններ ու համալրել փորձառու գիտնականների շարքերը:

Այժմ աղյուսակի ձևով ներկայացնենք Արցախի գիտակրթական ներուժը:¹

Մեր կողմից ուսումնասիրվել է ԼՂՀ բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմերի, ինչպես նաև կենսագործունեության տարբեր ոլորտներում աշխատող գիտնականների որակական կազմն ըստ պաշտոնների, գիտական կոչումների եւ պաշտպանած ատենախոսությունների: Մասնավորապես, բարձրագույն կրթական հաստատություններում պատկերն այդպիսին է (տես՝ աղ. 29):

Աղյուսակ 29

ԼՂՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ հաստիքների

ԼՂՀ-ում գործող բուհերը	թեկնածու	սրկոտ	որոշմ	ստաժիտ	եմիտ	սովորուս	սովորուս	սոցիոլոգ
ԱրՊՀ	68 (25)	6 (3)	66 (13)	18 (2)	75 (21)	33 (16)	16 (78)	
«Գրիգոր Նարեկացի» համալսարան	9	2	10	3	-	5	17	
«Մեսրոպ Մաշտոց» համալսարան	12	1	15	7	21	25	12	
Գյուրջան կիրառական արվեստի ինստիտուտ						13		
Երեւանի մենեջմենթի համալսարանի Ստեփ. մասնաճյուղ			4	1		30		

1. Аванесян А.С., Процесс формирования научно-образовательной системы Арцаха, “Теория и практика общественного развития”, N4, г. Краснодар, 2012.

Երեւանի «Երեւան» համալսարանի Ստեփ. մասնաճյուղ			2			23	
«Գրիգոր Լուսավորիչ» համալսարան						31	
Ռուս- հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիա			2	2		6	

Ընդ որում՝ համապատասխան գիտական կոչմամբ պաշտոնավարող դասախոսների անվանական կազմն ստուգելուց պարզվում է, որ իրականում ԼՂՀ բուհերում շուրջ 40 մասնագիտություններով մասնագետների պատրաստման պատասխանատու աշխատանքն իրականացնում են պրոֆեսորի հաստիքով 9 գիտության դոկտորներ, դոցենտի հաստիքով՝ 55 գիտության թեկնածուներ: Ուստի, միանգամայն ակնհայտ է դառնում, թե, նույնիսկ լավագույն ցանկության դեպքում, ինչպիսի շրջանավարտ մասնագետներ ենք պատրաստում: Մեր հետագա փաստարկները հիմնավորելու համար մանրամասն ծանոթանալով հանրապետության պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացված եւ իրականացվող գիտական աշխատանքներին: Այդ տեսանկյունով էլ համառոտակի ներկայացնենք Արցախի պետական համալսարանի և ոչ պետական բուհերի ամբիոնների նվաճումները նաև գիտահետազոտական աշխատանքների բնագավառում:

Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի **հայոց լեզվի և գրականության միացյալ ամբիոնի** դասախոսները (4 պրոֆեսոր, 10 գ.թ. դոցենտ) հիմնականում զբաղվում են «Չայ գրականագիտության զարգացման միտումները», «Արցախի գրական ընտանիքի ստեղծագործությունները և արցախյան ազգային ազատագրական պայքարը», «Ժամանակակից հայոց լեզվի, գրաբարի, արցախյան բարբառի, հայոց լեզվի մեթոդիկայի» և այլ հարցերի ուսումնասիրությամբ: Ուսումնամեթոդական աշխատանքին զուգընթաց՝ ամբիոնի դասախոսները գիտահետազոտական ուսումնասիրություններ են կատարել, որոնք ամփոփվել են 10-ից ավելի մենագրություններում՝ 30-ից

ավելի ուսումնամեթոդական ձեռնարկներում, ինչպես նաև մեթոդական ուղեցույցներում:²

Պատմական ֆակուլտետի **պատմության ամբիոնի** դասախոսների (3 պրոֆեսոր, 7 գ.թ. դոցենտ) գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ «Հայ ժողովրդի պատմության տարբեր փուլերը», «Արցախագիտությունը», «Հայկական հարցն ու Հայ դատը», «Արդի քաղաքական պատմությունը», «Հայ մշակույթի և արվեստի պատմությունը» և այլ հիմնահարցեր: Այդ ուղղությամբ ամբիոնի դասախոսները հրատարակել են 6 մենագրություն, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ, 38 գիտական հոդվածներ և այդ հիմնահարցերի ուղղությամբ կազմած ծրագրեր, ուղեցույցներ:³

Նույն ֆակուլտետի **փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնների** դասախոսների հետազոտությունները (2 պրոֆեսոր, 2 գ.թ. դոցենտ) հիմնականում նվիրված են Արցախի հիմնահարցի քաղաքական տարբեր մեկնաբանումների լուսաբանմանը և այդ ուղղությամբ հրատարակել են 6 ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ ուսանողների համար:

Մանկավարժական ֆակուլտետի **մանկավարժության և հոգեբանության ամբիոնի** դասախոսների (2 պրոֆեսոր, 6 գ.թ. դոցենտ) հիմնական գիտահետազոտական ուղղություններն են՝ «Հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմություն», «Արցախի դպրոցի մանկավարժական մտքի պատմություն», «Մանկավարժության արդի հիմնահարցեր», «Արցախահայ հոգեբանությունը էքստրենալ պայմաններում» և այլ հիմնահարցեր: Այդ ուղղությամբ ամբիոնի դասախոսները հրատարակել են 7 մենագրություն, 6 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 30-ից ավել գիտական հոդվածներ և ուսումնական ծրագրեր, ուղեցույցներ, ինչպես նաև մանկավարժության դասախոսությունների օժանդակ ձեռնարկ:⁴

2. Տե՛ս, ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի հաշվետվությունը, ԱրՊՀ արխիվ, գ.12, 13:

3. Տե՛ս, Պատմության ամբիոնի վարիչի հաշվետվությունը, գ.14, 15, 16:

4. Տե՛ս, Մանկավարժության ամբիոնի վարիչի հաշվետվությունը, գ.3, 4:

Օտար լեզուների ֆակուլտետի **ռուսաց և օտար լեզուների ամբիոնի** դասախոսները (4 գ.թ. դոցենտ) հետազոտություններ են կատարել «Ռուսական խոսքի կուլտուրայի բարձրացման ուղիները մայրենի լեզվի ուսուցիչների պատրաստման ընթացքում» (քերականական առումով), «Լեզվական ֆակուլտետի ուսանողների, օտար լեզու ուսուցանելու լեզվամշակութային ասպեկտը», «Շարժում արտահայտող բայերի խոսքի մեջ իրացման ուսուցման յուրահատկությունները», և այլ հիմնահարցերի ուղղությամբ: Ամբիոնի դասախոսները հրատարակել են 2 մենագրություն, 6 ուսումնամեթոդական ձեռնարկներ ուսանողների համար:⁵

Ֆիզիկամաթեմատիկական **ֆակուլտետի մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների** դասախոսները (3 գ.թ. դոցենտ) հիմնականում գիտահետազոտական աշխատանք են կատարում «Ֆունկցիոնալ անալիզի», «Դիֆերենցիալ հավասարումների», «Հանրահաշվի և երկրաչափության», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» հիմնահարցերի ուղղություններով: Այդ ուղղությամբ հրատարակել են 2 մենագրություն, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 20-ից ավելի գիտական հոդվածներ, ուղեցույցներ:

Ֆիզիկայի ամբիոնի դասախոսների (2 պրոֆեսոր, 3 գ.թ. դոցենտ) հետազոտական ուղղություններն են՝ «Քվանտային հետերոկառուցվածքների ոչ գծային օպտիկայի և կինետիկայի որոշ հարցերի տեսական հետազոտում», «Կինետիկ երևույթները մակերևութային դեֆեկտներով թաղանթներում», «Սահմանային էֆեկտների գազակինետիկ-հիդրոդինամիկ տեսությամբ անհամասեռ աէրոզոլային մասնիկների դինամիկան» և այլ հիմնահարցեր: Հրատարակվել են 2 մենագրություն, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ և ուղեցույցներ՝ սենիմար գործական պարապմունքների համար:⁶

Քիմիայի և կենսաբանության ֆակուլտետի քիմիայի և կենսա-

5. Տե՛ս, Ռուսաց և օտար լեզուների ամբիոնի վարիչի հաշվետվությունը, գ.3, 4:

6. Տե՛ս, Մաթեմատիկայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը, գ.12:

բանության ամբիոնների դասախոսների (2 պրոֆեսոր, 10 գ.թ. դոցենտ) գիտահետազոտական պրոբլեմը՝ «ԼՂՀ-ում կոլորադյան բզեզի զարգացման առանձնահատկությունները և նրա դեմ տարվող պայքարի հիմնական միջոցները», «ԼՂՀ-ի դպրոցականների և ուսանողների սիրտ-անոթային համակարգի գործունեության, գլխուղեղի կեղևի կենսաէլեկտրական պոտենցիալների առանձնահատկությունների, արյան և մեզի կենսաքիմիական ցուցանիշների ուսումնասիրումը սթրեսների ազդեցության պայմաններում» ուսումնասիրություններն են, որոնք ընդգրկված են ԱրՊՀ գիտահետազոտական աշխատանքի պլանում:

Ստոնատոլոգիայի ամբիոնի դասախոսներն իրենց հետազոտական աշխատանքը կատարում են հանրապետության հիվանդանոցներում, դեղատներում, պոլիկլինիկաներում, համալսարանի լաբորատորիաներում: Այդ ուղղությամբ ամբիոնների դասախոսները հրատարակել են 4 մենագրություն, 6 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 30-ից ավելի գիտական հոդվածներ, ուղեցույցներ և դասախոսությունների օժանդակ ձեռնարկներ:⁷

Տնտեսաիրավաբանական ֆակուլտետի **տնտեսագիտության ամբիոնի** դասախոսներն (4 գ.թ. դոցենտ) ուսումնասիրություններ են կատարում շուկայական տնտեսության նոր խնդիրների շուրջ: Հաշվի առնելով մեր հանրապետության սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները՝ գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են երեք հիմնական՝ մասնավորեցման, ֆինանսական կայունացման և ԼՂՀ բնակչության կենսամակարդակի բարձրացման, տնտեսական բարեփոխումների ռազմավարությունը ԼՂՀ-ում և այլ հիմնահարցերի ուղղությամբ: Այդ նպատակով, ամբիոնի դասախոսները հրատարակել են 4 մենագրություն, 12 ուսումնամեթոդական ձեռնարկ և ակտիվ մասնակցել են «Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք (2002-2008թթ.)» գրքի հրատարակմանը:⁸

7. Այդ մասին տես, Կենսաքիմիական ֆակուլտետի կաբինետում պահպանվող ամբիոնի վարիչների հաշվետվությունը, գ.2, 3, 4:

8. Տես, Տնտեսաիրավաբանական ֆակուլտետի կաբինետում պահպանվող ամբիոնի հաշվետվությունը, գ.9, 10, 11:

Իրավաբանության ամբիոնի դասախոսները (3 գ.թ. դոցենտ) հետազոտություններ են կատարել «Ռուսաստանի Ռազմության 1993թ. Սահմանադրությունը», «Իրավունքների պաշտպանության հայցային ձևը», «Պետական ապարատը և նրա զարգացման հիմնական միտումները» հիմնահարցերի ուղղությամբ: Ամբիոնի դասախոսները հրատարակել են 3 մենագրություն և 6 մեթոդական ձեռնարկ ուսանողների համար:

Ճարտարագիտական ֆակուլտետի **ճարտարագիտության և շինարարության ամբիոնի** դասախոսների (2 պրոֆեսոր, 3 գ.թ. դոցենտ) գիտահետազոտական աշխատանքներում, բացի դասախոսներից, ընդգրկված են նաև մեր հանրապետության կառավարման մարմիններում և համապատասխան հիմնարկներում աշխատող բարձրորակ մասնագետներ: Հետազոտությունները կատարվում են հիմնականում «Լեռնային Ղարաբաղի ջրային և մյուս բոլոր էներգետիկ ռեսուրսների հայտնաբերման, նրանց որակի և քանակի որոշման և օգտագործման, հիդրոէներգետիկ օբյեկտների կառուցման, գյուղատնտեսության արագընթաց զարգացման գործում» թեմաների ուսումնասիրության ուղղությամբ:

Ամբիոնի դասախոսների ուժերով ստեղծվել են երեք մասնագիտական՝ մեխանիկայի, ավտոմոբիլի և ընդհանուր տեխնիկական առարկաների, գծագրության, գծագրական երկրաչափության, չափագիտության և էլեկտրատեխնիկական կաբինետներ: Ամբիոնի պրոֆեսորներ Վ. Ավանեսյանը, Կ. Ադամյանը, դոցենտ Ա. Ամիրջանյանը (2001-2003թթ.) հրատարակել են «Նյութերի դիմադրություն», «Հիդրավիկա» առարկաների հայերեն և ռուսերեն լեզուներով դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և մեթոդական ուղեցույցներ լաբորատոր աշխատանքների կատարման համար:

Լուրջ հետազոտական աշխատանքներ են կատարել նաև ագրարային ֆակուլտետի (այժմ՝ Երևանի Ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ) **գյուղատնտեսության ամբիոնի** դասախոսները (2 պրոֆեսոր, 3 գ.թ. դոցենտ): Հետազոտական աշխատանքներ են կատարում «Լեռնային Ղարաբաղի

պայմաններում խաղողի աճեցման ագրոտեխնիկայի հիմնական տարրերի մշակումը հողի տարբեր ջրային ռեժիմներում», «Հողի ջրային ռեժիմի ազդեցությունը խաղողի վազի աճի ու բերքատվության վրա ԼՂՀ նախալեռնային գոտու պայմաններում» հիմնահարցերի ուղղությամբ: Ամբիոնը հրատարակել է 4 մենագրություն, 10 ուսումնամեթոդական ձեռնարկներ: Ամբիոնին կից ստեղծված են անասնաբուժական կաբինետ և ագրոքիմիական լաբորատորիա: Ամբիոնը գիտական կապեր է հաստատել Հայաստանի գյուղատնտեսության ինստիտուտի և գյուղատնտեսական ակադեմիայի հետ:⁹

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոչ պետական պետհավատարմագրված բուհերի՝ «Մեսրոպ Մաշտոց» և «Գրիգոր Նարեկացի» համալսարանների, հաշվետվությունների ուսումնասիրումից պարզվել է, որ լուրջ աշխատանքներ են կատարել նաև գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ: «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի դասախոսները 2004-2008 թթ. հրատարակել են 6 մենագրություն, 12 ուսումնամեթոդական ձեռնարկ, 60-ից ավելի գիտական հոդվածներ, ուղեցույցներ սեմինար գործնական պարապմունքների համար:

Համալսարանը գիտական կապեր ունի Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի բուհերի հետ: Համալսարանում պարբերաբար հրավիրվում են միջազգային գիտաժողովներ՝ նշված բուհերի հանրաճանաչ գիտնականների մասնակցությամբ: Համալսարանն ունի հայագիտական կենտրոն, «Հաշվողական տեխնիկա և ծրագրավորում», «Թարգմանչական գործ» ուսումնական կաբինետներ, որտեղ ուսանողները հետազոտական աշխատանք են կատարում:

«Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի դասախոսները (3 պրոֆեսոր, 1 ակադեմիկոս, 12 գ.թ. դոցենտ) ուսումնամեթոդական աշխատանքներից բացի զգալի

9. Այդ մասին տես, նշված ամբիոնների հաշվետվությունները, ԱրՊՀ արխիվ, գ.6, 7, 8, 9, ինչպես նաև համալսարանի տեղեկագրում հրատարակված բազմաբնույթ հոդվածները, որոնք կապված են հետազոտության հետ:

աշխատանք են կատարել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Համագործակցելով ՀՀ ԳԱԱ գրականության և լեզվի ինստիտուտի, ԵՊՀ-ի պատմության, իրավագիտության ամբիոնների, ՀՊՄՀ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոնի և այլ բուհերի հետ, համալսարանի դասախոսները պաշտպանել են թեկնածուական, դոկտորական ատենախոսություններ, միաժամանակ հրատարակել մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ: Համալսարանն ունի հայագիտական կենտրոն, ստոմատոլոգիայի պոլիկլինիկա, լաբորատորիա, որտեղ ուսանողները հետազոտական աշխատանքներ են կատարում՝ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ուսումնասիրության ուղղությամբ:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտակի շարադրանքից էլ պարզ է դառնում, որ Արցախի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում, հանրապետության գիտական կենտրոնում լուրջ հետազոտական աշխատանքներ են կատարվել գիտության տարբեր ոլորտների, մշակույթի, հասարակական, քաղաքական մտքի զարգացման գործում:

Մեր կարծիքով, շատ կարևոր է, որ առավել արդյունավետ օգտագործվի Արցախի ներկայիս գիտակրթական ներուժը և կրթության ոլորտում նախատեսված բարեփոխումներն իրականացվեն այնպես, որպեսզի դրանք նպաստեն ԼՂՀ սոցիալ-տնտեսական ծրագրերի հնարավորինս արագ և լիարժեք իրագործմանը:

Պրոֆեսորադասախոսական կադրերի նյութական ապահովության չափորոշիչներն ԱրՊՀ-ում

Եթե հաշվի առնենք, որ վերը բերված տվյալները նախորդ ուսումնական տարիների համեմատ առավելագույնն են, ապա պարզ է, որ իսկապես լուրջ է համալսարանները որակյալ պրոֆեսորադասախոսական կազմով համալրելու խնդիրը՝ նախապես հանրապետության մասնագետների պահանջարկը ճշտելուց հետո:

Այժմ անդրադառնանք խնդրո առարկային մեկ այլ տեսանկյունից: Ենթադրենք ինչ-որ կերպ լուծվել է գործող համալսարանները որակյալ պրոֆեսորադասախոսական կազմով ապահովելու խնդիրը: Պարզ է, որ ի վերջո մարդն աշխատում է նաև արժանավայել ապրելու համար, ինչը, բնականաբար, պահանջում է կատարած աշխատանքին համարժեք, այսինքն՝ արժանավայել վարձատրություն:

Մեր ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ ներկա պայմաններում արտադրական հարաբերությունների կատարելագործման արմատական խնդիրներից մեկը պետք է համարել տարբեր մասնագիտությունների ու որակավորման աշխատողների տարիֆային դրույքների ու պաշտոնային ռոճիկների կառուցվածքի կարգավորումը, որպեսզի հնարավոր լինի, նախ, պահպանել աշխատանքի ռեդուկցիայի պահանջները, երկրորդ՝ ապահովել փոխադարձ կապը տարբեր տարախմբերի աշխատողների աշխատանքի վարձատրության և նրանց պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ ապրանքների գների մակարդակների միջև: Նույնիսկ սոցիալիզմի պայմաններում ամենացածր տարախմբերի աշխատողների նվազագույն աշխատավարձը սահմանվում էր այնպես, որ այն ապահովի նրանց ընտանիքների անդամների կենսամակարդակը:¹⁰

10. Տե՛ս, Ա.Ավանեսյան, Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը, «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2008, էջ 188-189:

Ստորև ներկայացնենք ներկայումս պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կիրառվող վարձատրության պետական դրույքաչափերը՝ ԱրՊՀ-ի օրինակով (տես՝ աղ. 30):

Աղյուսակ 30

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարձատրության պետական դրույքաչափերն ԱրՊՀ-ում¹¹

<i>Պաշտոնը</i>	<i>Դրույքաչափի ստորին սահմանը /հազ. դրամ/</i>	<i>Դրույքաչափի վերին սահմանը /հազ. դրամ/</i>	<i>Դրույքաչափի միջինը /հազ. դրամ/</i>
Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր	30060	45100	37580
Ամբիոնի վարիչ, դոցենտ	23260	34900	29080
Ամբիոնի վարիչ, ասիստենտ	21180	31780	26480
Դեկան, պրոֆեսոր	31920	47880	40000
Դեկան, դոցենտ	26120	39180	36000
Դեկանի տեղակալ, դոցենտ	21760	32650	27205
Դեկանի տեղակալ, ասիստենտ	13450	26170	21810
Պրոֆեսոր	27120	40680	33900
Դոցենտ	20790	31190	25990
Ասիստենտ	16020	24020	20020
Դասախոս	15470	23210	19240

Եթե ուշադրություն դարձնենք ԼԴՀ 2013թ. պետական բյուջեում սահմանված նվազագույն աշխատավարձի չափին, որը կազմում է 32500 դրամ եւ կենսապահովման նվազագույն զամբյուղի չափին, ապա ստացվում է, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդամենը մի չնչին մասն է հաղթահարում այդ

11. Նույն տեղում:

նվազագույնի շեմը: Եվ դա այն դեպքում, երբ ոչ հեռավոր անցյալում՝ խորհրդային տարիներին, պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրույքային աշխատավարձերը դասված էին բարձր վարձատրվողների կարգախմբում: Մյուս կողմից, պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործող դրույքաչափերի՝ վերջին տարիներս հանրակրթական ոլորտի ուսուցիչների համար կիրառվող դրույքաչափերի հետ համեմատությունն առաջացնում է մի տարօրինակ զգացողություն: Պարզվում է, որ տվյալ բուհի երեկ թողարկած ուսուցիչն այսօր, նույնիսկ առանց որեւէ մանկավարժական փորձառության, մեկ դրույք դասաժամ աշխատելու պարագայում մի քանի անգամ ավել է վարձատրվում, քան դասախոսն իր մեկ դրույքաչափով դասախոսելու համար: Ասվածը երբեք չի նշանակում, թե հանրակրթության ոլորտի աշխատողների մեկ դրույքի համար տրվող վարձատրությունը շատ է, այլ այն, որ պետք է խելամտորեն սահմանել բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեկ դրույքին համապատասխանող վարձավճարը:

Հաճախ վերը բերված փաստարկին կրթության ոլորտի պատասխանատուները հակադարձում են, որ ներկայումս պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձը գերազանցում է հանրակրթական ոլորտի աշխատակիցների աշխատավարձը, քանզի բաղկացած է երկու մասից՝ պետական եւ վճարովի ուսուցման համար տրվող վարձավճարներից:

Ուստի ԱրՊՀ-ի օրինակի վրա հանգամանորեն ծանոթանանք բուհում ուսուցումն իրականացնելու համար այս երկու ճանապարհով իրականացվող վարձատրության վիճակին:

Ավելորդ չեն համարում ընթերցողների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի պետական հաստիքային դրույքաչափերն այսպես սահմանվել է ԼՂՀ կառավարության «ԼՂՀ բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 1998թ. դեկտեմբերի 29-ի թ. 292 որոշման հիման վրա:¹²

12. Ա.Ավանեսյան, նշվ. աշխ., էջ 189-190:

Անցած տարիների ընթացքում տարբեր բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, համեմատաբար փոփոխվել են աճի ուղղությամբ: Ուսումնասիրությունից պարզվել է, որ միայն պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների պաշտոնային դրույքաչափերն են, որ համառոտ են փոփոխության չեն ենթարկվել այլեւայլ պատճառներով:

Պատճառներից, թվում է՝ համոզիչ փաստարկներից մեկը բուհերում վճարովի հիմունքներով սովորող ուսանողներից գանձվող ուսման վարձավճարներից տրվող հավելավճարն է:

Եթե ենթադրենք, որ գանձվող վարձավճարների շնորհիվ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ամսական աշխատավարձը հասնում է պաշտոնային դրույքաչափի անգամ եռապատիկին, ապա, միեւնույն է, այն նույնպես բավարար համարել չի կարելի, որովհետեւ դրանք համեմատության մեջ դնելով տնտեսության այլ բնագավառների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի հետ՝ կտեսնենք, որ ներկայիս հնարավոր բարձր որակավորման դասախոսի պաշտոնային դրույքաչափը հազիվ կարելի է համեմատել տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող ցածր որակավորման բանվորի, համակարգչային օպերատորի եւ այլոց աշխատանքի վարձատրության հետ:

Մյուս կողմից՝ կրթության համակարգի իրականացվող բարեփոխումները մոտ ապագայում ստեղծելու են մի իրավիճակ, երբ տարեկան շրջանավարտների թվաքանակը, նույնիսկ դիմորդների լրիվ բուհ ընդունվելու պարագայում, հազիվ թե կարողանա համալրել պետական պատվերով սահմանված տեղերը եւ այլեւս դիմորդ չի լինելու, որպեսզի ընդունվի եւ ուսանի վճարովի հիմունքներով: Այնպես որ մոտ ապագայում անելանելի վիճակ չստեղծելու համար՝ կապված բուհ ընդունվողների թվաքանակի նվազման, անհրաժեշտ է, որպեսզի գոնե 2009թ. պետական բյուջեում ներառվի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերը թեկուզ բավարար չափով ավելացնելու համար պահանջվող գումարը:

Վերը բերված փաստարկներն ավելի համոզիչ դարձնելու հա-

մար ծանոթանանք ԱրՊՀ-ում պետական պատվերով եւ վճարովի հիմունքով սովորողների թվակազմին՝ ըստ 2008թ. հոկտեմբերի 1-ի տվյալների (տես՝ աղ. 31):

Աղյուսակ 31

ԱրՊՀ-ում պետպատվերով եւ վճարովի հիմունքով սովորող ուսանողների թվաքանակը 2013թ. մայիս

	<i>Անվճար համակարգ</i>	<i>Վճարովի համակարգ</i>	<i>Ընդամենը</i>
Առկա բաժին	848	1381	2221
Չեռակա բաժին	-	1398	1398
Ընդամենը	848	3627	4475

Աղյուսակում բերված թվերը մեր կողմից հնչեցված մտավախության համար իսկապես հիմնավոր են եւ քանի ուշ չէ, պետք է ձեռնամուխ լինել պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի վերանայմանը:¹³

13. Տե՛ս, ԱրՊՀ արխիվ, հաշվապահության ֆոնդ, գ.1, 2, 3:

ԼՂՀ-ում գիտական կոչում ունեցողների թվաքանակն ըստ մասնագիտությունների

<i>Մասնագիտություններ</i>	<i>գ.թ</i>	<i>գ.թ., դոց.</i>	<i>գ.թ., պրոֆ.</i>	<i>գ.դ.</i>	<i>գ.դ., պրոֆ.</i>
Աշխարհագրական գիտություններ	2	1	-	-	-
Բանասիրական գիտություններ	23	20	-	2	2
Բժշկական գիտություններ	6	2	-	-	-
Գյուղատնտեսական գիտություններ	8	5	-	1	1
Իրավաբանական գիտություններ	2	1	-	-	-
Կենսաբանական գիտություններ	8	2	-	1	1
Հոգեբանական գիտություններ	2	1	1	-	-
Մանկավարժական գիտություններ	13	7	1	1	1
Պատմական գիտություններ	7	4	1	1	1
Տեխնիկական գիտություններ	10	5	1	1	1
Տնտեսագիտական գիտություններ	7	3	-	-	-
Փիլիսոփայական գիտություններ	2	-	1	-	2
Քիմիական գիտություններ	4	3	1	-	-
Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ	8	7	1	2	2
Ընդամենը	100	61	7	9	9

Աղյուսակից հետեւում է, որ տարբեր մասնագիտությունների գծով գիտնականների քանակը խիստ անհամաչափ է, թեկուզ, միեւնույն ժամանակ, ոչ պակաս ուշագրավ է, որ ԼՂՀ-ում, այնուամենայնիվ, այդպիսիք կան, չնայած ոչ բոլոր դեպքերում է, որ կարող ենք հպարտանալ նրանց կատարած հետազոտությունների մակարդակով ու գիտագործնական նշանակությամբ՝ ներկայումս համաշխարհային գիտական շրջանակներում ընդունված չափանիշների հետ համադրության մեջ:

Ինչպես նշեցինք նախորդ բաժնում, այդ առումով հատկապես կարելու է, որ առավել արդյունավետ օգտագործվի Արցախի ներկայիս գիտակրթական ներուժը եւ կրթության ոլորտում նախատեսված բարեփոխումներն իրականացվեն այնպես, որպեսզի դրանք նպաստեն ԼՂՀ սոցիալ-տնտեսական ծրագրերի հնարավորինս արագ եւ լիարժեք իրագործմանը:

Կառավարության գործունեության առաջիկա տարիների ծրագրում առանձնակի ուշադրություն է հատկացվում առաջնահերթ զարգացման ենթակա մի շարք հեռանկարային տնտեսաճյուղերի, որոնցում լուրջ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է ներդնել արդի գիտական նվաճումները: Իսկ դրա համար հրատապ անհրաժեշտություն է ունենալ, նախ՝ համարժեք մասնագետներ պատրաստելու հնարավորություն եւ ապա՝ գրավիչ պայմաններ արդեն պատրաստ երիտասարդ մասնագետների զբաղվածությունն ապահովելու եւ որ ամենակարելու է՝ նրանց տեղում պահելու համար:

Առանձնահատուկ ուշադրության ենթակա տնտեսական ճյուղերն ու ոլորտներն են. ագրարային բնագավառում՝ սերմնաբուծություն եւ տոհմային գործ, խաղողագործություն, պտղաբուծություն, գյուղմթերքների վերամշակում՝ նախկին արտադրությունների վերագործարկմամբ եւ նոր փոքր ու միջին արտադրությունների ստեղծմամբ եւ այլն, արդյունաբերության բնագավառում՝ ընդերքի ռացիոնալ օգտագործում եւ հանքարդյունահանման արտադրություն, թեթեւ եւ սննդի արդյունաբերություն, ներքին ռեսուրսների վրա հիմնված մրցունակ արտադրությունների հիմնում ու զարգացում եւ այլն, արտադրական ենթակա-

ռուցվածքների բնագավառում՝ սեփական էներգետիկ ռեսուրսների, առաջին հերթին՝ հիդրոէներգետիկ ներուժի օգտագործում, այդ թվում՝ փոքր ՅԷԿ-երի շինարարություն, այլընտրանքային էներգետիկ աղբյուրների ստեղծում, բնակավայրերի համընդգրկուն գազաջերմամատակարարում, ջրամբարների հիմնանորոգում, նորերի կառուցում եւ ոռոգման համակարգերի գործարկում ու զարգացում եւ այլն:

Ելնելով մոտակա տարիներին հանրապետության տնտեսության եւ կրթական համակարգի զարգացման միտումներից ու ներկայումս առկա գիտակրթական ներուժից, ինչպես նաեւ խնդիր ունենալով ընդլայնել նպատակային գիտական աշխատանքների ծավալը, ինչը մեծապես կխթանի երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործընթացը, մեր կարծիքով, նպատակահարմար է գերակա համարել եւ առանձնակի ուշադրություն դարձնել հետեւյալ գիտական ուղղություններին.

- գյուղատնտեսություն,
- ճարտարագիտություն (առանձնապես՝ լեռնարդյունաբերության ճյուղերի),
- հայոց լեզու եւ գրականություն,
- պատմություն (հայագիտության, այլ կերպ՝ հայրենագիտության շեշտադրմամբ)
- տնտեսագիտություն (հատկապես՝ հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական ոլորտում աշխատելու համար):

Մյուս ուղղություններով գիտական աշխատանքների կատարումը եւ երիտասարդ մասնագետների պատրաստումը հիմնականում կարելի է իրականացնել՝ օգտվելով ՀՀ եւ այլ երկրների գիտաուսումնական կենտրոնների հնարավորություններից:

Հայաստանում եւ Արցախում նորանկախ պետականության հաստատումից հետո կրթության ոլորտի ռազմավարությունը միտված է հայկական կրթական համակարգի ինտեգրմանը, ժամանակակից համաշխարհային կրթական համակարգին, այլ կերպ՝ Բոլոնիայի համաձայնագրին անդամակցած երկրների կրթահամակարգի ներդրմանը մեր երկու հանրապետություններում:¹⁴

14. Տե՛ս, Բոլոնիայի հռչակագիր, 1998:

Ակնհայտ են եւ վիճարկման ենթակա չեն այն առավելությունները, որ տալիս է մասնագետների պատրաստումն այդ կրթահամակարգով՝ նկատի ունենալով նման պատրաստվածության կադրերի հետագա պահանջվածությունն աշխատանքի շուկայում:

Արցախին անհրաժեշտ է երկրի տնտեսությունն ու անվտանգությունն ապահովող կրթահամակարգ, որն առաջնորդվում է միջազգային չափանիշներին համապատասխանող պլաններով եւ ծրագրերով: Այս համատեքստում, նշանակալից էին 2008թ. մայիսին Ստեփանակերտում ՀՀ եւ ԼՂՀ կրթության ոլորտի ղեկավարների՝ հանրապետության վարչապետի մասնակցությամբ, կայացած քննարկումները, որոնք նվիրված էին Արցախի կրթական համակարգի հիմնախնդիրներին, առկա իրավիճակը վերափոխելու եւ հայաստանյան ու եվրոպական կրթական դաշտերում իրականացվող բարեփոխումներին համահունչ դարձնելու նպատակով:¹⁵

Քննարկումների ընթացքում վեր հանվեցին Արցախի կրթահամակարգում տեղ գտած բացթողումները, կատարվեցին առաջարկություններ, որոնք, դրանց հեղինակների հիմնավորմամբ, իրականացվելու պարագայում համակարգը կարող է շոշափելի լավարկվել եւ համապատասխանեցվել կառավարության կողմից տնտեսության տարբեր ոլորտներում առաջարկվող ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման պահանջին: Ընդ որում՝ հնչած առաջարկությունները հավասարապես առնչվում են ինչպես ԱրԴՀ-ի, այնպես էլ հանրապետությունում գործող ոչ պետական բուհերի գործունեությանը:

Նշված քննարկումների շեշտադրումների մասին հստակ պատկերացում կազմելու համար ներկայացնենք հնչած կարծիքներից ու տեսակետներից մի քանիսը:

Ա. ԹԱՐԻՎԵՐԴՅԱՆ, Հայաստանի պետական ազրարային համալսարանի ռեկտոր. - Ջարգացած գյուղատնտեսություն ունե-

15. Տե՛ս, ԼՂՀ կառավարության ընդհանուր բաժնում պահպանվող նյութերը, գ.12:

նալու համար առաջին հերթին պետք է ունենալ ագրոպարենային համակարգի որակյալ մասնագետներ: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում համախառն ներքին արդյունքի 35-40 տոկոսը պատկանում է ագրոպարենային համակարգին: Դա արդեն իսկ ենթադրում է լուրջ ուշադրություն այս ոլորտին եւ բավարար մասնագետների պատրաստում:

Այսօր ոչ միայն Հայաստանում եւ Արցախում, այլեւ ողջ աշխարհում ագրոպարենային համակարգի մասնագիտությունների գծով կրթության իրականացումն ունի երկու կարեւոր առանձնահատկություն: Նախ, այն գրավիչ չէ երիտասարդների եւ նրանց ընտանիքների համար, ուստի, բազմաթիվ պատանիների նպատակային ծրագրերում չի ընդգրկվում այնպիսի կարեւոր մասնագիտություններ ստանալու մտադրությունը, ինչպիսիք են ագրոնոմիան եւ անասնաբուծությունը: Այս առումով պետք է ունենալ հստակ մոտեցումներ եւ ծրագրեր, ինչն այսօր իրականացվում է ՀՀ-ում, եւ քննարկումներն այն բանի ապացույցն են, որ ցանկություն կա իրագործել նաեւ Արցախում: Ի՞նչ է անհրաժեշտ այս խնդրին լուծում տալու համար: Ոչ այլ ինչ, քան ստեղծել հնարավորություններ ապագա աշխատատեղերի համար, դրանք սոցիալ-կենցաղային առումով ապահովված դարձնել կառավարության համապատասխան որոշումներով: Եվ ապա՝ ագրարային կրթությունն ինքնին շատ ծախսատար է, որն իր բնույթով ենթադրում է ոչ միայն տեսական ուսուցում, այլեւ ավելի շատ՝ գործնական հմտությունների ձեւավորում, ինչն իր հերթին ենթադրում է նյութատեխնիկական եւ լաբորատոր բազայի ստեղծում, այսինքն՝ ոչ միայն կադրային ապահովվածություն, այլ նաեւ ուսումնափորձնական տնտեսությունների առկայություն:

Արցախի պետհամալսարանի հետ Հայաստանի պետական ագրարային համալսարանը կապեր վաղուց է հաստատել: Արցախում, անգամ կադրային համապատասխան ապահովվածության առկայությամբ, ցավոք, այսօր հնարավոր չէ պատրաստել պահանջվող մասնագետներ՝ ներկայիս նյութատեխնիկական բազայի բացակայության պատճառով: Ստեփանակերտի գյուղքոլեջի,

որը 7 մասնագիտությունների գծով միջին օղակի կադրեր է պատրաստում, նյութատեխնիկական բազան նույնպես չի համապատասխանում ներկայացվող պահանջներին: Մի օրինակ. անասնաբուժական կրթությունն ագրոպարենային համակարգում ամենաթանկն է, որը ենթադրում է մոտ 40 անուն մասնագիտական առարկաների համար համապատասխան լաբորատորիաներ, դեղանյութեր, քիմիական ռեակտիվներ, համապատասխան կենդանիներ: Այսօր խոսել ագրոպարենային համակարգի ոլորտի մասնագետների լիարժեք պատրաստման մասին՝ չափազանց դժվար է, եւ երկօրյա քննարկումների առարկան դա էր: Այն հնարավոր լուծումները, որոնք քննարկման սեղանին դրվեցին, երեքն էին. 1. աջակցել ԱրՊՀ-ում եւ գյուղքոլեջում այդ գծով մասնագետների պատրաստման որակի բարելավմանը, 2. ստեղծել առանձին բարձրագույն ուսումնական հաստատություն, 3. ձեւավորել-կազմավորել Հայաստանի ագրարային համալսարանի մասնաճյուղ LՂՀ-ում: Երկարատեւ քննարկումների արդյունքում նախնական պայմանավորվածություն ու համաձայնություն է ձեռք բերվել սկսել Հայաստանի պետական ագրարային համալսարանի մասնաճյուղի ձեւավորման գործընթացն Արցախում:

Անշուշտ, կան տեխնիկական, կադրային ապահովվածության դժվարություններ: Ինչպե՞ս ենք դա պատկերացնում առաջին փուլում: Այդ մասնաճյուղը կարող է կայանալ միայն ԱրՊՀ-ի հզորացման միջոցով, որովհետեւ բազմաթիվ առարկաների դասավանդումը, կադրային ապահովվածությունը ենթադրում է, որ դա պետք է լինի ԱրՊՀ-ի միջոցով: Առանձին առարկաների գծով կլինի կադրերի պակաս. Հայաստանի պետական ագրարային համալսարանի մասնագետների միջոցով կկազմակերպվի ցիկլային ուսուցում: Կլինի նաեւ ուսանողների կարճաժամկետ տեղափոխություն մեր համալսարան՝ համապատասխան լաբորատոր ցիկլային ուսում ստանալու համար: Հայաստանի ագրարային համալսարանը գիտակցում է, թե ինչ պատասխանատու քայլ է ստանձնում: Բայց քանի որ եղել է առաջարկություն, եղել է համաձայնություն, ուստի պետք է համարել, որ գործընթացն այսօրվանից սկսվում է:

Յ. ԹՈՔՄԱՋՅԱՆ, Երեւանի ճարտարապետության եւ շինարարության համալսարանի ռեկտոր. – Պատրաստվում ենք Արցախում ներդրում ունենալ շինարարական մասնագիտությունների՝ շինարարության, ջրային համակարգերի, ճանապարհների նորոգումների գծով կադրերի պատրաստման գործում: Խնդիրը հստակ է՝ կապված երկրի զարգացման եւ անվտանգության հետ: Հենց միայն ջրային համակարգերը վերցրեք. ջրամբարները մեծ ուշադրություն են պահանջում, իսկ համապատասխան մասնագետներ չկան: Ցավոք, այսօրվա ուսման որակը հեռու է բավարար լինելուց: Այստեղ նաեւ դասավանդող դասախոսների բացակայության խնդիր կա: Այդ պատճառով առաջին տարիներին դա հնարավոր կլինի՝ ստեղծելով կոնսորցիում, որպեսզի լավագույն մասնագետները Երեւանից գան Արցախ եւ տեւական ժամանակ մնալով՝ պատրաստեն ուսանողներ ու դասախոսներ:

Ռ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր. – Ինժեներական մասնագիտությունների գծով խնդիրներ կան: Ներկայացնելով այն հաստատությունը, որը ժամանակին առաջինը «ներխուժեց» Արցախ եւ ստեղծեց Երեւանի պետական պոլիտեխնիկական համալսարանի մասնաճյուղը, մենք տեսնում ենք, որ այստեղ ունենք մեղքի որոշակի բաժին՝ ոչ հետեւողական լինելու առումով: Բնականաբար, տեսնում ենք նաեւ հնարավորություններ՝ ընդլայնելու մասնագիտությունների անվանացանկը: Մասնավորապես, կարող ենք առաջարկել եւ համապատասխան մասնագիտական պատրաստում իրականացնել ընդերքի հանածոների հետախուզման ու յուրացման ուղղությամբ: Լուրջ խնդիրներ կան էներգետիկայի ոլորտում՝ էլեկտրամատակարարման, էլեկտրական ցանցերի, այլընտրանքային էլեկտրաէներգիայի, կապի համակարգի, տեղեկատվության տեխնոլոգիաների մասնագետների պատրաստման հարցում:

ՅՈՒ. ՍՈՒՎԱՐՅԱՆ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր. - Այսօր, երբ ունենք շուկայական տնտեսություն, նախընտրում ենք ունենալ մրցակցային տնտեսություն նաեւ համաշխարհային առումով: Հետեւապես պետք է

ունենանք նաեւ կադրեր, որոնք որակական մակարդակով չեն զիջում արտասահմանյան գործընկերներին: Կա կրթական մակարդակի բարձրացման երկու ճանապարհ՝ կիրառել նոր ուսումնական պլաններ, ուսումնական ծրագրեր, որոնք համահունչ են եվրոպական համապատասխան նմուշներին եւ կրթության առաջավոր տեխնոլոգիաներ:

Մենք տուրք ենք տալիս խորհրդային ժամանակներից եկող մի փիլիսոփայության, այն է՝ պատրաստել ավելի շատ տեսաբաններ, տեսությունը խորն ուսումնասիրած մարդիկ, որոնք, սակայն, այսօր չունեն շուկայական անհրաժեշտ մասնագիտական հմտություններ: Այսօր չկա այն արտադրական շրջանը, ուր մարդիկ սովորեն ու դառնան լիարժեք մասնագետներ: Այնինչ, այսօր գործատուն ընտրում է մարդուն, որն արդեն պատրաստ է աշխատելու: Իհարկե, այս ամենի համար անհրաժեշտ են լավ դասախոսական կադրեր, հարուստ ուսումնական պլան եւ առարկայական ծրագրեր:

Այս դիտանկյունից նայելով՝ ԱրՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը պետք է կատարի հետեւյալ քայլը՝ ընդլայնի մասնագիտությունների ցանկը: Այսօր շուկային անհրաժեշտ են մեներջերներ, մարքետոլոգներ, պետական ծառայողներ եւ այլն: Ընդհանուր առմամբ, տնտեսական շուկային նայելով՝ վարել ճկուն քաղաքականություն եւ թարմացնել մասնագիտությունների ցանկը: Մյուս խնդիրը կադրային ներուժը հզորացնելն է:

Կան խնդիրներ կրթության տեխնոլոգիաների առումով: Ասենք՝ դասախոսություններ չեն կարդացվում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ: Վաղուց ժամանակն է բարձրանալ «կավիճ-սրբիչ» համակարգից եւ անցնել ժամանակակից տեխնոլոգիաներով դասախոսություններին ու փորձնական պարապմունքների կազմակերպմանը: Շատ կարելու է նաեւ մասնագիտական գրականությամբ ապահովվածությունը: Ժամանակն է, որ ԱրՊՀ-ն եւս ունենա սեփական գիտական նյութեր: Ռեկտորի հետ պայմանավորվածություններ ենք ձեռք բերել, որոնք պետք է նպաստեն այդ խնդրի լուծմանը եւս:

Ռեկտորների վերը բերված կարծիքները, իրոք, ուշադրության արժանի են:

Կարծում ենք՝ այստեղ հնչեցված գաղափարները համադրման կարիք ունեն եւ Արցախում բարձրագույն կրթության քաղաքականությունը մշակելու գործընթացում կարող են, եթե ոչ վճռորոշ, ապա առնվազն կարելու դեր ունենալ:

Նկատի ունենալով, որ ԱրՊՀ-ը գիտական սերտ կապեր ունի Հայաստանի բուհերի հետ, նպատակահարմար գտանք համառոտակի որոշ տեղեկություններ տալ նրանց պատմական անցյալի մասին: Այս համատեքստում նախապես մի փոքր պատմական անդրադարձ կատարենք՝ թռուցիկ հայացք ձգելով Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհրդի 1919թ. մայիսի 16-ի որոշմամբ ստեղծված Երեւանի պետական համալսարանի գործունեությանը՝ նրա ստեղծմանը հաջորդած առաջին տասը տարիներից հետո:

Թե ինչու, հատկապես, տասը տարիների, կարծում ենք, պարզ կլինի, եթե ծանոթանանք Լ. Պ. Ղարիբջանյանի «Երեւանի պետական համալսարան» գրքի առաջաբանում բերված հետեւյալ բացատրությանը. «Ի դեպ, նկատենք, որ 1930 թվականը համալսարանի եւ ընդհանրապես բարձրագույն կրթության համար շրջադարձային կետ հանդիսացավ, երբ պահանջ առաջադրվեց բարձրագույն դպրոցն էլ ավելի մոտեցնել կյանքին, այն նպատակաուղղել ժողովրդական տնտեսության ու մշակույթի աճող պահանջմունքների բավարարմանը:¹⁶ Անհրաժեշտ էր ավելի հստակ որոշել պատրաստվող մասնագետների ուղղությունը: Ուստի, երկրով մեկ սկսեցին հիմնադրել ճյուղային մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Երկրում տարվող ընդհանուր քաղաքականությանը համապատասխան՝ 1930 թվականին վերակառուցվեց նաև Երեւանի պետական համալսարանը, որի առանձին ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ»:¹⁷

16. Տե՛ս Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, Երևան, 1994, էջ 6-7:

17. Նույն տեղում:

Եթե Լ. Պ. Ղարիբջանյանի արտահայտած միտքը տարածենք Արցախի համալսարանների եւ, հատկապես, Արցախի պետական համալսարանի վրա, ապա ՀՀ բուհերի ռեկտորների վերը նշված տեսակետները եւ ԼՂՀ իշխանությունների առկա մտահոգությունը դառնում են համահունչ այն իրողությանը, որը նկատվում է մեր հանրապետության վերջին տարիների բուհական համակարգում:

Երեւանի պետական համալսարանի հիմքի վրա ճյուղային-մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունները ստեղծվել են հետեւյալ ժամանակագրական հաջորդականությամբ:

- 1930թ. մայիսի 6-ին պետհամալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը վերակազմավորվել է գյուղատնտեսական ինստիտուտի՝ երեք ֆակուլտետներով. ա) այգեգործա-բանջարաբուծական, բ) խաղողագործության եւ գինեգործության, գ) դաշտավարության,¹⁸

- 1930թ. հուլիսի 14-ին Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի որոշմամբ Երեւանի պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետի հիմքի վրա հիմնադրվեց ՀՍՍՀ շինարարական ինստիտուտը՝ երեք ֆակուլտետներով. ա) ճարտարապետաշինարարական, բ) հիդրոտեխնիկական, գ) քիմիկատեխնոլոգիական:

Նույն որոշման մեջ մեկ հատուկ կետում ասվում է՝ «ԱՍՖՍՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների քիմիական ֆակուլտետների եւ բաժինների հիման վրա (բացի Բաքվի նավթային ինստիտուտի քիմիական ֆակուլտետից) Երեւանում ստեղծել Անդրկովկասի քիմիկատեխնոլոգիական ինստիտուտ, որտեղ դասավանդումը տանել հայերեն եւ ռուսերեն լեզուներով»: Այս որոշումը կյանքի չկոչվեց Հայաստանում ստեղծվելիք ինստիտուտի համար հարմար չենք չունենալու պատճառով:

- 1933թ. փետրվարին ՀՍՍՀ շինարարական ինստիտուտը վերակազմավորվեց պոլիտեխնիկականի՝ իր մեջ ընդգրկելով մինչ

18. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ 1930-1988թթ., Երևան, 1981, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա 1930-2000թթ., 2000:

այդ առանձին գործող քիմիկատեխնոլոգիական ինստիտուտը:¹⁹

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության առաջին համալսարանի զարգացման փուլերի վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարել անհրաժեշտ եզրահանգումներ եւ փորձել Արցախի պետհամալսարանի գոյատևման ընթացքում տեղ գտած բացերը վերացնելու արդեն փորձված եղանակով, առավել եւս, որ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի (ԱրՊՀ) այդօրինակ ստեղծումը պայմանավորված էր նորանկախ հանրապետության պետական շինարարության գործընթացով: Լավատեղյակ լինելով համալսարանի ստեղծման խնդրին, կարող ենք հայտնել, որ նման եղանակով Արցախում համալսարան հիմնադրողների մտահղացմամբ այդ կառուցվածքը նախատեսված էր նրա գործունեության սկզբնավորման առաջին տասը տարիների համար:

Ելնելով վերը բերված փաստական նյութից եւ համալսարանական կրթության ներկա վիճակի կապակցությամբ հանրապետության ղեկավարության ու կրթության ոլորտի պատասխանատուների մտահոգությունից, մեր կարծիքով, անհրաժեշտ է կատարել կտրուկ քայլեր, առաջին հերթին, ԱրՊՀ-ի ներկայիս կառուցվածքում:

Ի դեպ, ավելորդ չենք համարում ընթերցողներին ծանոթացնել որոշ փաստաթղթերի հետ՝ ցույց տալու համար, որ ԱրՊՀ-ի կառուցվածքի փոփոխության ուղղությամբ ԼՂՀ կառավարությունը դեռեւս 1999 թվականին էր սկսել ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք տրամաբանական ավարտի չհասան:

Վերը նշված գործընթացը սկսվել է ԼՂՀ կրթության, ինչպես նաեւ պաշտպանության բանակի որոշ մասնագետների կողմից, ինչի վրա հիմնվելով՝ ԼՂՀ վարչապետը ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լ. Մկրտչյանին ուղղել է հետևյալ նամակը.

19. Ա. Հակոբյան, Ա. Սարգսյան, ԵրՊ-ի (1933-2003), ՀՊՃՀ, Երևան, 2003:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն նախարար

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անվտանգության եւ տնտեսական զարգացման առկա կարիքներն անհետաձգելիորեն պահանջում են ապահովել տեղական ինժեներական կադրերի պատրաստում մի ամբողջ շարք տեխնիկական մասնագիտությունների գծով՝ ռադիոէլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա, հաշվողական մեքենաներ, համալիրներ եւ ցանցեր, հաշվողական տեխնիկայի ավտոմատացված համալիրների ծրագրային ապահովում, ռադիոտեղորոշում, թռչող ապարատների եւ շարժիչների տեխնիկական սպասարկում:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ մասնագիտությունների գծով ճարտարագետների պատրաստումն ավանդաբար կատարվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (ՀՊԾՀ), խնդրում ենք Ձեզ ՀՊԾՀ-ի ղեկավարության հետ հնարավորություններ գտնել ԼՂՀ-ում ՀՊԾՀ-ի բաժանմունք ստեղծելու համար:

Նշված առաջարկության իրականացումը թույլ կտա դեպի Արցախ նպատակաուղղել ՀՊԾՀ-ի հարուստ գիտատեխնիկական ներուժը՝ միաժամանակ կանխելով երիտասարդների արտահոսքը մեր հանրապետությունից:

Նորաստեղծ բաժանմունքի համար որպես կառուցվածքային նախատիպ կարող է ծառայել ՀՊԾՀ-ի Կապանի կրթահամալիրը:

ԼՂՀ կառավարությունը պատրաստ է նորաստեղծ բուհական կառույցն ապահովել անհրաժեշտ վարչաուսումնական տարածքներով եւ նյութական այլ ռեսուրսներով:

ԼՂՀ վարչապետ

Ժ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից ԼՂՀ կառավարության առաջարկությունը քննարկվել է եւ տրվել դրական կարծիք: Այնուհետեւ թե՛ ՀՀ-ում եւ թե՛ ԼՂՀ-ում տեղի են ունեցել

կրթության նախարարների իրար հաջորդող փոփոխություններ, որոնց արդյունքում սկիզբ առած գործընթացն արգելակվել է:
Հետագայում գործընթացը շարունակվել է հետեւյալ հաջորդականությամբ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ
ՊԱՐՈՆ ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Մեծարգո պարոն Սարգսյան

ԼՂՀ կառավարության կողմից ՀՀ կրթության եւ գիտության նախարարին դիմել ենք ԼՂՀ-ում ՀՊՃՀ-ի կրթահամալիր ստեղծելու կապակցությամբ (թիվ 9ԺՊ-132 01.07.1999թ.): Ստեփանակերտում մեր անձնական հանդիպման ժամանակ պայմանավորվել ենք բարձրացված հարցին անդրադառնալ հարմար պահի:

Մեզ հայտնի է, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից Ձեզ հանձնարարվել է քննարկել եւ տալ առաջարկություն կրթահամալիրի մասին:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարությունը պատրաստ է աջակցել Ձեզ այդ խնդրում:

ՆԱԽԱՐԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐՆ Է. Մ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ԼՂՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐ Հ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՀՊՃՀ-ի ուսումնական ստորաբաժանում ստեղծելու ԼՂՀ կառավարության առաջարկի կատարման կապակցությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը Ձեր քննարկմանն է ներկայացնում հետեւյալ առաջարկությունները`

1. Ստորաբաժանումը ստեղծել ՅՊԵՅ-ի մասնաճյուղի կարգավիճակով, որը պետք է գործի ՅՊԵՅ-ի կողմից ներկայացված եւ ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կանոնադրությամբ:

2. Այն պետք է ունենա հաշվեկշիռ, նախահաշիվ, բանկային հաշիվ եւ ֆինանսավորվի ՀՀ (ԼՂՀ) պետական բյուջեից:

3. Մասնաճյուղի ապահովումն անհրաժեշտ ուսումնական տարածքներով եւ գույքով պետք է իրականացվի ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից:

4. Իր կանոնադրությանը համապատասխան՝ մասնաճյուղը կարող է իրականացնել վճարովի ուսուցում եւ վճարովի ծառայություններ ՀՀ (ԼՂՀ) օրենսդրությամբ չարգելված ձևերով:

5. Առաջարկվում է ուսուցումը կազմակերպել դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով, ուսուցման ստացիոնար (առկա) եւ հեռակա ձևերի համադրմամբ, ընդ որում՝ առաջին երկու տարիների ուսումնառությունը հունանիտար, հիմնարար եւ ընդհանուր ճարտարագիտական կրթաբլոկների գծով ենթադրվում է կազմակերպել տեղում, իսկ մասնագիտական կրթաբլոկի առարկաների ուսուցումը՝ ՅՊԵՅ-ի երեսնյան կրթահամալիրում՝ 3 տարի տեւողությամբ:

6. Հաշվի առնելով ԼՂՀ համապատասխան մարմինների կողմից ներկայացված հայտը, առաջարկվում է նորաստեղծ մասնաճյուղում ուսումնառությունը կազմակերպել հետեւյալ մասնագիտությունների գծով՝

6.1. 0608 Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում (էներգետիկա)

6.2. 0807 Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզության տեխնոլոգիա եւ տեխնիկա

6.3. 0905 Բաց հանքային աշխատանքներ

6.4.1004 Էլեկտրամատակարարում

6.5. 1201 Մեքենաշինության տեխնոլոգիա

6.6. 1303 Թռչող ապարատների եւ շարժիչների տեխնիկական սպասարկում

6.7. 2201 Հաշվողական մեքենաներ, համալիրներ եւ ցանցեր

6.8. 2204 Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում

6.9. 2009 Կապի ցանցեր եւ կոմուտացիայի (փոխարկման) համակարգեր

6.10. 2017 Ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ

Վերջին երկու մասնագիտությունները բացակայում են ՀՊՃՀ-ի ուսումնական մասնագիտությունների առկա անվանացանկերում եւ պետք է ստեղծվեն ռադիոտեխնիկայի եւ կապի համակարգերի դեպարտամենտի կողմից՝ ԼՂՀ-ի պատվերով:

7. Նշված մասնագիտությունների ուսուցման մեթոդական բազան ծրագրային եւ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթներն ապահովում են ՀՊՃՀ-ի համապատասխան դեպարտամենտները:

8. Հեռանկարային զարգացման առումով առաջարկվում է մասնաճյուղի բազայի վրա ստեղծել կրթահամալիր՝ նախատեսելով նաեւ հետեւյալ կրթական ծրագրերի իրականացում.

8.1. Միջնակարգ ընդհանուր կրթության 9 եւ 10-րդ դասարանների ծրագրով (հենակետային ավագ դպրոց-վարժարան՝ հարցազրույցային ընդունելությանը դեպի մասնաճյուղ)

8.2. Կրտսեր ճարտարագետի կրթական ծրագիր*:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ առաջարկը համաձայնեցված է ՀՊՃՀ-ի ղեկավարության հետ:

Հանձնաժողովի նախագահ
Անդամներ՝

Ս. Ասրյան
Ս. Աղբալյան
Վ. Առուստամյան
Ս. Մամյան
Ս. Բաղդասարյան
Մ. Մելիք-Բախշյան

* Այս ծրագրով ուսանած մասնագետները, նախ, առաջին երկու տարվա ուսման ընթացքում ձեռք են բերում մուլտիպլի տեսական գիտելիքներ՝ ինչպիսիք ստանում են լիարժեք ճարտարագետի ծրագրով սովորողները, այնուհետեւ նրանք այդ ծրագրում ընդգրկվում են ցածր առաջադիմության պատճառով:

**ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐՆ Ա. Թ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Մեծարգո նախարար

Քննարկելով Ձեր ս.թ. փետրվարի 21-ի թիվ 01-58 գրությունը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը հայտնում է իր համաձայնությունը ԼՂՀ-ում իր մասնաճյուղը վերականգնելու վերաբերյալ:

Համաձայն գործող օրենսդրության եւ ՀՊՃՀ-ի կանոնադրության՝ նոր մասնաճյուղի ստեղծումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ ԿԳ նախարարության աջակցության հիման վրա: Համապատասխանաբար այս հարցով անհրաժեշտ կլինի դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը եւ ՀՀ կառավարությանը:

Մասնաճյուղի կազմակերպման դեպքում ուսումնական գործընթացը կարելի է սկսել 2004/2005 ուս. տարվանից, եթե բավարարվեն հետևյալ պայմանները՝

1. Ստեփանակերտ քաղաքում ՀՊՃՀ-ի նորաստեղծ մասնաճյուղին կհատկացվի անհրաժեշտ ուսումնական եւ օժանդակ տարածքներ:

2. Մասնաճյուղի ընդունելության անվճար եւ վճարովի չափաքանակները կալանավորվեն ՀՀ կառավարության կողմից ՀՊՃՀ-ին հատկացվող չափաքանակներից դուրս:

3. Մասնաճյուղի ֆինանսավորումը կիրականացվի ԼՂՀ կառավարության սահմանված բյուջետային հատկացումների եւ ուսման վարձերից գոյացած արտաբյուջետային միջոցների հաշվին:

Կանխավ շնորհակալությամբ՝

ՌԵԿՏՈՐ

Յու. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նման գնահատականի պատճառն այն է, որ եթե այն ժամանակ ԱրՊՀ-ի վերակազմավորման գաղափարը ծնունդ է առել

«ներքելից», ապա այսօր դրա կարելությունը եւ վերակազմավորման համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու նախաձեռնությունը պատկանում է ԼՂՀ կառավարությանը: Իսկ դա նշանակում է՝ սկսված գործընթացը կհասնի իր տրամաբանական ավարտին:

Հարկ է կանխավ նշել, որ մեր կողմից ստորեւ առաջարկվող կառուցվածքային հնարավոր փոփոխությունները չեն հավակնում լինել միակը եւ ամենակատարյալը: Այդ է պատճառը, որ մեր կողմից առաջարկվում է կառուցվածքային փոփոխության մի քանի տարբերակ, անհրաժեշտության դեպքում տալով նրանց առավելություններն ու թերությունները՝ հուսալով, որ քննարկումներից եւ լրացումներից հետո այն կարող է կյանքի կոչվել ու դառնալ գործողության ծրագիր:

Առաջին տարբերակ. Հաշվի է առնվում ՀՀ եւ ԼՂՀ կրթական համակարգերի ղեկավարների՝ Արցախի իշխանությունների մասնակցությամբ, վերջերս կայացած քննարկումների ժամանակ ՀՊԱՀ ռեկտոր Ա. Պ. Թարիվերդյանի հնչեցրած վերոհիշյալ կարծիքը: Ձեւավորվում է Հայաստանի ագրարային համալսարանի մասնաճյուղ՝ ԱրՊՀ-ի ագրարային ֆակուլտետի եւ «Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմքի վրա:*

ԱրՊՀ-ի մասնագիտությունների ցանկից հանվում են ճարտարագիտական և տնտեսագիտական մասնագիտությունները եւ դրանց հիմքի վրա ստեղծվում է Արցախի (ԼՂՀ) պետական տեխնիկական համալսարան՝ նրանում ընդգրկելով հետեւյալ մասնագիտությունները. սոցիալ-մշակութային ծառայություն եւ զբոսաշրջություն, ֆինանսներ, հաշվապահական հաշվառում, տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում եւ դրանց շահագործում, փոխադրումների եւ ճանապարհային երթևեկության կազմակերպում եւ կառավարում, շինարարության, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն: Նշված մասնագիտությունների շարքը հետագայում լրացվում են այնպիսի ինժեներական մասնագիտություններ:

* Այդ տարբերակն իրականացվել է 2008/2009 ուստարում:

րով, որոնք պահանջված են հանրապետության տնտեսությունում:

Երկրորդ տարբերակ. Ձեռավորվում է Հայաստանի ագրարային համալսարանի ԼՂՀ մասնաճյուղ՝ իր մեջ ներառելով ԱրՊՀ-ի ագրարային ֆակուլտետը և «Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը, իսկ ԱրՊՀի կազմում գտնվող մյուս ինժեներական մասնագիտությունների հիմքի վրա ստեղծվում է ՀՀ եւ ԼՂՀ համատեղ պետական տեխնիկական համալսարան:

Առաջարկվող երկու տարբերակներից որեւէ մեկի իրագործման դեպքում ԱրՊՀ-ի կազմում ընդգրկված մյուս մասնագիտությունների հիմքի վրա ստեղծվում է Արցախի պետական մանկավարժական համալսարան:

Այս առումով ավելորդ չէ անդրադառնալ ԼՂՀ-ում գործող ոչ պետական բուհերին՝ նրանցում ընթացող ուսումնական գործընթացին եւ այդ հաստատությունների հետագա ճակատագրին:

Մինչև վերջերս ԼՂՀ-ում լիարժեք կամ մասնակիորեն գործում էին հետեւյալ ոչ պետական բուհերը. «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, «Գրիգոր Նարեկացի» համալսարան, Երեւանի մենեջմենթի համալսարանի եւ Երեւանի «Երեւան» համալսարանի մասնաճյուղեր, ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Երեւանի մասնաճյուղի Ստեփանակերտի ներկայացուցչություն, «Գրիգոր Լուսավորիչ» համալսարան, որոնք տեղակայված են Ստեփանակերտ քաղաքում:

Այսինքն՝ շուրջ 150000 բնակիչ ունեցող ԼՂՀ-ում միաժամանակ գործում են մեկ պետական եւ յոթ ոչ պետական բուհեր: Շատ է, թե քիչ, դա հարցի մեկ այլ կողմն է: Համեմատելու համար ասենք, որ շուրջ երեք միլիոն բնակիչ ունեցող Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են 16 պետական եւ 68 ոչ պետական բուհեր:

Ձավեշտը կայանում է նրանում, որ նոր ստեղծված բուհն իր գործունեության առաջին իսկ օրվանից կոչում են համալսարան, ավելին՝ ուսումնական գործընթացը լրիվությամբ չկազմակեր-

պած, պրոֆեսորադասախոսական կազմը փոքր ի շատե չհամալրած այդ նորաթուխ հաստատությունների ղեկավարներից յուրաքանչյուրն աճապարում է ամենատարբեր ամբիոններից հայտարարել ու պնդել, թե իբր իր ստեղծած համալսարանը բոլոր առումներով կայացած բարձրագույն ուսումնական հաստատություն է, այդպիսով իսկ թյուր կարծիք ձեւավորելով եւ ապակողմնորոշելով իրերի իրական վիճակին անտեղյակ հանրությանը՝ դրանից բխող անցանկալի հետեւանքներով հանդերձ:

Որ երեւոյթն ըստ էության հակաարդյունավետ է՝ անվիճելի է: Այս պնդման մեջ համոզվելու համար ծանոթանանք Վանաձորի Յ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Գ. Խաչատրյանի արտահայտած կարծիքին՝ կապված ինստիտուտում ռազմավարական ծրագրերի իրականացման հետագա գործընթացի հետ. «Դարձյալ մնում ենք այն համոզման, որ մանկավարժի որակավորմամբ մասնագետների թողարկմանը զուգահեռ պետք է գնալ համալսարանականացման, այն է՝ աստիճանաբար կազմակերպել նաեւ համալսարանական կրթություն, որը հնարավորություն կընձեռի իրականացնել նոր աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատուժի թողարկում»:

Բուհական կրթության կազմակերպման այս մոտեցումը խիստ ուսանելի է եւ, համոզված ենք, երկուստեք շահեկան՝ ինչպես ուսանողության, նույնպես եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար, մանավանդ, երբ այս միտքը հնչեցվում է շուրջ քառասուն տարի մանկավարժներ թողարկող հաստատության ռեկտորի կողմից:

ԼՂՀ վերը թվարկված բոլոր ոչ պետական բուհերը սահմանված կարգով լիցենզավորված են, իսկ նրանցից երեքը՝ նաեւ լրիվ կամ մասամբ անցել են հավատարմագրման փուլը:

Իրենց գործունեության մոտ տասը տարիների ընթացքում ԼՂՀ կրթության նախարարության կողմից այդ բուհերը երկու անգամ կանգնել են երկընտրանքի առաջ՝ կամ լրիվությամբ փակվել կամ աշխատել նվաստացուցիչ պայմաններում:

Օրենքի տառի պահանջի տեսակետից գուցե թե արդարացի

են ոչ պետական բուհերին նախարարության կողմից ներկայացվող պահանջները, բայց հարց է ծագում՝ իսկ ու՞ր էր նայում նույն այդ պետական լիազորված մարմինը նման ուսումնական հաստատություններին գործունեության լիցենզիա տրամադրելու ժամանակ: Մի՞թե պարզ չէր, որ կազմավորման պահին այդ բուհերն ուսումնաօժանդակ անհրաժեշտ պայմաններ ու միջոցներ չունեն եւ որ այդ բուհերում աշխատող դասախոսները լինելու են ԱրՊՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, ովքեր, մինչ այդ նոր բուհի բացվելը, իրենց կենսական կարիքները հոգալու, այլ ոչ թե հաճույքի համար, աշխատում էին նաեւ հանրապետության առելտրային ուսումնական հաստատություններում:

Ոչ պետական բուհերի հետ կապված բացասական միտումների թվարկումը կարելի է շարունակել:

Սակայն բավարարվենք վերը նշվածով եւ ընդհանուրիս համակած մտահոգությամբ հարց տանք՝ ի՞նչ անել:

Կարծում ենք, նորաստեղծ ոչ պետական բուհերի հետագա ճակատագրի վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ պետք է անպայման հաշվի առնել նաեւ, որ հիմնադրման պահից ի վեր դրանց մի մասը շոշափելի առաջընթաց է ապրել՝ ինչպես ուսումնաօժանդակ տարածքների, նույնպես եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի առումով: Արդեն որոշ համալսարաններում, բացի ԱրՊՀ-ի դասախոսներից, աշխատում են նաեւ «սեփական արտադրության» մասնագետներ եւ շարունակվում է սեփական դասախոսներ պատրաստելու գործընթացը, ինչը ողջունելի է: Բացի այդ, բարելավվում են շենքային պայմանները, ստեղծվում տեխնիկապես հագեցված ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, գրադարաններ, ընթերցասրահներ եւ այլն: Այսինքն՝ այդ համալսարանների կայացման ուղղությամբ որոշ աշխատանք է տարվում:

Խնդրի կարգավորման գործում կարելու դեր կարող է խաղալ պետության ակտիվ միջամտությունը նման համալսարաններում աշխատանքների նպատակային կազմակերպմանը եւ պետք չէ ելնել անցյալ դարի առաջին կեսի այն տխրահռչակ կարգախո-

սից, թե՛ «Չկա մարդ (տվյալ պարագայում՝ համալսարան), չկա պրոբլեմ»:

Այդ տեսանկյունից զարմանք եւ ափսոսանք է առաջացնում ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանը, համաձայն որի Երեւանի մենեջմենթի եւ «Երեւան» համալսարանների Ստեփանակերտի մասնաճյուղերի, ինչպես նաեւ ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Երեւանի մասնաճյուղի Ստեփանակերտի ներկայացուցչության 2008-2009 եւ հետագա տարիների ընդունելությունը դադարեցվել է:

Եվ դա կատարվում է այն դեպքում, երբ հայտնի է, որ Երեւանի «Մենեջմենթ» համալսարանը ՀՀ-ում առաջինը հավատարմագրված չորս ոչ պետական բուհերից մեկն է, իսկ «Երեւան» համալսարանը 2008թ. հունիսին դարձել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ակադեմիայի մասնաճյուղ եւ այլն:²⁰

Մեր կարծիքով, վերը նշված բուհերի նկատմամբ նախարարության ցուցաբերած վերաբերմունքն արդարացված չէ եւ կարիք ունի վերանայման: Ի վերջո, ոչ ոք մեր քաղաքացիներին չի ստիպում ընդունվել այդ համալսարանները: Եվ եթե այդ ուսումնական հաստատություններն ունեն իրենց դիմորդները, ապա չնոռանանք, որ ուսման համար այդ մարդիկ վճարում են, վարձավճարների հաշվին ստեղծվում են աշխատատեղեր, իսկ դիպլոմակիր շրջանավարտները հիմնականում պահանջարկ են վայելում: Այդ դեպքում՝ ինչու՞ հավասար մրցակցային դաշտ չապահովել նաեւ նրանց համար:

Ոչ պետական բուհերի նկատմամբ խտրական վերաբերմունքը վիճահարույց է եւ անհրաժեշտ է խնդրի նկատմամբ մոտեցման նոր մարտավարություն:

Անկախ այն հանգամանքից, թե կպահպանվի՞, արդյոք, ԼՂՀ կրթահամակարգի ներկայիս կառուցվածքային վիճակը, թե՞ փոփոխություններ կկատարվեն ըստ մեր կողմից առաջարկվող տարբերակներից մեկի, մեր կարծիքով անհրաժեշտ է համակարգն առավել գործուն դարձնելու համար առաջիկայում կա-

20. Այդ մասին տե՛ս, ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 14, 15, 16:

տարել հետևյալ քայլերը.

- սահմանել պետական չափաբաժիններ բոլոր համալսարանների ընդունելության համար՝ ըստ մասնագիտությունների.

- կիրառել ընդունելության միասնական մեխանիզմ պետական եւ ոչ պետական բուհերի համար.

- կատարել ԱրՊՀ-ի վերակազմավորում՝ տարանջատելով գյուղատնտեսական եւ ճարտարագիտական մասնագիտությունները, դրանք ընդգրկելով առանձին բուհի կազմում.

- մշակել դասախոսների մասնագիտական համապատասխանության ստուգման եւ վերահսկման մեխանիզմ.

- իրականացնել դասախոսների վերապատրաստման հետեւողական ծրագիր.

- կարող երիտասարդ մասնագետներին կրթական համակարգում աշխատանքի ներգրավելու նպատակով արմատապես բարելավել դասախոսների մեկ դրույթով սահմանված վարձատրությունը.

- կատարել լուրջ ֆինանսական ներդրումներ բուհական ուսուցման գործընթացը ժամանակակից մակարդակով կազմակերպելու համար (լաբորատորիաներ, կաբինետներ, մարզական հանդերձանք, գրադարան եւ այլն).

- արմատապես բարելավել դպրոցների նյութատեխնիկական բազան.

- ուժեղացնել ուղղահայաց կապերը դպրոցների եւ բուհերի միջեւ.

- իրականացնել ուսուցիչների վերապատրաստման լիարժեք կազմակերպում եւ վերահսկում.

- թողարկվող մասնագետներին աշխատանքով ապահովելու համար միջոցներ ձեռնարկել աշխատատեղերի քանակի շարունակական մեծացման ուղղությամբ եւ այս կան այն բնագավառում մասնագետների թվաքանակի գերաճը կանխելու նպատակով բուհերում կատարել մասնագիտացումների շրջափոխում (ռոտացիա):

Որպեսզի վերը առաջարկված քայլերը չկրեն վերացական բնույթ, անհրաժեշտ է իրականացնել խորը մասնագիտական

վերլուծություններ եւ դրա հիման վրա կատարել համապատասխան քայլեր:

Բնականորեն հարց է առաջանում՝ ինչի՞ց սկսել:

Կարծում եմ, առաջադրված հարցի առավել ճիշտ պատասխանը կրթական ծառայությունների մարքեթինգի իրականացումն է ԼՂՀ-ում, որը կարող է հիմք հանդիսանալ կրթական ճիշտ եւ նպատակային քաղաքականություն ձեւավորելու համար:

ԼՂՀ-ում կրթական ծառայությունների մարքեթինգի իրականացումն առաջնահերթության իմաստ է ստանում երկու կարեւոր գործոնների առկայության պայմաններում՝ կապված, առաջին հերթին, ներկայումս կրթական գործընթաց իրականացնող կառույցների միջեւ գոյություն ունեցող մրցակցության եւ վճարովի հիմունքներով կրթության առկայության հետ: Այս պայմաններում տեղի ունեցող մրցապայքարում կենսունակ կարող է լինել այն կրթօջախը, որի ծառայությունները կթաշուկայում առավել մրցունակ են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական ծառայությունների մրցունակությունը հնարավոր չէ որոշարկել սովորական ապրանքի մրցունակությունը ճշտորոշելու եղանակով, որովհետեւ այն ունի ակնհայտ ընդգծված յուրահատկություններ: Իսկ մեր հանրապետության կրթական գործընթացի մարքեթինգը, ներկայիս անընդհատ փոփոխվող առաջնահերթությունների պայմաններում, իրականացնելու համար անհրաժեշտ է ԼՂՀ կառավարությանն առընթեր ստեղծել հատուկ կառույց, որը հանրապետության ողջ աշխատաշուկայի լայն պահանջարկն ուսումնասիրելուց բացի զուգահեռաբար կիրականացնի նաեւ կրթական գործընթացի դիտարկում: Այսպիսի կառույցի առկայության պարագայում հնարավոր է առավելագույնս ճշտել որակավորման բոլոր մակարդակների մասնագետների պահանջարկը ԼՂՀ-ում եւ պետական պատվերը նպատակաուղղել ըստ այդ պահանջարկի:

Վերջում հարկ եմ համարում վերստին հիշեցնել, որ ամենեւին էլ չեն հավակնում լինել մեր հանրությանը հուզող այդ հիմնախնդրի միակ եւ բացարձակ ճշմարիտ լուծման եղանակի հե-

դինակը: Պարզապես, շատերի պես մտահոգված լինելով հանրապետության գիտակրթական համակարգում տիրող, մեղմ ասած, անմխիթար վիճակով եւ նույնպես շահագրգիռ լինելով նրա բարեփոխման անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ՝ հենվելով երկարամյա անձնական դիտարկումների ու կուտակած փորձի վրա, այն համոզմանն եմ, որ վերը շարադրված միջոցառումների անհապաղ իրագործումն անպայման կնպաստի առկա իրավիճակի արմատական բարելավմանը՝ ի շահ երկրի, մեր ժողովրդի ներկա եւ գալիք սերունդների:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼՂՀ ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթական շուկայի բնութագրիչների կանխատեսումները հանդիսանում են շուկայական մարքեթինգի կարելուրագույն բաղադրամասը, ինչը հնարավորություն է ընձեռում մշակել անհրաժեշտ միջոցառումներ կրթական շուկայի ծառայությունների փոփոխությունների կառավարման ու վերահսկողության, ինչպես նաև պահանջարկի բավարարմանը նպատակաուղղված կարգերի պատրաստման եւ վերապատրաստման ռազմավարական ծրագրերի իրականացման համար:

Մարքեթինգային համալիրը կրթական ծառայությունների ոլորտում իրականացվում է ապահովելու համար ոչ միայն կրթության ֆինանսավորման անընդհատությունն ու լիարժեքությունը, այլև մատուցվող կրթության պահանջվածությունն ու անհրաժեշտ որակը: Բարձրագույն կրթությամբ մասնագետի պատրաստումը երկարաժամկետ գործընթաց է, հետևապես աշխատանքի շուկայում պահանջարկ չվայելող մասնագիտություններով մասնագետների թողարկման բացառումը պետք է դիտարկել որպես լուրջ խնդիր եւ անհրաժեշտ է անընդհատ կատարել մարքեթինգային հետազոտություն: Այդ առումով, մարքեթինգը նպատակաուղղված է կրթական ծառայությունների ոլորտում առաջանցիկ ծրագրերի մշակմանը՝ մասնագիտությունների հեռանկարային պահանջարկի բավարարման, կամ մոտ ապագայում արդեն գործող կրթական ծառայությունների արդիականացման համար:¹

1. Տես, Ա. Ավանեսյան, Մարքեթինգի անհրաժեշտությունը ԼՂՀ կրթական շուկայում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները, միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 3(6), Երևան, 2009, էջ 22:

Հաշվի առնելով, որ տարբեր որակավորման մասնագետների պատրաստման համար պահանջվող ժամանակահատվածները տարբեր են. արհեստագործական ուսումնարաններ եւ վարժարաններ՝ երկուսից երեք տարի, տեխնիկումներ եւ քոլեջներ՝ երեքից չորս տարի, բուհեր չորսից վեց տարի, ակնհայտ է, որ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման պահանջարկին համապատասխան մասնագետների կանխատեսման ժամանակահատվածը պետք է կազմի հինգից յոթ տարի: Առավել մեծ ժամանակահատվածի համար կանխատեսման հնարավորությունն անհնար է՝ կապված հանրապետությունում հեռակարային կտրվածքով տնտեսական իրավիճակների մակարդակի անորոշության հետ:

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող վիճակագրական գործառնությունը դեռեւս լիարժեք հնարավորություն չեն ընձեռնում գնահատելու զբաղվածության դինամիկան, տարածաշրջաններում աշխատատեղերի կառուցվածքը՝ մասնագիտական որակավորման տեսանկյունով: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել ԼՂՀ կրթական շուկայի համալիր մարքեթինգ եւ ստացված արդյունքների հիման վրա տալ հիմնավորված առաջարկություններ կրթական գործընթացը գործունե եւ նպատակային կազմակերպելու համար:²

Այդ առումով առաջնահերթ խնդիր է՝ գիտականորեն հիմնավորված պարզել հանրապետության տարբեր մասնագիտություններով բարձր եւ միջին որակավորման մասնագետների ներկայիս եւ մոտ ապագայում ակնկալվող պահանջարկը:

Մասնագետների պահանջարկը պարզելուց հետո հարկ է լուծել այն բավարարելու խնդիրը՝ ճշտելով, թե ինչ անհրաժեշտ քանակությամբ եւ ինչ կարգի մասնագետներ կարող են պատրաստվել հանրապետության համապատասխան կրթօջախներում եւ որ կարգի մասնագետներն են, որոնց պետք է պատրաս-

2. ԼՂՀ, վիճակագրական տարեգիրք, 2002-2008, Ստեփանակերտ, 2009, էջ 26-29:

տել այլ երկրներում՝ ապահովելով նրանց վերադարձը ԼՂՀ: Այս վերջին խումբ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը պայմանավորված է ԼՂՀ տնտեսության յուրահատկությամբ՝ կապված որոշ մասնագետների նկատմամբ նրա պահանջարկի փոքրածավալությամբ եւ այդպիսի մասնագետներ տեղում պատրաստելու աննպատակահարմարությամբ:

Առաջադրված խնդիրը լուծելու համար, նախ, ծանոթանանք ԼՂՀ ՀՆԱ-ի ծավալին՝ մինչեւ 2011թ., բնակչության թվին՝ ըստ վարչատարածքային բաժանման, սեռատարիքային կազմի եւ կրթական մակարդակի:

ԼՂՀ ՀՆԱ-ի ծավալը և ճյուղային կառուցվածքը

ԼՂՀ տնտեսությունում ներկայումս արձանագրվում են կայուն դրական տեղաշարժեր՝ պայմանավորված իրականացվող տնտեսական քաղաքականությամբ: Անվիճելի է, որ այն կունենա հետեւողական բնույթ, եւ կշարունակվի տնտեսական միջոցառումների իրականացումը՝ պետական միջամտությունն ուղղելով եկամուտների եւ ռեսուրսների վերաբախմանն ու տնտեսության կայունացմանը: Այդպիսի սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ եւ երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի միջոցով իրականացումն է:³

Այդ է պատճառը, որ ԼՂՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենքով ճանաչվել է որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս եւ իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Վերջին տարիներին ԼՂՀ-ում ար-

3. Ա.Ս.Ավանեսյան, Ռ.Ս.Ավանեսյան, Տնտեսական հարաբերությունների կատարելագործումը որպես տնտեսական մեխանիզմի արմատական բարելավման պայման, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, Երևան, 1989, թիվ 10, էջ 10-19:

ծանագրվել է անընդմեջ տնտեսական աճ՝ ՀՆԱ-ի համապատասխան իրական արտահայտությամբ:⁴

Տնտեսական զարգացումները հիմք են տալիս ենթադրելու, որ մակրոտնտեսական կայուն միջավայրը եւ ԼՂՀ կառավարության կողմից իրականացվող կառուցվածքային բարեփոխումները կարող են ծրագրային ժամանակաշրջանի համար ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր:

Մակրոտնտեսական կանխատեսումների հիմնական սցենարը կառուցված է ԼՂՀ կառավարության գործունեության ծրագրի հիմքի վրա եւ ենթադրում է դրանով նախանշված համապատասխան քաղաքականության ու միջոցառումների հետեւողական եւ ամբողջական իրագործում:

Ծրագրային ժամանակահատվածում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսվում են հետեւյալ զարգացումները.

ա) իրական ՀՆԱ-ն ունենալու է կայուն աճի միտում,

բ) սպառողական գների ինդեքսը, ինչպես նաեւ ՀՆԱ-ի դեֆլյատորը կունենա կայուն վարքագիծ,

Արձանագրվող միջին տնտեսական աճը զուգակցվել է ՀՆԱ-ի կառուցվածքի որոշակի տեղաշարժերով: Տնտեսական աճի մեջ ներդրում ունեն տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը:

Ծրագրային ժամանակահատվածում տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճերը տոկոսով ներկայացված են ստորեւ (տես՝ աղ. 1):

4. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2009, էջ 84:

Տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճերը (%)

Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
	փաստացի			սպասվող	կանխատեսում		
ՀՆԱ-ի իրական աճ	14.1	10.1	8.8	13.8	14.0	14.0	14.0
Արդյունաբերություն	-0.9	16.3	6.7	10.0	8.0	9.0	10.0
Գյուղատնտեսություն	5.6	-14.0	8.8	13.3	8.0	8.5	9.0
Շինարարություն	37.8	39.7	18.2	16.4	17.1	20.0	22.0

Տնտեսական աճը հետագայում եւս կապահովվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի մեծացման հաշվին: Միջնաժամկետ հատվածում ուշադրություն կդարձվի մրցունակ եւ արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության ճյուղերի զարգացման վրա: Նաեւ կկարելուրվի հանքահումքային ռեսուրսների օգտագործման զարգացումը, ինչը, հանդիսանալով ԼՂՀ արդյունաբերության առաջավոր ճյուղերից մեկը, զգալիորեն կնպաստի տնտեսության բարձր տնտեսական աճին:

Սակայն 2008թ. վերջերին եւ 2009թ. առաջին կիսամյակում վրա հասած համաշխարհային տնտեսական ճգնաժամը պահանջեց կատարել հաշվարկների լուրջ վերանայում իրական ՀՆԱ-ի հնարավոր նվազման ուղղությամբ, մանավանդ, կանխատեսումների առումով:

Իրականություն դարձած տնտեսական ճգնաժամը, բացասաբար անդրադառնալով ԼՂՀ ՀՆԱ-ի վրա, համարժեք ազդեցություն ունեցավ նաեւ հանրապետության տարբեր ճյուղերի զարգացումների, այդ թվում՝ գիտակրթական համակարգի վրա:

Այս համատեքստում առավելապես կարևոր է, որպեսզի այդ բնագավառում կատարվելիք բոլոր միջոցառումների նկատմամբ ցուցաբերվի գիտականորեն հիմնավորված վերաբերմունք:

Մեր համոզմամբ՝ ԼՂՀ գիտակրթական համակարգի նկատ-

մամբ գիտականորեն հիմնավորված մոտեցում կարելի է ցուցաբերել, եթե

ա) առավել մեծ ճշտությամբ իրականացվի հանրապետության աշխատանքի պահանջարկի կառուցվածքի պարզաբանումը,

բ) իրականացվի աշխատատեղերի կառուցվածքի եւ փաստացի աշխատողների մասնագիտական կառուցվածքի հաշվեկշիռը եւ դրանց համապատասխանությունը (գործազրկություն եւ պահանջարկ),

գ) ճշտվի աշխատուժի եւ հատկապես բարձր որակավորման մասնագետների նկատմամբ պահանջարկի կառուցվածքը հեռանկարում՝ ըստ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի,

դ) կատարվի բարձր որակավորման մասնագետների պահանջարկի համեմատում բուհերի փաստացի թողարկվող շրջանավարտների թվաքանակի եւ կառուցվածքի հետ՝ հնարավորինս փոխհամապատասխանություն ձեւավորելով պահանջարկի եւ առաջարկի միջեւ:

ԼՂՀ բնակչության թիվը՝ ըստ վարչատարածքային բաժանման, սեռատարիքային կազմի և կրթական մակարդակի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման պահից տասնչորս տարի անց՝ 2005թ., իրականացվեց հանրապետության առաջին մարդահամարը, որն անց է կացվել միջազգայնորեն ընդունված նորմերին համապատասխան: Դա թույլ է տալիս հավաստի տեղեկություններ ստանալ բնակչության թվային կազմի և հանրապետության տարածքում նրա տեղաբաշխվածության մասին, ինչը խիստ անհրաժեշտ է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները որոշելու համար:

Ստորև բերվող տվյալների հավաստիությունն ապահովված է նրանց ստացման մեթոդաբանությամբ (տես՝ ԼՂՀ 2005թ. մարդահամարի արդյունքները, ք. Ստեփանակերտ, 2006, էջ 45):

Համաձայն 2005թ. մարդահամարի տվյալների, ԼՂՀ մշտական բնակչությունը՝ ըստ վարչատարածքային բաժանման ու խտության, ունի հետևյալ տեսքը⁵ (տես՝ աղ. 2):

Աղյուսակ 2

ԼՂՀ մշտական բնակչությունը՝ ըստ վարչատարածքային բաժանման և խտության, համաձայն 2005թ. մարդահամարի տվյալների

<i>ԼՂՀ շրջանները</i>	<i>Բնակչությունը</i>	<i>Տարածքը (կմ²)</i>	<i>Խտությունը (մարդ/կմ²)</i>
ԼՂՀ	137737	11458.38	12.02
ք. Ստեփանակերտ	49986	25.66	1948.01
Ասկերան	16979	1221.92	13.90
Հադրութ	12005	1876.80	6.40
Մարտակերտ	18963	1795.10	10.56
Մարտունի	23157	951.20	24.35

5. Տես, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, Ստեփանակերտ, 2009, էջ 32-34:

Շահունյան	2560	1829.80	1.40
Շուշի	4324	381.30	11.34
Քաշաքաղ	9763	3376.60	2.89

ԼՂՀ առկա եւ մշտական քաղաքային ու գյուղական բնակչությունը՝ ըստ սեռատարիքային կազմի, ունի հետեւյալ բաշխվածությունը (հավելված 1):

Լեռնային Ղարաբաղում բնակչության թվաքանակի փոփոխության մասին ճիշտ եզրահանգում կատարելու նպատակով ծանոթանանք 1959թ. մինչեւ 2005 թվականը անցկացված մարդահամարների արդյունքներին (տես՝ աղ. 3):⁶

Աղյուսակ 3

Լեռնային Ղարաբաղի առկա և մշտական բնակչության (քաղաքային, գյուղական) թվաքանակների փոփոխությունը՝ ըստ սեռի, 1959, 1970, 1979, 1989, 2005թթ. մարդահամարների տվյալներով

Տարեթիվը	Անբողջ բնակչությունը			Քաղաքային			Գյուղական		
	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք
1959	130406	61671	68735	26973	12713	14260	103433	48958	54475
1970	150313	72704	77609	57329	27959	29370	92984	44745	48239
1979	160901	77785	83116	71392	34543	36849	89509	43242	46267
1989	187769	91706	96063	97410	47786	49624	90359	43920	46439
2005	134862	65120	69742	69465	32587	36878	65397	32533	32864
Մշտական բնակչություն									
1959	134075	63442	70633	26906	12778	14128	107169	50664	56505
1970	152915	73795	79120	57753	28117	29636	95162	45678	49484
1979	162181	77582	84599	70073	33397	36676	92108	44185	47923
1989	189085	92075	97010	97836	47824	50012	91249	44251	46998
2005	137737	66555	71182	70512	33115	37397	67225	33440	33785

6. Նույն տեղում:

Ակնհայտ է, որ առաջին չորս մարդահամարների տվյալները բնակչության թվաքանակի աճի միտում ունեն, ընդ որում՝ ասվածը վերաբերում է ԼՂ Ինքնավար Մարզի բնակչությանը, որտեղ ներառված են հայեր, ադրբեջանցիներ, ռուսներ, հույներ և այլն: 2005թ. մարդահամարի տվյալներն ընդգրկում են ԼՂՀ 7 շրջանների բնակչությունը, որը ցավալիորեն չնչին չափով է տարբերվում 1959թ. ԼՂԻՄ-ի ազգաբնակչության թվաքանակից՝ ունենալով ընդամենը 137737 բնակիչ, որից 171 ռուս, 21 ուկրաինացի, 22 հույն, 12 վրացի, 6 ադրբեջանցի, 125 այլազգի և 137380 հայ:⁷

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հանրապետության մշտական բնակչության բաշխվածությունը՝ ըստ կրթական մակարդակի և տարիքի (տես՝ աղ. 4):

Աղյուսակ 4

ԼՂՀ բնակչության բաշխվածությունը՝ ըստ կրթական մակարդակի և տարիքի, 2005թ. մարդահամարի տվյալների համաձայն

Կրթության մակարդակը, սեռը	Տարիքը									
	Ընդամենը	7-10	11-14	15-18	19-20	21-25	26-29	30-39	40-49	50 և ավելի
ԼՂՀ	122051	8618	8672	10478	5146	12416	8349	16046	18580	33746
Գիտական աստիճանով	113	0	0	0	0	0	6	17	25	65
Դետրուկական և բարձր. մասնագիտ.	17508	0	0	0	0	3122	2201	3834	3726	4625
Թերի բարձրագույն	3268	0	0	0	1137	1191	236	247	180	277

7. Նույն տեղում:

Սիջին ճանազիտական	17372	0	0	0	480	1001	1409	3007	4499	5050
Նախնակ. ճանազիտական	4510	0	0	184	231	399	293	978	1288	1143
Ընդհանուր ճիշնակաբզ	38185	0	0	4911	2029	4313	3143	5585	0911	10093
Ընդհանուր հիճնական	18137	0	1180	4795	580	1400	912	1405	1059	0074
Ընդհանուր տարրական	15003	1804	7304	537	04	207	115	193	217	4502
Չուճի տարրական	7949	0814	122	51	25	57	34	00	75	711
Նրանցից՝ ոչ տառանճաչ	450	24	25	31	13	37	21	30	50	213
Տղանարբիկ	58558	4412	4493	5333	5405	0350	4284	7803	8000	14848
Պիտական աստիճանով	74	0	0	0	0	0	1	10	14	49
Յետբուհ. բարձր. ճանազիտ.	7783	0	0	0	0	1141	1000	1040	1004	2338
Թեբի բարձրագույն	1408	0	0	0	370	037	152	130	89	78
Սիջին ճանազիտական	7137	0	0	0	159	014	498	1529	1911	2420
Նախնական ճանազիտական	2331	0	0	90	94	212	131	527	030	035
Ընդհանուր ճիշնակաբզ	18875	0	0	2303	1408	2534	1788	2907	3213	4002
Ընդհանուր հիճնական	9513	0	582	2555	303	1020	013	890	922	2502
Ընդհանուր տարրական	7437	951	3843	280	47	159	85	119	120	1827
Չուճի տարրական	3940	3401	08	33	18	33	10	39	31	241
Ոչ տառանճաչ	197	7	10	23	10	20	12	23	19	07
Կանաչ	03493	4200	4179	5145	2081	0000	4005	8243	9980	18928

Գիտական աստիճանով	39	0	0	0	0	0	5	7	11	10
Դեղբուհ. բարձր. ժամագիտ.	9725	0	0	0	0	1981	1201	2194	2002	2287
Թերթ բարձրագույն	1800	0	0	0	701	554	84	111	91	199
Սիջին ժամագիտական	10235	0	0	0	312	1047	911	2138	2588	3230
Նախնական ժամագիտական	2185	0	0	88	137	187	102	451	052	508
Ընդհանուր ժիջնակարգ	19310	0	0	2548	1221	1779	1355	2078	3098	0031
Ընդհանուր հիժնական	8024	0	004	2240	217	440	299	509	737	3512
Ընդհանուր տարրական	7500	853	3521	251	17	48	30	74	97	2075
Չուճի տարրական	4009	3353	54	18	7	24	18	21	44	470
Ոչ տասնճանաչ	253	17	9	8	3	17	9	13	31	140

Ուշադրության արժանի է գիտական աստիճանով մասնագետների թվաքանակի աճը վերջին երեք տարիների ընթացքում. այն կազմում է շուրջ երեսուն մասնագետ:

ԼՂՀ դպրոցների ու դպրոցականների թիվը և սեռատարիքային կազմը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական համակարգը ձեւավորվել է ԼՂԻՄ-ում գործող՝ խորհրդային տարիներից ժառանգված համակարգի հիմքի վրա: Արդեն 2007/2008 ուսումնական տարում հանրապետությունում գործել են 238 ցերեկային հանրակրթական դպրոցներ, վարժարաններ եւ հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ (տես՝ աղ. 5):⁸

Աղյուսակ 5

ԼՂՀ քաղաքային եւ գյուղական հանրակրթական դպրոցները 2005-2008թթ.

<i>Ուսումնական տարիներ</i>	<i>2005/2006</i>	<i>2006/2007</i>	<i>2007/2008</i>
Դպրոցների թիվը.	236	238	238
այդ թվում՝			
քաղաքներում	32	32	31
գյուղերում	204	206	207
տարրական ընդհանուր	21	20	19
այդ թվում՝			
քաղաքներում	-	-	-
գյուղերում	21	20	19
հիմնական ընդհանուր	42	43	43
այդ թվում՝			
քաղաքներում	2	2	1
գյուղերում	40	41	42

8. Հանրակրթական դպրոցների շրջանավարտների ընտրանքային հետազոտության զեկույց, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, էջ 5, 31, 32, 33, 34, 35, Ստեփանակերտ, 2008:

միջնակարգ (լրիվ)	173	175	176
ընդհանուր			
այդ թվում՝			
քաղաքներում	30	30	30
գյուղերում	143	145	146
Սովորողների թվաքանակը (մարդ)	21632	21880	21371
այդ թվում՝			
քաղաքներում	10791	10867	10643
գյուղերում	10841	11013	10728
1-4 դասարաններում ընդամենը	8381	9174	7467
այդ թվում՝			
քաղաքներում	4131	4514	3659
գյուղերում	4250	4660	3808
5-8 դասարաններում ընդամենը	8774	8408	8557
այդ թվում՝			
քաղաքներում	4192	4061	4268
գյուղերում	4582	4357	4289
9-10 դասարաններում ընդամենը	4477	4298	5347
այդ թվում՝			
քաղաքներում	2468	2292	2716
գյուղերում	2009	2006	2631
Ուսուցիչների թվաքանակը (մարդ)	4308	4413	4479

Դպրոցների ընդհանուր թվից 176-ը միջնակարգ (լրիվ) ընդհանուր է, 43-ը՝ ոչ հիմնական ընդհանուր եւ 19-ը՝ տարրական ընդհանուր: Դպրոցների ընդհանուր թվի 87 տոկոսը կամ 207-ը գտնվում է գյուղական բնակավայրերում եւ 13 տոկոսը կամ 31-ը՝ քաղաքային բնակավայրերում (տես՝ աղ. 6, 7):⁹

9. Նույն տեղում:

Դպրոցների թվի աճի դինամիկան ըստ ԼՂՀ շրջանների
2005-2008թթ.

	2005/2006 ուսումնական տարի		2006/2007 ուսումնական տարի		2007/2008 ուսումնական տարի	
	դպրոց- ների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով	դպրոցների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով	դպրոց- ների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով
Ընդամենը	236	17	238	17	238	17
ք. Ստեփանակերտ	17	3	17	3	17	3
Ասկերան	38	22	38	22	39	22
Ջաղրուք	30	25	30	24	30	25
Մարտակերտ	39	21	40	21	40	21
Մարտունի	40	17	40	17	39	17
Շահումյան	14	56	15	54	16	57
Շուշի	8	18	8	18	8	17
Քաշաթաղ	50	51	50	58	49	57

2007/2008 ուստարուն հանապետության դպրոցների միջին թիվը 10000 բնակչի հաշվով կազմել է 17 եւ, ըստ հանրապետության շրջանների, տատանվում է 3-ից 57-ի սահմաններում:¹⁰

10. Նույն տեղում:

ԼՂՀ դպրոցների ցանցը¹¹

Երջանը (Քաղաքը)	Քաղաքային վայրեր				Գյուղական վայրեր				Ընդամենը				Ուսուցիչների քանակը	
	Տարրական հիմնական /ուրբան/ միջին ընդամենը													
Ստեփանակերտ	-	-	12	12	-	-	-	-	-	-	-	12	12	720
Ասկերան	-	-	1	1	3	10	24	37	3	10	25	38	647	
Մարտակերտ	-	-	2	2	5	7	26	38	5	7	28	40	672	
Մարտունի	-	-	2	2	4	9	24	37	4	9	26	39	851	
Չաղրուք	-	-	1	1	6	10	13	29	6	10	14	30	478	
Շուշի	-	-	2	2	-	1	4	5	-	1	6	7	144	
Շահումյան	-	-	1	1	-	4	10	14	-	4	11	15	185	
Քաշաքաղ	-	-	4	4	1	-	44	45	1	-	48	49	560	
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	25	25	19	41	145	205	19	41	170	230	4257	

Հատուկ ուսումնասիրության առարկա է ներկայումս հանրակրթական դպրոցներում աշխատող տղամարդ էլ կին ուսուցիչների տարիների ընթացքում առաջացած եւ շարունակվող խիստ մտահոգիչ անհամամասնությունը:

2007/2008 ուստարում հանրակրթական դպրոցներում դասավանդել է 4479 ուսուցիչ: Ուսուցիչների 83.3 տոկոսը կամ 3730-ը կանայք են եւ 16.7 տոկոսը կամ 479-ը՝ տղամարդիկ: Տնօրենների ընդհանուր թվաքանակի 49.3 տոկոսը կանայք են, ընդ որում, գյուղական բնակավայրերում՝ 48.4 տոկոսը եւ քաղաքային բնակավայրերում՝ 54.8 տոկոսը: Ուսուցիչների 69.6 տոկոսը դասավանդում է գյուղական բնակավայրերում, որից կին ուսուցիչները՝ 67.6 տոկոս:

Ուսուցիչների թվաքանակի ուսումնասիրությունը՝ ըստ աշխատանքային ստաժի, ցույց է տալիս, որ նրանց 16.5 տոկոսն ունի մինչեւ 3 տարվա աշխատանքային ստաժ, 27.3 տոկոսը՝ 3-ից 10 տարվա եւ 56.2 տոկոսը՝ 10 տարուց ավելի ստաժ, ընդ որում՝

գյուղական բնակավայրերում ուսուցիչների 19.9 տոկոսն ու-

11. Տե՛ս, «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 23 էջ (1-3):

նի մինչեւ 3 տարվա աշխատանքային ստաժ, 30.4 տոկոսը՝ 3-ից 10 տարվա եւ 49.7 տոկոսը՝ 10 տարուց ավելի ստաժ, քաղաքային բնակավայրերում, համապատասխանաբար, 8.6, 20.2 եւ 71.2 տոկոս:

Ուսուցիչների թվաքանակի բաշխումը՝ ըստ կրթական մակարդակի, դիտարկվող ժամանակաշրջանում հետեւյալն է. 77.2 տոկոսն ունի բարձրագույն մասնագիտական, 5.5 տոկոսը՝ թերի բարձրագույն, 13.1 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն, 4.2 տոկոսը մասնագիտական կրթություն չունի: Քաղաքային դպրոցներում բարձրագույն մասնագիտական կրթությամբ ուսուցիչներն ունեն ավելի մեծ տեսակարար կշիռ (88.8 տոկոս), քան գյուղական դպրոցներում (72.1 տոկոս) (տես՝ աղ. 8):¹²

Աղյուսակ 8

Ուսուցիչների թվաքանակի բաշխումը՝ ըստ կրթական մակարդակի, 2007-2008 ուսումնական տարում

Կրթական մակարդակը	Ընդամենը	այդ թվում՝ կանայք	Քաղաքային բնակավայրերում		Գյուղական բնակավայրերում	
			Ընդամենը	այդ թվում՝ կանայք	Ընդամենը	այդ թվում՝ կանայք
բարձրագույն	3458	2896	1210	1080	2248	1816
թերի բարձրագույն	247	193	32	29	215	164
միջին մասնագիտական	587	511	109	93	478	418
չունեն մասնագիտական կրթություն	187	130	11	5	176	125

2007/2008 ուստարում հանրապետության դպրոցներում սովորել է 21371 աշակերտ, որոնց թիվը նախորդ ուսումնական տարվա համեմատ նվազել է 509-ով կամ 2,3 տոկոսով: Աշակերտների 49,8 տոկոսը սովորում է քաղաքային եւ 50,2 տոկոսը՝ գյուղական դպրոցներում:

Աշակերտների թվաքանակի բաշխվածությունն ըստ դասարանների հետևյալն է. 1-3-րդ դասարաններ՝ 5223 աշակերտ կամ 24,4 տոկոս, 4-8-րդ դասարաններ՝ 10801 աշակերտ կամ 50,6

12. Аванесян А.С., Образовательный рынок в Нагорный-Карабахской республике, “Вестник университета Российской академии образования”, N1, г. Москва, 2012.

տոկոս եւ 9-11-րդ դասարաններ՝ 5347 աշակերտ կան 25,0 տոկոս (տես՝ աղ. 9):¹³

Աղյուսակ 9

ԼՂՀ հանրակրթական դպրոցներում աշակերտների բաշխվածությունը՝ ըստ դասարանների

	Ընդամենը			Ըստ դասարանների			Գյուղական դպրոցներում		
	դասարաններ	սովորողներ	միջին հաշվով մեկ դասարանում սովորողների թիվը	դասարաններ	սովորողներ	միջին հաշվով մեկ դասարանում սովորողների թիվը	դասարաններ	սովորողներ	միջին հաշվով մեկ դասարանում սովորողների թիվը
Ընդամենը	2482	21371	9	579	10643	18	1903	10728	6
1-ին դասարան	242	2237	9	55	1118	20	187	1119	6
2-րդ դասարան	166	1176	7	35	478	14	131	698	5
3-րդ դասարան	219	1810	8	51	941	18	168	869	5
Ընդամենը՝ 1-3	627	5223	8	141	2537	18	486	2686	6
4-րդ դասարան	253	2244	9	53	1122	21	200	1122	6
5-րդ դասարան	241	2101	9	57	1069	19	184	1032	6
6-րդ դասարան	235	2244	9	53	944	19	184	905	5
7-րդ դասարան	234	2030	9	50	999	20	184	1031	6
8-րդ դասարան	259	2577	10	65	1256	19	194	1321	7
Ընդամենը՝ 4-8	1222	10801	9	276	5390	20	946	5411	6
9-րդ դասարան	220	1681	8	45	857	19	175	824	5
10-րդ դասարան	203	1696	8	55	854	16	148	965	6
11-րդ դասարան	210	1970	9	62	1005	16	148	965	7
Ընդամենը՝ 9-11	633	5347	8	162	2716	17	471	2631	6

13. Հանրակրթական դպրոցների շրջանավարտների ընտրանքային հետազոտության զեկույց, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ, 2009, էջ 15, 31-35:

Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների միջին թվաքանակը հանրապետությունում կազմել է 5 աշակերտ, իսկ Շահումյանի եւ Քաշաթաղի շրջաններում այդ ցուցանիշը կազմել է, համապատասխանաբար, 3-ական աշակերտ:¹⁴

2007/2008 ուստարում հանրապետության դպրոցներում մեկ դասարանում միջին հաշվով սովորել է 9 աշակերտ, ընդ որում՝ քաղաքային դպրոցներում՝ 18 եւ գյուղական դպրոցներում՝ 6 աշակերտ: Աշակերտների թվաքանակի ուսումնասիրությունը՝ ըստ շրջանների, ցույց է տալիս, որ աշակերտների ընդհանուր թվաքանակի 33,7 տոկոսը, ինչպես նաեւ քաղաքային բնակավայրերում սովորողների 67,7 տոկոսը սովորում է Ստեփանակերտում, իսկ գյուղական դպրոցների հաճախողների ընդհանուր թվաքանակի 28,3 տոկոսը սովորում է Մարտունու շրջանում (տես՝ աղ. 10):¹⁵

Աղյուսակ 10

**ԼՂՀ դպրոցականների թիվը եւ սեռային կազմը
Ստեփանակերտ քաղաքում եւ ըստ շրջանների**

Գ/Գ	Շրջանը /քաղաքը/	Ընդհանուր	Տղա	Աղջիկ
1.	Ստեփանակերտ	6689	3376	3313
2.	Ասկերան	2451	1196	1255
3.	Մարտունի	3716	1813	1903
4.	Մարտակերտ	2822	1550	1272
5.	Հադրութ	1952	984	968
6.	Շուշի	687	352	335
7.	Քաշաթաղ	1450	853	597
8.	Շահումյան	559	307	252
ԸՆԴՀԱՄԵՆԸ		20326	10431	9895

14. Նույն տեղում:

15. Նույն տեղում:

ԼՂՀ դպրոցականների բաշխվածությունը՝ ըստ դասարանների, ունի հետևյալ տեսքը (տես՝ աղյուսակ 11):

Աղյուսակ 11

Սովորողների թվակազմը Ստեփանակերտ քաղաքում եւ շրջաններում՝ ըստ դասարանների

Քաղաքը (Շրջանը)	12-ամյա	11-ամյա	2	3	4	5	6	7	8	9	10	ԸՆԴՄԱՆԵԸ
Ստեփանակերտ	280	651	761	691	583	633	782	539	597	593	683	6793
Ասկերան	185	148	259	265	192	253	358	210	250	256	267	2643
Մարտակերտ	188	288	324	288	257	267	292	172	245	252	249	2822
Մարտունի	243	338	402	323	329	371	521	299	384	368	366	3944
Դաղուք	114	165	200	213	191	226	239	153	179	167	179	2026
Շուշի	42	50	70	73	61	74	95	55	57	55	65	697
Շահումյան	41	40	66	50	56	46	61	42	57	49	48	556
Քաշաբաղ	83	145	144	168	151	137	166	186	186	139	145	1650
ԸՆԴՄԱՆԵԸ	1176	1825	2226	2071	1820	2007	2514	1656	1955	1879	2002	21131

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007/2008թ. շրջանավարտների շրջանում անց է կացվել հարցում՝ մասնագիտությունների ընտրության պատկերը պարզելու նպատակով:¹⁶

Մասնագիտության ընտրության հարցում, համաձայն տրված պատասխանների, կողմնորոշվել է հարցվածների 71.1 տոկոսը կամ 964 շրջանավարտ: Ըստ այդ պատասխանների՝ 2007-2008թթ. մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշված շրջանավարտների շուրջ 15.0 տոկոսը ցանկություն է հայտնել դառնալ տնտեսագետ, 10.6 տոկոսը՝ բանասեր, 8.2 տոկոսը՝ իրավաբան, 7.9 տոկոսը՝ բուժքույր, 7.0 տոկոսը՝ ֆիզկուլտուրայի եւ ռազմական պատրաստվածության ուսուցիչ, 5.8 տոկո-

16. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2009, էջ 84:

սը՝ բժիշկ, 4.4 տոկոսը՝ մանկավարժ եւ միայն 1.1 տոկոսը՝ գյուղատնտես¹⁷ (տես՝ աղ. 12):

Աղյուսակ 12

Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ ընտրված մասնագիտությունների

<i>Մասնագիտությունը</i>	<i>Շրջանավարտների թիվը (մարդ)</i>	<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>
Տնտեսագետ	145	15.0
Իրավաբան	79	8.2
Բժիշկ	56	5.8
Շինարար	41	4.3
Հոգեբան	29	3.0
Բանասեր	102	10.6
Օտար լեզու եւ ռուսերեն	58	6.0
Կիրառական մաթեմատիկա	35	3.6
Ղեկավար	21	2.2
Ատամնաբույժ	25	2.6
Պատմաբան	35	3.6
Մաթեմատիկոս	14	1.5
Ֆիզիկոս	9	0.9
Ֆիզիկոլոգիա եւ ռազմ. պատր.	67	7.0
Գյուղատնտես	11	1.1
Վարսավիր	19	2.0
Քիմիա եւ կենսաբան.	21	2.2
Բուժքույր	76	7.9
Մանկավարժ	42	4.4
Այլ	79	8.2
ԸՆԴԱՄԵՆԸ	964	100.0

17. Տե՛ս, Հանրակրթական դպրոցների շրջանավարտների ընտրամքային հետազոտության զեկույց, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ, 2009, էջ 15, 31-35:

Հատկանշական է, որ չնայած հարցվածների 47.8 տոկոսն իր ուսման առաջադիմությունը գնահատել է գերազանց եւ լավ, մասնագիտության հարցում կողմնորոշվածների ճնշող մեծամասնությունը որոշել է ստանալ բարձրագույն մասնագիտական կրթություն (տես՝ աղ. 13 եւ 14):¹⁸

Աղյուսակ 13

**Հարցվածների բաշխվածությունը ք. Ստեփանակերտում եւ
ԼՂՀ շրջաններում՝ ըստ ընտրված մասնագիտությունների
(մարդ)**

Մասնագիտությունը	Ստեփանակերտ	Լեւոնաճ	Գյումրի	Սարգսապետ	Սարտունի	Եռնի	Ստեփանակերտ	ԸՆԴԱՄԵՆԸ
Տնտեսագետ	82	14	9	11	22	5	2	145
Իրավաբան	57	4	2	5	8	2	1	79
Բժիշկ	23	5	12	5	7	3	1	56
Շինարար	26	3	-	6	5	-	1	41
Հոգեբան	14	4	-	1	7	3	-	29
Բանասեր	33	4	5	15	35	7	3	102
Օտար լեզու և ռուսերեն	30	9	2	1	14	2	-	58
Կիրառական մաթեմատիկա	24	1	1	2	3	1	3	35
Դեղագործ	14	-	1	3	3	-	-	21
Ատամնաբույժ	13	1	2	1	3	3	2	25
Պատմաբան	12	1	4	3	13	1	1	35
Մաթեմատիկոս	2	-	1	6	5	-	-	14
Ֆիզիկոս	5	-	1	2	1	-	-	9
Ֆիզկուլտուրա և ռազմ. պատր.	21	15	4	6	12	5	4	67
Գյուղատնտես	2	3	-	5	1	-	-	11
Վարսավիր	2	9	1	1	3	3	-	19
Քիմիա և կենսաբան.	9	1	2	4	5	-	-	21
Բուժքույր	20	13	4	11	21	7	-	76
Մանկավարժ	5	31	6	-	-	-	-	42
Այլ	33	3	5	16	17	-	5	79
ԸՆԴԱՄԵՆԸ	427	121	62	104	185	42	23	964

18. Նույն տեղում:

Հարցվածների բաշխվածությունը ք. Ստեփանակերտում եւ ԼՂՀ շրջաններում՝ ըստ ընտրված մասնագիտությունների (%)

Մասնագիտությունը	Ք. Ատեփանակերտ	Անկերամ	Գարբուժ	Սարտակերտ	Մարտունի	Եռշի	Քաղաշուք	ԸՆԴԱՄԵՆԸ
Տնտեսագետ	56.6	9.7	6.2	7.6	15.2	3.4	1.4	100.0
Իրավաբան	72.2	5.1	2.5	6.3	10.1	2.5	1.3	100.0
Բժիշկ	41.1	8.9	21.4	8.9	12.5	5.4	1.8	100.0
Շինարար	63.4	7.3	-	14.6	12.2	-	2.4	100.0
Հոգեբան	48.3	13.8	-	3.4	24.1	10.3	-	100.0
Բանասեր	32.4	3.9	4.9	14.7	34.3	6.9	2.9	100.0
Օտար լեզու և ռուսերեն	51.7	15.5	3.4	1.7	24.1	3.4	-	100.0
Կիրառական մաթեմատիկա	68.6	2.9	2.9	5.7	8.6	2.9	8.6	100.0
Դեղագործ	66.7	-	4.8	14.3	14.3	-	-	100.0
Ատամնաբույժ	52.0	4.0	8.0	4.0	12.0	12.0	8.0	100.0
Պատմաբան	34.3	2.9	11.4	8.6	37.1	2.9	2.9	100.0
Մաթեմատիկոս	14.3	-	7.1	42.9	35.7	-	-	100.0
Ֆիզիկոս	55.6	-	11.1	22.2	11.1	-	-	100.0
Ֆիզկուլտուրա և ռազմ. պատր.	31.3	22.4	6.0	9.0	17.9	7.5	6.0	100.0
Գյուղատնտես	18.2	27.3	-	45.5	9.1	-	-	100.0
Վարսավիր	10.5	47.4	5.3	5.3	15.8	15.8	-	100.0
Քիմիա և կենսաբան.	42.9	4.8	9.5	19.0	23.8	-	-	100.0
Բուժքույր	26.3	17.1	5.3	14.5	27.6	9.2	-	100.0
Մանկավարժ	11.9	73.8	14.3	-	-	-	-	100.0
Այլ	41.8	3.8	6.3	20.3	21.5	-	6.3	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ	44.3	12.6	6.4	10.8	19.2	4.4	2.4	100.0

Մասնագիտության ընտրության հարցում Ստեփանակերտ քաղաքում կողմնորոշվել է հարցվածների 78.3 տոկոսը, ընդ որում՝ հարցին պատասխանած շրջանավարտների 19.2 տոկոսը որոշել է դառնալ տնտեսագետ, 13.3 տոկոսը՝ իրավաբան, 7.7

տոկոսը՝ բանասեր:¹⁹

Ասկերանի շրջանում հարցմանը մասնակցած շրջանավարտների 62.7 տոկոսն է ընտրել մասնագիտություն, որի ցանկում գերակշռել է մանկավարժությունը (25.6 տոկոսը):

Հայրութի շրջանի շրջանավարտները նախապատվություն են տվել բժշկի մասնագիտությանը (19.4 տոկոսը) եւ տնտեսագիտությանը (14.5 տոկոսը):

Մասնագիտության ընտրությունը կատարել է Մարտակերտի շրջանում հարցմանը մասնակցած շրջանավարտների 67.5 տոկոսը: Այստեղ եւս գերակշռում է բանասեր, տնտեսագետ դառնալու ցանկություն ունեցող շրջանավարտների թիվը: Գյուղատնտեսի մասնագիտությունն ընտրած շրջանավարտների քանակը շրջանում կազմել է 45.5 տոկոս:

Մարտունու շրջանում գերակշռում է բանասերի, տնտեսագետի, բուժքույրի մասնագիտությունն ընտրած շրջանավարտների թիվը (տես՝ աղ. 15):

Աղյուսակ 15

Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ մասնագիտության ընտրության կողմնորոշման

<i>Օգնել են</i>	<i>Շրջանավարտների թիվը, մարդ</i>	<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>
Ծնողները	348	36.1
Ընկերները	28	2.9
Ուսուցիչները	12	1.3
Ոչ ոք	546	56.6
Այլ	30	3.1
<i>ԸՆԴՀԱՄԵՆԸ</i>	<i>964</i>	<i>100.0</i>

19. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, էջ 84:

Մասնագիտության ընտրության հարցում շրջանավարտների 56.6 տոկոսն ինքնուրույն է որոշում կայացրել, 36.1 տոկոսն առաջնորդվել է ծնողների, 2.9 տոկոսը՝ ընկերների, 1.3 տոկոսը՝ ուսուցիչների խորհրդով (տես՝ աղ. 16):²⁰

Աղյուսակ 16

Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ մասնագիտության ընտրության նպատակայնության

	<i>Հարցվածների քիվը</i>	<i>Ընդամենի նկատմամբ, %</i>
Այդ մասնագիտությամբ միշտ էլ կարելի է աշխատանք գտնել	220	22.8
Լավ աշխատանք գտնելու հույսով	92	9.6
Բարձր աշխատավարձ ստանալու նպատակով	37	3.8
Հեռանկարային է	86	8.9
Ես զգում եմ, որ դա իմ կոչումն է	500	51.9
Այլ	29	3.0
<i>ԸՆԴԱՄԵՆԸ</i>	<i>964</i>	<i>100.0</i>

Մասնագիտությունն ընտրած հարցվածների մեծամասնությունը՝ 51.9 տոկոսը, ընտրած մասնագիտությունը համարել է իր կոչումը կյանքում, 22.8 տոկոսը մասնագիտության ընտրությունը կատարել է հետագայում աշխատանքով բավարարված լինելու մտադրությամբ, 9.6 տոկոսը գտել է, որ այդ մասնագիտությունը լավ աշխատանք գտնելու հնարավորություն է, 8.9 տոկոսն իր ընտրած մասնագիտությունը գնահատել է հեռանկարային, իսկ 3.8 տոկոսը մասնագիտության ընտրության հիմքում դրել է բարձր աշխատավարձով ապահովված լինելու նպատակը (տես՝ աղ. 17 և 18):

20. Տես, ԼԴՅ ԿԳ նախարարության արխիվային փաստաթղթերը, գ.10, 11, 12:

Աղյուսակ 17

Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ ուսումը
շարունակելու մտադրության

(մարդ)

Շրջանները	Հարցվածների թիվը	ԲՈՒՀ	Միջին մասնա- գիտական կրթություն	Արհես- տագործ.	Չի կողմնորոշվել կամ ուսումը չի շարունակելու
ք. Ստեփանակերտ	545	372	27	28	118
Ասկերան	193	96	13	12	72
Հաղրուք	113	52	5	5	51
Մարտակերտ	154	76	15	13	50
Մարտունի	269	144	23	18	84
Շուշի	57	32	7	3	15
Քաշաթաղ	25	18	-	5	2
ԸՆԴԱՄԵՆԸ	1356	790	90	84	392

Աղյուսակ 18

Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ ուսումը
շարունակելու մտադրության

(%)

Շրջանները	Հարցվածների թիվը	ԲՈՒՀ	Միջին մասնա- գիտական կրթություն	Արհես- տագործ.	Չի կողմնորոշվել կամ ուսումը չի շարունակելու
ք. Ստեփանակերտ	40.2	47.1	30.0	33.3	30.1
Ասկերան	14.2	12.1	14.4	14.2	18.4
Հաղրուք	8.3	6.6	5.5	6.0	13.0
Մարտակերտ	11.4	9.6	16.7	15.5	12.8
Մարտունի	19.8	18.2	25.6	21.4	21.4
Շուշի	4.2	4.1	7.8	3.6	3.8
Քաշաթաղ	1.8	2.3	-	6.0	0.5
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	100.0	100.0	100.0	100.0

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տվել, որ հետազոտությանը մասնակցած շրջանավարտների 71.1 տոկոսը որոշել է ուսումնը շարունակել, ըստ որում՝ 82.0 տոկոսը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, 9.3 տոկոսը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, իսկ 8.7 տոկոսը՝ արհեստագործական ուսումնարանում:

Բուհ ընդունվելու մտադրություն ունի հարցվածների 68.3 տոկոսը՝ մայրաքաղաքում, 72 տոկոսը՝ Քաշաթաղի, 56.1 տոկոսը՝ Շուշիի, 53.5 տոկոսը՝ Մարտունու, 49.7 տոկոսը՝ Մարտակերտի եւ 46.0 տոկոսը՝ Հադրութի շրջաններում:

Միջին մասնագիտական կրթություն նախընտրել է ստանալ հարցմանը մասնակցած շրջանավարտների 12.3 տոկոսը՝ Շուշիի, 9.7 տոկոսը՝ Մարտակերտի, 8.6 տոկոսը՝ Մարտունու, 6.7 տոկոսը՝ Ասկերանի եւ 4.4 տոկոսը՝ Հադրութի շրջաններում, Ստեփանակերտ քաղաքում դրանց թիվը կազմել է 27 տոկոս կամ հարցմանը մասնակցած շրջանավարտների 5 տոկոսը: Նկատելիորեն փոքր է որևէ արհեստ սովորելու ցանկություն ունեցող շրջանավարտների թիվը. Հադրութի շրջանում այն կազմել է հարցվածների 4.4 տոկոսը, Ստեփանակերտ քաղաքում՝ 5.1 տոկոսը, Շուշիի շրջանում՝ 53.3 տոկոսը, Ասկերանի շրջանում՝ 6.2 տոկոսը, Մարտունու շրջանում՝ 6.7 տոկոսը եւ Մարտակերտի շրջանում՝ 8.4 տոկոսը:

ԱրՊՀ-ի ուսանողների թվի բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների ու սեռի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2008/2009 ուսումնական տարում եւս գործում է մեկ պետական համալսարան՝ Արցախի պետական համալսարանը: Պետական համալսարանում ուսուցումն իրականացվում է առկա եւ հեռակա ուսուցման ձևերով: Առկա ուսուցման ձևով սովորողների թիվը կազմում է 3196, իսկ հեռակա ուսուցման ձևով՝ 1961 ուսանող: Առկա ուսուցմամբ մասնագետների պատրաստումը իրականացվում է 40, իսկ հեռակա ուսուցումը՝ 18 մասնագիտությամբ: Ըստ

մասնագիտական խմբերի առկա եւ հեռակա ուսուցմամբ ուսանողների թվի բաշխվածությունը ներկայացված է ստորել (տես աղ.19):²¹

Աղյուսակ 19

ԱրՊՀ-ի սովորողների թվի բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների եւ սեռի

Գ/Գ	Մասնագիտությունը	Առկա ուսուցում			Հեռակա ուսուցում		
		Ուսանողների ընդհանուր թիվը	Այդ թվում՝		Ուսանողների ընդհանուր թիվը	Այդ թվում՝	
			տղամեր	սեռիկներ		տղամեր	սեռիկներ
1.	Հայոց լեզու եւ գրականություն	145	-	145	163	3	160
2.	Լրագրություն	89	4	85	-	-	-
3.	Ռուսաց լեզու եւ գրականություն	139	2	137	155	13	142
4.	Անգլերեն լեզու եւ գերմաներեն	90	6	84	-	-	-
5.	Անգլերեն լեզու եւ ֆրանսերեն	126	5	121	-	-	-
6.	Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա	121	-	121	121	-	121
7.	Պատմություն	121	31	90	161	76	85
8.	Քաղաքագիտություն	71	17	54	-	-	-
9.	Նախադպրոցական մանկավարժություն եւ հոգեբանություն	72	-	72	-	-	-
10.	Կերպարվեստ եւ գծագրություն	31	11	20	-	-	-

21. Տե՛ս, Արցախի պետական համալսարանի 2009թ. հունիսի 20-ի թիվ 01-02/120 գրությունը, ինչպես նաև, ԼՂՀ կառավարության 2009 թվականի մարտի 24-ի թիվ 179-Ն որոշումը:

11.	Նախնական զինվորական պատրաստություն	103	85	18	291	279	12
12.	Սաքեմատիկա	60	16	44	107	77	30
13.	Սաքեմատիկա եւ ինֆորմատիկա	-	-	-	41	20	21
14.	Կիրառական մաթեմատիկա եւ ինֆորմատիկա	111	55	56	-	-	-
15.	Ֆիզիկա եւ աստղագիտություն	36	10	26	63	42	21
16.	Ռադիոֆիզիկա եւ էլեկտրոնիկա	6	6	-	-	-	-
17.	Ֆիզրոնէկտրոնէնրգետիկա	-	-	-	8	8	-
18.	Քիմիա	49	7	42	228	41	187
19.	Ստոմատոլոգիա	138	60	78	-	-	-
20.	Կենսաբանություն	120	7	113	-	-	-
21.	Ղեղազործական քիմիա	144	18	126	-	-	-
22.	Աշխարհագրություն	66	24	42	40	16	24
23.	Ֆինանսներ	179	53	126	-	-	-
24.	Հաշվապահական հաշվառում	154	70	84	182	127	55
25.	Իրավագիտություն	159	66	93	-	-	-
26.	Սոցիալ-մշակութային ծառ. եւ զբոսաշրջ.	63	4	59	-	-	-
27.	Շինարարություն, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն	30	29	1	-	-	-
28.	Փոխադրումների եւ ճանապարհային երթևեկության կազմ. եւ կառավարում ²²	40	37	3	220	220	-
29.	Տրանսպորտային ուղիների միջոցների շինարարություն, կառավարում եւ դրանց շահագործում	26	25	1	-	-	-
30.	Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն	69	68	1	23	23	-
31.	Խնձրման արտադրության տեխնոլոգիա եւ զինեզործություն	48	41	7	-	-	-

22. Նույն տեղում:

32.	Ագրոպարենային համակարգի հաշվառման հաշվառում եւ ստդիո	7	5	2	-	-	-
33.	Ագրոպային պրոտոկոլային էկոնոմիկա եւ կառավարում	53	32	21	36	21	15
34.	Ագրոնոմիա	58	46	12	101	90	11
35.	Անասնաբուժություն	34	29	5	33	29	4
36.	Գյուղատնտեսության մեքենայացում	6	6	-	-	-	-
37.	Բողաշինարարություն եւ հողային կադաստր	12	11	1	23	20	3
38.	Անասնաբուժության տնտեսության	11	9	2	-	-	-
ԸՆԴԱՍԵՆԸ		2787	895	1892	1996	1105	891

Առանձնահատուկ մտահոգության տեղիք է տալիս շարունակական եւ հետբուհական կրթությունը: Ծանոթանալով ԱրՊՀ-ի մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում սովորողների թվաքանակի դինամիկային՝ ըստ մասնագիտությունների:

2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱրՊՀ մագիստրատուրայում առանց արտադրությունից կտրվելու սովորում է 42 մարդ, որից 23-ը՝ կանայք:²³ Մագիստրատուրայում սովորողների թվաքանակի ուսումնասիրությունն ըստ մասնագիտությունների ցույց է տալիս, որ առավելագույն տեսակարար կշիռ ունեն իրավագիտություն, օտար լեզուների եւ տնտեսագիտություն մասնագիտություններում սովորողները, համապատասխանաբար՝ 26.2, 14.3 եւ 16.7 տոկոս, իսկ հանրապետության համար մի շարք հույժ կարեւորություն ունեցող մասնագիտություններով՝ գյուղատնտեսություն, շինարարություն, ֆիզիկամաթեմատիկական եւ այլն, պատրաստվում են շատ քիչ թվով մասնագետներ եւ կամ ընդհանրապես մասնագետներ չեն պատրաստվում (տես՝ աղ. 20):

23. Նույն տեղում:

ԱրՊՀ մագիստրատուրայում սովորողների թվաքանակի դինամիկան ըստ մասնագիտությունների²⁴

	Ընդունվել են				Սովորում են				Ավարտել են	
	2006թ.		2007թ.		առ 01.01.2007թ.		առ 01.01.2008թ.		2007թ.	
	Ընդունվել են	որից՝ ժողովրդական	Ընդունվել են	որից՝ ժողովրդական	Ընդունվել են	որից՝ ժողովրդական	Ընդունվել են	որից՝ ժողովրդական	Ընդունվել են	որից՝ ժողովրդական
Ընդամենը մագիստրանտներ	27	14	16	11	78	43	42	23	51	30
այդ թվում՝ ըստ մասնագիտությունների										
Օտար լեզուներ	5	5	1	1	12	12	6	6	7	7
Ռուսաց լեզու	-	-	-	-	1	1	-	-	1	1
Դայոց լեզու և գրականություն	2	2	1	1	6	5	3	3	4	3
Պատմություն	1	-	3	3	2	1	4	3	-	-
Կենսաբանություն	1	1	3	3	6	6	3	3	5	5
Քիմիա	-	-	-	-	2	1	-	-	2	1
Հոգեբանություն	-	-	-	-	4	4	-	-	4	4
Իրավագիտություն	7	1	4	2	15	3	11	3	8	2
Տնտեսագիտություն	4	1	4	1	11	2	7	2	8	2
Արդյունաբերություն և քաղաքացիական շինարարություն	2	1	-	-	8	2	-	-	-	-
Ռադիոտեխնիկա		-	-		-	-	-	-	-	-
Ֆիզիկա-մաթեմատիկա	1	1	-	-	1	1	-	-	-	-
Կիրառական մաթեմատիկա	3	1	-	-	5	2	3	1	2	1
Աշխարհագրագրություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Տրանսպորտ	1	1	-	-	3	1	5	2	8	2
Գյուղատնտեսություն	-	-	-	-	2	2	-	-	2	2

24. Նույն տեղում:

2008թ հունվարի 1-ի դրությամբ առանց արտադրությունից կտրվելու ԱրՊՀ-ի ասպիրանտուրա է ընդունվել 17 մարդ (տես՝ աղ. 21):²⁵

Աղյուսակ 21

ԱրՊՀ ասպիրանտների քանակական բաշխվածությունն ըստ մասնագիտությունների՝ 2007թ.

	Ընդունվել են		Սովորում են		Ավարտել են առ 01.01.2008թ.	
	2007թ.		2006թ.			
	Ընդամենը	ուրից՝ կանայք	Ընդամենը	ուրից՝ կանայք	Ընդամենը	ուրից՝ կանայք
Ընդամենը ասպիրանտներ	17	15	36	32	11	9
այդ թվում՝ ըստ մասնագիտությունների						
Հոգեբանություն	1	1	2	2	2	2
Պատմություն	1	1	3	2	3	3
Ֆիզիկա	-	-	3	3	-	-
Տնտեսագիտություն	5	4	3	2	1	1
Աշխարհագրություն	-	-	1	1	1	1
Մաթեմատիկա	-	-	4	3	-	-
Կենսաբանություն	-	-	6	6	2	2
Իրավագիտություն	3	3	2	2	-	-
Ռուսաց լեզու	1	1	2	2	-	-
Հայոց լեզու եւ գրականություն	2	2	6	6	-	-
Նախնական գինվորա- կան պատրաստում	-	-	2	1	1	-

25. Նույն տեղում:

Արդյունաբերություն եւ քաղաքաշինական շինարարություն	2	1	1	1	1	-
Օտար լեզուներ	1	1	-	-	-	-
Լրագրություն	1	1	1	1	-	-

Ըստ մասնագիտությունների ասպիրանտների բաշխվածությունը եւս լուրջ մտահոգության տեղիք է տալիս հանրապետության զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրին անհամապատասխանության պատճառով: Կարծում ենք՝ պատկան մարմինները պետք է ցուցաբերեն լուրջ մոտեցում մոտ ապագայում բարձր որակավորման մասնագետների լուրջ բազա ունենալու խնդրին:

ԼՂՀ ոչ պետական բուհերի ուսանողների բաշխվածությունը ըստ սեռի ու մասնագիտությունների

ԼՂՀ-ում 2008/2009 ուսումնական տարում տարբեր կարգավիճակներում գործում են 6 ոչ պետական բուհեր: Այդ բուհերի մի մասը հավատարմագրված է, իսկ մյուս մասի մոտ հավատարմագրման գործընթացը սկսված է: Կարծում ենք, մոտակա տարիներին այդ բուհերի հավատարմագրման գործընթացը հաջողությամբ կավարտվի, որովհետեւ նրանց ղեկավարությունը հետեւողականորեն իրագործում է քայլեր՝ ուղղված ներկայացվող պահանջների լիարժեք կատարմանը:

Ստորեւ ներկայացվում են ԼՂՀ ոչ պետական բուհերի ուսանողների կազմը՝ ըստ սեռի եւ բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների (տես՝ աղ. 22):²⁶

26. Տե՛ս, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի արխիվ, գ.9, 10, 11, 12:

ԼՂՀ ոչ պետական բուհերի ուսանողների կազմը՝ ըստ սեռի և բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների

Գ/Գ	Մասնագիտությունը	Առկա ուսուցում			Չեռակա ուսուցում		
		Ուսանողների ընդհանուր թիվը	Այդ թվում՝		Ուսանողների ընդհանուր թիվը	Այդ թվում՝	
			տղամեծեր	աղջիկներ		տղամեծեր	աղջիկներ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԴԱՍԱՍԱՐԱՆ							
1.	Կառավարում, գործարար վարչարարություն	69	38	31	-	-	-
2.	Տեղեկատվական համակարգեր ֆինանսատնտեսական բնագավառում	67	44	23	-	-	-
3.	Հաշվողական տեխ. և ավտոմատացված ծրագր. ապահովում	24	20	4	-	-	-
4.	Տեսական տնտեսագիտություն	-	-	-	71	40	31
5.	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	52	2	50	47	1	46
6.	Պատմություն	18	8	10	61	48	13
7.	Իրավագիտություն	104	78	26	137	112	25
8.	Օտար լեզու	31	6	25			
9.	Թարգմանչական գործ	22	5	17			
10.	Հայոց լեզու և գրականություն	31	-	31			
11.	Հայոց լեզու և գրականություն, հոգեբանություն	31	-	30			
12.	Ռուսաց լեզու և գրականություն	18	1	17			
13.	Ռուսաց լեզու և գրականություն, հոգեբանություն	26	-	26			
ԸՆԴԱՄԵՆԸ		493	203	290	316	201	115

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ²⁷							
1.	Իրավագիտություն	81	61	20	64	40	24
2.	Հայոց լեզու եւ գրասանություն	38	4	34	32	3	29
3.	Ժուռնալիստիկա	18	2	16	10	3	7
4.	Տարրական կրթություն, մանկավարժություն եւ մեթոդիկա	51	-	51	64	1	63
5.	Պատմություն	28	9	19	32	18	14
6.	Տնտեսագիտություն	51	25	26	57	41	16
7.	Նախագորակոչային եւ ֆիզիկական պատրաստություն	-	-	-	95	92	3
8.	Ստոմատոլոգիա	37	21	16	-	-	-
9.	Ատամնատեխնիկա	6	6	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		310	128	182	354	198	156
«ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ²⁸							
1.	Միջավայրի դիզայն	41	16	25	-	-	-
2.	Հագուստի մոդելավորում	19	1	18	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		60	17	43			
ԵՐԵՎԱՆԻ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ							
1.	Մենեջմենթ	189	99	90	-	-	-
2.	Իրավագիտություն	109	82	27	-	-	-
3.	Լրագրություն	26	2	24	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		324	189	141	-	-	-
ԵՐԵՎԱՆԻ «ԵՐԵՎԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ							
1.	Իրավագիտություն				23	19	4
2.	Տնտեսագիտություն	-	-	-	31	17	14
ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-	54	36	18
ՄՈՍԿՎԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ							
1.	Իրավագիտություն	34	17	17	-	-	-
2.	Տնտեսագիտություն	59	28	31	-	-	-
3.	Մենեջմենթ /կառավարում/	37	25	12	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		130	70	160	-	-	-

27. Տե՛ս, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի արխիվ, գ.6, 7, 8:

28. Այդ մասին տես «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի արխիվ, գ.2, 3: Մյուս ուսումնական հաստատությունների մասին տվյալները պահպանվում են ԼԴՀ ԿԳ նախարարության արխիվում, գ.16, 17, 18:

ԼՂՀ միջին մասնագիտական եւ նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների կազմը՝ ըստ մասնագիտությունների եւ սեռի

ԼՂՀ-ում 2008/ 2009 ուսումնական տարում գործում են 4 միջին մասնագիտական (քոլեջ) եւ 2 նախնական մասնագիտական (ուսումնարան) ուսումնական հաստատություններ: Ստորել ներկայացվում է այդ կրթական հաստատությունների սովորողների կազմը՝ ըստ մասնագիտությունների եւ սեռի (տես՝ աղ. 23):

Աղյուսակ 23

ԼՂՀ միջին մասնագիտական եւ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների սովորողների կազմը՝ ըստ մասնագիտությունների եւ սեռի

Գ/Գ	Մասնագիտությունը	Առկա ուսուցում			Գեռակա ուսուցում		
		Ուսանողների ընդամենը	Այդ թվում՝		Ծիվել ուսուցանող ընդհանուր թիվը	Այդ թվում՝	
			սղորմել տղրուել	սղորմել տղրուել		սղորմել տղրուել	սղորմել տղրուել
ՇՈՒՇԻԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԼԵՋ²⁹							
1.	Չարդարային-կիրառական արվեստ եւ ժողովրդական արհեստներ (հիմնական կրթությամբ)	39	29	10	-	-	-
2.	Դասավանդում տարրական դասարաններում	39	2	37	58	5	53
3.	Սոցիալական-մշակութային գործունեություն եւ ժողովրդական զեղարվեստական ստեղծագործություն	22	7	15	29	3	26
4.	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում եւ նորոգում	6	6	-	-	-	-

29. Այդ մասին տես, Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի արխիվ, գ. 2, 3, 4, Ստեփանակերտի բժշկական քոլեջի արխիվ, գ.6, 7, 8:

5.	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում եւ գրասաշրջալի համալիրներում	6	2	4	-	-	-
6.	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ	-	-	-	17	8	9
7.	Գրադարանային գործ	-	-	-	35	1	34
ԸՆԴԱՄԵՆԸ		112	46	66	139	17	122
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԼԵՋ							
1.	Մանկաբարձական գործ	15	-	150	-	-	-
2.	Քույրական գործ	178	-	178	-	-	-
3.	Բուժական գործ զինված ուժերում	178	60	118	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		506	60	446	-	-	-
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈՒԼԵՋ							
1.	Էկոնոմիկա-հաշվապահական հաշվառում եւ աուդիտ	54	15	39	109	64	45
2.	Ֆինանսներ, բանկային գործ	27	7	20	-	-	-
3.	Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում	27	27	-	213	211	2
4.	Գյուղատնտեսության մեքենայացում	21	19	2	67	67	-
5.	Գյուղացիական (ֆերենդերային) տնտեսության կազմակերպում	12	9	3	22	20	2
6.	Անասնաբուժություն	11	10	1	-	-	-
7.	Տրանսպորտային միջոցների շահագործում	9	9	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		161	96	65	411	362	49
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈՒԼԵՋ							
1.	Բալետի արտիստ	54	29	25	-	-	-
2.	Անսամբլի արտիստ	32	9	23	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		86	38	48	-	-	-
ՍԱՐՏՈՒՆԻ ԱՐՅԵՏՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆ							
1.	Ճանապարհաշինարարական եւ բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (բուլդոզերավար, էքսկավատորավար, տրակտորիստ)	15	15	-	-	-	-

2.	Ավտովարորդներ	62	62	-	-	-	-
3.	Կարի արտադրության տեխնոլոգիա	46	11	35	-	-	-
4.	Յուսն-ատաղձագործ	15	15	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		138	103	35	-	-	-
ՍՏՖԱՆԱԿԵՐՏԻ ԱՐԴԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ³⁰							
1.	Վարսավիրական արհեստ եւ զարդարային դիմահարդարում	76	5	71	-	-	-
2.	Հրուշակեղենի տեխնոլոգիա	50	13	37	-	-	-
3.	Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում	55	55	-	-	-	-
4.	Օպերատորական գործ եւ գործավարություն	21	6	15	-	-	-
5.	Փայտամշակում	12	7	5	-	-	-
6.	Շինարարական մոնտաժային եւ վերանորոգման աշխատանքների իրականացում	17	17	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		231	103	128	-	-	-

30. Աղյուսակում բերված տվյալների մասին տե՛ս, ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ գ. 12, 13, 14, 15, 16:

ԼՂՀ աշխատանքի շուկայի ցուցանիշները և բարձր որակավորմամբ մասնագետների պահանջարկի տեսլականը ըստ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի

Ներկայումս ԼՂՀ համալսարաններում ներառված մասնագիտություններով բարձր որակավորման մասնագետների պատրաստումն առաջին փուլում իրականացվում է հիմնականում բակալավրի ծրագրով:

Բնականաբար, Արցախի համալսարաններում բակալավրի ծրագրով բարձր որակավորման մասնագետների պատրաստման գործընթացը, կատարելով իր դերը, միաժամանակ խնդիր է առաջադրում հետագայում հնարավորություն ունենալ նաև մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով ուսուցում կազմակերպելու համար:

Հիմք ունենալով այդ խնդիրը, արդեն 1996/97 ուսումնական տարում ԱրՊՀ-ում առաջին անգամ քայլ է ձեռնարկվում մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:³¹ Ճիշտ է, սկզբնական շրջանում գործընթացը ոչ բոլոր մասնագիտություններն էր ընդգրկում, սակայն կարևորն այն էր, որ առաջին քայլը կատարված էր: Եթե սկզբնական շրջանում մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերն իրականացվում էր մասնագիտությունների փոքրաթիվ խմբով, ապա սկսած 2000 թվականից ընդլայնվում է մագիստրոսական եւ ասպիրանտական ծրագրերով ուսուցանվող մասնագիտությունների շրջանակը:

ԱրՊՀ-ի՝ ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի շրջանավարտների թողարկման պատկերը 2001-2009թթ.³² ժամանակահատվածում ներկայացված է ստորև (աղ. 24):

31. Այդ մասին տես, ԱրՊՀ 1996/97 ուս. տարվա հաշվետվությունը, էջ 8-10:

32. Տես, ԱրՊՀ 2001-2009 ուս. տարվա հաշվետվությունները:

ԱրՊՀ-ի մագիստրատուրայի շրջանավարտները
2001-2009թթ.

№	Մասնագիտությունը	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
1.	Ուղիւնֆիզիկա	1	-	-	-	1	-	-	-	-
2.	Մաթեմատիկա	-	3	-	-	3	4	-	1	-
3.	Կիրառական մաթեմատիկա	-	-	-	-	-	8	2	2	1
4.	Ֆիզիկա	-	2	-	5	-	1	-	-	-
5.	ԱԲԸ	1	-	1	6	4	4	6	2	1
6.	Փոխ-ի կազմ-մ և կառուց տրանսպորտում	-	-	3	2	-	2	2	1	-
7.	Ֆինանսներ և վարկ	7	-	-	-	-	8	-	-	1
8.	Տնտեսագիտություն	-	9	11	12	21	-	1	-	-
9.	Տնտ-ն և նրա ճյուղ.	-	-	-	-	-	5	7	4	1
10.	Հաշվ. հաշվառում և աուդիտ	-	-	-	-	-	3	-	-	1
11.	Իրավագիտություն	-	14	12	8	14	18	8	7	4
12.	Քիմիա	-	5	5	1	3	3	2	-	-
13.	Կենսաբանություն	-	2	7	7	3	4	5	1	3
14.	Հայոց պատմություն	2	3	4	4	8	4	-	1	-
15.	Հայ գրականություն	1	4	4	5	4	9	4	-	-
16.	Հայոց լեզու.	-	-	3	1	3	4	-	2	-
17.	Անգլերեն լեզու.	-	-	3	1	3	4	-	2	-
18.	Գերմաներեն լեզու.	-	-	-	2	-	-	-	-	-
19.	Ռուսաց լեզու և գրականություն	-	3	3	2	4	4	1	-	-
20.	Ազրոնոմիա	-	-	-	1	-	-	-	-	-
21.	Անասնաբուժություն	-	-	-	-	2	2	2	-	-

Նույն ժամանակահատվածում տարբեր մասնագիտություններով ԱրՊՀ-ի ասպիրանտուրայում ուսուցում անցած և ավարտված մասնագետների վերաբերյալ տվյալները ներկայացված է աղյուսակ 25-ում:

ԱրՊՀ-ի ասպիրանտուրայի շրջանակարտները 2000-2009թթ.

№	Ստանդիտությունը	2000		2001		2002		2003		2004		2005		2006		2007		2008		2009	
		ընդ ընդ	ամ ընդ																		
1.	Տնտեսագիտություն	1	-	-	3	-	1	5	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	5	1
2.	Ուսաց լեզու	1	-	1	-	-	1	4	-	-	-	1	-	-	-	-	-	-	1	2	-
3.	Կենսաբանություն	2	-	-	1	-	1	2	1	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-
4.	Աշխարհագրություն	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	-	1
5.	Մաթեմատիկա	2	-	-	-	-	-	3	1	-	-	-	1	-	-	-	-	-	2	-	1
6.	Հայոց լեզու և գրականություն	1	-	-	-	-	-	1	1	-	-	-	1	3	-	-	-	-	3	1	3
7.	Փիլիսոփայություն	1	-	-	1	-	-	2	-	-	-	-	1	1	-	-	-	1	-	2	-
8.	Իրավագիտություն	-	-	-	1	-	-	2	-	-	-	-	1	1	-	-	-	1	-	2	-
9.	Պատմություն	1	-	-	1	-	-	2	-	-	2	1	2	-	-	3	-	2	2	1	-
10.	Օտար լեզուներ	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	3
11.	Ստրոնակություն	-	-	-	-	-	-	1	-	-	1	-	-	1	-	-	1	-	1	-	1
12.	Քիմիա	-	-	-	1	-	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	-	1	-	-
13.	Հոգեբանություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	-	2	-	1	-	2
14.	Սանվակաբանություն	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	2	-
15.	ԱԲԾ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
16.	ճարտարագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-
17.	Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	2
18.	Լրագրություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3

Սկսած 2008 թվականից՝ Արցախում գործում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը, որը հիմնադրվել է ԱրՊՀ ագրարային ֆակուլտետի և «Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմքի վրա: Ընդունվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշում՝ «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 1567 որոշման մեջ լրացում կատարելու մասին», թվագրված՝ 7 օգոստոսի, 2008թ. թիվ 871: Հիմնադրման պահից ի վեր այդ մասնաճյուղում ուսուցումն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի ծրագրերով:³³

Հայաստանի ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի՝ ըստ մասնագիտությունների մագիստրանտների վերաբերյալ տվյալները, 2008-2009թթ. կտրվածքով, ներկայացված են ստորև (աղ. 26):

Աղյուսակ 26

**ՀԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի մագիստրանտները
2008-2009թթ.³⁴**

<i>NV</i>	<i>Մասնագիտությունը</i>	<i>2008</i>	<i>2009</i>
1.	Ագրոնոմիա	2	2
2.	Անասնաբուժություն	4	2
3.	Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	1	4
4.	Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում	2	6

Արցախում ուսումնական գործընթաց իրականացնող ոչ պետական բուհերից առաջինը Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետիավատարմագրված համալսարանն է, որ մագիստրոսական ծրագրով սկսել է իրականացնել տարբեր մասնագի-

33. Տե՛ս, ԱրՊՀ արխիվ գ. 14, 15, 16, ինչպես նաև 2000-2009 թվականների ռեկտորի հաշվետվությունները:

34. Տե՛ս, ՀԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենի 2008-2009 ուստարվա հաշվետվությունը, էջ 8, 9, 10:

տություններով ուսուցման կազմակերպումը:

2009-2010 ուսումնական տարում Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում, ըստ մասնագիտությունների, ուսուցումը կազմակերպված է իրավագիտություն՝ 1-ին և 2-րդ կուրսերում, տեսական տնտեսագիտություն՝ 1-ին և 2-րդ կուրսերում, հայոց լեզու և գրականություն՝ 2-րդ կուրսում, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 2-րդ կուրսում, պատմություն՝ 2-րդ կուրսում, լրագրություն՝ 2-րդ կուրսում:³⁵

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում 2010թ. սեպտեմբերի 1-ից Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում ևս մագիստրոսական ծրագրով ուսուցում սկսելու համար:

Շրջանառվող տվյալների (աղյուսակ 1, 2, 3) նույնիսկ թռուցիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում առկա է բարձր որակավորման մասնագետների սղություն պահանջարկ վայելող մի շարք մասնագիտություններով եւ որպես վերջինիս հետեւանք՝ բուհական և հետբուհական, մասնագետների առաջարկի և պահանջարկի անհամամասնություն: Ընդ որում՝ անհամամասնությունը մասնագետների ոչ միայն թվաքանակի եւ նրանց սեռային կազմերի հարցում է, այլ տարիքային խնդրում, որը որոշ մասնագիտությունների կադրերի դեպքում անցել է թույլատրելի սահմանը եւ շատ մոտ ապագայում ուղղակիորեն հանգեցնելու է բացակայության [3]:

Վերն ասվածը հաստատելու համար բավական է ծանոթանալ ԱրՊՀ գյուղատնտեսության, ճարտարագիտության, ֆիզիկայի եւ այլ ամբիոնների տարիքային կազմին: Ընդ որում՝ եթե հանրապետության պետական կառույցներում կան մեծ թվով ասենք տնտեսագետներ, իրավաբաններ, լեզուների մասնագետներ, ապա նշված մասնագիտությունների կադրեր այլ կառույցներում բացակայում են: Այսինքն՝ խնդիրը բավական լուրջ է ու վտանգահարույց եւ վիճակը շտկելու համար անհրաժեշտ է իրականացնել լուրջ քայլեր:

35. Տե՛ս, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտորի 2009-2010 ուստարվա հաշվետվությունը, էջ 4-5:

ԼՂՀ աշխատանքի շուկայի ներկայիս վիճակը պարզաբանելու նպատակով դիմել ենք հանրապետության պետական մարմիններին՝ կառավարության աշխատակազմին, ազգային վիճակագրական ծառայությանը, տնտեսական զարգացման նախարարությանը, շրջանների վարչակազմներին՝ այդ կառույցներում առկա անհրաժեշտ տվյալները ստանալու ու առաջադրված խնդրի լուծման նպատակով օգտագործելու համար:

Ըստ շրջանների պարզել ենք առկա աշխատատեղերի, գործազուրկ եւ աշխատանք փնտրող քաղաքացիների, բարձր եւ միջին որակավորման մասնագետների ներկայիս քանակը, մասնագետների առկա պահանջարկը՝ ներառյալ 2011 թվականին, համաձայն ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի:

Ըստ հանրապետության շրջանների՝ աշխատանքի շուկան 2009թ. հունիսի 1-ի դրությամբ ունի հետևյալ կառուցվածքը:³⁶

1. Ասկերանի շրջանում առկա աշխատատեղերի ընդհանուր թվաքանակը կազմում է 3031 տեղ: Բացի այդ, շրջանում աշխատունակ բնակչությունից մոտ 6500 հոգի ներգրավված է գյուղացիական տնտեսության մեջ:

Աշխատատեղերի փաստացի կառուցվածքի տեսակետից՝ աշխատաշուկան հիմնականում ընդգրկում է երկու հատվածներ՝ պետական (բյուջետային) եւ ոչ պետական: Համանման իրավիճակ է նաեւ հանրապետության մյուս բոլոր շրջաններում: Ասկերանի շրջանի պետական հատվածում ընդգրկված է 1571, ոչ պետականում՝ 1460 աշխատող:

Շրջանի նյութական արտադրության ոլորտներում վերը նշված աշխատատեղերը տեղաբաշխված են հետևյալ կերպ. արդյունաբերություն՝ 299, գյուղատնտեսություն՝ 97, շինարարություն՝ 600, տրանսպորտ՝ 52, առևտուր՝ 382, այլ ծյուղեր՝ 7, ընդամենը՝ 1437 աշխատատեղ:

Ոչ նյութական ոլորտում առկա է 1594 աշխատատեղ, որից բնակչոմունալ տնտեսությունում՝ 51, առողջապահության ոլոր-

36. Տե՛ս, Ասկերանի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 03-04/510 գրությունը:

տում՝ 136, ֆիզկուլտուրայի եւ սպորտի՝ 18, կրթության՝ 1039, մշակույթի եւ արվեստի՝ 128, ֆինանսների եւ վարկի՝ 28, կառավարման եւ պաշտպանության՝ 190, հասարակական կազմակերպություններում՝ 4 աշխատատեղ: Շրջանում կան 39 կրթական հաստատություններ, այդ թվում՝ 25-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ոչ լրիվ միջնակարգ, 3-ը՝ տարրական դպրոցներ, որոնցում առկա աշխատատեղերի քանակը կազմում է 858, աշխատողների քանակը՝ 1037 մարդ:

Շրջանում բարձր որակավորում ունեցող աշխատողների թիվը պետական հատվածում կազմում է 808 մարդ, այդ թվում՝ 114 պետական հիմնարկների եւ կազմակերպությունների ղեկավարներ, տնօրեններ ու ղեկավարների տեղակալներ, 608-ը՝ հանրակրթական դպրոցների եւ Ասկերանի երաժշտական դպրոցի, մանկապարտեզների ուսուցիչ-դաստիարակ մասնագետներ, կազմակերպիչներ, խմբակավարներ, լաբորանտներ, 28-ը՝ համայնքների աշխատակազմերի մասնագետներ, 16-ը՝ բժիշկներ, 5-ը՝ անասնաբույժներ, 13-ը՝ մարզիչներ, 24-ը՝ շրջվարչակազմի մասնագետներ եւ բաժնի վարիչներ:

Ներկա դրությամբ բարձր որակավորում պահանջող առկա աշխատատեղերի քանակը կազմում է 83 տեղ:³⁷

Պետական հատվածում մինչեւ 2011թ. ըստ մասնագիտությունների աշխատատեղերի լրացուցիչ պահանջարկը կազմում է 38 տեղ, այդ թվում՝ բժիշկ-մասնագետ՝ 9, գյուղատնտես՝ 10, անասնաբույժ՝ 6, երաժշտության եւ արվեստի մասնագետ՝ 9, մանկավարժ՝ 3, ինժեներ-շինարար՝ 1:³⁸

2. Հաղորդի շրջանում պետական հատվածում աշխատատեղերի ընդհանուր քանակը կազմում է 1734 տեղ: Բացի այդ, շրջանի աշխատունակ բնակիչներից 346-ը ընդգրկված է ոչ պետական հատվածում:

Շրջանի պետական հատվածում աշխատողներն ընդգրկված են տարբեր ոլորտներում. արդյունաբերություն՝ 50, գյուղատնտեսություն՝ 22, շինարարություն՝ 47, տրանսպորտ՝ 33, կապ՝

37. Նույն տեղում:

38. Տե՛ս, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, 2009, էջ 52-54:

47, առելտուր՝ 153, առողջապահություն՝ 153, կրթություն՝ 872, մշակույթ՝ 100, ֆինանսական (բանկեր)՝ 26, կառավարում եւ պաշտպանություն՝ 187, քաղաքապետարան եւ համայնքներ՝ 137 եւ այլն:

Շրջանի լրացուցիչ պահանջարկը բարձր եւ միջին որակավորման մասնագետների խնդրում 2011թ., ըստ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, կազմում է մոտավորապես 220 մասնագետ: Լրացուցիչ պահանջարկով պայմանավորված մասնագետները միջին եւ բարձր որակավորման գյուղատնտեսներ ու շինարարներ են:

Զգալի թիվ են կազմում աշխատանք փնտրող բարձր որակավորման մասնագետները. շրջկենտրոն Հադրութ՝ 10, գյուղական համայնքներ Մեծ Թաղեր՝ 41, Ազոխ՝ 32, Տունի՝ 44, Այգեստան՝ 9, Քյուրաթաղ՝ 2, Թաղասեռ՝ 9, Արելչատ՝ 1, Ուխտաձոր՝ 3, Ակնադբյուր՝ 5 եւ այլն, որոնց մեծ մասը բանասերներ, տնտեսագետներ, ճարտարագետներ, անասնաբույժներ եւ մանկավարժներ են:³⁹

3. Մարտակերտի շրջանում առկա աշխատատեղերի ընդհանուր թվաքանակը կազմում է 2955 տեղ, որից բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը 897 է, միջնակարգ կրթությամբ մասնագետների թիվը՝ 535: Ըստ ոլորտների պահանջարկը կազմում է. արդյունաբերություն (առանց հանքարդյունաբերության)՝ 80, գյուղատնտեսություն՝ 67, շինարարություն՝ 86, էներգետիկա՝ 200, տրանսպորտ՝ 500, կապ՝ 132, առելտրի ոլորտ՝ 390, կրթություն՝ 1065, առողջապահություն՝ 264, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմեր՝ 198, մշակույթ՝ 160, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ՝ 22, կոմունալ ծառայություն՝ 47, բանկային աշխատակիցներ՝ 22, ԼՂՀ ԱԳԿՊԿ Մարտակերտի տարածքային ստորաբաժանում՝ 7, ԼՂՀ «Արցախսանտառ» ՓԲԸ Մարտակերտի բաժանմունք՝ 42, ԼՂՀ փրկարար ծառայության Մարտակերտի մասնաճյուղ՝ 36, ԼՂՀ Մարտակերտի շրջվարչակազմի «Զրաբերդ» պաշտոնաթերթի խմբագրություն՝

39. Տե՛ս, Հադրութի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 08-ի թիվ 1-15/361 գրությունը:

6, սոցիալական ապահովության Մարտակերտի տարածքային կենտրոն՝ 8, ՀՀ կառավարությանն առընթեր ՍՊԱԾ-ի ԼՂՀ բաժանմունքի «Մարտակերտ» համալիր կայան՝ 6, ԼՂՀ ազգային վիճակագրության Մարտակերտի շրջանային բաժին՝ 3, Մարտակերտի շրջանի տեղական զանձապետական բաժին՝ 3:

Բարձրագույն կրթությամբ մասնագետների լրացուցիչ պահանջարկը 2011թ., համաձայն ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, կազմում է 118 մասնագետ, որից գյուղատնտես՝ 13, շինարար՝ 12, էներգետիկ՝ 8, կրթության ոլորտի մասնագետ՝ 41, առողջապահություն՝ 18, մշակույթ՝ 3, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ՝ 8, այլ ծառայություններ՝ 17:

Միջին որակավորման մասնագետների պահանջարկը 2011թ., համաձայն ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, կազմում է 42 մասնագետ, որից էներգետիկա՝ 24, մշակույթ՝ 9, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ՝ 5, այլ ծառայություններ՝ 4:⁴⁰

4. Մարտունու շրջանի աշխատատեղերի ընդհանուր թվաքանակը կազմել է 6983 տեղ, որից 4711-ը՝ նյութական արտադրության, 2272-ը՝ ոչ նյութական ոլորտներում: Ըստ ոլորտների զբաղվածությունն ունի հետևյալ բաշխվածությունը. գյուղատնտեսություն՝ 3746, արդյունաբերություն՝ 271, շինարարություն՝ 41, տրանսպորտ՝ 95, առևտուր՝ 546, այլ ոլորտներում՝ 12, իսկ ոչ նյութական ոլորտում. առողջապահություն՝ 233, կրթություն, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ՝ 1500, մշակույթ եւ արվեստ՝ 184, պետական կառավարում եւ տեղական ինքնակառավարում՝ 242, բնակվումնալ տնտեսություն՝ 113:

Աշխատատեղերի ընդհանուր թվից 2210-ը գտնվում է պետական հատվածում, այդ թվում՝ 1982-ը բյուջետային հիմնարկների, իսկ 228-ը՝ տնտեսահաշվարկային կազմակերպությունների աշխատողներ: Շրջանում գրանցված է աշխատանք փնտրող 110 մարդ, որից գործազուրկ է 56-ը:

Մինչեւ 2011 թվականը, ըստ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, աշխատուժի պահանջարկի կառուցվածքը

40. Տե՛ս, Մարտակերտի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 02-ի թիվ 6-4/444 գրությունը:

կենթարկվի որոշակի փոփոխությունների: Կավելանա նյութական ոլորտում զբաղվածների թիվը: Աճը հիմնականում տեղի կունենա շինարարության եւ ծառայությունների բնագավառում նոր աշխատատեղերի աճի հաշվին, որը կկազմի շուրջ 200 աշխատատեղ:⁴¹

5. Շուշիի շրջանում բարձր որակավորման մասնագետների պահանջարկը կազմում է 122 մասնագետ, որից գյուղատնտեսության մասնագետներ՝ 2, ճարտարագետներ՝ 3, տնտեսագետներ՝ 4, իրավաբաններ՝ 6, հաշվապահներ՝ 10, արվեստագետներ՝ 10, լրագրողներ՝ 4, մանկավարժներ՝ 87:⁴²

Բարձր որակավորման մասնագետների լրացուցիչ պահանջարկը մինչեւ 2011թ., համաձայն սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, կկազմի 19 մասնագետ, այդ թվում՝ գյուղատնտեսության մասնագետներ՝ 6, ճարտարագետներ՝ 2, տնտեսագետներ՝ 1, հաշվապահներ՝ 10:

6. Շահումյանի շրջանի ներկայիս աշխատատեղերի ամբողջ քանակը կազմում է 400 աշխատատեղ, որից 379-ը նախատեսված է բարձր որակավորման, իսկ 21-ը՝ միջին որակավորման մասնագետների համար: Շրջանի աշխատատեղերի բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների, ունի հետևյալ տեսքը. գյուղատնտեսներ՝ 5, ճարտարագետներ՝ 5, տնտեսագետներ՝ 12, մշակույթի ոլորտ՝ 3, մանկավարժներ՝ 308:⁴³

Լինելով նոր ձեւավորվող վարչական կառույց՝ Շահումյանի շրջանն ունի որոշակի յուրահատկություններ: Շրջանում համարյա բացակայում են արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունները, թույլ են զարգացած գյուղատնտեսությունը, մշակույթի եւ սպորտի բնագավառները: Այդ է պատճառը, որ առկա եւ հատկապես պահանջարկ վայելող մասնագետներն աշխատում են կրթության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում:

Մասնագետների առկա եւ լրացուցիչ պահանջարկը Շահում-

41. Տես, Մարտունու շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 10-ի թիվ 3-3/326 գրությունը:

42. Շուշիի շրջվարչակազմի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ 2/268 գրությունը:

43. Շահումյանի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 06-ի թիվ 1-4/130 գրությունը:

յանի շրջանում մինչև 2011թ., համաձայն ԼԴՅ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, հետևյալն է. մանկավարժներ՝ 95, ֆիզկուլտուրայի եւ սպորտի մարզիչներ՝ 8, մշակույթի ոլորտի աշխատակիցներ՝ 6:

7. Քաշաթաղի շրջանի աշխատատեղերի ընդհանուր քանակը կազմում է 1986 տեղ, որից 1735-ը բարձր որակավորման, 257-ը՝ միջին որակավորման մասնագետներ:⁴⁴ Շրջանի տնտեսության մեջ աշխատատեղերի բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների, ունի հետևյալ տեսքը. պետական կառավարման համակարգ, որտեղ զբաղված են իրավաբաններ, տնտեսագետներ եւ ճարտարագետ-շինարարներ՝ 298, գյուղատնտեսություն՝ 161, մանկավարժներ՝ 1031, գրադարանների աշխատակիցներ՝ 12, առողջապահություն (բժիշկներ)՝ 169, արդյունաբերություն եւ շինարարություն՝ 10, առետուր՝ 7, տրանսպորտ՝ 2, սպասարկման ոլորտ՝ 20, այլ ճյուղեր՝ 10:

Միջին որակավորման մասնագետների թիվը շրջանում 167 է, որից արդյունաբերության եւ շինարարության ոլորտում՝ 16, առետրի բնագավառում՝ 7, տրանսպորտում՝ 5, սպասարկման ոլորտում՝ 89, այլ ճյուղերում՝ 50:

Քաշաթաղի շրջանի պահանջարկը բարձր որակավորման մասնագետների նկատմամբ 2011թ., համաձայն ԼԴՅ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, հետևյալ տեսքն ունի. տնտեսագետներ՝ 8, իրավաբաններ՝ 5, ճարտարագետ-շինարարներ՝ 7, գյուղատնտեսներ՝ 10, մանկավարժներ՝ 60, բժիշկներ՝ 8:

ԼԴՅ-ում 2009թ. հունվար-հունիս ամիսներին, ըստ վիճակագրական տվյալների, տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է 61251* մարդ, իսկ նույն ժամանակահատվածում զբաղվածների թվաքանակը՝ 57818 մարդ, որից 75,0% կան

44. Քաշաթաղի շրջվարչակազմի 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 25-424 գրությունը:
* Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն իրենից ներկայացնում է զբաղված եւ պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումար: Զբաղված բնակչության թվաքանակի հաշվառումը կատարվել է վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից ամսական պարբերականությամբ ստացվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինքնազբաղվածների (ներառյալ գյուղական տնտեսություններում զբաղվածները, հաշվի առնելով շրջկենտրոնների բնակչությունը) թվաքանակի հիման վրա:

43368 մարդ վարձու աշխատողներ են (ներառյալ անհատ ձեռնարկատերեր), իսկ 25,0% կամ 14450 մարդ հանդիսանում են ինքնազբաղվածներ, մասնավորապես, գյուղատնտեսությունում:

Ըստ տնտեսական ճյուղերի զբաղվածների (վարձու աշխատողների) միջին թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը (տես՝ աղ. 27):

Աղյուսակ 27

Ըստ տնտեսական ճյուղերի զբաղվածների բաշխվածությունը

	2008թ. հունվար-հունիս	2009թ. հունվար-հունիս
Արդյունաբերություն	4850	5065
Գյուղատնտեսություն	2767	2846
Անտառտնտեսություն	180	200
Շինարարություն	3369	3663
Տրանսպորտ	786	846
Կապ	1136	1222
Առևտուր	5099	4301
Բնակչոմտնո և կենցաղսպասարկում	1723	2116
Առողջապահություն	2373	2403
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	161	92
Ֆինանսավարկում և սպորտ	183	164
Կրթություն	7784	8278
Մշակույթ և արվեստ	1713	1714
Գիտություն և գիտական սպասարկում	98	122
Ֆինանսներ և վարկ	380	447
Կառավարում և պաշտպանություն	8511	8783
Հասարակական կազմակերպություններ	767	752
Այլ ճյուղեր	328	354
ԸՆԴՈՍԵՆԸ	42208	43368

2009թ. հուլիսի 1-ի դրությամբ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի եւ զբաղվածության բաժնուն հաշվառման են կանգնել 3626 զբաղված քաղաքացիներ:

Աշխատուժի առաջարկի դինամիկան՝ ըստ հանրապետության շրջանների, ունի հետևյալ բաշխվածությունը (տես՝ աղ. 28):

Աղյուսակ 28

Աշխատուժի առաջարկի դինամիկան՝ ըստ հանրապետության շրջանների

	2008թ. հուլիսի 1-ի դրությամբ		2009թ. հուլիսի 1-ի դրությամբ	
	աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, մարդ	նրանցից՝ գործազուրկներ	աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, մարդ	նրանցից՝ գործազուրկներ
ք. Ստեփանակերտ	2684	2681	2885	2882
Ասկերան	227	151	113	113
Քաղրուբ	190	99	95	95
Մարտակերտ	134	134	158	82
Մարտունի	217	217	110	56
Շուշի	189	167	110	106
Քաշաթաղ	137	84	155	99
ԸՆԴԱՄԵՆԸ	3778	3533	3626	3433

Բերված տվյալների համաձայն՝ 2009թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցված գործազուրկների 5.0 տոկոսը պատկանում է 18-22 տարիքային խմբին, 47.7 տոկոսը՝ 22-30 տարիքային խմբին, 38.2 տոկոսը՝ 30-50 տարիքային խմբին, 9.1 տոկոսը՝ 50-ից բարձր տարիքային խմբին:

2009թ. հուլիսի 1-ի դրությամբ գործազուրկների կազմի ուսումնասիրությունը՝ ըստ նրանց կրթության կարգի, ցույց է տալիս, որ գործազուրկների ընդհանուր թվաքանակում ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն միջնակարգ (լրիվ) ընդհանուր եւ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները, համապատասխանաբար՝ 48.4 եւ 31.7 տոկոս:

Ըստ հաստիքների վարձու աշխատողների թվակազմը, մեր ստացած տվյալների համաձայն, ունի հետևյալ տեսքը (տես աղ. 29):

Աղյուսակ 29

ԼՂՀ վարձու աշխատողների թվակազմը՝ ըստ հաստիքների

	Ընդամենը	ղեկավար աշխատողներ	Ղեկավարի տեղակալներ, վարչության պետեր	Սասնագետներ	Դատական և ուժային հասակարգի աշխատողներ	Տեխնիկական և իրականացնող և օժանդակ անձինք
Տնտեսությունում վարձու աշխատողների թվաքանակը, առ 01.01.2009թ.	39893	2157	916	9600	1438	25782

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ԼՂՀ բարձրագույն և միջին որակավորման մասնագետների թվակազմը (տես աղ. 30):

Աղյուսակ 30

ԼՂՀ վարձու աշխատողների թվակազմը՝ ըստ մասնագիտական բաշխվածության

Մասնագիտություններ	Աշխատողների թիվը
Տնտեսագետներ	775
Իրավաբաններ	226
Բժիշկներ	402
միջին և կրտսեր բուժ. անձ-զմ	1340
ուսուցիչներ	4324
գյուղատնտեսներ	234
անասնաբույժներ	201
լրատվություն, կայքի սպասարկող	18
ղիվանագետներ	46
ինժեներ-շինարարներ	65
այլ ոլորտի մասնագետներ	1971
ԸՆԴԱՄԵՆԸ	9600

Ներկայումս եւ մոտ ապագայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բարձր որակավորման մասնագետների պահանջարկի կառուցվածքի իրական պատկերը ներկայացնելու հնարավորություն չկա, քանի որ բացակայում է անհրաժեշտ տեղեկատվական բազան:

Միաժամանակ տնտեսության առկա եւ հեռանկարային զարգացման միտումների վերլուծության արդյունքում ԼՂՀ տնտեսական զարգացման եւ սոցիալական ապահովության նախարարությունների կողմից մշակվել է առաջարկ մասնագիտությունների պահանջարկի կապակցությամբ ԼՂՀ եւ ՀՀ բուհերում առաջիկա 4-5 տարիների ընթացքում պետական պատվերի շրջանակներում պատրաստվելիք մասնագետների խմբաքանակը ձեւավորելու վերաբերյալ (տես՝ աղ. 31):⁴⁵

Աղյուսակ 31

Տնտեսության համար պահանջվող բարձր որակավորմամբ մասնագետներ ստանալու անհրաժեշտ մասնագիտությունների ցանկ

<i>Հ/Հ</i>	<i>Մասնագիտության անվանումը</i>
1.	Տեղեկատվական համակարգեր /ըստ ճյուղերի/, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական անվտանգություն
2.	Լեռնային գործ, օգտակար հանածոների հետախուզում եւ մշակում
3.	Էլեկտրաէներգետիկա, ջերմաէներգետիկա
4.	Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա եւ էլեկտրատեխնոլոգիաներ
5.	Տրանսպորտային միջոցների շահագործում
6.	Ռադիոտեխնիկա, հեռահաղորդակցություն եւ ազդանշանների մշակում
7.	Հիդրոտեխնիկական շինարարություն
8.	Կիրառական մաթեմատիկա եւ ինֆորմատիկա
9.	Շինարարություն, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն
10.	Ջերմագազամատակարարում եւ օդափոխություն
11.	Ջրամատակարարում եւ ջրահեռացում

45. Տես, ԱրՊՀ արխիվ, գ.14, 15, 16, ինչպես նաև համալսարանի 2008-2010թթ. հաշվետվությունները:

12.	Շրջակա միջավայրի պահպանություն եւ բնական պաշարների արդյունավետ օգտագործում /ըստ ճյուղերի/, բնապահպանական փորձաքննություն
13.	Բնության օգտագործման տնտեսագիտություն
14.	Սոցիալական-մշակութային ծառայություն եւ զբոսաշրջություն
15.	Շուկայաբանություն /մարքեթինգ/
16.	Ապրանքագիտություն եւ ապրանքների որակի փորձագիտություն
17.	Ապահովագրական գործ
18.	Բիզնեսի կազմակերպում
19.	Չափագիտություն, ստանդարտացում եւ սերտիֆիկացում
<i>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության համակարգում պահանջվող մասնագետների ցանկ</i>	
1.	բժշկական անձնակազմ՝ նյարդաբան, ակնաբույժ, մանկաբույժ, հոգեբույժ
2.	սոցիալական աշխատանքի մասնագետներ

Միաժամանակ նշենք, որ հատուկ նշանակություն տալով հանրապետությունում գյուղատնտեսության զարգացմանը, ԼՂՀ կառավարությունը՝ ՀՀ ագրարային համալսարանի հետ համատեղ, ստեղծել է «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղը, որի հիմնական նպատակն է թողարկել գյուղատնտեսության բնագավառի համար բարձր որակավորման մասնագետներ:

2009/2010 ուսումնական տարում Հայաստանի Ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում նախատեսվում է կատարել ընդունելություն հետևյալ մասնագիտություններով (տես՝ աղ-ներ 32, 33, 34, 35):

Հայաստանի պետական ագրարային համալսարանի
ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղ (առկա ուսուցում)

Շիֆր	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ծեույ ուսման վարձի կրիտիստուցմանը (ամսվար)	Բուհի կողմից ուսման վարձի զեղեի կրիտուսմանը (վեարույի)
310102	Ագրոնոմիա՝ լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով	10	15
310201	Անասնաբուծություն	8	7
310302	Անասնաբուծություն	8	7
310504	Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանում	5	10
310705	Խնորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	5	10
310707	Պահածոյացման եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա	5	10
310708	Մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա	5	10
310709	Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա	5	10
310801	Գյուղատնտեսության մեքենայացում	8	12
310901	Հողաշինարարություն և հողային կադաստր	8	12
311101	Ագրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում	8	12
311103	Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում եւ աուդիտ	5	15
311112	Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում	5	15
	Պահուստային տեղեր	10	
	ԸՆԴԱՄԵՆԸ	95	145

Հայաստանի պետական ագրարային համալսարանի
 ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղ (հեռակա ուսուցում)

Շիֆր	Մասնագիտության անվանումը	Վճարովի
310102	Ագրոնոմիա՝ լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով	20
310201	Անասնաբուծություն	15
310504	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	15
310504	Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանում	15
310705	Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	15
310707	Պահածոյացման եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա	15
310708	Մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա	15
310709	Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա	15
310801	Գյուղատնտեսության մեքենայացում	20
310901	Հողաշինարարություն եւ հողային կադաստր	20
311101	Ագրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում	20
311103	Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում եւ աուդիտ	20
311112	Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում	20
	ԸՆԴԱՄԵՆԸ	225

Հայաստանի պետական ագրարային համալսարանի
 ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղի միջին մասնագիտական
 կրթական ծրագրերի կենտրոն (առկա ուսուցում)⁴⁶

Շիֆր	Մասնագիտության անվանումը	Անվճար		Վճարովի	
		9 ամյա հիմնական կրթություն	միջնակարգ կրթություն	9 ամյա հիմնական կրթություն	միջնակարգ կրթություն
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ (հիմնական եւ միջնակարգ կրթությամբ)	15	5	5	15

46. Այդ մասին տես, ՀՊԱՀ ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենի 2009-210 ուս. տարվա հաշվետվությունը, էջ 11, 12, 13, 14:

0603 0604	Ֆինանսներ եւ բանկային գործ (հիմնական եւ միջնակարգ կրթությամբ)	10	5	10	15
2401	Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությամբ)	5		15	
3104	Անանսնաբուծություն (հիմնական կրթությամբ)	10		5	
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)	10		5	
3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	20	5	5	
	Պահուստային տեղեր	10	5		10
	ԸՆԴԱՍԵՆԸ	80	20	45	40

Աղյուսակ 35

**Հայաստանի պետական ագրարային համալսարանի
ԼՂՀ Ստեփանակերտի մասնաճյուղի միջին մասնագիտական
կրթական ծրագրերի կենտրոն (հեռակա ուսուցում)**

Շիֆր	Մասնագիտության անվանումը	Վճարովի	
		9 ամյա հիմնական կրթություն	միջնակարգ կրթություն
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ (հիմնական եւ միջնակարգ կրթությամբ)	20	20
0603 0604	Ֆինանսներ եւ բանկային գործ (հիմնական եւ միջնակարգ կրթությամբ)	20	20
2401	Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությամբ)	20	
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)	20	
3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	20	20
	ԸՆԴԱՍԵՆԸ	100	60

Արցախի գիտակրթական համակարգի զարգացման միտումները

Ժամանակակից պայմաններում Արցախի կրթական համակարգի զարգացման միտումները անհրաժեշտ է դիտարկել կրթական համակարգերի ինտեգրման եւ ընդհանուր զարգացման համատեքստում:

Արցախի գիտակրթական համակարգի ներկա վիճակի վերլուծությունը ցույց տվեց, որ այն կարիք է զգում որոշակի կառուցվածքային, մասնագիտական կողմնորոշումների փոփոխությունների եւ դրանց իրականացման հնարավորությունների ճշգրտման:⁴⁷

Ինչպես նշում են Ա.Ա.Ղուկասյանը, Լ.Թ.Ասատրյանը, Ա.Ս.Կարապետյանը, «Դեպի շուկան կողմնորոշված բարձրագույն դպրոցը կարիք է զգում ծրագրերի փոփոխման, հունանիտար կրթության ծավալի կրճատման, մասնագիտական ուսուցման»:⁴⁸

Որևէ կրթական համակարգի զարգացումը ապահովելու համար պետք է մշակվի այդ զարգացումն ապահովելու հայեցակարգը, գործողությունների իրականացման ծրագիր, ռազմավարական հիմնական ուղղությունները, որոշակիացվեն ֆինանսական միջոցները, ռեսուրսները, կադրային ներուժը:

Մենք համամիտ ենք Լ.Ս.Լազարևի եւ Ս.Ս.Պոտաշնիկի այն դիրքորոշման հետ, որ կրթական համակարգի զարգացման միտումները առարկայական դարձնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել յոթ հատկանիշներ՝ հրատապությունը, կանխատեսելիությունը, արդյունավետությունը, իրատեսությունը, ամբողջականությունը, վերահսկելիությունը եւ խափանումների հանդեպ զգայունությունը:⁴⁹

47. Ավանեսյան Ա.Ս., Արցախի բարձրագույն և հետբուհական կրթության մասին, «Մանկավարժական միտք» հանդես 3-4, Երևան, 2011, էջ 263-268:

48. Մ. Ղուկասյան, Լ. Ասատրյան, Ա. Կարապետյան, Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Երևան, Մանկավարժ, հր., 2005, էջ 170, 171:

49. Лазарев Л.Ш., Поташини С.М., Управление развития школы, М., 1995, ст.18.

Ինչ խոսք, որ յուրաքանչյուր գիտակրթական համակարգի զարգացման կառավարումն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

- մշակել կրթական համակարգի զարգացման հայեցակարգ եւ ծրագիր,

- վերակառուցել կրթական համակարգի եւ գիտական ներուժի գործունեությունը՝ ըստ պետական պլանավորման եւ կրթական շուկայի պահանջարկի եւ առաջարկի,

- մշակել եւ բուհի կրթական համակարգում ներդնել նոր տեխնոլոգիաներ,

- իրականացնել համակարգված ռազմավարական բարեփոխումներ,

- անհրաժեշտ բարեփոխումների իրականացման համար ներգրավել ֆինանսական նոր միջոցներ,

- ստեղծել մոնիթորինգային ծառայություն բարձրագույն կրթության համակարգի զարգացման մակարդակի գնահատման համար:

Հարկավոր է հիմնախնդրային կողմնորոշիչ վերլուծության արդյունքների հիման վրա կրթական համակարգում մշակել համաձայնեցված փոփոխությունների նախագիծ և դրա իրագործման պլան:⁵⁰

Արցախի կրթական համակարգի զարգացումը պայմանավորված է սոցիալ-տնտեսական եւ քաղաքական հանգամանքներով, ուստի, այն պետք է ծրագրել երկրի կայացման եւ քաղաքական իրադարձությունների հաշվառման համատեքստում:

Միեւնույն ժամանակ պետք է հաշվի առնել հանրակրթական, միջին մասնագիտական եւ բուհական հաստատությունների միջեւ ուղիղ եւ հակադարձ կապերը, որոնք զգալի ազդեցություն են թողնում այդ հաստատությունների կենսագործունեության վրա:

50. Ա. Ղուկասյան, Լ. Ասատրյան նշվ. աշխ., էջ 171:

Կրթական համակարգը կառուցվում է որոշակի հիմքի վրա: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ Արցախում առկա է այդ հիմքը, գիտակրթական ներուժը, ուստի, մեր խնդիրն եղել է որոշակիացնել՝ ի՞նչ ուղղություններով է ընթանում գիտակրթական համակարգի զարգացումը եւ ի՞նչ չափանիշներով պետք է գնահատվի այն:

Մեր կարծիքով Արցախի գիտակրթական համակարգի զարգացումն ընթանում է հետեւյալ ուղղություններով՝

- նոր տիպի կրթադաստիարակչական հաստատությունների կազմավորման,
- մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման,
- կրթության բովանդակության ու կառուցվածքի նորացման,
- կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման,
- կրթության գործընթացի եւ դրա արդյունքների ռեյտինգային գնահատման,
- առարկայական համակարգի զարգացման,
- առանձին մասնագիտությունների գծով վերաորակավորման համակարգի զարգացման,
- մասնագետ կադրերի աշխատանքի տեղավորման ուղղությամբ աշխատանքների բարելավման,
- կրթական հաստատությունների կառավարման համակարգի զարգացման,
- գիտահետազոտական գործունեության զարգացման,
- կադրային ներուժի մեծացման եւ մասնագիտական կատարելագործման ու զարգացման,
- ֆինանսական նոր միջոցների ներդրման,
- նյութատեխնիկական բազայի բարելավման,
- բարձր տեխնոլոգիաների ներդրման,
- կրթության գործընթացի եւ դրա արդյունքների վերահսկողության՝ դիագնոստիկայի, մշտադիտարկման, վարկանիշային գնահատման, ինքնագնահատման եւ այլ ձեւերի ու մեթոդների ներդրման,

- կրթության որակի ապահովման եւ ընտրված մասնագիտությանը շրջանավարտի մոդելի համապատասխանության:

Միեւնույն ժամանակ գիտակրթական համակարգի զարգացումը ենթադրում է այդ գործընթացի վերահսկողության ենթահամակարգի ստեղծում:

Ըստ Վ.Ս.Լազարեւի՝ վերահսկողությունը կարելի է իրականացնել երկու տարբերակով՝ ավտոմատացված եւ ոչ ավտոմատացված:

Ավտոմատացված վերահսկողության համար անհրաժեշտ է տեխնիկական եւ ծրագրային ապահովում, ոչ ավտոմատացված վերահսկողության համար ծրագրով ընթացող աշխատանքները վերահսկվում են այդ նպատակով կազմված խմբերի, պարբերական խորհրդակցությունների միջոցով:

Արցախի գիտակրթական համակարգում ընթացող բարեփոխումները ենթադրում են վերանայել կրթական նպատակները ըստ կրթական շուկայի պահանջարկի՝ հաշվի առնելով նորաստեղծ հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը եւ դրանց փոփոխման տեսլականը:

Ըստ Տ.Ի.Շամովայի, Պ.Ի. Տրետյակովի եւ Ն.Պ. Կապուստինի՝ «Ցանկացած կրթական հաստատություն համարվում է սոցիալական համակարգի մի մասը, եւ իրենից ներկայացնում է ամբողջական դինամիկ սոցիալ-մանկավարժական համակարգ»:⁵¹

Միեւնույն ժամանակ, ինչպես նշում է Վ.Գ. Աֆանասեւը, հասարակական գործընթացները եւ կենսագործունեության ոլորտները սերտորեն փոխկապակցված են իրար հետ եւ մեկ խնդրի լուծումը կախված է բազմաթիվ ուրիշներից եւ հիմնախնդիրները ձեռք են բերում համակարգային համալիր բնույթ:⁵²

Կրթական համակարգը համարվում է մեր հասարակական-քաղաքական կարգի օրգանական մասը եւ անքակտելիորեն

51. Шамова Т.И., Капустин Н.П. Управление образовательными системами: Учебное пособие для студ.высш.учеб. заведений, М., 2002, стр.17.

52. Афанасев В.Г., Общество: системность, познание, управление, М. 1981, стр.44.

կապված է տնտեսության, հասարակական հարաբերությունների եւ հասարակական գիտակցության բոլոր ձեւերի հետ:

Կրթության եւ մշակույթի միջոցով անձը կարող է հնարավորություն ստանալ կազմակերպելու հասարակական կյանքը, սոցիալական ոլորտն ու արտադրությունը՝ իր շահերին համապատասխան, կատարելագործելու տնտեսությունը եւ հասարակական բոլոր հարաբերություններն ու ինքն իրեն:

Այսօր Արցախի գիտական ներուժի զարգացման մասնագետների պատրաստման գործում առավել էական դեր է հատկացվում բարձրագույն կրթության համակարգի զարգացմանը, նրանում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Մենք համամիտ ենք ռուս հոգեբան Ա.Ա. Վերբիցկու այն տեսակետի հետ, որ բարձրագույն դպրոցի կրթության համակարգի զարգացման հիմնական միտումներ են համարվում՝⁵³

- յուրաքանչյուր կրթական մակարդակի խորապես ընկալումը՝ որպես անընդմեջ կրթության համակարգի օրգանական մաս, նրա տարբեր աստիճաններում շարունակականության ապահովումը,

- ուսուցման համակարգչայնացումը եւ տեխնոլոգիացումը,

- անցումը ուսուցման տեղեկատվական մեթոդներից ակտիվ մեթոդների ու ձեւերի, սովորողների ուսումնական գործունեության մեջ ներառելով պրոբլեմայնություն, հետազոտական-որոնողական ինքնուրույն աշխատանքները՝ վերարտադրությունից մտածական, ստեղծագործական ձեւերին,

- անցումը ուսուցման գործընթացի կազմակերպման ակտիվացնող, զարգացնող և խաղային ձեւերին,

- անցումը մանկավարժի եւ սովորողի փոխգործակցության կազմակերպման այնպիսի ձեւին, որի պարագայում շեշտը դրվում է ոչ թե դասավանդողի ուսուցողական գործունեության, այլ սովորողի ճանաչողական գործունեության վրա:

53. Вербицкий А.А. Активное обучение в высшей школе: Контекстный подход, М., Высшая школа, 1991, стр. 62.

Դա են վկայում պատմական տվյալները: Այսինքն՝ կրթությունը բոլոր ժամանակներում եղել է մնում է որպես մարդկային քաղաքականության զարգացման, մշակութային արժեքների փոխանցման հիմնական գործոնը:

XX դարում կրթությունը սկսեցին դիտարկել որպես սոցիալ-տնտեսական եւ մանկավարժական արժեք, որպես արժեքանական երեւոյթ: Կրթության գլխավոր նպատակը կայանում է անձի համակողմանի զարգացման մեջ՝ հիմք ունենալով նրա անհատականությունը եւ բնությունը:⁵⁴

Գիտատեխնիկական առաջընթացը նոր թափ հաղորդեց բարձրագույն կրթության համակարգին: Ամբողջ աշխարհում, այդ թվում Խորհրդային Միությունում, ստեղծվեցին համալսարաններ, ինստիտուտներ:

1920-1940-ական թվականներին բարձրագույն ուսումնական հաստատություններ բացվեցին Խորհրդային բոլոր հանրապետություններում:

1998 թվականին Սորբոնի համալսարանի 800-ամյակի կապակցությամբ այստեղ հավաքված Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի եւ Մեծ Բրիտանիայի կրթության նախարարների կողմից ստորագրվեց հռչակագիր, որի էությունը կայանում էր նրանում, որ բարձրագույն կրթական համակարգը դարձվեր երկփուլ: Այն «պետք է լայնորեն կիրառվի միջազգային համեմատելիության և համարժեքության ճանաչման համար», իսկ դրան «կարելի է հասնել՝ օգտագործելով կրեդիտների (ECTS-European Credit Transfer System) փոխանցման համակարգը: Դա հնարավորություն կընձեռի նախնական փուլերում ստացած կրեդիտները փոխանցել եվրոպական երկրների այլ համալսարաններ՝ որակավորում ստանալու նպատակով»: Այդ գաղափարը հետագայում իր զարգացումը գտավ Բոլոնյան հռչակագրում:

54. Вербицкий А.А. Активное обучение в высшей школе: Контекстный подход, М., Высшая школа, 1991, стр. 26.

1999թ. հունիսի 19-ին Բոլոնիայում Եվրոպայի 29 պետությունների կրթության նախարարները ստորագրեցին հռչակագիր բարձրագույն կրթության եվրոպական տարածք ստեղծելու վերաբերյալ: Հիմք ընդունելով Սորբոնի հռչակագրի հիմնական սկզբունքները՝ նախարարները պարտավորվում էին համակարգել իրենց քաղաքականությունն այնպես, որ մինչև 2010 թվականը ստեղծվի բարձրագույն կրթության համաեվրոպական տարածք, ինչպես նաև եվրոպական բարձրագույն կրթության համակարգը տարածվի ողջ աշխարհում: Նախանշված նպատակներին հասնելու համար հռչակագրում առաջ են քաշվում հետևյալ հիմնախնդիրները, որոնց լուծմանը պետք է նպատակաուղղվի ողջ գործընթացը.

- ընդունել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական աստիճանների համակարգ,

- ընդունել երկու փուլով կառուցված բուհական կրթության համակարգ,

- հիմնել կրեդիտային համակարգ, ինչպիսին է եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը (ECTS),

- նպաստել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շարժունությանը,

- նպաստել որակի ապահովման հարցում համագործակցությանը, նպաստել բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական չափանիշների կիրառմանը:

Բոլոնիայի հռչակագրով, փաստորեն, սկիզբ դրվեց լայնորեն հայտնի և այսօր արդեն մոտ հինգ տասնյակ երկրներում իրականացվող «Բոլոնիայի գործընթացին»:

Հայաստանի Հանրապետությունը Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես միացավ 2005թ. մայիսին Նորվեգիայի Բերգեն քաղաքում կայացած Նախարարների գագաթնաժողովի ընթացքում, երբ ՀՀ կրթության և գիտության նախարարը, ի թիվս այլոց ստորագրեց գագաթնաժողովի հուշագիրը: Վերոնշյալ համաձայնագրերին ՀՀ միանալը նոր հնարավորություններ ընձեռեց

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ բարձրագույն կրթության իրավունքի ընդլայնման և ուսանողների շարժունության համար, քանի որ այդպիսով ավելի լայն հնարավորություններ են ստեղծում այլ երկրների բուհերում բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար:

Արցախի կրթական համակարգը՝ որպես ՀՀ կրթական համակարգին ինտեգրված կառուցվածքային տարր, ինտեգրվել է նաև այդ գործընթացներին եւ իր վրա կրում է այն բոլոր գործոնների ազդեցությունը, որոնք եւ ազդում են Բոլոնյան հռչակագրին միացած բոլոր կրթական համակարգերի զարգացման վրա:⁵⁵

55. Ա. Ղուկասյան, Լ. Ասատրյան, Ա. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 268:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ գրքի բուն շարադրանքում և առանձին գլուխների վերջում արվել են որոշ եզրակացություններ, ուստի վերջում կուզենայինք ներկայացնել առավել ընդհանրական եզրակացություններ:

1. Պատմագիտական, պատմագրական, արխիվային հարուստ նյութերի, հայ դասական մանկավարժների աշխատությունների, ակադեմիական հիմնարար ուսումնասիրությունների համալիր վերլուծությունները որոշակիորեն համադրելով ժամանակի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական, ազգային գաղափարաբանության և քննարկվող ժամանակաշրջանի մշակութային ձեռքբերումների հետ, հանգամանորեն ցույց է տրվում, որ դրանք իրենց բնույթով, բովանդակակից ընդհանրացումներով ընդգրկում են ժամանակի բուհական գիտակրթական համակարգի զարգացման հիմնահարցերի հետ կապված փաստեր, տվյալներ, իրողություններ, օրինաչափ դրսևորումներ, որոնք հնարավոր է գիտամանկավարժորեն համակարգել և ամբողջական պատկերացում ստանալ ուսումնասիրվող ժամանակաշրջանի Արցախի գիտակրթական համակարգի ամբողջական պատմության մասին: Համապատասխան աղբյուրների վերլուծությամբ ապացուցվում է, որ հայ ժողովրդի այս հատվածի՝ Արցախի, բարձրագույն դպրոցի կրթական համակարգի բնականոն զարգացումը կապված է տասնվեցդարյա պատմության խորքերից եկող ավանդական մանկավարժական հիմնարար գաղափարների խոր ընկալման և ներդրման հետ, որոնք արտացոլվել են բուհական ուսումնական հայտագրերում, ծրագրերում, համապատասխան առարկաների դասավանդման գործընթացներում և հավուր պատշաճի յուրացվել են ժամանակի գիտակրթական օջախների միջոցով:

2. Դարերի ընթացքում Արցախը, լինելով արևելահայ հատվածի ամենախոշոր նահանգներից մեկը, կարևոր դեր է կատարել

հայ ժողովրդի հասարակական ու մշակութային կյանքում, նրա ամբողջ պատմության ընթացքում: Արցախահայերը կիսել են ողջ հայ ժողովրդի դժվարին ճակատագիրը, միասին պայքարել օտար զավթիչների դեմ, ստեղծել ու պահպանել ազգային դարավոր մշակութային ժառանգությունը: Կենսահաստատման այս օրինաչափությամբ գոյատևեց հայ ժողովրդի այս հատվածը: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ բացված առաջին դպրոցն Արցախի Ամարասի վանքում սոսկ դպրատունն էր. այստեղ դրվեց մեր գոյապայքարի քաղաքական առաջին հիմնաքարը, քանզի Արցախին վիճակված էր՝ մայր Հայաստանից ականա տարանջատված լինելով, ինքնուրույն գոյատևել: Մեսրոպյան գիրը դարձավ ազգային միասնության գաղափար՝ ամեն մի սերնդի մեջ պահպանելով հայ լինելու հպարտությունը: Հանուն այդ գաղափարի արցախահայությունը կարողացավ դիմագրավել հետագա բոլոր փորձություններին, ընդհանուր ազգային առանձնահատկություններով հանդերձ՝ ունենալ միասնական կրթական համակարգ, որը տեսականորեն մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները համառորեն պահպանել է իր կենսունակությունը:

3. Փաստագրական նյութերի ուսումնասիրության հիման վրա, հանգամանորեն ցույց է տրվում, որ պատմության նոր շրջանում՝ 20-րդ դարի երկրորդ տասնամյակում, Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացման շրջանում, արմատականորեն վերափոխվում է նախկին բազմատիպ կրթական համակարգը և լուսժողկոմ Ար. Քամայանի ջանքերով, հենվելով ժողովրդական կրթության բնագավառում Հայաստանի ձեռք բերած եռամյա փորձի վրա, ստեղծվում է նոր՝ միասնական կրթական համակարգ, չնայած Ադրբեջանի հանրապետական մարմինների ազգային քաղաքականության ասպարեզում դրսևորած խտրական մոտեցումներին՝ մասնավորապես, մայրենի լեզվով ուսուցումը հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական հաստատություններում (տեխնիկումներում, ուսումնարաններում), իսկ հետագայում՝ բարձրագույն կրթօջախներում ապահովման

հարցում: Լեռնային Ղարաբաղում կոպտորեն ոտնահարվում էին պատմական հայրենիքում հայության, որպես պետականակիր ազգի, լիարժեք ապրելու, զարգանալու, այդ թվում՝ ազգային լեզվով բարձրագույն կրթություն ստանալու բնականոն իրավունքներն ու ազատությունները:

4. Գիտամանկավարժական վերլուծություններով մեկնաբանվում են, որ խորհրդային իշխանության հաստատումից հետո Լեռնային Ղարաբաղում հանրակրթական նոր տիպի՝ երկաստիճան դպրոցների լայն ցանցը, նրանց հետագա զարգացումը և տարբեր մասնագիտությունների գծով բարձրորակ կադրերի պատրաստումը հնարավորություններ ստեղծեցին կազմակերպել նաև մի շարք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ (Շուշիի մանկավարժական ուսումնարան՝ 1921-1922 ուստարում, Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում՝ 1923թ., իսկ հետագայում՝ Ստեփանակերտի բժշկական ուսումնարան, 1932թ.), որոնք լուրջ դեր խաղացին մարզում օրըստօրե զարգացող ժողկրթության, տնտեսության և մշակույթի տարբեր բնագավառների համար միջին որակի մասնագետներ պատրաստելու գործում:

5. Սոցիալ-տնտեսական-քաղաքական իրադարձությունների պատմաքննական վերլուծություններով մեկնաբանվում է (տես գլուխ 1, 2-րդ ենթագլուխ), որ 20-րդ դարի 30-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում որոշակի հաջողություններ են ձեռք բերվել նաև բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում: Խորապես մտահոգված լինելով մարզում մասնագիտական կրթության հիմնադրման և բարձրորակ կադրերի պատրաստման հարցերով, հայրենասեր գործիչները (Ս. Աբրահամյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Հայրապետյան, Վ. Ստեփանյան, Գր. Գրիգորյան և ուրիշներ), ակտիվ աշխատանք են տանում երկրամասում հիմնադրելու առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը: Արխիվային փաստաթղթերից (պահպանվում են երկամյակի առաջին կարգի շրջանավարտ Միքայել Բեգլարյանի

անձնական արխիվում), տեղեկանում ենք, որ ԼՂ ինքնավար մարզում առաջին թերի բարձրագույն՝ երկամյա մանկավարժական ուսումնական հաստատությունը (ուսուցչական ինստիտուտը), երեք՝ պատմալեզվաբանական, ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական ֆակուլտետներով բացվել է Շուշիում՝ 1938-39 ուստարում: Ինստիտուտում կիրառվում էին առկա և հեռակա ուսուցման ձևեր՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժիններով: Հետպատերազմյան շրջանում՝ 1946 թվականի սեպտեմբերի 1-ից ինստիտուտը տեղափոխվեց Ստեփանակերտ և գործում էր որպես Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտ՝ իր առկա և հեռակա ուսուցման ձևերով: Մեծ աղմուկով բացված, բայց իրականում սակավ գիտամանկավարժական գործունեություն ծավալած թերի բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրումը բացառիկ երևույթ էր Արցախի ժողովրդի կյանքում: Երկամյա ինստիտուտը փակվեց 1953 թվականին և հայկական բաժինը տեղափոխվեց Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտ:

6. Քննության առնելով Մոսկվայից իջած հանձնարարականները և Բաքվի իշխանությունների հայատյաց քաղաքականությունը, վեր է հանվում այն իրողությունը, որ երկու տասնամյակում (1950-1969թթ.), Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարում հայակերտ և հայաշունչ Բաքվից օտարել հայոց լեզուն, իսկ Ղարաբաղում հիմքեր ստեղծել ադրբեջաներենի մասսայականացման և ադրբեջանական մտավորականության խիտ բանակ ունենալու համար: Ահա այդ միտումով էլ 1969թ. Ադրբեջանի ղեկավարությունը, փակելով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը, այն տեղափոխեց Ստեփանակերտ, որպես մասնաճյուղ՝ երեք բաժիններով (հայկական, ադրբեջանական, ռուսական): Մանրամասն հետազոտվում ու ներկայացվում է (տես՝ գլուխ 1, 3-րդ ենթագլուխ) Ադրբեջանի ղեկավարության 1969թ. միութենական իշխանությունների թուլտվությամբ ԼՂԻՄ-ում առաջին

բարձրագույն (նկատի ունենք ոչ երկամյակի բազայով) ուսումնական հաստատության մասնաճյուղի ստեղծման հետապնդած ռազմավարությունն իր մի շարք խնդիրներով հանդերձ: Մասնաճյուղի ստեղծման պահից նրա կառուցվածքում, առանց անհրաժեշտության, հայկական և ռուսական բաժանմունքների կողքին ստեղծվեց նաև ադրբեջանական լեզվով ուսուցման բաժանմունք: Գործերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ ճանապարհով Ադրբեջանի իշխանությունները լուծեցին իրենց համար կարևոր մի շարք ռազմավարական հարցեր:

7. Համապատասխան աղբյուրների ուսումնասիրության և պատմաքննական վերլուծության հիման վրա ներկայացվում են Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի և Ստեփանակերտի մանկավարժական ինքնուրույն ինստիտուտի ստեղծման նախադրյալները (տես՝ գլուխ 1, 3-րդ ենթագլուխ): Եվ այսպես, 1973 թվականի դեկտեմբերին Ադրկոմկուսի ԿԿ և Մինիստրների խորհրդի որոշումներով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց ինքնուրույն բուհի, կոչվելով Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան պետական մանկավարժական ինստիտուտ: Նման վերակազմավորման դրդապատճառը, մեր հանդգնամբ, Ադրբեջանի գերիշխանության և հայահալած քաղաքականության դեմ ինքնավար մարզի բնիկ հայ բնակչության տասնամյակներ ի վեր չլռած և 60-ական թվականներին նոր թափ առած ժողովրդական ընդվզման շարունակական բնույթն էր, որն իրեն զգացնել էր տալիս նաև 70-ական թվականներին: Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում լույս տեսած հոդվածների, ինստիտուտի փորձառու դասախոսների (որոնք հիմնադրման օրվանից առայսօր աշխատում են ԱրՊՀ-ում) տված ճշտգրիտ տեղեկությունների բազմակողմանի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել պատշաճ մակարդակով ներկայացնել ուսումնագիտական այդ կրթօջախի շուրջ

մեկուկես տասնամյակ (1973-74թթ. և 1987-88թթ. հոկտեմբեր) ունեցած գիտամանկավարժական գործունեության ընդհանուր բնութագիրը և՛ տեսականորեն, և՛ աղյուսակների (1, 2, 3, 4) միջոցով:

8. Արցախյան ազգային ազատագրական շարժման հետևանքով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կուլեկտիվը երկփեղկվեց: Ինստիտուտում ադրբեջանցիների հետ միատեղ աշխատանքը դարձավ անհնարին, առանձնապես Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարար Ելյուտինի հրամանով մեկուկես տասնամյակ գործած մանկավարժական ինստիտուտը 1988թ. հոկտեմբերին փակվեց: Ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Շուշի, իսկ հայկական բաժինը՝ Վանաձորի Յոփի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ: Սակայն ուսումնական պարապմունքները խաթարվեցին 1988թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո: Յայաստանի ղեկավարների ջանքերով, Յայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կուլեգիայի (իհարկե, համաձայնեցնելով ԽՍՀՄ բարձրագույն կրթության մինիստր Ելյուտինի հետ), 1989թ. մարտի 13-ի թիվ 5 որոշմամբ ստեղծվում է Վանաձորի (Կիրովականի) մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք (տես՝ գլուխ 1, 4-րդ ենթագլուխ): Այսպիսով ԿՊՄԻ-ի Ստեփանակերտի բաժանմունքի ստեղծմամբ սկիզբ առավ հայեցի բուհական կրթահամակարգի մուտքն Արցախ:

9. Բնութագրվող ժամանակաշրջանում (1989-1992թթ.) Վանաձորի Յոփի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի հիմնադրումն ուսանելի օրինակ հանդիսացավ նաև Յայաստանի մյուս պետական բուհերի համար: Միանգամայն օրինաչափ է, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ղեկավարությունը, նշված բաժանմունքի ստեղծման աշխատանքներին զուգահեռ, աշխա-

տանք էր տանում Արցախում Հայաստանի նաև մյուս բուհերի ներկայությունը տարբեր կարգավիճակներով ապահովելու համար: Այսպես՝ Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության Երևանի Կ. Մարքսի անվան Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորի 1990թ. հունվարի 4-ի թիվ 1 հրամանով Ստեփանակերտում ստեղծվել է ԵրՊԻ-ի հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունքը (տես գլուխ 2, 1-ին ենթագլուխ), իսկ Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կոլեգիայի 1991թ. նոյեմբերի 1-ի թիվ 85 որոշմամբ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա ուսուցման ֆակուլտետի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքին տրվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի կարգավիճակ: Լեռնային Ղարաբաղի նորաստեղծ հանրապետության շուրջ ստեղծված քաղաքական մթնոլորտը և հանրապետությունում սկսված ու շարունակվող պետականաշինության լիարժեք կազմակերպման գործընթացները հուշում էին այլ կերպ նայել հանրապետության բարձրագույն կրթության արդեն գործող երկու օջախներին՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական մասնաճյուղին և Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքին, մանավանդ, որ իրենց կառուցվածքով, ուսման տևողությամբ և ուսուցանվող մասնագիտությունների բազմազանությամբ դրանք ընդունել են համալսարանական բնույթ: Ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ այդ երկու գիտակրթական օջախների առանձնացված գործունեությունը դարձել էր աննպատակահարմար: Մյուս կողմից, նորանկախ հանրապետության պետական կառույցների աստիճանաբար ստեղծման գործընթացը պահանջում էր Արցախում ունենալ սեփական պետական համալսարան՝ թեկուզև ՀՀ կրթական համակարգի ենթակայության ներքո:

10. Փաստագիտական նյութերի ուսումնասիրության հիման վրա ներկայացվում են ԼՂՀ համալսարանական կրթության առաջնեկի հիմնադրման իրավաքաղաքական և գիտական հիմքերը (տես՝ գլուխ 3, 1-ին և 2-րդ ենթագլուխները): Հայաստանի Հանրապետության կառավարության 1992թ. հոկտեմբերի 13-ի թիվ 509 որոշմամբ՝ միավորելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը և Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը, Ստեփանակերտ քաղաքում ստեղծել է Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը՝ այն ընդգրկելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում: Հետևաբար, անժխտելի փաստ է, որ ԼՂՀ-ում (Արցախում) համալսարանական կրթությունը պաշտոնապես սկիզբ է առել 1992թ. հոկտեմբերի 13-ին և այդ գործընթացին այլ տարեթիվ վերագրելն անհիմաստ է և անընդունելի: Ուստի անթույլատրելի է, երբ մեր ժողովրդի 20-րդ դարավերջի Ազատամարտի նշանակալի այդ ձեռքբերումը հանիրավի վերագրվում է Ադրբեյջանին (տես՝ հավելված 2, 3):

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը ԼՂՀ կառավարության 1996թ. փետրվարի 6-ի թիվ 25 որոշմամբ վերանվանվել է Արցախի պետական համալսարան:

Ի սկզբանե մեծ ուշադրություն նվիրվեց համալսարանի գիտաուսումնական գործընթացի (սկզբում համալսարանն ուներ 14 ամբիոն, 200 դասախոս, 2000-ից ավելի ուսանող, 6 ֆակուլտետ, 6 ուսումնական կաբինետ, 4 լաբորատորիա, 2 գրադարան-ընթերցասրահ) արդյունավետ կազմակերպման ու իրականացման խնդրին: Համալսարանի ներքին կյանքում տեղի ունեցած որակական փոփոխությունները՝ համալսարան ընդունված և ավարտած ուսանողների թվաքանակը, պրոֆեսորադասախոսական կազմն ըստ ամբիոնների և ուսումնական տարիների ներկայացվում են համապատասխան աղյուսակներում (թիվ 12, 13, 14):

Այսօր Արցախի պետական համալսարանում գործում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) համակարգ: Առաջին աստիճանի՝ բակալավրիատի ուսումնական ծրագրերը, 4-ամյա ուսումնառությամբ, կազմակերպված են ըստ մասնագիտությունների և իրականացվում 32 բնագիտական և հումանիտար ուղղություններով: Երկրորդ աստիճանի՝ մագիստրոսական ուսումնառության երկամյա ծրագրերը կազմված են ըստ 15 տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների: Երրորդ աստիճանը (ասպիրանտուրա) նպատակաուղղված է հումանիտար և բնագիտական տարբեր մասնագիտությունների զծով որակյալ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը:

11. Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում որակյալ մասնագետների պատրաստման գործում իրենց առաքելությունն էին կատարում նաև ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները (տես՝ գլուխ 4): Համապատասխան աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում ստեղծված առաջին ոչ պետական բուհը «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտն է, որը հիմնադրվել է 1996թ. սեպտեմբերի 27-ին՝ ԼՂՀ ԿԳՆ թիվ 13 լիցենզիայի հիման վրա: Այնուհետև հաջորդաբար ստեղծվել են «Մեսրոպ Մաշտոց» համալսարանը (1996թ.), «Գրիգոր Նարեկացի» համալսարանը (1996թ.), Երևանի մեներջմենթի համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը (1997թ.), Երևանի «Երևան» համալսարանի ԼՂՀ մասնաճյուղը (1997թ.), ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Ստեփանակերտի մասնաճյուղը (1997թ.), «Գրիգոր Լուսավորիչ» համալսարանը (2002թ.): Համաձայն ԼՂՀ կառավարության և ԿԳ նախարարության կողմից կազմված հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունների, այսօր հանրապետությունում գործում են միայն «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը, «Մեսրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան-

ները, որոնք իրենց գործունեության տարիներին որոշակի դեր են խաղացել Արցախի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացման գործում):

12. Առաջին անգամ ուսումնասիրվել ու հնարավորինս լիարժեք ներկայացվել են Արցախի գիտակրթական ներուժը (տես՝ գլուխ 5, 1-8-րդ ենթագլուխները) և նրա արդի վիճակը՝ ելնելով ԲՈՅ-ի կողմից տրված որակավորման փաստաթղթերից: Ստեղծվել է գիտական որակավորումը հաստատող փաստացի նյութերի բանկ՝ հակիրճ նշելով յուրաքանչյուր գիտական աշխատողի ուսումնասիրությունների առարկան ու թեմատիկ ընդգրկումը, հետազոտության գիտագործնական նորույթն ու նշանակությունը:

13. Արցախի աշխատանքի և կրթական շուկայի ներկա վիճակը պարզելու համար առաջին անգամ հետազոտվել և բացահայտվել են առկա անհամամասնությունները մասնագետների պահանջարկի և առաջարկի միջև, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել կրթական շուկայի լավարկմանն ուղղված համակցված միջոցառումներ, որոնց իրականացման պարագայում կարելի է հասնել ԼՂՀ-ում բարձր որակավորման մասնագետների առաջարկի և պահանջարկի համապատասխանության:

14. Վերը շարադրվածից հետևում է, որ դպրոցական կրթությանը հաջորդող ուսուցման մյուս աստիճաններն Արցախ մուտք են գործել զգալի ուշացումով, իսկ մինչև ներառյալ 1969թ. ԼՂԻՄ-ում գործում էին գյուղական և քաղաքային հանրակրթական դպրոցներ, չորս միջնակարգ մասնագիտական հաստատություններ և մոտ երկու տասնամյա գործունեության շրջանով մեկ երկամյա մանկավարժական ինստիտուտ:

15. Արցախում բուհական համակարգ ստեղծելու գործընթացի ուշացումն իր խորը բացասական հետքն է թողել սեփական գիտակրթական ներուժի ստեղծման խնդրում: Այս առումով հատկանշական է, որ դեռևս անցյալ դարի 60-70-ական թվականներին ինքնավար մարզի տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկություններում և կրթության բնագավառում աշխատող գի-

տական աստիճանի ու համապատասխան գիտական կոչման տեր անձինք շատ փոքրաթիվ էին, մինչդեռ ներկայումս նրանց թիվն անհամեմատ մեծ է: Պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում Արցախում ձևավորվել և առկա են, հնարավոր է ոչ լրիվ տվյալներով, հարյուրից ավելի գիտական աշխատողներ:

16. Վերը բերված տվյալներն իրենց հերթին խորհելու լուրջ տեղիք են տալիս նաև այն իմաստով, որ չնայած քանակական առումով շոշափելի է աճը, այնուամենայնիվ, այն բավարար չէ ԼՂՀ մոտակա տարիների սոցիալ-տնտեսական ծրագրով ներառված ուղղություններում նկատելի որակական առաջընթաց ապահովելու համար: Այդ առումով հատկապես կարևոր է, որ առավել արդյունավետ օգտագործվի Արցախի առկա գիտակրթական ներուժը և կրթության ոլորտում նախատեսվող բարեփոխումներն իրականացվեն այնպես, որպեսզի դրանք նպաստեն ԼՂՀ կառավարության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների հնարավորինս արագ և լիարժեք իրագործմանը:

ԼՂՀ առանձնահատուկ ուշադրության ենթակա տնտեսական ճյուղերն ու ոլորտներն են. ագրարային բնագավառում` սերմնաբուծությունն ու տոհմային գործ, խաղողագործություն, պտղաբուծություն, գյուղմթերքների վերամշակում` նախկին արտադրությունների վերագործարկմամբ և նոր փոքր ու միջին արտադրությունների ստեղծմամբ և այլն, արդյունաբերության բնագավառում` ընդերքի ռացիոնալ օգտագործում և հանքարդյունաբերություն, ներքին ռեսուրսների վրա հիմնված մրցունակ արտադրությունների հիմնում ու զարգացում և այլն, արտադրական ենթակառուցվածքների բնագավառում` սեփական էներգետիկ ռեսուրսների, առաջին հերթին` հիդրոէներգետիկ ներուժի օգտագործում, այդ թվում` փոքր ՅԷԿ-երի շինարարություն, այլընտրանքային էներգետիկ աղբյուրների ստեղծում, բնակավայրերի համընդգրկուն զագաջերմամատակարարում, ջրամբարների հիմնանորոգում և նորերի կառուցում, ոռոգման համակարգերի

գործարկում ու զարգացում և այլն:

Ելնելով մոտակա տարիներին հանրապետության տնտեսության ու կրթական համակարգի զարգացման միտումներից և առկա գիտակրթական ներուժի հնարավորություններից, ինչպես նաև խնդիր ունենալով ընդլայնել նպատակային գիտական աշխատանքների ծավալը, ինչը մեծապես կխթանի երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործընթացը, մեր կարծքինով, նպատակահարմար է գերակա համարել և առանձնակի ուշադրություն դարձնել հետևյալ գիտական ուղղություններին՝ գյուղատնտեսություն, ճարտարագիտություն (առանձնապես՝ լեռնաարդյունաբերության ճյուղերի, շինարարության), տնտեսագիտություն (հատկապես՝ հաշվապահական հաշվառման և ֆինանսական ոլորտի), ճյուղային տնտեսագիտություն (հատկապես՝ գյուղատնտեսության ու էներգետիկայի և այլ ոլորտներում), պատմություն (հայագիտության, այլ կերպ՝ հայրենագիտության շեշտադրմամբ), լեզուների (հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ):

Որպեսզի վերը առաջարկված քայլերը չկրեն վերացական բնույթ, անհրաժեշտ է իրականացնել խորը մասնագիտական վերլուծություններ և դրանց հիման վրա կատարել համապատասխան քայլեր:

Խնդիրն առավել իրատեսորեն լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել կրթական ծառայությունների շուկայագիտություն՝ մարքեթինգ LՂՅ-ում, որը կարող է հիմք հանդիսանալ կրթական ճիշտ և նպատակային քաղաքականություն ձևավորելու համար:

LՂՅ-ում կրթական ծառայությունների մարքեթինգի իրականացումն առաջնահերթության իմաստ է ստանում երկու կարևոր գործոնների առկայության պայմաններում՝ կապված, առաջին հերթին, ներկայումս կրթական գործընթաց իրականացնող կառույցների միջև գոյություն ունեցող մրցակցության և վճարովի հիմունքներով կրթության առկայության հետ: Այս պայմաններ

րում տեղի ունեցող մրցապայքարում կենսունակ կարող է լինել այն կրթօջախը, որի ծառայությունները կրթաշուկայում առավել մրցունակ են:

Կրթական ծառայությունների մրցունակություն հնարավոր չէ որոշարկել սովորական ապրանքի մրցունակությունը ճշտորոշելու եղանակով, որովհետև այն ունի ակնհայտ ընդօժված յուրահատկություններ: Իսկ մեր հանրապետության կրթական գործընթացի մարքեթինգը ներկայիս անընդհատ փոփոխվող առաջնահերթությունների պայմաններում իրականացնելու համար անհրաժեշտ է ԼՂՀ կառավարությանն առընթեր ստեղծել հատուկ կառույց, որը հանրապետության ողջ աշխատաշուկայի պահանջարկն ուսումնասիրելուց բացի զուգահեռաբար իրականացնի նաև կրթական գործընթացի դիտարկում: Այսպիսի կառույցի առկայության պարագայում հնարավոր է առավելագույնս ճշտել որակավորման բոլոր մակարդակների մասնագետների պահանջարկը ԼՂՀ-ում և պետական պատվերը նպատակաուղղել ըստ այդ պահանջարկի:

Սույն աշխատությունը կուզենայինք ավարտել այն հաստատ համոզմամբ, որ հայ դպրոցի և մանկավարժական մտքի ամբողջական պատմությունն ստեղծելիս անխուսափելիորեն կօգտագործվի նաև մեր համեստ ուսումնասիրությունը, իսկ նրանում գիտամանկավարժորեն լուսաբանված Արցախի գիտակրթական համակարգի ձևավորման ու զարգացման դրույթները կարող են հիմք հանդիսանալ հետագա լրացուցիչ հետազոտությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ.Խ., Երկիր, հ.4, ՀԽՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) հր., 1970- 640 էջ:
2. Աբեղյան Մ.Խ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, «Սովետական գրականություն», Երևան, 1941թ., 2-52 էջ:
3. Ալպոյաճյան Ա.Մ., Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946, 626 էջ:
4. Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Հրատարակություն Թ.Հ.Թ., քրիստոնեական դաստիարակության բաժանմունքի, Թեհրան, 2007, - 458 էջ:
5. Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1984, - 686 էջ:
6. Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, հատ. 2 «Հայպետհրատ», Երևան, 1959, -724 էջ:
7. Առաքելյան Ա. Գ., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ.1, Եր.,1959,-722 էջ:
8. Առաքելյան Ա. Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, հատ. 3 «Հայպետհրատ», Երևան, 1975, -509 էջ:
9. Առաքելյան Հ., Իմ հիշողությունները, Շուշի, 1913,-71 էջ:
10. Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Ասատրյան Մ.Ա., Ցոլակյան Թ.Ֆ. Կրթության համակարգի կառավարման հիմունքները, մաս 1-ին, «Զանգակ» հր., Երևան, 2003,-223 էջ:
11. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, «Արտագերս» հր., Երևան, 2011, 178 էջ:
12. Ավանեսյան Ա., Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, 126 էջ:
13. Ավանեսյան Ա., Արցախի բուհական համակարգը եւ գիտակրթական ներուժը, «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2008, -214 էջ:
14. Ավանեսյան Ա.Ս., «Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ», «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2011, - 303 էջ:
15. Ավանեսյան Ա.Ս., «Արցախի պետական համալսարան. ժամանակի պահանջով՝ ժամանակին համաքայլ» (արխիվային նյութերի ժողովածու), Երևան, ճարտարագետ, 2011, - 101 էջ:
16. Ավանեսյան Ա.Ս., Ամարասից մինչեւ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան, մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու IV, Երևան, 2005, էջ (33-45):

17. Ավանեսյան Ա.Ս., Ավանեսյան Ռ. Ս., «Շերտավորված ուսուցումը՝ գիտատեխնիկական առաջընթացի գրավական»։ Մանկավարժ, հ. 10, 1991, ք.10-78 էջ։

18. Ավանեսյան Ա.Ս., Համալսարանական կրթության ձեւավորումը Արցախում եւ նրա հնարավոր ներառումը միջազգային կրթական համակարգում, Մանկավարժության եւ հոգեբանության հիմնադիրներ, միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես 1 (4), Երեւան 2009, - 191 էջ։

19. Ավանեսյան Ա.Ս., Համալսարանական կրթության գործընթացը Արցախում, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու 1, Ստեփանակերտ, 2007,- 367 էջ։

20. Ավանեսյան Ա.Ս., ճարտարագիտական մասնագիտություններով ուսուցման կազմակերպումը Արցախում, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Լրատու 2, «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, -367 էջ։

21. Ավանեսյան Ա.Ս., Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրումը որպես ղարաբաղյան շարժման նվաճում, Միջազգային գիտաժողով նվիրված Մեսրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա գործունեությունն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին, Ձեկուցումների հիմնադրույթներ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, - 207 էջ։

22. Ավանեսյան Ա.Ս., Ավանեսյան Ռ.Ս., Տնտեսական հարաբերությունների կատարելագործումը որպես տնտեսական մեխանիզմի արմատական բարելավման պայման, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, Երևան 1989, ք.10, -168 էջ։

23. Ավանեսյան Ա.Ս., Բնական գիտությունների դասավանդումը Շուշիի ռեալական ուսումնարանում, Շուշիի ռեալական ուսումնարանի 120-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Շուշի-Ստեփանակերտ, 2011, - 168 էջ։

24. Ավանեսյան Ա.Ս., Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրումը որպես ղարաբաղյան շարժման նվաճում, Մ.Մաշտոց համալսարանի 10-ամյակին և Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, ք. Ստեփանակերտ, 2008, - 242 էջ։

25. Ավանեսյան Ա.Ս., Կիրովականի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք, Մ. Մաշտոց համալսարան, Լրատու (1) գիտական հոդվածների ժողովածու, ք. Ստեփանակերտ, 2008,- 367 էջ։

26. Ավանեսյան Ա.Ա., Մարքետինգի անհրաժեշտությունը ԼՂՀ կրթական շուկայում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները, միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 3(6), ք. Երևան, 2009, - 291 էջ:

27. Ավանեսյան Ա.Ա., ԼՂՀ աշխատանքի և կրթական շուկաների մարքեթինգը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները, միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 2(8), ք. Երևան, 2010, - 191 էջ:

28. Ավանեսյան Ա.Ա., Հայաստանի պետական ագրարային համալսարանը Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի (ԱրՊՀ) ստեղծման ակունքներում, Государственный аграрный университет Армении, материалы международной научной конференции, посвященной 80-летию Государственного аграрного университета Армении, Ереван, 2011, ст., -222.

29. Ավանեսյան Ա.Ա., Բարձրագույն ճարտարագիտական կրթության հիմնադրումը Արցախում և նրա զարգացման միտումները, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, տեղեկագիր, 2 (20), 2/1011, -182 էջ:

30. Ավանեսյան Ա.Ա., Բուհական համակարգի ձևավորումն Անդրֆեդերացիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, տեղեկագիր, 2(20), 2/2011, - 182 էջ:

31. Ավանեսյան Ա.Ա., ԼՂՀ (ԱրՊՀ), Հայկական երկրորդ պետական համալսարան 1990-1994թթ., «Դիզակ պլուս» հրատարակչություն, ք. Ստեփանակերտ, 2009:

32. Ավանեսյան Ա.Ա., Արցախի բարձրագույն կրթության հիմնադրում արտակարգ իրավիճակում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 1-2, Երևան, ԱրՊՀ, 2011, -223 էջ:

33. Ավանեսյան Ա.Ա. Արցախի բարձրագույն և հետբուհական կրթության մասին, «Մանկավարժական միտք» հանդես 3-4, Երևան, 2011, - 295 էջ:

34. Անկախության նվիրյալները (նվիրված ԱրՊՀ զոհված ուսանողների հիշատակին), «Չանգակ» հր., 2009, -91 էջ:

35. Ավագյան Ս.Դ., Էջեր Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքի պատմությունից, «Հայպետհրատ» հր., Երևան, 1982, - 106 էջ:

36. Բաբանսկի Յու., Ինչպես բարելավել ուսուցման պրոցեսը, «Լույս» հր., Երևան, 1979, -76 էջ:

37. Բադալյան Հ.Լ., Ուսանողի պրոֆեսիոնալ ուղղվածության ձևավորումը մանկավարժական բուհում, «Լույս» հր., Երևան, 1990,- 112 էջ:

38. Բալյան Ա.Ա., Առաջին կուրսեցու ուղեցույց, Երևան, 1973, - 27 էջ:
39. Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքները, «Լույս» հր., Երևան, 1983, - 176 էջ:
40. Բաղդասարյան Ա.Ն., Ատենախոսություն «Մարքեթինգային համալիրի կառավարման առանձնահատկությունները բարձրագույն կրթության համակարգում (ՀՀ նյութերով)», Երևան, ՀՊԱՀ, 2008, - 162 էջ:
41. Բարխուդարյան Մ., Արցախ (Թիֆլիս 1895) Երեւան, Ամարաս, 1995,- 300 էջ:
42. «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» ԼՂՀ օրենքը, 2001թ., 25-ին մայիսի:
43. Բեգլարյան Ա., Շախկյան Գ., Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան /պատմության արդիակառուցություն/, Եր. ԵրճՇՊՀ, 2003, -323 էջ:
44. Բոլոնիայի հռչակագիր, 1998, -68 էջ:
45. Բյուզանդ Փավստոս, Պատմություն հայոց, «Հայաստան» հր., Երևան, 1968, - 352 էջ:
46. Գամաղեյան Մ.Գ., Նվիրում կրթական գործին, «Լույս» հր., Երևան, 1986, - 297 էջ:
47. Գասպարյան Ռ.Հ., Շուշի, ՀԳԱ հր., Երևան, 1993, - 125 էջ:
48. Գիտական աշխատություններ Երևանի Խ. Աբովյանի անվ. մանկ. ինստ. (այժմ ԵՊՄՀ), 1960, ք.1, -192 էջ:
49. Գզոյան Ա., Տաթևի համալսարանը, «Ձանգակ» հր., Երևան, 2003, - 61 էջ:
50. Գևորգյան Ս., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, «Ձանգակ» հր., Երևան, 2002, - 174 էջ:
51. Գրիգորյան Ա., «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության զարգացման և Հայաստանի Հանրապետության հետ ինտեգրման տնտեսաաշխարհագրական հիմնահարցերը» ՀՀ, Երևանի պետական համալսարան, 2002, -164 էջ:
52. Դանիելյան Ա., Հարազատ կրթօջախ (գյուղտեխնիկումի 70-ամյակի առթիվ), Ստեփանակերտ, 2001, - 32 էջ:
53. Եդոյան Ռ., Բարձրագույն կրթության խնդիրներն Արցախում 1988-1992թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3, Երեւան, 2010, - 168 էջ:
54. Երիցյան Ալ.Ա., Պատմություն 75-ամյա Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի (1824-1898թթ.), Թիֆլիս, 1898, - 494 էջ:
55. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդր-

կովկասում, ՉԳԱ հր., Երևան, 1970, - 308 էջ:

56. Իգնատյան Ա., Լազարյան ճեմարան, ԵՊՅ հր., Երևան, 1969, - 355 էջ:

57. Լալայան Ե., Արցախ, Վարանդա, ՉԳԱ հր., հ.2, Երևան, 1988, - 505 էջ:

58. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, - 692 էջ:

59. Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, - 435 էջ:

60. ԼՂՀ օրենքը կրթության մասին, 2008թ., 16 սեպտեմբերի (տես Ազգ. ժող. արխիվ):

61. ԼՂՀ օրենքը բարձրագույն և հետբուհական կրթության մասին, 2001թ., 25-ին մայիսի:

62. ԼՂՀ ԿՄՍ նախարարության տեղեկագիր, 2006թ., - 94 էջ:

63. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2009, - 494 էջ:

64. ԼՂՀ օրենքը «Գերագույն խորհրդի մասին», Ազատ Արցախ, 1992թ., 24 հունիսի, թիվ 10:

65. ԼՂՀ օրենքը «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին», Ազատ Արցախ, 1992թ., 30 հունիսի, թիվ 12:

66. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2009, - 464 էջ:

67. ԼՂՀ 2005 թվականի մարդահամարի արդյունքները (Լեռնային Ղարաբաղի հանրապետության ցուցանիշները), Ստեփանակերտ, 2006:

68. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2005-2009, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2010, - 468 էջ:

69. ԼՂՀ 2005 թվականի մարդահամարի արդյունքները, Ստեփանակերտ, 2006, էջ (45-68, 74,71,98-104):

70. ԼՂՀ Սահմանադրություն, 2006թ., - 55 էջ:

71. ԼՂՀ կառավարության 2009 թվականի մարտի 24-ի թիվ 179-Ն որոշումը:

72. ԼՂՀ կառավարության աշխատակազմի 2009 թվականի ապրիլի 14-ի թիվ 4-1/164 գրությունը:

73. Խաչատրյան Ա., Հարությունյան Գ., Շուշիի մակավորական ուսումնարան, «Սոնա» հր., Ստեփանակերտ, 2006, - 262 էջ:

74. Խաչիկյան Լ. Գլաձորի համալսարան, «Լույս» հր., Երևան, 1973, - 232 էջ:

75. Խոջաբեկյան Վ.Ե., Արցախը փորձության ժամին, «Հայպետ» հր., Երևան, 1997, - 253 էջ:

76. Խուղոյան Ա.Կ., Սովետահայ դպրոցի պատմություն (1920-1941), «Լույս» հր., Երևան, 1973, - 309 էջ:
77. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, - 441 էջ:
78. Կիսիբեկյան Ա., «Յուզեր», հատ. 1, Երևան, Առասպել ինդեքս, 2011, - 498 էջ:
79. Կիսիբեկյան Ա., «Յուզեր», հատ. 2, Երևան, Առասպել ինդեքս, 2011, - 498 էջ:
80. Կիրակոսյան Գ.Կ., Դասախոսի մասնագիտական մանկավարժական մշակույթի ձևավորումը, «Մանկավարժական միտք», «Ձանգակ» հր., Երևան, 2011, թ. 3-4, էջ 76:
81. Կիրակոսյան Գ.Կ., Ուղեցույց հայ ուսուցչին, Փարիզ, 1939, - 260 էջ:
82. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար, ԵՊՀ, հր., Երևան, 2010, - 186 էջ:
83. Կրթությունը Հայաստանում, «Աստղիկ» հր., Երևան, 2003, - 68 էջ:
84. Կրթությունը Արցախում 405-2005 թթ., «Ամտարես» հր., Երևան, 2005, - 475 էջ:
85. Կրթությունը, մշակույթը և սպորտը Արցախում, (ԼՂՀ կրթ. մշակ. և սպորտի աշխատողների առաջին համագումարի առթիվ), «Ամտարես» հր., Երևան, 2006, - 244 էջ:
86. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2009, - 94 էջ:
87. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ., պետական ծրագիր, ՀՀ օրենք, 2005:
88. ՀՀ օրենքը պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, 13 հոկտեմբերի, 2001թ.:
89. ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, 16 սեպտեմբերի 2002թ.:
90. ՀՀ կրթ. և գիտ. նախարարության տեղեկագիր, 1-3, 2003թ.:
91. ՀՀ օրենք «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ՀՕ-62Ն, 2004:
92. ՀՀ հանրագիտարան, հ.8, - 601 էջ:
93. Հակոբյան Ա., Սարգսյան Ա., ԵրՊ-ի 1933-2003թթ., Երևան, 2003,- 135 էջ:
94. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթու-

- թյան պետական չափորոշիչ, «Անտարես» հր., Երևան, 2004, - 71 էջ:
95. Հանրակրթության պետական կրթակարգ, «Նախագիծ», Երևան, 2004, - 112 էջ:
96. Հայ ազգային դպրոց, խնդիրներ, մտորումներ, առաջարկություններ, ԿԳԱ, ՀՀ կրթ. նախարարություն, ՄԳԳ-ի, 1990, - 249 էջ:
97. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները (ընդհանուր խմբագրությամբ ՀԳԱԱ ակադեմիկոս Ռ.Մ. Սարտիրոսյանի), Երևան, 2003, - 420 էջ:
98. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, 1930-1980 (Ս.Ա. Գյուլխասյան, Ա.Ա. Մաթևոսյան, Յու. Հ. Սենեքերիմյան), Երևան, Հայաստան, 1981, - 248 էջ:
99. Հարակրթական դպրոցների շրջանավարտների ընտրանքային հետազոտության զեկույց, ԼԴՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ, 2008, - 186 էջ:
100. Հանրակրթական դպրոցների շրջանավարտների ընտրանքային հետազոտության զեկույց, ԼԴՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ, 2008, - 188 էջ:
101. Հարությունյան Ն.Կ., Հայ կրթական գործի հասարակական, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային նախադրյալները (ՄՀ ԳԱ ակադեմիա, գիտական հոդվածաշար), «Ձանգակ» հր., Երևան, 2002, - 143 էջ:
102. Հարությունյան Գ.Հ., Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, «Լույս» հր., Երևան, 1985, - 164 էջ:
103. Հարությունյան Գ.Հ., Մանկավարժական մասնագիտության ներածություն, «Դիզակ պլուս» հր., Ստեփանակերտ, 2001, - 108 էջ:
104. Հարությունյան Գ.Հ., Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը, ԱրՊՀ հր., 2002, - 296 էջ:
105. Հարությունյան Վ.Բ., Արցախի հիմնահարցի ակունքները, «Սոնա» հր., Ստեփանակերտ, 1998, - 125 էջ:
106. Հացունի Վ., Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, - 431 էջ:
107. Հովհաննիսյան Գ.Ս., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, ԱՊՀ հր., Երևան, 1971, - 292 էջ:
108. Հուրիխանյան Փ.Խ., Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում, «Միտք» հր., Երևան, 1969, - 243 էջ:
109. Դարիքջանյան Լ.Պ., Երևանի պետական համալսարան, ԵՊՀ հր., Երևան, 1994, - 205 էջ:

110. Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր (1858-1912), Շուշի, 1913, -63 էջ:

111. Ղուկասյան Ա.Ա., Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան եւ զարգացման միտումները, Երեւան, «Մանկավարժ» հր., 2005, 274 էջ:

112. Ղուկասյան Ա., Աբրահամյան Ա., Լեռնային Ղարաբաղի և նրա կրթության համակարգի մասին, Կրթ. և գիտ. Արցախում, 3-4, 2005, էջ 40-43:

113. Ղուկասյան Ա., Մանուկյան Մ., Աբրահամյան Ա., Հայ դպրոցն ու մանկավարժական միտքը 20-րդ դարում (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ» հր., 2004, -118 էջ:

114. Ղուկասյան Նով., Բողոքականությունը Կովկասի հայոց մեջ, Թիֆլիս, 1886, -73 էջ:

115. Ղուկասյան Փ.Հ., Հայացք՝ 70-ամյա բարձրունքից (Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի հիմնադրման 70-ամյակի առթիվ), Ստեփանակերտ, 2002, - 59 էջ:

116. Մախչանյան Հ.Ս., Ազգային գաղափարախոսությունը և երիտասարդության դաստիարակության հարցերը, «Մանկավարժական միտք», «Զանգակ» հր., Երևան, 2001, թ.3, -191 էջ:

117. Մախչանյան Հ.Ս., Մանկավարժական համագործակցություն, «Լույս» հր., Երևան, 1989, - 116 էջ:

118. Մանուկյան Մ., Ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման մոդելը, «Մանկավարժական գրադարան», «Զանգակ» հր., Երևան, 2002, գիրք Ա., - 106 էջ:

119. Մանուկյան Ա., Մանուկյան Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, «Զանգակ» հր., Երևան, 2000, - 152 էջ:

120. Մարտիրոսյան Ա.Ա., Մաշտոց, պատմաքննական տեսություն, ՀԳԱ հր., Երևան, 1982, - 443 էջ:

121. Մարգարյան Յ Գլեն Շին Գալոյանի գերի բրայերս, Բոլոնիայի գործընթաց, բարեփոխումներ և ռազմավարություն, ՀԳՄՀ հր., 2007, - 168 էջ:

122. Մելքունյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ՀՍՄՀ ԳԱ հր., Երևան, 1997, - 374 էջ:

123. Միրունյան Կ.Ա., Հայ քաղաքական մտքի պատմություն, Երևան, - 162 էջ:

124. Իլտոնյան Լ., Պիպոյան Ս. և ուրիշներ, Մասնագիտական մանկավարժություն (նախնական արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների հա-

մար, «Տիգրան Մեծ» հր., 2007, - 319 էջ:

125. Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Հայպետհրատ, 1958:

126. Մովսիսյան Ա., Ակնարկ հին հայերի կրթության մասին, ԵՊՀ հր., Երևան, 1939, - 526 էջ:

127. «Պոլոժենիե» 1836թ. Բարձրագույն կարգադրութեան յաղագս կառավարութեան գործոց լուսավորչական հայոց եկեղեցվոյ ի Ռուսաստանի, Էջմիածին, 1836 թ., -44 էջ:

128. Ջալալյանց Ա., ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տիփսիս, 1858, -517 էջ:

129. Ներսիսյան Լ.Ս., Ռուսաստանի բուհերում բազմամակարդակի բարձրագույն մանկավարժական կրթության իրականացման փորձը, ՄՀԳԱ, գիտական հոդվածաշար, «Ձանգակ» հր., Երևան, 2002, - 142 էջ:

130. Սահակյան Կ., Ուսուցչի մանկավարժական գործունեության վերլուծության կարողությունների ձևավորումը դպրոցի զարգացման արդի փուլում, «Ձանգակ» հր., Երևան, 2001, - 77 էջ:

131. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, «Հայպետ» հր., Երևան, 1964, - 445 էջ:

132. Սանթրոսյան Մ., Ներսիսյան դպրոցի պատմություն, «Լույս» հր., Երևան, 1981, - 222 էջ:

133. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում, Ուղեցույց-բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, «Անտարես» հր., Երևան, 2008,- 164 էջ:

134. Սարգսյան Լ., Մի քանի օր Արցախում և Սյունիքում, Թիֆլիսում 190,- 88 էջ:

135. Սիմոնյան Ց., Հայ մանկավարժության պատմություն, «Արարատ» հր., հ.2, 2000, -304 էջ:

136. Սուլեյմանյան Ա., Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում, Երեւան, 1998, - 108 էջ:

137. Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, - 264 էջ:

138. Վարդունյան Ա.Տ. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ (ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար), «Այռեքս», Երևան, 2005, - 409 էջ:

139. Բաֆֆի, Երկեր, հ.10, «Հայպետ» հր., Երևան, 1959, - 709 էջ:

140. Քոթանջյան Հ., Ղարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները, քաղաքական հետազոտությունների ինստի-

- տուտ (ԶՅԻ) Վերլուծական նյութեր, քոդարկում 3, Երևան, 2009, - 164 էջ:
141. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, «Ամարաս» հր., Երևան, 1994,- 454 էջ:
142. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, «Հայպետ» հր., Երևան, 1975, - 453 էջ:
143. Ուսանողի ուղեցույց, Կրթ. ազգ. ինստ., Երևան, 2007, - 312 էջ:
144. Абрамян А.В., Аванесян А.С., Гушчян А.Х.. Международная научнометодическая конференция, непрерывное образование в XXI веке, сборник статей(26-28 июня 2008 года), г. Самара, 2008г.
145. Аванесян А.С., Процесс формирования научно-образовательной системы Арцаха, нынешнее состояние и необходимость усовершенствования в обозримом будущем, «Научные новости Грузии», г. Тбилиси, 2012.
146. Аванесян А.С. Арцахский государственный университет, по требованию времени- в ногу со временем, Екатеринбург, 2011.
147. Аванесян А.С., Образовательный рынок в Нагорно-Карабахской республике, «Вестник университета Российской академии образования», N1, г. Москва, 2012.
148. Аванесян А.С., Процесс формирования научно-образовательной системы Арцаха, «Теория и практика общественного развития» N4, г. Краснодар, 2012.
149. Архангельский С. И. А87 Учебный процесс в высшей школе, его закономерные основы и методы. Учеб.-метод. пособие. — М.: Высш. школа, 1980., -114 стр.
150. Архипов В. Принципы эффективного менеджмента и маркетинга, Москва, 1993, - 108 стр.
151. Афанасьев В.Г., Общество: системность, познание, управление. М., 1981, 108 стр.
152. Байденко В. И. Болонский процесс: структурная реформа высшего образования Европы. — М.: Исследовательский центр проблем качества подготовки специалистов, 2002, с 128.
153. Берзин И., Маркетинг и исследование рынков, Москва 1999, 118 стр.
154. Беспалько В.П. «Слагаемые педагогической технологии» М., 1989, 138 стр.
155. Бордовский, В.А. Теория и практика организационно-методического обеспечения инновационного развития высшего

педагогического образования: дис. . д-ра пед. наук / В.А. Бордовский. Санкт-Петербург, 1999. 365 с

156. Вербицкий А. А. Активное обучение в высшей школе: контекстный подход. — М.: Высшая школа, 1991, 168 стр.

157. Гершунский Б.С. Философия образования для XXI века. М.: 1997, 164 стр.

158. Джуринский А. Н. Сравнительная педагогика: Учеб. пособие для студ. сред. и высш. пед. учеб. заведений. - М. : Издательский центр «Академия», 1998, 108 стр.

159. Григорян Х.Б., Айрапетян С.Н., Симонян Р.П., Устройство для измерения электропроводности. Авторское свидетельство N485865/10, Заявлено 09.08.1900г., Получено положительное решение 30.03.1992г.

160. Котлер Ф., Практический маркетинг, Москва 2000, 112 стр.

161. Лазарев П.Ш., Поташник С.М., Управление развития школы, М., 1995 164 стр.

162. Лихачев Б.Т., Педагогика. Курс. Лекций, М.Влагос, 2010, 647 -282 ст.

163. Манасян А., Карабахский конфликт. минимальная папка политико-правовых фактов и аргументов. Ереван. де-факто. 2009, 68 стр.

164. Новиков А.М. «Российское образование в новой эпохе: парадоксы наследия, векторы развития» М.: 2000, 168 стр.

165. Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и комментариев), составитель и ответственный редактор А. Барсегов, Москва, 2008, 108 стр.

166. Пионова А. С. Педагогика высшей школы Минск, 2007, 484 стр.

167. Садовников В. А. Тихонов А. Н. Развитие университетов в условиях рыночной экономики, МГУ, 1994, 168 стр.

168. Развитие университетов в условиях рыночной экономики (Харковский государственный пед. институт им. Г. С. Сковорды) Харьков, 1992, 158 стр.

169. Черницкий Ю.А. Высшее образование в рыночной экономике, Москва 1991, 168 стр.

170. Шамова Т.И., Третьяков П.И., Капустин Н.П. Управление образовательными системами: Учебное пособие для студ. высш. учеб. заведений, М.:2002, 164 стр.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

- «Ազգագրական հանդես», Շուշի, 1896, Ա գիրք, Բ գիրք, 1897:
«Արցախ», Շուշի, 1919, թիվ 1, 2, 4:
«Խորհրդային մանկավարժ», Երևան, 1940, թ. 2, 1972, թ. 12, 1986, թ.9 և այլ համարներ:
«Ղարաբաղի սուրհանդակ», Շուշի, 1918, թ.1
«Կրթ. և գիտ. Արցախում», «Զանգակ» հր., Երևան, 2003, թ.1-2, 5-6: 2004, թ. 3-4: 2005, թ.5-6, 2011, թ.3-4:
«Մանկավարժական միտք», «Զանգակ» հր., Երևան, 2001, թ.1, թ.3, 2004, թ.1:
«Մանկավարժ», 2007, թ.8:
“Советская педагогика”, 1958, N 4, 6
“Шушинский листок”, Шуша, 1911, N 4, 6.
“Шушинская жизнь”, Шуша, 1914, N 4, 6.

ԱՐԽԻՎ

- Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվ (ՀԱԱ)
1.1 գ.2 (Ներսիսյան դպրոց), գ.1, գ.97:
... Կաթ. դիվան. (Էջմիածնի սուրբ լուսավորչական սինոդ) գ.1, գ. 173, գ. 149, թ.50
գ.3, գ.78, գ.543, թ. 1, 2, 3, 7, 8:
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) արխիվ, գ. 1, 2, 3, 4,8, 12, 14, 16:
Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի արխիվ, գ.թ.6, 7, 10, 12, 26, 28:
«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 62 էջ 3-6:
«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 1 էջ 1-3:
«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 29 էջ 5-8:
«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 2 կապ 1, էջ 1, 3:
«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 23 էջ 1-3:

«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 24 էջ 7-18:

«ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ ֆոնդ 55, ցանկ 1, պահպանման միավոր 28 էջ 3-10:

Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի արխիվ, գ. 14, 16, 22, 24, 26:

ԼՂՀ կառավարության արխիվ, գ.8, 9, 10, 11, 12:

Ասկերանի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 03-04/510 գրությունը, թ. 2:

Հադրութի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 08-ի թիվ 1-15/361 գրությունը, թ. 3:

Մարտակերտի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 02-ի թիվ 6-4/44 գրությունը, թ. 5:

Շուշիի շրջվարչակազմի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ 2/268 գրությունը, թ. 6:

Շահումյանի շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 06-ի թիվ 1-4/130 գրությունը, թ. 6:

Քաշաթաղի շրջվարչակազմի 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 25-424 գրությունը, թ. 10:

Մարտունու շրջվարչակազմի 2009 թվականի հուլիսի 10-ի թիվ 3-3/326 գրությունը, թ. 12:

ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.10, 12, 14, 16, 17, 18, 19, 20:

Արցախի պետական համալսարանի արխիվ. գ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 16, 18, 20:

Արցախի պետական համալսարանի 2009թ. հունիսի 20-ի թիվ 01-02/120 գրությունը, թ. 9:

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի արխիվ, գ. 2, 3, 4, 8, 10, 12:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանի արխիվ, գ. 9, 12, 13, 14, 16:

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի արխիվ, գ. 1, 3, 4, 5, 6, 7, 8, 9:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ
ՄԱՐԴԱՅԱՄԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ (հազ.մարդ)**

Աղյուսակ 1

	<i>ըստ մարդահամարների տարիների</i>					
	<i>1926թ</i>	<i>1939թ</i>	<i>1959թ</i>	<i>1970թ</i>	<i>1979թ</i>	<i>1989թ</i>
ընդամենը	125.3	150.8	130.4	150.3	162.2	189.1
այդ թվում՝ հայեր	111.7	132.8	110.1	121.1	123.1	145.5
տոկոսով՝ ընդամենի նկատմամբ	89.1	88.1	84.4	80.6	75.9	76.9
աղբրեջանցիներ	12.6	14.1	18.0	27.2	37.3	40.7
տոկոսով՝ ընդամենի նկատմամբ	10.1	9.3	13.8	18.1	22.9	21.5
ռուսներ	0.6	3.2	1.8	1.3	1.2	1.9
տոկոսով՝ ընդամենի նկատմամբ	0.5	2.1	1.4	0.9	0.8	1.0

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ
ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ 1989թ.
ՄԱՐԴԱՅԱՄԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ (հազ.մարդ)**

Աղյուսակ 2

	<i>բոլոր ազգությունների մարդկանց թիվը, ովքեր տվյալ լեզուն համարում են իրենց մայրենի լեզուն</i>	
	<i>երկրորդ լեզուն, որին ազատ տիրապետում են</i>	<i>մայրենի լեզուն</i>
ընդամենը	189.1	94.2
այդ թվում՝ իրենց մայրենի կամ երկրորդ լեզուն են համարում		
հայերենը	143.3	3.3
աղբրեջաներենը	40.6	0.6
ռուսերենը	4.5	90.1
այլ լեզու	0.7	0.2

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ
ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ (մարդ)**

Աղյուսակ 3

	<i>ընդամենը</i>	<i>այդ թվում համարում են մայրենի լեզուն</i>				
		<i>իրենց ազգության լեզուն</i>	<i>ոչ իրենց ազգության լեզուն</i>			
			<i>հայերենը</i>	<i>աղբրեջաներենը</i>	<i>ռուսերենը</i>	<i>այլ լեզուներ</i>
ընդամենը	189085	186300	136	34	2595	20
այդ թվում՝						
հայեր	145450	143187	-	24	2237	2
աղբրեջանցիներ	40688	40572	58	-	54	4
ռուսներ	1922	1893	21	3	-	5
այլ ազգեր	1025	648	57	7	304	9

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԼՂՀ նախագահ պարոն Բ. Սահակյանին

Մեծարգո Բակո Սահակի

Ձեզ հղվող գրության դրդապատճառը ԱրՊՀ-ի գիտական տեղեկագրում (ք.Ստեփանակերտ (1-14)-2007) պրոֆեսորներ Շ.Աբրահամյանի և Ս. Դադայանի կողմից հեղինակած «Սոցիալ-քաղաքական վիճակը Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի բացման պահին» հոդվածին նախորդող խմբագրական վերտառությունն է՝ «ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 40 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ»: Այսպիսով մենք զարմանքով ու տարակուսանքով հայտնաբերեցինք, որ 2009թ. պետք է նշվի Արցախի պետական համալսարանի 40 ամյակը, որն ընդամենը 15 տարեկան է: Անդրադառնալով բոլորիս համար նվիրական Լեռնային Ղարաբաղի պետական Համալսարանի ստեղծման տարեթվին՝ նշենք, որ այն հիմնադրվել է ՀՀ կառավարության 1992թ. հոկտեմբերի 13-ի «Լեռնային Ղարաբաղի պետական Համալսարան ստեղծելու մասին» թիվ 509 որոշմամբ (կցվում է): Ի դեպ, ներքոստորագրյալներս անմիջականորեն մասնակցել ենք ԼՂՀ-ի (ԱրՊՀ)-ի հիմնադրման աշխատանքներին:

Պատմական փաստերի նման խեղաթյուրումը կարող է ունենալ նաև խիստ վտանգավոր քաղաքական մեկնաբանություններ, քանի որ ըստ էության արձանագրվում է հայաթափման երկարամյա քաղաքականություն վարած Ադրբեջանում հայկական համալսարանի «ստեղծումն ու 40-ամյա անընդհատ զործունեությունը»:

Կարծում ենք, որ փաստերը պետք է անվանել իրենց իրական անուններով: 1969թ. հիմնվել է ոչ թե Լեռնային Ղարաբաղի համալսարանը, այլ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը, որը 1974-ին վերակազմակերպվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի և փակվել 1988-ին՝ ԽՍՀՄ կառավարության համապատասխան որոշումով (կցվում է): Դրանից հետո արդեն ՀԽՍՀ կրթական հա-

մակարգում ստեղծվել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը (1989թ.) և Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի բաժանմունքը (1990թ.), ապա նաև մասնաճյուղը (1991թ.), որոնք հիմք են հանդիսացել անկախացած Արցախի առաջին պետական Համալսարանի ստեղծման համար:

Մենք իհարկե չենք ժխտում ՍՄԻ-ի մեծ դերակատարությունը Լեռնային Ղարաբաղի կրթության համակարգի զարգացման գործում, արժևորելով ինստիտուտի կուլեկտիվի մեծ վաստակը այս բնագավառում: Այնուամենայնիվ, փաստը մնում է փաստ, որ չկա որևէ ինստիտուցիոնալ իրավահաջորդություն ՍՄԻ-ի և նրա փակումից չորս տարի հետո ստեղծված ԼՂՊՀ (ԱրՊՀ)-ի միջև, իսկ 1969-ը կարող է դիտվել միայն որպես Լեռնային Ղարաբաղում բարձրագույն կրթության սկզբնավորման տարեթիվ: Նման վերաբերմունքը, Արցախի անկախ պետականության կարևոր խորհրդանիշներից մեկի պատմության նկատմամբ անթույլատրելի է և անհասկանալի:

Ակնկալում ենք Ձեր միջամտությունը այս շատ նուրբ հարցի պատշաճ կարգավորման համար:

Կանխավ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Պ.գ.դ., պրոֆ., ակադեմիկոս  Վ.Բ. Բարխուդարյան

Տեխ.գ.դ., պրոֆ., ակադեմիկոս  Յու.Լ. Սարգսյան

Ֆ-մ գ.դ. պրոֆ., ակադեմիկոս  Լ.Ա.Աղալովյան

Բ.գ.դ., պրոֆ., ակադեմիկոս  Վ.Պ. Հակոբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3

*ԼՂՀ սոցիալական ոլորտի հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ
պարոն Ա.Ավանեսյանին*

Ի պատասխան Ձեր 12.12.08թ. թիվ 02-17 գրության հայտնում են, որ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը ստեղծվել է 1992թ. հոկտեմբերի 13-ի ՀՀ կառավարության թիվ 509 որոշմամբ, որում ամրագրված չէ նրա՝ 1969թ. ստեղծված Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի և 1974թ. ստեղծված Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդ լինելու հանգամանքը:

Ուստի, ԼՂՀ (ԱրՊՀ)-ն փակված Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդը համարելու վերաբերյալ որևէ իրավական հիմք չկա և որպես նրա հիմնադրման տարեթիվ չի կարող ընդունվել 1969 թվականը, քանզի իրավահաջորդության դեպքում իրավահաջորդին են անցնում իրավանախորդի բոլոր իրավունքներն ու պարտականությունները (կամ որևէ կոնկրետ իրավունք կամ պարտականություն), ինչը տվյալ դեպքում չի կատարվել:



Ն.ՆԱՐԻՍԱՆՅԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Հեղինակի կողմից.....3

ԳԼՈՒԽ ԱՈՍԱԶԻՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....7

Արցախի կրթական համակարգի ծեւավորման փուլերը.....7

Արցախի առաջին բարձրագույն մանկավարժական կրթօջախները.....28

Աղրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի
Ստեփանակերտի մասնաճյուղ..... 43

Կիրովականի (Վանաձորի) Հ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտի
Ստեփանակերտի բաժանմունք..... 65

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ..... 81

ԵրՊԻ-ի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի ընդհանուր
տեխնիկական բաժանմունք..... 81

ԵրՊԻ (ՀՊՃՀ-ի) Ստեփանակերտի մասնաճյուղ..... 92

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ 97

Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրումը.....97

Ուսումնական գործընթացի առաջին քայլերը ԼՂՀ-ում..... 127

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՅԵՐԸ..... 153

Արցախի պետական համալսարան 153

Արցախի ոչ պետական բուհերը175

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ..... 176

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան..... 181

«Գրիգոր Նարեկացի» համալսարան..... 186

Երեւանի մեմեջմենթի համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ....192

Երեւանի «Երեւան» համալսարանի ԼՂՀ մասնաճյուղ..... 194

Ռուս - հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի	
Ստեփանակերտի մասնաճյուղ.....	196
«Գրիգոր Լուսավորիչ» համալսարան.....	198

ԳԼՈՒԽ ԳԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ	201
ԼՂԴ-ում աշխատող գիտակրթական կադրերը	201
Պրոֆեսորադասախոսական կադրերի նյութական ապահովության չափորոշիչները ԱրՊԴ-ում	210

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼՂԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	239
ԼՂԴ ՀՆԱ-ի ծավալը եւ ճյուղային կառուցվածքը.....	241
ԼՂԴ բնակչության թիվը՝ ըստ վարչատարածքային բաժանման, սեռատարիքային կազմի եւ կրթական մակարդակի.....	245
ԼՂԴ դպրոցների ու դպրոցականների թիվը եւ սեռատարիքային կազմը.....	250
ԱրՊԴ- ուսանողների թվի բաշխվածությունը՝ ըստ մասնագիտությունների ու սեռի.....	264
ԼՂԴ ոչ պետական բուհերը, ուսանողների բաշխվածությունը ըստ սեռի ու մասնագիտությունների.....	270
ԼՂԴ միջին մասնագիտական եւ նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների կազմը՝ ըստ մասնագիտությունների եւ սեռի.....	273
ԼՂԴ աշխատանքի շուկայի ցուցանիշները և բարձր որակավորմամբ մասնագետների պահանջարկի տեսլականը ըստ ԼՂԴ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի	276
Արցախի գիտակրթական համակարգի զարգացման միտումները.....	295
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	303
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	316
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	329

ԱՐՊՈՏ ՍԱՆՁԱՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ԲՈՒՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
1938-2010թթ.

ВУЗОВСКАЯ СИСТЕМА АՐՎԱԽԱ
В 1938-2010ГГ.

Մասնագիտական խմբագիր՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խմբագիր՝	Գրիգորի Հարությունյան
Սրբագրիչ՝	Միքայել Հաջյան
Համակարգչ. շարվածքը՝	Ֆլորա Ստեփանյան
Համակարգչ. էջադրումը՝	Մարինե Գաբրիելյանի Թամար Հարությունյանի

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 21 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2014